Սիրուն

I

1890

ՍԵՐԵՖ
861

№ 11/XV

Պոլսի Սանասարեանի
Սերերագիրքեր
Աստրախան

ՍԵՐԵՐ
861

2011

ԼԻԱԿԱՏԱՐ

ԵՐԳԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ.

Քանի կ'երգէ Հայաստանին իմ Սոխակ՝
Սրտիս խորքում վառ կը թողնէ
Նա միշտ սիրոյ, միշտ ազգային լիշատակ.
ԲՕՆ-ԱՄԻ.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1890

Дозволено Цензурою. С.-Петербургъ. 1889 г. 8 Ноября.

ԻՐԻ ԲԱԶՄԵՇԽԱՏ ՀԱՆԳՈՒՅՑԵԼԻ ՄՕՐ—

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՇՈՒՐԻՐՈՒՄ Է

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ.

Սրբան մետաղի անհետ քո վրայից
Կը լինի, մայր իմ, պաշտելի սրտիս,
Բայց քո յիշատակ իմ սրտի խորքից
Մի, երբէ՞ք անհետ. դաւատա՛ խօսքիս:

Հայկական ԽՍՀ Գրադարան
Հայ. Գրադարան
Հայ. Գրադարան
861-2011
(3/8/7-61)
հ.ֆ. 855

Վասիլանոս Պողոսեան
Սերեբրակեանց
Անապատ

ԻՄ ՍՈԽԱԿԻՆ

Թռի՛ր, Սոխակ, թռի՛ր, գնա՛ դէպի քո սիրած, քո պաշտած և՛ քո սրտին և՛ քո հոգուն մօտիկ, շատ մօտիկ հայրենիքը, ուր սպասում են քեզ՝ քո դայլայլիկը լսելու: Գնա՛, երգի՛ր այնտեղ քո մեղեդին, Սոխակ, որին վաղուց, շատ վաղուց սովոր են մարդիկ: Գնա՛, ոգեւորի՛ր օտար ասողների տակ հառաչող պանդուխտ հայի վշտացած և կեանքի ծովի մէջ խորասուզուած տխուր սրտերը, Սոխակ, որ դէմ թ քեզանով և միայն քեզանով մխիթարութիւն գտնեն և քեզանով սփոփանք ստանան...

Գնա՛, Սոխակ, գնա՛, էլ մի՛ ուշանալ. պատճառ, եթէ քո թռիչքը փոքր ինչ դանդաղեցնում ես, քեզ յայտնի պատճառով, կամ երբ, կեանքի բնական օրէնքներից թելադրուած, երբեմն—փոքր ժամանակով—դադար ես առնում քո «վի՛ի դ-կառ»-ը երգելուց՝ հազա՞ր ու բի՛ւր տարակուսանաց պատճառ ես դառնում, Սոխակ:

Ուստի՝ քանի՛ որ քո գարունն է, քանի՛ որ քո կեանքի—այսպէս ասած—ոսկեղենիկ դարն է՝

Գնա՛, սուլի՛ր քո դայլայլիկ,
Հայոց Սոխակ, հայոց Թռչնիկ,
Ու զօրանան, բացուին հեզիկ
Վարդեայ թփեր, վարդ կոկոնիկ:

ԳՐԻԳՈՐ ՔԱՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ.

Պետական Սերեբրյանցի Գրադարան

1.

ՄԱՂԹԱՆՔ

ՌՈՒՍԻԱՅԻ ԿԱՅՍՐ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԶԻ ԵՒ ՆՈՐԱ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԸՆՏԱՆԵԱՑ ՀՐԱՇԱԼԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ *).

(17 Հոկտեմբերի 1888 թ.)

ԲՐՔԱՅԻՆ Ռուսաց, Աստուած, օգնեցիր,
Նորան արկածից Դու ազատեցիր.
Փառք, փառք Քո ողորմութեան,
Փառք Քո անուան, ազատութեան:

Ռուսիայի Կայսեր, Աստուած, Քո սիրով
Ընտանեաց Կեանքը փրկեցիր հրաշքով.
Փառք, փառք Քո ողորմութեան,
Փառք Քո անուան, ազատութեան:

---

*) Արդէն յայտնի է, որ Ռուսիայի Թագաւոր Կայսր Ա-լէքսանդր III-ը, Իւր Օգոստափառ Ընտանիքով, 1888 թուին, բարեհաճեց ճանապարհորդել քանի մի քաղաքներ թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Կովկասի մէջ, որոնց թիւում էր և Բագու քաղաքը: Այդ ճանապարհորդութեան ժամանակ, Կուրսկ-Խարկովեան երկաթուղու գծի վերայ, Բորկա կայարանում, Կայսերական գընացքի երկրորդ շոգեմեքենան դուրս է գալիս գծից և նորա ետևից էլ չորս կառք (վագոն): Աստուածային ողորմութեամբ

Այդ ազատութեամբ, Աստուած, մենք, հայեր,
Ահա ջերմ սրտով երգենք մաղթանքներ,
Փառք, փառք քո ողորմութեան,
Փառք քո անուան, ազատութեան:

Տուր երկար օրեր մեր Ռուսաց Կայսեր
Հանդերձ Ընտանեօք, Աստուած մարդասէր.
Փառք, փառք քո ողորմութեան,
Փառք քո անուան, ազատութեան:

Գ. Ք. Գրիգորեանց.

2.

«Աւաղ փառաց անցաւորի».

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ.

Աշխարհէ աշխարհ, ծովէ ծով անցար,
Ցաջող, անվնաս արիր տուրևառ.
Այսպէս քո բաղդի շահաբեր նաւակ
Բերեց ու հանեց քեզ փառաց վիճակ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ վաճառական,
Մինչև չըտեսնեմ քո յետին վախճան:

Անբաւ մեծութիւն, դոյք, դանձ անսպառ
Քաջ Կրեսոսի պէս դու էլ ձեռք բերար.
Ապրում ես անհոգ, հանդիստ ամեն ժամ,
Ինչպէս որ Եդեմ ապրեց հայր Ադամ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ ազնիւ հարուստ,
Մինչև չըտեսնեմ քո յետին ապրուստ:

Լողում, շրջում ես ականց ծովի մէջ,
Ինչպէս Շամիրամ Վանայ ծովի մէջ.
Զեկաւ մի դըշխոյ այս աշխարհի դուռ,
Որ քո պէս կապէր նարօտ ոսկեհուռ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ ազնիւ տիկին,
Մինչև չըտեսնեմ քո վիճակ յետին:

Հրճվում, խնդում ես ինչպէս երեխայ,
Կարծես մայիս է թառել քո վերայ.
Թէ որ քեզ պճնած տեսնէր Անահիտ,
Ճիշտ պիտի կարծէր շարած մարգարիտ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ ով օրիորդ,
Մինչև չըտեսնեմ քո փառքդ յետնորդ:

Բընութեան ձեռքից ծընար բարեբաղդ,
Ընկար մօրդ գիրկ իբրև չքնաղ վարդ.
Աստուած թէ վարդին պատուաստեց հոտով,
Քեզ էլ զմռսեց հանճարով, ճիրքով.
Բայց չեմ երանիլ քեզ՝ մանուկ տհաս,
Մինչև չըտեսնեմ քո վերջին օրհաս:

Ամեցին քո մէջ զէտ հսկայ կաղնիք,
Փրփրոտ բերանով Սէր, Եռանդ և Կիրք.
Ապրում ես ազատ, սէդ, սօս ու զուարթ,
Քո պէս երջանիկ չըկայ ոչ մի մարդ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ երիտասարդ,
Մինչև չըտեսնեմ քո վերջ և քո բաղդ:

և՛ Նորա անհուն և՛ Նորա զեղուն շնորհով արկածից, սքանչելի կերպով, ողջ և առողջ ազատվում են՝ Թագաւոր Կայսրը, Կայսրուհին, Թագաժառանգը, Մեծ Իշխանները, Մեծ Իշխանուհիները և Կայսերական բոլոր Թիկնապահները։ Այդ ազատութեան յիշատակը յաւերժացնելու համար, Կայսերական գնացքի խորտակման տեղում, այժմ եկեղեցի է կառուցուած։ Այս «Մաղթանքը», ձայնագրութեամբ պ. Կարա-Մուրզայի, առաջին անգամ երգեց Նորա 50 հոգուց բաղկացած երգեցիկ խումբը, Բագուի Աղէքսանդրեան դահլիճում, 1889 թ. Նոյեմբ. 26-ին կազմած համերգում։

Գ. Ք. Գրիգորեանց.

Դարբին քեզ տուեց մահաբեր սուր, զէն,
Տաք սիրտ էլ առաջ դարբնի բովէն.
Եղաջ դռռ մարտեր, խոյացաջ սարեր,
Գետին փրռեցիր յաղթական քաջեր.
Բայց չեմ երանիլ քեզ՝ կարիճ զինուոր,
Մինչև չքաւանեմ քո փառքդ բոլոր:

Պաղել են քո մէջ աշխոյժ և վառ խանդ,
Որոնցով արիր աշխարհ քարուքանդ.
Այժմ տանդդ մէջ նըստած լուռ, հանդարտ,
Անցնում ես ուրախ օրեր բարեբաղդ.
Բայց չեմ երանիլ քեզ էլ՝ ծերունի,
Քանի քո վերջն էլ դեռ չէ ինձ յայտնի:

Թէ որ մշտավառ արև ու լուսին
Ցիծաղ էլ ծանակ իրենց երեսին
Գան, խօսեն ինձ հետ, թէ իրենց փայլով
Պիտի աշխարհին պահեն իւր փառքով,
Ես չեմ երանիլ նոցա էլ փառքին,
Քանի նոքա էլ մեղ պէս վերջ ունին:

Կամ թէ բարձրուղէշ կաղամախ, նոճիք
Ինձ հաւատացնեն, թէ անվերջ տարիք
Պիտի վերճեմեն 'ի գոգ Լիբանան,
Պիտի ուռճանան մեր լերանց ծընկան.
Նոցա էլ երբէք չեմ երանիլ ես,
Քանի նոքա էլ վերջ ունին մեղ պէս:

Այլ ես կ'երանեմ այն վաճառողին,
Որ արդիւնք կրաց յօգուտ իւր ազգին:
Ես միշտ կ'երանեմ այն ճոխ մեծատան,
Որ միշտ սովելոց կրկանգնէ պաշտպան:
Ես բիւր երանի կրտամ այն տիկնոջ,
Որ միշտ կրկրթէ իւր որդիք բողբոջ:

Ես միշտ կ'երանեմ այն օրիորդին,
Որ ամբիծ վարքով կապրէ ըստ կարգին:
Ես բիւր երանի կրտամ այն մանկան,
Որ միշտ կրձգտի մեծ, բարի անուան:
Ես միշտ կ'երանեմ այն կայտառ մարդին,
Որ միշտ կրփայլի գործերով անգին:
Ես բիւր երանի կրտամ այն քաջին,
Որ միշտ հետևող կրլլի Վարդանին:
Ես միշտ կ'երանեմ այն կրարիճ ծերոյն
Որ հոգի կրտայ իւր ազգի սիրոյն:

Իսկ թէ չե՛նք ապրիլ մենք այս օրինակ,
Իրաւ եմ ասում, մեղ և մեր փուչ փառք
Կ'ողբանք, կ'աւաղենք մենք էլ դառնապէս,
Ինչպէս որ ողբաց մեր քաջն Արտաշէս:

Սահակ Սարկաւագ.

3.

Քաջն Վարդան.

Աւարայրի դաշտը ներկեց արիւնդ,
Կարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան.
Ցաղդէ յաղդ կ'յիշուի անմահ անունդ,
Կարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Մեռար, թողիր անմահ անուն յիշատակ,
Քո գործքերով դարձար բարի օրինակ.
Դու սուրբ գործի համար եղար նահատակ,
Անմա՛հ Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Բեկ դրդռեց ջերմ հայրենեաց եռանդը,
Պաշտպանեցիր Փրկչիդ տուած աւանդը,
Դուրս վանեցիր Զրադաշտեան աղանդը,
Դու, վե՛հ Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական։

Աշրդ-Զիւանի.

4.

Մեր ազգի անցեալ եւ ներկայ դրութիւնը.

Անցան օրեր, տարիք, դարեր,
Անցան պարսից բռնութիւն.
Մեր խեղճ ազգից արդ վերացան՝
Նոցա մոլի յարձակմունք։
Ամեն տարի, ամեն ամիս
Հայն պատերազմ կըտեսնէր,
Եւ նորա մէջ նորա արիւն,
Ո՜հ, անխնայ կ՚թափուէր։
Ամեն բոպէ նա պատրաստ էր՝
Իւր թշնամեաց յարձակման.
Ա՜խ, այսպիսի տանջանքներով
Մտնում էր սև գերեզման։
Կամ մտնում էր նա գերեզման,
Կամ թափում էր իւր արիւն,
Կամ բանտարկուած չարչարվում էր՝
Փառք տալով իւր Ստեղծուն։
Ա՜հ, այսպիսի դառն օրերով
Տարիք դարեր անցուցին
Եւ բիւրաւոր մարդ նորանից
Զէնքը ձեռին զոհուեցին։

Իսկ այժմ հայն՝ անհոգ, հանգիստ,
Դոցանից է ազատուած,
Եւ միմիայն իւր տնային՝
Գործերով է զբաղուած։
Էլ չի սպասում նա թշնամուց՝
Հալածանքներ կրելու,
Էլ չի սարսափում պարսիկներից՝
Կրթակապաշտ լինելու։
Նա պաշտում է իւր հաւատը,
Նա խօսում է իւր լեզուն
Եւ աներկիւղ նա սիրում է
Իւր հայրենիք, հայութիւն։—
Որովհետեւ աջն հովանի
Կայսերութեան վեհ Ռուսաց
Մեզ պաշտպան է և կլինի՝
Մինչ աշխարհի կատարած։
Եկէ՛ք, ուրեմն, ով հայ եղբարք,
Եկէ՛ք փառք տանք Արարչին,
Եւ խնդրենք մենք երկայն կեանք՝
Ալէքսանդր Կայսերին։

Էմին Տէր-Գրիգորեանց.

5.

Արմավանցիների գովասանական երգը *)

—Աղջկե՛ր, պա՛ր բռնեցէ՛ք,
Արմիկի երես գովեցէ՛ք.
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չ՚թողնես սևերես։

*) Արմավանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութիւն էր անում, նորա վերայ գովասանական երգ էին շի-

«Բարձր սարէն պաղ ջուր կուգայ
Արմիկի երես կը լուայ.
Մէյ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կերես»։
—Աղջկե՛ր, պա՛ր բռնեցէ՛ք,
Արմիկի աչեր գովեցէ՛ք.
Մէյ աչեր, սիրո՛ւն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր։
«Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ.
Մէյ աչեր, վառ վառ աչեր,
Մանուշակի թառ թառ աչեր»։
—Աղջկե՛ր, պա՛ր բռնեցէ՛ք,
Արմիկի կռներ գովեցէ՛ք.
Մէյ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ։
«Արմիկի կռներն է դերան,
Կը պատռի վագրի բերան.
Մէյ կռներ, զթոտ կռներ.
Դուք կը բանաք մեր փակ դռներ»։
—Աղջկե՛ր, պա՛ր բռնեցէ՛ք,
Արմիկի հասակ գովեցէ՛ք.
Մէյ հասակ, բարձր հասակ,
Քեզ կը վայելէ դափնեայ պսակ։
«Արմիկի հասակն է սօսի,
Շուքը մեզանից չը պակասի.

նում ու երգում ամեն տօն օր։ Երգում էին տղերքն ու աղջիկները ձեռք ձեռքից բռնած, խմբով ու պարելով։ Այսպէս էլ Արևամանուկի (Արմիկի) վերայ շինեցին այս գովասանական երգը, որ երգում էին տղերքն ու աղջիկները փոխ առ փոխ։

Ղ. Աղայեանց.

Մէյ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չի տար քեզ դափնեայ պսակ։
(Միասին ու թռչկոտելով)
Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան.
Վագրի բերան—ահա՛ այսքան—
Ժանիքները մէկ մէկ գերան.
Ապրի Արմիկ, ապրի շատ օր...
Իր թշնամին ընկնի դէր...

«Մայրենի Լեզու».

6.

Վանեցի գեղջուկի տաղը.

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու,
Էրթամ ախոռ, գոմշուկներըս լըծեմ՝ դուրթան վարելու։
Դէհ, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, ալաը էրթանք, աշխատինք,
Հարկ ու խարճի վատէն մօտ է. վօթենք ալուն ու քրտինք։
Հայի դուրթա՛ն, հայի դուրթա՛ն, որի՞ համար կը ջանաս
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս։
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի՝ ազատ օրըս կորուցի,
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի։
Բա՛ւ է, դուրթան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի.
Դուն տեսար որ՝ մեր դուշմանը ամօթ, խելք ու գուրթ չունի։
Արի՛ փըրեմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,
Կըռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու։
Եղբարք հայեր՝ առէ՛ք խոփը, տըւէ՛ք դարբինին կըռելու,
Կըռել—կոփել սուր ու սուսեր՝ հայաստանը փրկելու։

Գամառ-Քաթիպա.

7.

Այծեամ.

Անհոգ ես, չե՛ս գիտեր, ի՛նչ կայ քո մասին,
Պարավում են քո խեղճ անձի վեսասին
Գամբռներով, բարակներով միասին.
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Զազիկներդ տխուր լալիս են, լալիս։
Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
Կուզէ ձեռքերը քու արիւնով լուայ,
Խղճալի՛, քու տեղակ սար ու ձոր կուլայ.
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Զազիկներդ տխուր լալիս են, լալիս։
Որսկանը գութ չունի, կանէ կլակը,
Կամ քեզի կ'սպանէ, կամ քու զաւակը,
Զուր չի անցնիլ հրացանի գնդակը.
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Զազիկներդ տխուր լալիս են, լալիս։
Դաշտումը չե՛ս ման դար, թէ մտածես լաւ,
Քեզ կ'վերաւորեն, կ'սատանաս մեծ ցաւ,
Դուրս մի՛ ելլեր խիտ անտառից դու բնաւ.
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Զազիկներդ տխուր լալիս են, լալիս։

Աշրդ-Ջիւանի.

8.

Աղատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հոգանութիւն շինուածքին
Կենդանութիւն պարգևել

Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրումէի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն որ ասացի
Զէ՛լ հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութի՛ւն դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՛ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
«Ազատութի՛ան դու զենուոր
Կամիս գրվել այս օրից։
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»։
—Ազատութի՛ւն,—գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,

861-2011 (31/8/17-6)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА

Թող դաւ գնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախարան
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար. ազատութի՛ւն։

Մ. Նալբանդեանց.

9.

Հասօի երգը.

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եղներ,
Ցառաջ տարէ՛ք արօրը։
Վարը վարենք, ակօս փորենք,
Խո՞ր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալի մէջ։
Կը գայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրախ կ՝անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը։
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եղներ,
Շուտով վարենք արտերը,
Թող չ՝ասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Հասօի եղները։

Ռաֆֆի.

Պարեղանոս Պողոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

10.

Օրօրոցի երգ.

Արի՛, իմ սոխակ, Թոռ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տըղես աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։
Եկ, աբեղաձագ, Թոռ արտ ու արօտ,
Օրօրէ՛ տըղես, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։
Թոռ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վրվրույով տըղես բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սըղտաւոր դառնալ։
Կաչաղակ՝ ճարպիկ, դող, արծաթասէր,
Շահի զբուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ։
Թոռ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ՝ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

Գասպար Բաղիպա.

Պարեղանոս Պողոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

11.

Արաքսի ափերով.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եղերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։
«Արաքս՝ ինչո՞ւ ձրկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նըման։
Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեգ, հրպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի՛ պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կըհասնիս դէպի ծով։
Վարդի թըփեր թո՛ղ բըսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։
Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին,
Ճըկուն ոստըն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։
Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մրանին միշտ արձակ»։
Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից.

«Խիզա՜խ, անմի՞տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր
Վըրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։
Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնուի
Իր զարդերով թանգագին։
Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն ինձ են տեսել,
Շատերին ես օտար եմ։
Կար ժամանակ, որ ես էլ
Շըքեղաղարդ հարսի պէս
Հաղար ու բիւր պըչըտանքով
Փախչում էի ափերէս։
Ցատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջըրիս միջին էր լողում։
Ի՞նչքս մընաց էն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։
Տուրքը ջըրի ամէն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընուցդ
Պարգևում է լեռատատ.
Բայց ես այն սուրբ ջըրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի յօդեմ արտորսցէ՛ն
Իմ տակի օտարին.

Կամ՝ կենսատու իմ ջրրով,
Ափերիս մօտ կրկրզած,
Իւր նամՃը կատարէ
Թուրքը կամ Պարսիկ հոտած.
Մինչ իմ որդիք—ՈՎ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յաՃուում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...
Հեռու հեռու քըշեցին
Բընիկ ազգը իմ հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն, մոլեկան:
Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ՝ դոցա՞ հրապուրեմ
Ճրպռռա, պրըշած աչերը:
Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սըգուոր կըտեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»...
Էլ չի խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Ռ. Պատկանեան.

12.

Արի՛ ինձ անգամ կալ, այ դիվան սիրտ,
Հայտ սիրէ՛, ազատ սիրէ՛, տր սիրէ՛.
Աշխարքքըս քունն ըլլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստուած սիրէ՛, հօքի սիրէ՛, եար սիրէ՛:

Էն բանն արա՛, վուր Աստուծու շարքումն է,
Խըրատներըն զըրած՝ «Հարանց Վարքումն» է,
Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է՝
Գիր սիրէ՛, ղալամ սիրէ՛, դավթար սիրէ՛:

Ե՛կ, արի՛, սի՛րա, մի՛ կէնա գուն մէ դամաղի,
Հալալ մըտի՛կ արա հայի ու աղի,
Էնց բան արա՛ մարթ վըրէդ չը ծիծաղի՝
Խըրատ սիրէ՛, սաբր սիրէ՛, շար սիրէ՛:

Հընդարտութին չի անիս՝ դուր դու քաս Տէրիդ,
Խօնարհութին արա՛ կանց քիզ դէվէրիդ,
Աստուած դիփունանցըն մին հօքի էրիտ՝
Աղկատ սիրէ՛, ղօնաղ սիրէ՛, տար սիրէ՛:

Սայեաթ-Նովա, էրնէ՛կ քիզ թէ էս անիս՝
Հօքուդ խաթրի մարմնուդ ունըրը կէս անիս.
Թէ դ՝ուզիս վուր դադաստան չը տէսանիս՝
Վանք սիրէ՛, անտառատ սիրէ՛, քար սիրէ՛:

13.

Ա՛ռ քեզ, ահա՛, առ քեզ, մայր մեր քաղցրիկ Հայաստան,
Քո հարազատ զաւակունք նոր աւեսիս կը կարդան.
Բախտ նոր սիրոյդ եկ ղրկաբաց, եկ քեզ ընդ առաջ,
Փարատեցաւ մութ դիշերոյդ սուգ և արտասուք անցին բաց.
Սթափեցաւ սերունդ Հայկայ, զարթեան ազգասէրք.
Աւերակներ քո նորոգին, ուսմամբ կանգնին տաճարներ.
Ցաշխարհաջահ լոյս գիտութեան մանկունք քո խայտան.
Սէր անպղտոր դէպ հայրենիս՝ սէրս այս կացցէ
յաւիտեան:

Յովսէփ վ. Փինաչեանց.

14.

Աղնի՛ւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զ'գնահատած ոչ ոքից.
Բայց հաւատեաւ անձնանուէր
Աղջիս մշակ կ'հաշուիմ։

Աղնի՛ւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա՛ և դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը հայոց ազգի
Կաբեկցաբար մոռանի՛ր,
Ոսկէ գլխոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Աղաւ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան
Իւր խնկելի քաջերով։

Հայրենիք, սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջև
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև։

Իմ մտերիմ, մահը մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով։

Ս. Շահազիզեանց.

Ստեփաննոս Պողոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Ասարաքան

15.

Երգ ուրախութեան.

Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէրժ միութեան.
Զի՞ վայելուչ՝ որդիք հայկեան
Մէկտեղ հրճուին ու ցնծան։
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Վերցո՛ւր աչքդ յերկնից կամար,
Փայլի հեռուն ասաղ մի պայծառ.
Եւ դու, ո՛ հայ, զարթի՛ր, սի՛րտ առ,
Հայոց բաղդն ալ չէ՛ խաւար։
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Բաւ է այսքան բաժանում,
Ըլլամք ուրախ և խնդում,
Նախանձ, վրէժ ձեզ թողնում,
Անդունդք և վիհք անհատնում։
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ'ալ ընենք միութեան,
Լեցուի փափագդ, հայաստան,
Տե՛ս, որդիք քո միանան։
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Ինչ և ընեմք, ինչ կերպ առնեմք,
Ո՞չ չը դիտեց թէ մեք հայ եմք,
Ո՞վ չը դիտեր թէ եղբայր եմք,
Արիւք ծիծաղ դիմաք երդեմք.

Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։
Ո՞ր բռնաւոր, ո՞ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր
Ազգիդ օգուտն ու բարիքներ,
Սիրոյ դահն է յերկինս ի վեր։
Կրեմք սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

16.

Սայլորդ.

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս-թռչում,
Եւ Վալդայի տխուր զանգակը
Կամարի տակն է զոզանջում։
Արթուն սայլորդը գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տխրեց,
Եւ սիրեկնի աչաց կաթողը
Նա տխրագին ձայնով երգեց։
«Կապուտ աչեր, կապուտ աչեր,
Կարոտիս կեանքը մաշեցիք,
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք, չար ոսոխներ,
Ինչո՞ւ սրտերդս բաժանեցիք»։
«Մընաս բարև, իմ տուն հօրական,
Մընաս բարև, իմ սիրական,
Ես կը հանդչիմ գինչ բոց կրակին
Այս անբնակ դաշտի միջին»։
«Արևիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ ոչ եմ ես,
Սրբոտիս կարօտ աղջկայ տեսնելից
Մինչև ի մահ գրկուած եմ ես»։

Այս որ ասաց՝ շարժեց մարակը,
Երեք ձիանց մէջքին խրփեց,
Իւր սիրեկնի պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց։

17.

Ի միութիւն Հայոց.

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բարձուստ
երկնաձեմ,
Հայոց բազդին հեծեալ ի կառս բարձր գոչէ զուարթագէմ.
Հղօր պատգամ,
Ի վերուստ գամ,
Միութիւն, հայք,
Եւ նոր ձեղ կեանք.
Տրոփեն ուժգին և լանջք և սիրտ.
Խաղայ արիւն ի թինդ ի թինդ.
Մեղս կաթի սուրբ սէրն ի խինդ.
Յառաքինոյն ի հայու սիրտ.
Սիրաբորբոք համբոյր բղխեն,
Արտասուաթոր աչքունք ցօղեն.
Արի՛ք, հայկազունք,
Ի սէր փութասցուք,
Եռանդուն մատիք
Ի համբոյր հեղեկ.
Տո՛ւք համբոյր մի ևս,
Բացէ՛ք ղձեր թևս,
Տո՛ւք համբոյր մի ևս,
Սիրոյ է պարգևս.
Կեցցեն յաւերժ վեհ հայկազունք,
Անմահութեան սիրուն սերունդք.

Կեցցէ՛ յաւէրժ Հայկայ ոգին,
Մեզ են վկայ երկիր երկին։
Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ ի շանթից ահարկու,
Այլ յանկարկի և եթ սիրոյ վերատացեալ կենսատու.
Երկին երկիր
Կան 'ի յաղթիւ,
Ընդ հայ ազգիս,
Բիւր հրաշալիս։
Բացցին անգունդք սեաւ անյատակ,
Ծածկել զբազդին հին յիշատակ.
Տիեզերաց բացցին մատեանք,
Անդէն գրոշմել հայոց պարծանք.
Կեցցէ՛ հայոց սէր զանծալի,
Բերող փառաց նախանձելի։
Այրի՛ք, հայկազունք և այլն,
Ի սէր փութասցուք և այլն։

Գէորգ Ապգուլլան.

18.

Առաւօտեան երգ շինականաց.

Ա՛յ մարդ՝ այսօր շատ քընեցար, նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փրռուեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գընացին,
Ցորեն, գարին գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նատան հանդչել կաղնիներու հովումը։

Ա՛յ մարդ՝ վե՛ր-կաց սառը ջրով լուացվե՛ր,
Գօտիդ կապէ՛, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձքդ արա՛ արտումդ,
Հունձքդ հնձէ՛, մի՛ ծուլանար գործումդ։

Հունձքդ կապէ՛, բարդդ բարդէ՛, տուն արի՛
Հանգստացի՛ր, երբ քո հունձքդ կատարի,
Բե՛ր գերանդիդ, կախէ՛ պատին քո տանը,
Ես երեկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՛յ մարդ՝ հերիք, ինչ որ այսօր քընեցար,
Աչքդ մէկ բաց, տե՛ս թէ ո՞րչափ ուշացար.
Մեր գրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լուռել է մեր գզիրը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել սիրական,
Արեգական շողը հասաւ մեր գլուխն.
Մի՛ ծուլանար, ժամանակդ խնայէ՛,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

Ռ. Պատկանեան.

19.

Ուսանող

(Թարգ. Գերմաներէնից).

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
Որ միշտ անկախ է,
Որոյ տունը ամեն տեղ է,
Ի՛ անփող ուրախ է.
Ուսանողն է այն զուարթ մարդը,
Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը։

Այն ո՞վ է արև ծագելիս՝
Ինքն էլ զարթնում է,

Ու քաղցր ձայնով երգելիս՝
Փողոցները չափում է։ Ուսանողն է, և այլն։

Ո՞վ երբէք սէրից չի վախում
Ու միշտ հարս ունի,
Եւ իր անձոխ, անպերճ կեանքում
Դարդ ու հոգս չունի։ Ուսանողն է, և այլն։

Ո՞վ է միշտ առաջին կռուվում
Հայրենեաց համար,
Փայլուն գինին շիշով կոնծում
Ուրախ, բայց արդար։ Ուսանողն է, և այլն,

Եղբա՛րք՝ դուք որ այն ազգիցն է.ք,
Գինին պատուեցէ.ք,
Ուսանողական պատիւը
Հաստատ պահեցէ.ք։

Իրաւ. մենք ենք այն զուարթ ազգը,
Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը։

Բ. Տ.-Պ. Պատկանեան.

20.

Անի քաղաք.

Անի քաղաք նստեր՝ կուլայ,
Զկայ ըսող՝ մի՛ լայ, մի՛ լայ,
Կըսես՝ քիչ է՝ թո՛ղ ճնայ՝ լայ.
Ա՜խ, ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի լայ։

Շատ ցաւերով կայրիմ՝ տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս դայ՝ մօտենայ,
Հէչ չէ՛ ըսէ՝ մի՛ լայ, մի՛ լայ։

Ա՜խ, հայ ազգայ, խղճա՛ ինձի,
Տե՛ս քո Անին ի՞նչպէս է,
Հերիք՝ ես լամ, դու չ'գթաս.
Զէ՞ քո Անին ափսոս է։

Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բախտս բնաւ գլխս մոռացաւ։

Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողովեր եմ գլխուս քօռ բուեր,
Որք միշտ կ'երգեն «Անին անցաւ,
Անին անտէր աւերեցաւ»։

Անին եմ շատ մարդաբնակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լայն, իմ կոծն, իմ աղաղակ՝
Անտէր որբերու նմանակ։

Երբեմն էի շատ անուման
Հայոց քաղաք արևելեան,
Աւերեր եմ սեփհատակ,
Նստեր՝ կուլամ ես միայնակ։

Եկար, տեսար. դարձեր՝ կերթաս.
Լալով կ'սես «բարեաւ մնաս»,
Ատուած սիրես, չ'մոռանաս,
Մասիս սարին երբ մօտենաս,
Ըսես իմ քաջ Արարատին.
Նստեր՝ կուլայ քո խեղճ Անին»,
Կըսէ, ե՞րբ աւետիք կ'տաս,
Թէ՝ «Ի՛մ Անի, հերի՛ք է լաս»։

Աղէքսանդր վ. Արարատեան.

21.

Առ Հայաստան.

Ա՛ռ ընկալ 'ի գիրկդ, մայրդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ ասա և անդ.
Տե՛ս ինչպէս սիրովդ և քու կարօտովդ
Վառուած բոլբոքած քու տեսոյդ ցանկան.
Արի՛, կա՛ց, ուրեմն, ո՛վ մայր Հայաստան,
Նոր ոգի զգեցի՛ր փառաք անվախճան:
Օ՜ս զբահաւորիմք, ո՛վ որդիք Հայկեան,
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան,
Զօրանա՛նք սիրով և սուրբ միութեամբ
Ըլլալ ախոյեան ընդդէմ թշնամեաց.
Հապա գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անզբաւ:

Տ. Փափազեան.

22.

Ասուա՛ս գիմայիր՝ ո՞ց գիմանամ—մի՞թէ ես եմ քար՝
Դարդիս ա՛ռա մէկ ճար:
Կեանքս մաշել ես բոլորովին՝ ամենը խսպառ՝
Էս ցաւն է դժուար:
Էսքան նեղութիւն ինձի մի՛ տար անողորմաբար,
Ո՛վ դու իմ սիրահար:
Ե՛կ, սէ՛ր իմ ազնիւ, աղաչումեմ, խղճա խղճալոյս՝
Տո՛ւր բաւականին յոյս:
Ողորմութի՛ւն արա ադքասիս՝ քաշի մնալդ տա՛ր՝
Տանջել մի՛ չարաչար:
Վախտ որոտումես, վախտ ամպումես, վախտ մթնումես շատ՝
Անձրևումես կաթ կաթ:

Խոցուած սրտիս նշան է դրել՝ ունքիդ անեղը՝
Դու իմ ճար ու դեղը:
Ուրիշների հետ մեն գալը՝ քեզ ապաթ ես արել՝
Ինձի եաղ ես արել:
Ես իմ բաղդիցն եմ գանգատաւոր միշտ և մուղարար՝
Ինձ չէ՛ տալիս դադար:
Ցաւդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ՝
Ինձ է՞ս ա քու խելդ:
Ինձնից աւելի, ասա՛, տեսնեմ, էլ ո՞վ ա տէրդ՝
Ինձի նա տայ քու սէրդ:
Դու քու դարդերդ լաւ գիտես՝ խեղճ Ադամ Աղբար,
Խալխին ինչ ա խաբար:

23.

Գարուն.

(Մանկական երգ).

Ա՛հա եկաւ մեր գարուն
Ու զարդարեց դաշտերուն.
Գոյն գոյն ծաղկունք մեղ բերեց
Սիրուն գարուն, մեր գարուն:
Գոյն գոյն ծաղիկներ
Գրնանք քաղելու,
Տէրին փառք տալու:
Զմեան չորցած գետինը,
Տեսէք, ինչո՞վ է ծածկած.
Կարմիր, դեղին շուշանը
Զարս բոլորքին է սփռած:
Գոյն գոյն շուշաններ
Գրնանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Մի քայլ յառաջ՝ մենք, խակոյն,
Տեսնումենք վարդ գոյն զգոյն.
Վարդի միջին սոխակներ
Երգումեն միշտ անհամբեր։
Գոյն զգոյն վարդեր
Գընանք քաղելու,
Տէրին փառք տալու։
Վարդի թփեր կարդ ի կարդ
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա տակ բարդ ի բարդ
Մանուշակներ բուրումեն։
Փունջ փունջ մանուշակ
Գընանք քաղելու,
Տէրին փառք տալու։
Այսպէս, ահա, ամեն տեղ
Խայտայ, ցնծայ բնութիւն,
Իսկ պանդխտին օտար տեղ՝
Զուսի ոչ մի բերկրութիւն*)։
Մի՛ տխրիր, պանդուխտ,
Պահի՛ր քո սուրբ ուխտ՝
Տէրին փառք տալու։

Ա. Գրիգորեանց.

24.

Խ մ բ ե ա կ.

Արկածք հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.

*) Այսպէս էր տողերիս գրողի զգացմունքը, երբ 1868 թ., թողնելով իմ հօրական տունը, իմ հայրենիքը—Նուխին,—այդ բնութեան հրաշալեաց կենտրոնատեղին, ուսանում էի Բագուի Ռէալական Գիմնազիօնում։

Գ. Գ. Գրիգորեանց.

Ուխտեմք ի սէր եղբօր՝ զկեանս դնել զրաւ,
Օ՛ն անդր ի մէնջ այր ընկերին լարել դաւ։
Սլացաւ ի մէնջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր,
Եղբայր զեղբայր դգուէ զթով,
Ճոխն աղքատին մատչի սիրով։
Էանց զիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցող ժպտին Մասեաց արօտ.
Եւ վառ ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծըփայ 'ի ծով։
Հնապա, մանկունք,
Վէհ քաջալուրք,
Ի գլուխ պսակ
Ի յաղթանակ։
Առեալ նուագս,
Յարքաս արագս.
Օ՛ն փութասցո՛ւք,
Օ՛ն երգեսցո՛ւք։
Սէր և գութ
Մեր պսակ,
Առ մեր բաղդ
Հրաւիրակ։
Ցնծասցին,
Որք լսեն
Թէ՝ «Ուր հայ,
Զի՛ք՝ անդ վայ»։

Եղիազար Մէլիքեան.

25.

Առաջին Տարեդարձ ազգային Սահմանադրութեան

1861 թ. մայիսի 24, Կ. Պոլիս.

Արի՛ք, Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ՚ալ տանք.
Որ Ազգն երբ զԱնի փրկարար զոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգևեց.
Եկա՛յք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:
Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց:
Յառաջդիմութիւն բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան զոչել պարտ է մեզ.
Կեցցէ, և այլն:
Ջնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարգաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել զործոց ազգային:
Այն որ Աստուծու ձայն ուսաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ՚այնպիսի.
Կեցցէ, և այլն:
Հայերս անարգված գրկեց, բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած
Մարդկութեան երկրորդ նշանն է գրած:

Որուն շնորհիւ յարդ ստացանք մենք,
Անոր յարդ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ, և այլն:
Դուն ալ, Հայաստան, սիրուն Հայրենիք,
Այ այսուհետև մի՛ սրգար լռիկ.
Զի՛ ա՛լ քու որդիքդ նոր ոգւով բերկրեալ,
Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ:
Ա՛լ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ, և այլն:
Հայե՛ր, միանանք մեր մօրն հետ, օրհնե՛նք
Զանոնք, որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ:
Թող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Յ. Գ. Սրվաձեան.

26.

Ողբ Զուզայեցւոց.

Ափսոս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան եղաք անմեղ, անխորհուրդ.
Գերի գնաման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տրկլոր, թշուառական:
Խարիւբ ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չ՚դրաք,
Խիմի ձեր խօր մոր դերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշի տուաք:

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն դեղերն
Ո՞ւմն աք թողման դուք, որ զընման աք,
Էսպէս կը լինի՞ որ մոռանում աք։

Վախում ամ էնպէս մոքերնուդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք՝ մոքերնուդ չ՚ընկնի,
Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէք,
Էսպէս խայրենիքն քանդած թողեցիք։

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Աբարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զ՚մոռանան մինչ ի օրն դատաստանի։

Աչքըս կուրանար, շլինքս կտրուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չ՚տեսնէր.
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր։

Ստեփան վարդապետ.

27.

Հայաստանու հողը

Հայաստանի հողը էն հողն է, էն հիանալի աշխարհն է, ուր տեղ որ դրախտն էր եդեմական, ուր Աստուած՝ բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսայ սարը միայն արժանի տեսաւ, որ Նոյեան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ էդ մարդիկ բազմանան ու ուրիշ երկիրներ էլ շինութիւն դցեն. էն սուրբ հողն է, ուր որ անպարտելին Հայկ իր մղբախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց։ Էն ընտիր հողը շատ ուրախութիւն տեսաւ, շատ գեղեցկութիւններով

զարդարուեցաւ, շատ թշնամուն նախանձելի դառաւ։ Դա էն սուրբ հողն է, ուր Բագրատունեանք, Ռուբինեանք՝ իրանց հազար թշնամու ձեռի անտէր մնացած Հայրենիքը էլ եդ գերեզմանից հանեցին, էլ եդ նոր հոգի տուին. էն օրհնեալ հողն է, ուր Ասորիք, Պարսիկ, Հոնք, Ալանացիք, Մակեդոնացիք, Հռովմացիք, Արաբք, Օսմանցիք, ջըրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին,—թրի, կրակի մատաղ արին. ուր տեղ որ սար չի մնացել՝ որ արին չ՚տեսնի, քար չի մնացել, որ մարդ տակով չանի ու հարիր մեր հարեւան ազգեր էնպէս են հողի հետ հաւասարուել, կորել՝ որ էս օր ո՛չ նրանց շունչը կայ, ո՛չ անունը,—բայց սուրբ Հայոց ազգը, անյաղթելի Հայկայ որդիքը, իրանց կեանքը, թագաւորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն եաւ, որ տեսան՝ թէ էս աշխարհակործան ջրհեղեղէն, էս դաղան ազգերին չեն կարող դիմանալ, աչքերը երկինքը գցեցին, գլխները գոգընելը դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից, սիրտը սրտի տուած, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ոչ էլել ա, ոչ կըլի։ Նոյեան դէսը վեց հազար տարի Հայոց խեղճ ազգը հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրէնի ձեռին էր աչք բաց անում, նրանց հետ քեալլայ տալիս, ու շատին շատ անգամ իր ոտի տակին գցում... բայց կարո՞ղ է վարդը ծովի միջում զօրանալ, կարո՞ղ է մանուշակը կրակի առաջ դիմանալ, կարո՞ղ է կակղ ցորենի հասկը էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել ա, ետ դիմացել։

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնեմ, Հայոց ազգ, Հայոց աշխար՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, որ դուք

էս հոգին ունեցաք, էս սիրտը ձեր միջում պահեցիք, էս հրաշքը աշխարքին ցույց տուիք. էն ի՞նչ քարացած սիրտ պէտք է ըլի, որ ձեզ չսիրէ, ձեր փառքը չ՚գովի: Դուք իրար պահեցէք, ձեր հողն ու ազգը պաշտեցէք, այ հայ ազգերք,—բայց աչքս ճամբի ա, ականջս ձէնի՝ ձեր ջանին զուրբան՝ չ՚թողաք, որ էս մուրազը հետս գերեզմանն տանիմ ու հոգումն մարմինս քրքրուի, երկրնքումը հոգիս տանջուի, երբ իմանամ թէ ձեր սէրը պակասել ա, ձեր բարեկամութիւնը ցամաքել:

Խաչատուր Արովեանց.

28.

Ն կ ա ր ի չ.

Ակնապիշ, անձայն խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մրաքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր-ցան առաջիդ,
Վշեայ կրտաւը քու հանդէպ փռած:

Շուռ-տուր աչերդդ, նայէ՛ դէս ու դէն,
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթի՛ր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոխը:

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...
Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորքով,
Հըսկայի սիրտդ թընդաց խիստ ուժգին:

Առիր վրձինը, թաց-արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կտպիա կրտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է ընաւին:

Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տըւիր պատկերին մատիդ շարժուածով,
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով:

Ապշեց ամբոխը. վազեց, յառաջեց
Քու կենդանադիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմռուս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն. «դա է իմ Աստուած»:

Բայց, ա՜խ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հաղիւ դին դըրին.
Սաւղծողդ դարձար քու խեղճ խըրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

Ռ. Պատկանեան.

29.

Երգ մեռանող ընկերի.

«По синимъ волнамъ океана»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Աղնի՛ւ ընկեր, ինչքա՞ւ այդպէս
Թողնում ես ինձ վշտալի
Ու չես կամում դու քո սրտի
Գաղտնիք յայտնել մի առ մի:

Ահա՛ ես քո միակ ընկեր,
Վերջին համբոյր քեզ տալով՝
Դարձնում եմ քեզ իմ այս խօսքեր
Արտասուալից աչերով.—

«Իմ սրտակից աղնի՛ւ հոգի,
Թըռի՛ր ահա՛ դու շուտով
Դէպի Փրկիչ քո Յիսուսի,
Նորա բարիք տեսնելով:

Հանգի՛ր այնտեղ, այն սուրբ երկրում,
Դարէ ի դար ցնծալով,
Պատճառ, քո բաղդն այն աշխարհում
Պիտի ժպտայ խայտալով։

Պիտի քո բաղդ ոստոստելով
Ժպտայ այնտեղ, որտեղ որ
Շատ սոխակներ քաղցրիկ ձայնով
Կերգեն և քեզ ամեն օր։

Իսկ ես ուխտում ու պատրաստ եմ
Զբմռանալ քո գործեր
Եւ քո անուն պահելու եմ
Շատ շատ օրեր, տարիներ»։

Ա. Գրիգորեանց.

30.

Վանեցի ոբբի երգը.

Ա՛րև, ա՛րև, գո՛ւրս եկիր
Աչքերդ, ունքերդ ինձ ցոյց տուր.
Ցուրտից ջանրս գողում է,
Զբպլախ որբիս տաքացո՛ւր։
Հօր ու մօրս սպանաւ
Քաֆիր Թուրքը. ո՞ւր գընամ.
Փարա չունիմ, փատ առնեմ՝
Օջաղ վառեմ, տաքանամ։
Ա՛րև, ա՛րև, թէ՛զ արա,
Բուք-բօրանը գալիս ա,
Էսօր ցրտից որ մեռնեմ,
Էլ արևդ ընչի՞ս ա...

Սիմէօն Սափարեանց.

31.

Բաղուի «Մարդասիրական Ընկերութեան» 16-րդ տարեդարձի առիթով.

Այսօր ուրախ, պարզ սրտով
Տարեդարձ Ընկերութեան—
Օր հիմնարկութեան
Ցօնենք երգով,
Գեղեցիկ հանդէս
Մենք կատարելով։
Փառք, փառք, փառք, փառք.
Կեցցէ՛ «Մարդասէր»
Մեր «Ընկերութիւն»,
Կեցցէ՛։

Մենք երբէք չենք մոռանայ
Աղգաշէն գործեր Սորա,
Այլ միշտ ցնծալով
Կ'ցօնենք երգով,
Գեղեցիկ հանէս
Մենք կատարելով։
Փառք, փառք, փառք, փառք.
Կեցցէ՛ «Մարդասէր»
Մեր «Ընկերութիւն»,
Կեցցէ՛։

Ա. Գրիգորեանց.

32.

Երգ Բաքոսի կամ բաբեկենդանի.

Ակոռիին մեծ կարասին
Բոլորտիքն են բաղմեր.

Աւագ իշխանք, մեծ պարոնայք
Ժողովք են հոն կազմեր.
Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր։

Սաստիկ է վէճն, մեծ է խնդիրն,
Զոր հոն տեղ կը խորհին,
Թէ ի՛նչ կերպով դարման մ՚ընեն
Հիւանդ մեր աշխարհին.
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին։

Մէկն աս կ՚ըսէ, մէկն ան կ՚ըսէ,
Կը ծագի լոյսն առտուն.
Ինձ լսեցէ՛ք, տեսէ՛ք, կը կանչէ
Աւանին պետն արթուն.
Այո՛, այո՛, աւանին պետն արթուն։

Թո՛ղ թագն առնու, կ՚ըսէ Բաքոս,
Ու փառք ապրի շատ.
Իսկ ցնծութիւնն ըլլայ դըշխոյ
Եւ գահն ալ յԱրտաշատ.
Այո՛, այո՛, և գահն ալ յԱրտաշատ։

Այսպէս մեզի նոր ցնծութեան
Արևներ կը ծագին.
Առողջ կ՚ըլլայ մեր ժամանակն
Եւ նոր մեր աշխարհին.
Այո՛, այո՛, և նոր մեր աշխարհին։

Եփրեմ վ. Զաղրեան.

33.

Քահանայ.

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վերայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գթառատ աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.

Որին ամենը հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ հաւատար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում։
—Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր դանձին նա է արթուն դէտ։

Երբ մենք թաթախուած Ադամայ մեղք
Եկանք այս աշխարհ լըցեալ ցաւերով,
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին վէրքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Մըտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդխտի նման ամենից թողած,
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ՝ երբ մոլորուած դառնելու նման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական ղրբէն հանեց անարատ.
Կամ՝ երբ մեղսալեր աչքերըս բընաւ
Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Ո՞րին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ումով յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ ըղբաղած ունայն գործերով,
Մոռացել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ։
—Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,

Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ։
Ե՛կ պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
Սիրե՛նք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հրսկել անքուն աչերով.
Նա բոլոր կեանքը զոհից մեզ համար,
Զուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհի,
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի։

Ռ. Պատկանեան.

34.

Տաներէց

Ինչպէս ընդհանուր Հայրապետ Հայոց՝ իբրև Ծայրագոյն հովիւ, տեսուչ և տնտես է բոլոր հայ գերդաստանաց վերայ. և ինչպէս վիճակաւոր Եպիսկոպոսները իւրաքանչիւրը իրենց վիճակին վերայ նոյն հոգեւոր տնտեսութեան պաշտօնն ունին. այսպէս ևս ընտանեկան և առանձին եկեղեցւոյ փոքրիկ հօտին՝ փոքրիկ հովիւներն են Տաներէց քահանայք՝ որոց միայն յանձնուած է ընտանեկան հոգեւոր պէտքերը հոգալ ու մատակարարել։ Տաներէց, որ թէպէտ իւր վիճակաւոր Եպիսկոպոսին իշխանութեան տակ ստորուկ համարուած է, և նոյն իսկ ժողովուրդին առաջ այնչափ ըստ արժանւոյն պատուասիրեալ չէ. մանաւանդ մեր անբարեկարգ ժամանակի մէջ, յորում Եկեղեցւոյ տնտեսութեան վաղեմի օրէնք և կանոնական վճիռներ այլափոխուած են։ Բայց Տաներէց քահանային հովուական պարտիքն ու կոչումն՝ շատ մեծ, շատ նուիրական և շատ արդիւնաւոր հոգեւոր աշխատութեան մշակութիւնն է։ Վասն զի նորա սեպհական պարտիքն է,

ընտանեաց նորածին երախայքը սուրբ Եկեղեցւոյն մկրտարանին ջրով մաքրել ու որդեգրել Աստուծոյ։ Նորա պարտիքն է ամուսնութեան սուրբ պսակ դնել. նորա պարտիքն է խոստովանութեամբ ընտանեկան գաղտնի ու յայտնի վէրքերը դարմանելով բժշկել։ Նորա պարտիքն է մահուան ծանր ստուերին տակ հիծող հիւանդը սուրբ և ջերմեռանդ աղօթքով կազդուրել և հոգին հաւատով զօրացուցանել։ Նորա պարտիքն է ննջեցեալը ի հող դնել, ու կընքել նորա գերեզմանը Խաչիւ և Աւետարանով։ Նորա պարտիքն է սգաւոր ընտանեաց սուգը չափաւորել, և խրատել որ հեթանոսաբար չողբան յոյս ու հաւատ չունելով հանդերձեալ կենաց։ Նորա մեծ պարտիքն է աղքատ ու չքաւոր ընտանիքը՝ չէ թէ միայն սոսկ մխիթարական խօսքերով սփոփել, այլ արդեամբ իբրև ճշմարիտ հայր հոգալ նոցա պէտքն ու կարիքը. հարուստ և ողորմած ընտանիքներէն հայթհայթելով՝ թշուառ տանկին կարօտաւոր զաւակները կերակրել։

Նորա մեծ և սեպուհ պարտքն է, երկրի վերայ իբրև երկրաւոր հայր՝ խնամ տանել բոլոր ծխական ընտանեաց. մանաւանդ նոցա պատահար թշուառութեանց մէջ Ցիսուսին նկարագրած գորովալիր գթութեան տիպարը լիովին յանձին բերել. 'ի բանտ գնալ, բանտաւորին կապանքը գիւրացնել, հիւանդին 'ի տես գնալ, սուրբ Պողոսին թաշկինակով նորա քրտինքը սրբել, դեղ ու ճար գտնել. թէ քաղցեալ է՝ հաց տալ, թէ ծարաւ է՝ ջուր տալ, թէ մերկ է՝ հանդերձ և այլն։ Եթէ այսպէս վարուի Տաներէց հովիւն, եթէ իւր այս պարտիքները խղճի մտօք կատարէ, յիրաւի՝ յայնժամ տիրապէս քահանայ Աստուծոյ կը կոչուի, լինելով կատարեալ որպէս երկնաւոր Հայր։

Տակաւին քան զամէն տառեալ մեծ պարտիք մի ունի Տաներէց հովիւը, զոր պէտք չէ մոռանալ, և ի՞նչ է.

առանին հոգևոր դաստիարակութիւնը, որ պէտք է հաւասար ընթանայ ծնողաց դաստիարակութեան հետ։ Ես այնպէս կը դատիմ, որ կրօնի և հոգևոր դաստիարակութեան պարտիքը՝ դպրոցի վարժապետին չէ՝ այլ Տաներէց քահանային բաժին է. որ պարտաւոր լինելով իրրև առանին եկեղեցւոյ անտես՝ պէտք է ինքնին բաշխէ ու մատակարարէ հոգևոր դաստիարակութեան հացը ընտանեկան սեղանին վերայ. և այդ հացն է միմիայն Աւետարան. բովանդակ սուրբ Գիրք, որ է Կենաց բան. որոց հետը խառնել խիստ վայելուչ է մեր սուրբ Հարց ու Վարդապետաց գիւրալուր խրատները, որք առհասարակ գրեթէ սուրբ Գրոց մտքին պարզախօս բացատրութիւնք են։

Ճշմարիտ խօսելով, ընտանեկան հոգևոր վիճակը և կեանք յայնժամ կ'եղծանի, երբ Տաներէց քահանայն ոգէտ և անուս է, որ բաւական կը համարի իւր պաշտօնին համար Սաղմոս, Շարական և Մաշտոց. որ միայն Եկեղեցւոյ խորհուրդներ և ծիսական կարգերը կատարելով՝ քահանայութեան բարձր պաշտօնի միւս պարտիքները անկարևոր կը դատի։ Տաներէց քահանային ոգիտութիւնը շատ մեղադրելի է. թերևս փոքր ինչ այդ մեղադրանք թեթևնար, եթէ բարի ու անբասիր վարքով և գործնական ընտիր օրինակով ոգէտ քահանայն քօղաւորելով ծածկէր իւր ոգիտութիւնը, ու ոգիտութեամբ այնչափ վնասակար չէր լինէր ընտանեկան կենաց, խօսքին տեղը՝ միայն բարի օրինակը քարոզելով։ Բայց թէ գիտուն և թէ ոգէտ Տաներէց, երբ իր վարուց ու պաշտօնին մէջ կը զեղծանի, երբ բարի օրինակին տեղը՝ դայթակղութեան չար օրինակ կուտայ, այնուհետև բարի և երկիւղած ընտանեաց համար՝ հոգեպէս մեծ վտանգ է, որ թէ չգտնեն ուրիշ արժանաւոր հովիւ մի՝ կը պարտաւորին առանց քահանայի մնալ, Աստուծոյ հովուութիւնը խնդրել։

Սակայն արժանաւոր և անարժան պաշտօնէից մէջ ընտրութիւն առնել պէտք է, երբ ընտանեաց ձեռքն է այդ իրաւունքը և ազատութիւնը՝ թող խորհին և այնպէս ընտրեն Տաներէց քահանայն։ Եւ եթէ գտնեն այդ արժանաւոր ու պատուական պաշտօնեայն, պէտք է կրկին պատուոյ արժանի համարին զինքն. որոյ համար իսկ յատկապէս կը պատուիրէ առաքեալը։ Եթէ ընտանեաց իրաւունքն է Տաներէց քահանայէն պահանջել, ինչ որ քահանայութեան պաշտօնին և կարգին վայելուչ պարտիքն է, նոյն Տաներէց քահանային իրաւունքն է՝ պահանջել իւր պաշտաման ու հոգևոր աշխատութեան վարձքը։ Մշակը՝ իւր վարձուց արժանի է, կը խօսի Տէր. ո՞վ կարող է ժխտել թէ իրաւունք չէ այս. և Առաքեալը կը հաստատէ սոյն իրաւունքը, թէ «Զինուորը իւր թոշակով չի զինուորուիր». և ուրիշ խօսքով դարձեալ նոյն բանը կը կրկնէ, թէ «Սեղանոյ պաշտօնեայն արժանի է, որ նոյն սեղանէն կերակրուի»...

Արդ, դուք ո՞վ ընտանիք Հայոց... եթէ Տաներէց քահանայն ձերն է, ձեզ համար է, և ձեր հոգևոր մշակն է, ձեր բարին դուք ինքնին ճանչեցէք ու ընտրեցէք. ձեր մշակն ընտրեցէք, արժանաւորն ընտրեցէք, ուսեալն ընտրեցէք, հաւատարիմն ընտրեցէք. և եթէ կա՞յ տակաւին ձեր մէջը՝ հրեշտակակրօնն ընտրեցէք...

«Ընտիր Հատուածներ».—Խրիմեան Հայրիկ.

35.

Գամառ-Քաթիպա.

(Ռափ. Պատկանեանի 35-ամեայ յօբելեանին նուէր).

Ահա՛ այն չքնաղ դափնեզարդ քնար,
Հիւսուած մատներով հայ-բանաստեղծի,
Որ հնչեցնում է հային անդադար
Աղատ խօսքերով և՛ լոյս և՛ հոգի։

Ահա այն ազգու և հզօր գրիչ—
Վառ զգայմունքի կենդանի թարգման,
Որ կախարդական և ոգեւորիչ
Կերպով նկարեց հային իւր ներկան:

Նա խոցեց սիրտը սուտ ազգասիրի,
Պատառեց դիմակն հարուստ մեծատան,
Մարակեց գործքը փափկասէր կղերի
Ու ինքը նստեց ռամկի հետ սեղան:

Եւ բանաստեղծը բաժակ փրկութեան
Առաջարկում է իւր սեղանակցայ.
Այդտեղ նա, որպէս ճարտար հոգեբան,
Քննում է մի կեանք—վաղուց մոռացած:

Նրա ոսկեթել քաղցրաձայն քնար
Կենդանացուցիչ ունի զօրութիւն.
Նա ներշնչում է ազատ գաղափար,
Վեհ հոգի, զգայմունք և մտածութիւն:

Ես ձեռքս առնելով տաւիղ գիւթական,
Ոգեւորվում եմ, կարծես, ողջ հոգով...
Եւ կեանք յաջողակ ու տեւողական
Մաղթում եմ նրան անկաշառ սրտով:

Թող որ նա ապրի միշտ և յաւիտեան,
Որ լցնի մեր սիրտ գործով, եռանդով,
Թող հայ-ամբոխին ուղղի փրկութեան
Ցոյց տայ հանապազ անսաչառ դրչով:

Իսկ մենք անմոռաց նրան կ'կանգնենք
Փառաւոր կոթող—մի անմահ արձան,
Մեր սրտի խորքում կ'յիշատակենք
Միշտ իւր անունը—նուէր այս Նոյան:

Արշակ.

Պետրոս Պոլսեցի
ՍԵՐԵԲՐԱԿԵՆՏՐՈՆ
գրադարան

36.

Տարօնցի Հայի արտասուքը.

Արդեօք ի՞րբ լինի, ով Տէր Արարիչ,
Որ մենք ազատուենք մոլեռանդ Թուրքից.
Դարերէ ի վեր կրեցինք վշտեր,
Դարձան ամայի հայոց շէն գիւղեր:
Ազգե՛ր, ձե՛զ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին:

Մի կողմից հարկը, միւսից՝ սով ու ջարդ.
Ո՞ւմը դանդատինք, որո՞ւ բանանք դատ...
Հայերը մեռան. Օսմանցու սուրը
Խլեց խեղճ հայի ազգութեան կապը:
Ազգե՛ր, ձե՛զ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին:

Թողինք մեր աշխարհ, եղանք ցիր ու ցան,
Թէ՛ կայք և թէ՛ գոյք տուինք օտարին.
Հաւերիս տապան, սրբերի շերիմ
Ցանձնեցինք մոլի մեր ոխերիմին:
Ազգե՛ր, ձե՛զ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին:

Տաճիկը խլեց մեզմէ գութանը,
Զարքեաղ ու Քիւրդը՝ մեր սիրելիքը.
Ի՛նչ հասած արտեր, ծաղկաւէտ դաշտեր,
Եղան ոռնակոխ՝ վանք ու տաճարներ:
Ազգե՛ր, ձե՛զ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին:

Հարկը բազմացաւ, պահանջը շատցաւ,
Ասպատակութիւնք գիւղ, քաղաք քանդեց.
Ի՛նչ տուն, ի՛նչ շէնքեր, ողջը աւերաւ,
Մի՞թէ լուսինը սուրբ Խաչին յաղթեց:

Ազգե՛ր, ձե՛ղ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին։

Մեր հարուստ իշխանք եղան հացմուրաց,
Անթիւ երէցներ կարօտ տաճարաց.
Բոզբոջ մանուկներ անմայր մնացին,
Խանտաղատ ծնողք՝ առանց զաւակաց։
Ազգե՛ր, ձե՛ղ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին։

Մեռնելն է դժուար, ապրիլ չե՛նք կարող,
Ղուրանի որդիք մեզ ողջ կը թաղեն.
Հայը չունի տէր*), դէթ մի պաշտպանող,
Ո՞վ տայ խրախոյս մեկնել ձեռք սրին։
Ազգե՛ր, ձե՛ղ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին։

Ազգե՛ր, գերի ենք, տուէ՛ք փրկութիւն,
Մեր քրանաց արդիւնք թո՛ղ մենք վայելենք,
Մի՞թէ չենք ուզում մեր սուրբ օրհնութիւն,
Ձեր կենաց համար աղօթող լինենք։
Ազգե՛ր, ձե՛ղ մատաղ, հասէ՛ք հայերին,
Արէ՛ք մի դարման մեր արնոտ վէրքին։

Կարապետ Յովանջանեանց.

---

*) *Ռուսահայը — փա՞ռք Աստուծոյ — ունի տէր, ունի և պաշտպանող. դա Ռուսիայի Կայսր երիտասարդ Աղէքսանդր Աղէքսանդրովիչն է, Որի յաղթական դրօշակի տակ գործում հայութիւնը՝ ինչ որ գեղեցիկն է, օգտակարն է և վայելուչն է, յիշելով Նորա Նախնիքներից արտայայտած իմաստուն և պաշտելի խօսքերը, թէ.* «Да развивается повсюду и съ новою силою стремленіе къ просвѣщенію». *Ահա՛ Ռուսահայի դէվիզը — ահա՛ Նորա նշանաբանը։*

Գ. Բ. Գրիգորեանց.

37.

Վասն Հայաստանի.

(*Սանդալուչիայի ձայնով*).

Այն աշխարհն պատուական է, ուր բուսնում նուռն ու խաղող,
Այն աշխարհն Հայաստան է, յորում գոյ բազում հաղ հանող։

Հայաստանի աշուղներն հայրենիքն զարդարել են,
Ազգասիրութեան սերմերն պտղատու հողում վարել են,
Տեսել են օգնական չկայ, իրանք իրանց դաղարել են,
Զանազան նեղութեանց միջին ազգի ծէսն կատարել են,
Անձեմարան՝ անվարժապետ՝ առանց սատար և առանց փող։

Երբեմն անման ջուրն՝ երբեմն ա՛ռ ու տուրն են գովել,
Երբեմն բերդի ամուրն՝ երբեմն էլ սուրն են գովել,
Երբեմն թշնամեաց հուրն՝ երբեմն ազգի մուրն են գովել,
Երբեմն կեղծիւ համբոյրն՝ երբեմն վատ լուրն են գովել,
Կարծն ասեմ ազգի համար եղել են վարպետ՝ խրատող։

Ինչ ազգ որ աշուղներ չունի, նա իւր սրտումն սէր չունի,
Ինչ ազգ սրտումն սէր չունի, նա Աստուծոյ պատկեր չունի,
Ով Աստուծոյ պատկեր չունի, նրան բարի գործեր չունի,
Ինչ մարդ բարի գործեր չունի, նրան աշխարհին խէյր չունի,
Նորա կեանքը քամոյ պէս է, ինքն չարեաց միաբանող։

Պետրոս Մաղաթեանց (Սէյաղ).

38.

Երգ ուրախութեան.

Աստուած բարի տայ Մահմեդին,
Լաւ բան է մտածել,
Որ սատել է ժողովրդին
Գինի գործածել.
Թէ չէ՝ քրիստոնեայք ծարաւու կ'կոտորվէին։

Օրն մի շեշ խմել խրատում
Բժիշկն Հիպոկրատ.
Ո՛վ այս դեղագրին հնազանդում,
Կին է, ո՛չ տղամարդ,
Բայց իմ բարի խորհուրդն էն է՝ մի դաւ դարդակել։

Վարդապետ Լիւտերն ասէ
Մի իմաստութիւն.
Ո՛վ գինու համը չէ՛ տեսել,
Ուղարկել դժատուն.
Պատճառ, բնութեան բարիքն արհամարհում է։

Հայաստանին են պարտական
Ամեն գինի խմող,
Այն տեղ Նոյ, նախահայր մարդկան,
Քամել է խաղող,
Երբ Արարատ սարից իջաւ, ջրհեղեղից յետոյ։

Գոհութիւն մատուցանեմք քեզ,
Բաքոս ծերունի,
Եւ 'ի պատիւ քո դարդակեմք
Մի մի շեշ գինի,
Որ մեզ առատ հունձ պարգևես օրհնեալ խաղողի։

Մ. Փ.

39.

Մեզ՝ ի՞նչ է պակաս.

(Նուէր օր. Գայիանէ Յովհաննիսեանին).

Առաւօտ կանուխ հայի երեխայք
Դպրոց են վազում զբաւարթ ու արագ,
Հրլու, ուշադիր սորվում են համար,
Պատրաստում աննիւթ գանձ ազգի համար։
Բրթամիտ սրդոյ հայ շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս։

Հէնց որ ժամկոչը զանգակը հընչէց,
Դեռ լուս ու մութ է. մեր հայը բացեց
Դուքան ու դասգեահ։ Ձեռքումը արագ
Շարժում է ասեղ, սրդոց և ուրագ։
Հայ արուեստաւոր ծոյլ շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս։

Տե՛ս, տե՛ս, գլովում է բըլուր ահագին,
Դա է՝ բեռնակիր պանդուխտ մըշեցին.
Արուն-քրտինքով, հայրական զրթով
Տուն-տեղ պահում է հայի ամթով։
Անպիտան մըշակ դու շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս։

Ժամի խորշումը կայ գեսնատարած
Մի խըզճուկ այրի, մատաղ սևազգեաց,
Աչքը արտասուք, սիրտն յուսով լցուած,
Իր սուրբ հաւատին պինդ ապաւինած։
Կրօնապուրկ դու հայ կին շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս։

Բերդըն անառիկ կայ սարի վըրան,
Անթիւ թնդանօթք են նորա պաշտպան,
Հայ քաջ զօրականք նորան մոտեցան.
Անառիկ պարիսպք գետնին զլորեցան.
Լօրիս*) այլազգեաց մէջ շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս։

*) Լօրիսը, այդ Պետական հանճարեղ և իմաստուն Կոմս Միքայէլ Տարիէլեան Լոռու-Մելիքեանցը, ցաւելով պէտք է ասել, այլ ևս չկայ... Նա, իւր վերայ դրած բարձր և վսեմ յանձնարարութիւնները վեհանձն կերպով կատարելով և արժանանալով Կայսերական առանձնաշնորհութիւններին և Նորա առատ և հարուստ շքանշաններին, 1888 թ. դեկտ. 13-ին կընքումէ իւր մահկանացուն Ֆրանսիայի Նիցցա քաղաքում՝ 63 ամաց հասակի մէջ... Գնա՛, գնա՛, ո՛վ Պետական քաջ զինուոր և հայութեան պարծանք առաքինի մարդ, գնա՛, այժմ էլ վա-

Ամայի դաշտ է։ Դարերէ 'ի վեր
Նորա մէջ կայրն վայրագ գազաններ,
Հէնց որ հայերի ոտքն այնտեղ հասաւ,
Ամայի վայրը Աստծու դրախտ դարձաւ։
Շնորհաղուրկ հայեր դու շա՞տ տեսած կաս,—
Ի՞նչ է մեղ պակաս։

Դարերէ 'ի վեր հայն է հալածուած,
Ի՞նչու։ Էնդուր որ՝ շատ է աչքաբաց.
Լումայ լումայով գումար ժողովեց,
Անթիւ դպրոցներ ամէն տեղ հիմնեց։
Հայի պէս խելք շա՞տ ազգ տեսած կաս,—
Ի՞նչ է մեղ պակաս,

Զէ՛, հայը ջունի իւր մէջ գիծ թերի,
Ամէն գործի մէջ հմուտ է, արի,
Հայեր, չի լինիլ անտեղի գովեստ,
Թէ ձեզ անուանեմ խելք, ժիր, համեստ.
Միայն կրմնայ ձեզ իրար սիրել
Ու աշխարհ ատել։

Գամառ-Քանիպա.

40.

Երգ ուրախութեան.

Արի՛ք, որ երթամք
Սոխակայ երամք
Ծաղիկ բացուեցաւ,
Միշտ փառք ցընծամք։

յելիր երկնքի յաւիտենական փառքը, երկնքի յաւիտենական պատիւը և անվախճան ուրախութիւնը։ Բայց աղօթի՛ր Աստուծուն, որ Նա փոխարինէ քեզ մի այլ Լօրիսով՝ դարձեալ Կայսերական Գահին օգտակար լինելու, դարձեալ Նորա շահերը քաջ քաջ պաշտպանելու։

Գ. Ֆ. Գրիգորեանց.

Արի՛, գովելի,
Գովելի լի լի, (3)։

Ծաղկունքըն գարնան
Սոխակ աննըման,
Զայնիւ ցնծալով,
Եղանակ բառնան։
Արի՛, գովելի,
Գովելի լի լի, (3)։

Զայնիւ երգեցուք,
Սիրով գոչեցուք,
Եւ 'ի դէմ վարդին
Միշտ ոստոստեցուք։
Արի՛, գովելի,
Գովելի լի լի, (3)։

41.

Ժողովրդական երգ*)

Ա՛ղջի, Մայի, ի՞նչ էք կոլթնել,
Զուռնի հաւին՝ ցամաք աչքը
Մեր երեսին էլ չի պէտքը,
Բերէ՛ք գլխի փետէ կոթը։

---

*) Հայաստանի գիւղերում, առ հասարակ, սովորութիւն կայ, աղջկանը մարդու տալու ժամանակ, հաւաքվում են գիւղի ծանօթ աղջիկները նշանակեալ տեղը և ժամանակին հարսնացուին սովորական հագուստով ու զարդերով համ զարդարում են, համ մեղմ ու քաղցր երգում։ Գանձակու լեռնային գաւառի Փիր գիւղում աղջիկների խումբը, եթէ ոչ այդ, գոնէ շատ թէ քիչ դորա նման երգով են կապում հարսնացուին հնազանդութեան և հաւատարմութեան թոկով... Կ'ցանկանայինք այսպիսի երգերի լոյս տեսնելը, որոնք դեռ մնում են խաւարի մէջ...

Աղ. Արարատեանց.

Տիկի՛ն անենք մերոնց Զանիին**),
Գլխակապը գնե՛նք գլխին.
Քնմակ հասէ՛ք, սիրուն աղջկերք,
Արժան ըլլ սա իր թաղին։
Պի՛նդ պի՛նդ կապենք գուդսը Զանիի,
Քնթիկալը չափե՛նք կուճուր բերնի,
Լիզուն կարե՛նք—ծամե՛նք ու տանք,
Որ չ'խօսկան՝ ըլլ անդ-մանդ։
Ընկուճներին փալաս գնենք,
Քառ Պետօի զուռնէն փչե՛նք,
Հէնը քառանայ, ոնց որ Պետօն,
Իշարաթը առնի մըգօն...
Նախշուն թշեն թշակալը
Դնե՛նք հաւաք, որ չ'տեսան
Տան խիզանն ու սկեսուրը,
Եադ աչքերն էլ քառանան։
Թոփչին կապել ա սրա համար
Էրծաթէ թոփ—էդ էլ շարենք,
Ենենա, աղջի, չալ աչքերը
Կարմիր շալով մթնացնենք...
Լանթուանց Զաթին սրան սաղ ա,
Կարմիր կուլը նրան հաղ է.
Եկէ՛ք կապենք—որ քիմնանայ
Ո՛չ կարենայ—ո՛չ էլ տեսնայ...
Դոշկալը տուր ջուխտ նռներին,
Գաղենք աչքերն ուրիշներին,
Եր տրըփայ ու ձէն ածի,
Աղեղ-մաղեղ հոգին զարթնի...
Կարմիր ասենք, կարմիր կապենք,
Թաղաւորի սիրաը շահենք—

**) Զանին՝ հարսնացուի անունն է, Զաթին՝ փեսացուի։

Առնի, տանի փափլիկ-մափլիկ,
Հետը խաղա—խնձ-մնձորիկ...

Աղէքս. Արարատեանց.

42.

Ե ր գ.

ԸՍՏ ԵՂԱՆԱԿԻՆ
«Какъ у нашихъ у воротъ
Стоитъ озеро воды...»

Ահա մեր տան առաջին
Ջրով լիքը մի լիճ կայ,
Տրա լի լա, տրա լի լա,
Ջրով լիքը մի լիճ կայ։
Փեսայացուն ձին բերեց,
Մեր դրան մօտ ջուր տուեց։
Տրա լի լա, տրա լի լա,
Մեր դրան մօտ ջուր տուեց։
Փայտից կապեց իւր ձիուն,
Խընդրեց աղջկան սիրուն։
Տրա լի լա, տրա լի լա,
Խընդրեց աղջկան սիրուն։
«Սիրուն աղջիկ, իմ հոգի,
Խընդրեմ նըժոյգ ձիս պահի։
Տրա լի լա, տրա լի լա,
Խընդրեմ նըժոյգ ձիս պահի։
Խընդրեմ նըժոյգ ձիս պահի,
Նըժոյգս հաղարներ արժի։
Տրա լի լա, տրա լի լա,
Նըժոյգս հաղարներ արժի։
Որ չը պոկի իւր սանձը,
Որ չը կոտրի իւր թամբը։
Տրա լի, լա, տրա լի լա,
Որ չը կոտրի իւր թամբը։

Թարգ. Կ. Տէր-Դաւթեանց.

43.

Արի՛ Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս օգնութիւն ծառայից քոց,
Լե՛ր օգնական ազգիս Հայոց:
Տէ՛ր ողորմեա՛, տէ՛ր ողորմեա՛, տէ՛ր ողորմեա՛:

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ,
Եւ անարատ սուրբ ծնողիդ,
Ցիշեա՛ զհեղուն արեան փրկչիդ,
Ե՛լ 'ի խնդիր փոքու հօտիդ:
Տէ՛ր ողորմեա՛, և այլն:

Զի զիտացաք մեք հաւաստեաւ,
Որ չափ մեղայ մերոց լցաւ.
Ուստի Տէրդ մեր բարկացաւ,
Առ 'ի խրատել զմեզ զարթեաւ:
Տէ՛ր ողորմեա՛, և այլն:

Արդ անկանիմք առաջի քոյ,
Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ.
Դարձո՛ 'ի մէնջ զցասումն քոյ,
Վասն անսպառ զթութեան քոյ:
Տէ՛ր ողորմեա՛, և այլն:
(Ցաւելուած).
'Ի քէն հայցեմք մեզ յօգնութիւն,
Ամենասուրբ Երրորդութիւն.
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Քրիստոնէից ազատութիւն:

44.

Այսօր ոսն է Ծնընդեան, աւետիս.
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:

Այսօր արևն արդարութեան, աւետիս.
Երևեցաւ 'ի մէջ մարդկան, աւետիս:
Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս:
Ծնաւ երեր զանմահ արքայն, աւետիս.
Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս.
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:

«Մովսէս Քերթող».

45.

Երգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ
Մամիկոնենոյ ի Շաւարշան դաշտին վրէժք.
Օ՜ն անդր յառաջ.

Բամ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան
դաշտն ի վայր,
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրապայր.
Հրաւէր Հայրենեաց հրոչակի 'նդ հանուր
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորի պսակին էք կարօտ
Ու որ երկրաւորիս փառաց ելմնահորդ,
Հապ՝ ո՞ն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ ո՞ն ի զէն գունդագունդ
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, ո՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ, յառաջ յառաջ
Հապ՝ ո՞ն յառաջ:
Հայկեան փանդռանց որոտընդոստ դընչին բարբաք
մարտագոռ.
Դառնակոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ի շեփոր.

Շարժեն հրեշտակք թեւոս լուսաղողողոս,
Ճիւաղք ճուճաղաց կայտառեն ի գլժոխս.
Շոյնդլն շանթառաք զեթերոք փարի,
Սարսափեն սանդարք ի խօլ խաւարի։
Հապ՝ ճն արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ ճն ի զէն գունդագունդ
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, ճն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ մի՛ ձախ մի՛ յաջ
Օ՜ն անդր յառաջ, յառաջ յառաջ,
Հապ՝ ճն յառաջ։

Հ. Ղ. Ալիշան.

46.

Ընկեր.

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն։

Կեանքդ նուիրես ընկերի լուին՝ քի՛չ է դարձեալ
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը՝
Կարիճ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջի՛ւան-աշըգ,
Ջի՛ սպիտակիր ամենևին մէկ հերը մարդուն։

47.

Բաժակներ առնունք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։
Բերներիս տանենք անվախ,
Զէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ո՛չ գինի,
Խրմե՛նք, մեզ անուշ լինի։
Արաքսայ ջրով յօղած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քընքոյշ ձեռներով քամել։
Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տընկած Նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ Սարէն։
Այս անոյշ գինին խմողը
Սրտէն թող հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք «ամէն»,
Որ շատ տայ մեզի ամ էն։

Ռ. Պատկանեան.

48.

Երգ ուսանողաց.

Բաւական է մեզ մտայ զբաղմունքն,
Մենք ևս ունինք մեր համոզմունքն,
Ճաշուցն առաջ մեխած սովորել,
Իսկ այնուհետև բաժակին նուիրել.
Խմե՛նք, եղբարք, գինի։

Կեցցես դու չաստուած գինարբեցութեան,
Կեցցէ և քո գիւտ այժմ և յաւիտեան.
Ցոգնած մարմինս դու զօրացնում ես,
Երբ պարապմունքից դադարում եմ ես.
Խմե՛նք, եղբարք, գինի։
Արդէն նստոտած գինէ տաճարում,
Ուխտաւորները խմիչք են զոհ բերում.
Կարմիր արիւնը նուիրական թասին,
Հաճելի է շատ մեր ծեր Բաքոսին։
Խմե՛նք, եղբարք, գինի։
Հարկաւոր է շուտ ուխտատուն շտապել,
Տասերկու ժամ ճիշտ կաթիլ չեմ ըմպել.
Ծոմապահութեանս վարձը թող լինի
Մի շեշ Երասխայ վարդագոյն գինի։
Խմե՛նք, եղբարք, գինի։
Ահա թասերով զանգահարումեն,
Գինի պաշտելու մեզ հրաւիրումեն,
Ո՛վ պատարագին փոքր ինչ ուշանայ,
Մի լեք շեշ գինի պատիժ կ՚ստանայ։
Խմե՛նք, եղբարք, գինի։
Ուրեմն միմիայն ես եմ մնացել,
Որ աղօթատուն դեռ չեմ գնացել.
Երթամ համբուրեմ շուտով տակառին,
Սուրբ և անարատ Բաքեայ պատկերին։

Մ. Փ.

49.

Ժողովրդական երգ.

Բա՛-բա՛, բլաստրակ,
Քու հար քինի խլաստրակ.
Խլաստրակէ մէս բերէ,
Քու մար օտի, կա՛թն անէ,

Կուճուր բալան նա ծծէ,
Ջանն ընկնէ, բո՛յ քաշէ,
Քու մար կշտին քեա՛թ անէ։—
«Հրէն կիւլեր օռնում ըն,
Ղուզղուն, ըլբաշ կռավում ըն,
Մեր երդիրը քանդում ըն,
Հօրդ աղբօրցը ջարդում ըն.
Ե՛ր կաց, բա՛լաս, թրփանքդ ա՛ռ,
Հարդ քեզհետի ա պըհալ.
Ես սրալ ըմ—զամէն ի՛նք կալ.
Քինի՛, հասէ՛, քեօմադ ըրա,
Հրամուն խոկէ՛, քեօռ ըրա,
Ոտանդ մնրէ տե՛ղ ըրա.
Ցե՛տ տեռ, ե՛կ, կաթնս հալալ,
Թէ չէ՝ «հառամ ընի» ըմ ըսալ...»

Աղ. Արարատեանց.

50.

Բա՜ռէ քանի՞ հրաշափառ
Հիւսեն երկինք հանդէս պայծառ,
Մինչ արեգին ճաճանչափառ,
'Ի լոյս շողշող 'ի տես կայտառ։

Ելք բորբոքէ զանսիւն կամար,
Եւ 'ի համբոյր յար բարեբար,
Ճեպէ ահա բնութիւն 'ի լար,
Ամանորոյ 'ի մուտս բարօր։

Զօնել պարգևս յէից կաճառ,
Ո՛ հրաշալեաց շնորհին կաճառ,
Փառք Բարձրելոյն փառք անդադար
Վեր ուղղեսցին օրհնաբարբառ։

Դու վեհափառ հայր պատուական,
Դու յոյս հայոց, դու սէր հայկեան,
Դու տէր և պետ անզուգական,
Փայլիս արդեամբք մեզ 'ի պարծանս։

Քոյդ սխրալի գործք աննման
Ցոլորտս հնչեն յոյժ բարձրաձայն,
Ուստի արժան հրճուանք 'ի խանդ
Կրկին ենք հայք յորդիսդ համայն։

Ցաւուր սերկեան ամանորեան
Հայցել յեթերց զամբարութեան
Արդասաբեր յօգուտս հայկեան,
Եւ շնորհի պսակ բարօրութեան։

Զի կեցցէ միշտ երջանկափառ կենաց
Պայծառ յամն յայր կեցցէ Գէորգ
Կաթողիկոս իբրև զարփին ճաճանչավառ,
Կեցցեն անյաղթ հայկազն որեար
Անփոփոխ և զերծ յոսոխաց չար։

Կեցցէ, կեցցէ հայութիւն,
Ցար կենդանասցի հայոց աշխարհ,
Կեցցէ՛ կեցցէ՛ մեծապայծառ
Եկեղեցի սուրբ պերճափառ,
Այս ուխտս հայոց 'ի սիրտ 'ի վառ։

Վահրամ վ. Մանկունի.

51.

Русскій народный гимнъ.

Maestoso, (величественно).

Боже, Царя храни!
Сильный Державный,
Царствуй на славу на славу намъ.
Царствуй на страхъ врагамъ,
Царь Православный,
Боже, Царя храни!

Жуковскій.

52.

Գեղամայ Ծովակ*).

Գեղամայ Ծովակ, Գեղամայ Ծովակ
Ա՜խ, որչափ քաղցր է՝ քո սուրբ յիշատակ.
Քանի անգամ որ՝ ես ափէդ անցայ,
Անյագ աչքերով՝ վրադ նայեցայ։

Հայոց աշխարհի՝ բարձրութեան վերայ՝
Հայելի ես դու՝ յստակ բիւրեղեայ,
Երկնքի կամար՝ սիրուն կապուտակ
Փայլում է քո մէջ՝ կոհակ առ կոհակ։

Արեգակ, լուսին՝ երկնից բարձունքէն,
Եւ աստեղք ամեն՝ կապոյտ կամարէն,
Խաղում են ծածան՝ ալիքներիդ հետ՝
Գեղ տալի դէմքիդ՝ գեղ առնում դէմքէդ։

Ո՛վ դու գեղանի՝ Ծովակ Գեղամայ,
Առաջին անգամ՝ որ ես քեզ տեսայ,
Մի առաւօտ էր՝ անամպ անմշուշ,
Փչում էր հովիկ՝ մեղմիկ ու անուշ։

*) Յարգելի հեղինակը, իւր ոտանաւորների հետ ուղարկած մի նամակի մէջ, գրում է մեզ, ի միջի այլոց, և հետևեալը. «Դուք խմբագիր էք այն երգերու հաւաքածոյին, որ կը կոչուի «Սոխակ Հայաստանի»։ Արժան կը համարիմ ղրկել Ձեզ քանի մի երգ՝ Ձեր Երգարանին մէջ զետեղելու համար։ Թերևս Դուք ուրախ երգեր կը սիրէք, բայց Ձեզ ղրկուած երգերն տխուր են. քանզի պանդուխտն, որ հեռի է իր սիրած տեղերէն և դէմքերէն, կարող չէ՛ երբէք ուրախ լինել, երբ չ՚տեսներ նա այն հողն ու ջուրը, այն սարն ու ձորը, այն հովիտն ու բլուրը, այն ծառն ու անտառը։ Երբ չ՚տեսնէր իւր արենակիցները, իւր մանկութեան խաղակիցները, իւր ուսման ընկերակիցները, իւր զուարթութեան և տխրութեան մասնակիցները, իւր խորհրդոց ու զգացմանց հաղորդակիցները։ Ա՜խ, մանաւանդ, երբ չ՚տեսներ այն աղբերակն ու վտակն, այն գետակն ու ծովակն, այն վանքն ու դղեակն, այն խաչքարերն ու մատուռներն, այն շերիմներն ու դամբարաններն, որոնք հարիւրաւոր յիշատակներ կը զարթուցանեն իւր յիշողութեան մէջ. երբ այս ամենը չ՚տեսներ, ի՞նչպէս կարող է նա ուրախ լինել։ Երբ Արտաշէս կը հարցներ թէ, «Ընդէ՞ր տրտում և տխուր են երեսք քո Նէ՛ամիա». նա կը պատասխանէր՝ «Ընդէ՞ր ո՛չ տրտում և տխուր լինիցին երեսք իմ, զի քաղաք և տուն հօր հեռի են յինէն»։ Ամեն պանդուխտներու ձայնն է այս, ամեն նժգեհներու հառաչանքն է այս, և ա՜հա, իրրև արձագանք այս հառաչանաց, կը ղրկեմ Ձեզ երգերս, որպէս զի նոքա, որ ձայնս

Երբ երևեցաւ՝ դէմքդ շողշողուն,
Ջինջ արեգակով՝ օծուած փայփլուն,
Սիրտս թռթռաց՝ հոգիս յուզեցաւ,
Արտասուաց ցօղով՝ աչքս լցուեցաւ։

Զորս ընկեր էինք՝ մի կառքում նստած,
Մեր փափաքն էր ուխտ՝ սիրուն Հայրենեաց.
Հեկեկում էի ես՝ լուռ էին ընկերք,
Կառքն սահում էր՝ դէպ 'ի Ծովեղերք։

Առաջինն էր որ՝ Ծով էինք տեսնում.
Ծովն էր Հայրենի՝ մեր սիրտն էր յուզում.
Յուզում էր մեր սիրտ՝ Սևանայ կղզին,
Որ բարձրանում էր՝ մէջ տեղ Ծովակին։

Տխուր է տեսքն՝ ամայի լռին,
Մնացած ստուեր՝ նախնի դարերին,
Անդ ուր թագաւորք՝ իշխանք քաջազունք
Աղօթում էին իբրև միանձունք։

Անդ ուր ալէլուք՝ անոյշ բուրումներ
Անուշում էին՝ Հայոց եթերներ.
Անդ այժմ կային՝ երեք ճգնաւորք
Սևազգեստ եղած՝ իբրև սգաւորք։

Յիշատա՞կն արդեօք՝ անցած փառքերուն
Աղջում էր նոցա՝ ճնշած սրտերուն,
Թէ՞ տխուր պատկեր՝ ներկայ օրերուն,
Պատկերանում էր՝ նոցա աչքերուն։

Այդ ես չ'գիտեմ՝ Տիրոջն է յայտնի,
Իսկ իմ զգացածս՝ չեմ պահում գաղտնի.
Այդ սեռուկ վանքի՝ սեռուկ ճգնաւոր
Երջանիկ է քան պանդուխտ փառաւոր։

Գեղամէն անցանք՝ շատ տեղեր տեսանք,
Արտասուօք թողինք՝ մեր տեղը դարձանք.
Անցան տարիներ՝ անցան շատ դէպքեր,
Վերստին տեսայ՝ Գեղամայ ափեր։

Զմրան գիշեր էր՝ և ձիւնով ծածկուած
Թէ՛ ծով, թէ՛ ցամաք՝ լուսով ողողուած.
Մենք շատուոր էինք՝ կառքերէն իջած,
Գնում էինք ոտով՝ ուղին էր սառած։

Ա՜խ, դարձեալ 'ի տես փայլուն ծովակին,
Տրոփում էր սիրտս՝ յուզուելով ուժգին.
Քանի՛ մեծ ես, Սէ՛ր, հայրենի երկրին,
Որ հուր ես շնչում՝ սարսռող մարմնին։

Սարսուռով անցանք, սարսուռով դարձանք,
Գեղամայ սաստիկ՝ ձմեռն էլ տեսանք.
Ի՜նչ հով էր փչել՝ ես էլ չըգիտեմ,
Ցօտար հող անցայ՝ եղբարքս փնտռեմ։

չե՛ն լսեր, սրտիս խորոց անգիտակ են, գոնէ՛ ձայնիս արձագանքները լսեն, որոնք թէև ամբողջ սիրտս չեն ներկայացներ, բայց կը յուսամ թէ կ'աղդեն ամենի վերայ, որոց սիրտն կը բաբախէ տակաւին հայրենեաց քաղցր յիշատակներով։ Նոքա կը զգան թէ ի՛նչ անհունութիւն կը պարունակէ պանդխտին սիրտը իր սիրուն հայրենեաց նկատմամբ»։

Նէեմիա.

Տարիներ եկան, տարիներ անցան,
Օտարութեան մէջ՝ ոսկերքս հալեցան.
Շատ երկիր տեսայ, շատ ծով ու ցամաք,
Զրմռոցայ երբէք՝ Գեղամայ ծովակ։

Հրա՞շք էր թէ փորձ՝ իմ սրտիս համար,
Զե՛մ կարող պատմել՝ լեզուաւս տկար.
Միայն ասում եմ, որ Տէր Բարերար
Առաջնորդեց ինձ՝ իմ սիրած աշխարհ։

Տեսայ Աղստև, տեսայ Դիլիջան,
Տեսայ իմ ծովակ, տեսայ ես Սևան.
Առի Թաշկինակ՝ ծածկեցի երես,
Զը տեսնէ ընկերս՝ իմ ցօղոտ աչերս։

Անսիրտ մարդ էր նա՝ կարող էր ծաղրել.
Եւ զիս մի լալկան՝ տղայ համարել.
Անսիրտն ի՞նչ կըզգայ՝ այն հուր հայրենի,
Որ վառում էր զիս իբրև մորենի։

Ո՜հ, կան անսիրտներ, ճիւաղ դաւաճան,
Թէ ազգիդ համար՝ լինիս պատմաբան,
Թէ սիրտվն այրիս՝ արտասուես, երգես,
Իբրև ոճրագործ՝ կըմատնեն զքեզ։

Շատ օրեր չ'անցան, դարձայ ես մինակ,
Տեսայ վերստին իմ սիրուն ծովակ.
Գեռ նոր էր ծագում՝ դարնան արեգակ,
Հնչում էր զեփիւռ՝ զով ու անուշակ։

Կանանչ արտերու՝ ծածան ալիքներ
Կարծես թէ ծովու՝ էին կոհակներ.
Շարած ու ցօղած՝ հոյլ հոյլ ծաղիկներ
Շողշողում էին՝ իբրև զոհարներ։

Էլ չը կարացի տիրել իմ սրտին,
«Կառքը կանգնեցուր», ասացի Սարգսին.

Իջայ ես կառքէն, բարձրացայ 'ի վեր,
Սարգիս շոյում էր՝ իւր յոգնած ձիեր։

Նայեցայ չորս կողմս, մարդ չէր երևում,
Կար մի աչք Վերին, որ ինձ էր նայում.
Գլխարկս հանի՝ ընկայ 'ի դեռին,
Քսեցի երեսս՝ թարմ ծաղիկներին։

Ծաղկանց շաղերէն՝ աչացս ցողերէն
Կազմեցաւ անոյշ բալասան հոգէն.
Օծեցաւ գլուխս՝ օծեցաւ երես,
Զովացաւ սիրտս՝ զովացան աչերս։

Շատ խոր հառաչներ՝ շատ աղաղակներ
Բղխեցան սրտէս՝ բարձրացան 'ի վեր.
Ո՜հ, երանի թէ՝ իմ այն հառաչանք
Հայ սրտերու մէջ՝ գտնէր արձագանք։

Յանձնեցի Տիրոջ անձս ու Հայրենիք,
Սրբեցի աչերս արտասուքով լեր.
Քաղեցի ծաղիկ զանազան գունով,
Թղթապանիս մէջ շարեցի կարգով։

Եկայ հեծայ կառք՝ յածեցի աչերս,
Երկրին էր բարև՝ երկնքին աղերս.
Կառքն գնում էր՝ հեռանում ծովէն,
Սիրտս էր անբաժան՝ Հայրենի հողէն։

Անբաժան է սիրտս՝ այս պահուս անգամ,
Որ օտար երկրում՝ երգում եմ Գեղամ.
Լալով թրջում եմ՝ ծաղիկներս ջրցած,
Որ 'ի Հայրենեաց՝ աւանդ եմ բերած։

Երգում եմ Գեղամ, ողբում եմ Սևան,
Երկուսն էլ դարուց՝ մեծ հանդիսարան.
Մինն բնութեան դեղոյ տեսարան,
Միւսն անշուք բեկոր՝ շքեղ հնութեան։

Եթէ պատահի՝ մի օր վերստին
Հողն համբուրել՝ Հայրենի երկրին՝
Սևանն է երգչիս՝ սիրած ճգնարան,
Անդ ապրիլ մեռնիլ՝ սիրով Հայութեան։

Նէեմիա.

53.

Ի հանդիսի երրորդ տարեդարձի ազգային սահմանադրութեան.

Գարուն Հայաստան դայ ծաղկապսակ,
Զայն ողջունելու ելէք, հա՛յ զաւակք.
Անցան սև օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բաղդի ծաղի առաւօտ.
Սահմանադրութիւն ուղեցոյց կենաց,
Սիրոյ զրոշակով եկաւ զարդարուած։
Որ փայլի արև սուրբ Հայաստանի,
Որ հայ ազգութիւնն փառօք վերածնի.
Կեցցե՛ն անձնուէր որդիք հայկազունք,
Կեցցէ՛ ազգային Սահմանադրութիւն։

Կաթիլ մ'արտասուաց հեղունք անանխանձ,
'Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց.
Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ,
'Ի նպաստ ազգիս յուսոյն ապագայ.
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի, հայրենեաց և ազգի սիրոյն։
Որ փայլի՛ արև, և այլն։

Հայե՛ր, միանանք, կ'ընենք առաթուր
Ամէն ուժ և նենգ, պարիսպներ ամուր.
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ միութիւն,
Ի՛ Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն,

Հապա խրախուսինք, կուրծք տանք անվեհեր,
Ընկճենք, կործանենք ամեն արգելքներ։
Որ փայլի արև, և այլն։

Ունիմք սիրա արի, ոգի եռանդուն,
Ժառանգ մնացած բաղուկ աննկուն.
Դարերու յաղթող ազգի զաւակ ենք,
Ամէն նախատինք, ճն, փութով ջնջենք.
Անմահ հայութեան կանգնենք յաղթանակ,
Հայոց մօր ճակատին հիւսենք պերճ պսակ։
Որ փայլի արև, և այլն։

Ս. Պ. Պ. Փափազեան.

54.

Վերջին Գարուն.

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը պէս-պէս ձևերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ ուռնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցողէ առատ ի վերէն,
Դա օրհնել ապ քեզ եկեղ հաւերուն։

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փչէ 'ի լերէն.
Ահա, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն։

Գլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ա՜խ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Զիկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել ղի՞նչ անդորր է քուն։

Մեռած պատանեաց գեանին կեանք տուար,
Տերեւթափ ծառին ստուերախիտ ստար,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ի՞նչ մենակ խղճիս էսպէս մոռացար։

Առաջ գնա, գարուն, դէպ հիւսիսն ի խոր,
Գնա կանանչցուր դու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տուր բարև.
Քուրախ գալստեամբ նոցա զուարճացուր։

Կուգաս գալ տարի, դու ինձ կըգտնես
Ո՛չ ի մեր այգին և ո՛չ ի պարտէզ,
Այլ անգարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կըտեսնես։

Ռ. Պատկանեան.

55.

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,
Եկեալ ասա զամբիւղք ի Հայոց երկրէն,
Յուսամ, զի Հայ տիկնայք և պարնայք հընդկայ
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղայ.
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս։
Զ Ա՛բարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շրջիմ ասա յեղերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օղնեցէք անտէրունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ ասա պանդուխտ էին։
Ա՛ռ զամբիւղ և այլն։

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան՝
Պահել անդ զմասանոց, զթել, զասղաման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,
Երբ խաշինք և գառինք իմ զինև խայտան։
Ա՛ռ զամբիւղ, և այլն։

Գանձք բաղումք, ցաւք բաղումք կան յայսմ աշխարհի,
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի,
Զայգի մի ունէի՝ զամբիւղ դործէի,
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի։
Ա՛ռ զամբիւղ, և այլն։
Ասա սերկևիլ, ծիրան և խաղող չի կայ,
Բայց միայն ադայ, բիլայ և քիլայ.
Ա՜խ, ե՞րբ իցէ, զի արժանի եղեց վերըսանին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին։
Ա՛ռ զամբիւղ, և այլն։
Ապա, դուք լաւ տիկնայք՝ զամբիւղիս իմ առէք,
Գիւղական աղջկանս սի՛րով օգնեցէք,
Զի զարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ՝ դովեցից բազմօք։
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս։

56.

Ա՛ռ մանկունս Գողթան.

Գողթան մանկտի, ահա՛ ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ,
Օ՜ն, փութացէ՛ք, խո՛ւմբ կապվեցէ՛ք.
Պսակ անթառամ մնայ ձեզ։
Գիտէ՞ք ոյք են ձեր նախնիք.
Բանաստեղծից էք որդիք,
Որ քնարով ոսկի լարով
Հայրենիքին փառք բերին։
Դուք ամենից էք զրկուած,
Փառքեր ունիք, բայց կորած,
Հայ եղբայրներ են մերկ, քաղցած,
Եւ հայրենիք մ՚աւերած։

57.

Գոռոզ թշնամւոյն երթանք կործանենք,
Զքնաղ յաղթութեան մրցանակ առնենք,
Հայրենեաց փառքն յաւէտ շողշողայ
Եւ ամենեքին չը նսեմանայ։
Հայրենեաց սիրուն ջահը թոռղ վառի,
Մեր սրտերու մէջ երբէք չը մարի։

58.

Անձուկ հայ մանկանց Կ. Պոլսեցւոց.

Գիշեր ցերեկ կ՚հառաչեմ,
Ա՜խ, Հայաստան, քո սիրոյդ.
Նախնի փառաց վեհ քաջերուդ
Լոյսն է մարէ, ի՞նչ օգուտ։
Կարօտ մնանք սարիդ, դաշտիդ
Եւ ոսկեգոյն արևուդ,
Միայն առ Տէր այս պաղատիմք,
Որ ունենայ առ մեզ գութ։
Գիտնայ և բաղդն, զի հայ մանկունք
Զե՛ն դիմանար այս ցաւերուն,
Քեզի համար մեր աչերից
Հոսէ արցունք զօրն ի բուն։
Քեզի միայն մենք կ՚յիշեմք,
Թէ՛ քուն ըլլամք, թէ՛ արթուն,
Տրտում, տխուր միշտ քեզ երգեմք
Սյրած հոգով մեր կեանքում։
Շատ ուշիներ թէպէտ տեսանք,
Բայց մեր սրտեր քեզ սիրեց,
Ո՛հ, չեմք գիտեր առաւօտուն
Մեր ցաւն ի՞նչպէս քեզ տիրեց։

Քո բերդերուդ արդեօք սև քօղ
Անդթաբար ո՞վ ծածկեց,
Ա՜խ, ո՞վ էր նա, որ մեզ քեզնից
Գերուց նման խակ զրկեց։

59.

Արմենուհի.

Գեղե՛ցիկ Արմենուհի, դու իմ սրտիս հատոր,
Ո՛հ, ի՞նչ խորհրդաւոր է քո սէրի կոչումն,
Ի զուր ես դասում անձդ տղամարդերիցն ստոր,
Քեզանից է սպասում հայն իր վերահնչումն։

Ընտանեկան կենցաղում իրաւունքի տէր ես,
Ամեն անդամն տան՝ քեզ պատվում, մեծարում.
Ամուսնական վիճակում մտերիմ ընկեր ես,
Օրինակ ես զովութեան ամենայն աշխարհում։

Թագիդ վերայ մի ակը չի երևում «չկայ»,
Որ տայ հայ տանտիկնոջը առանձին շքեղութիւն,
Քեզ վայել է ներկայում մի այլ նոր առարկայ,
Լուսաւորութիւն ասեմ, ո՛հ, լուսաւորութիւն։

Միմիայն եթէ քո հայկական մտայ արշալոյսն
Պէտք է Մասեաց գագաթից իր ծագումն առնի.
Խորթ ուսմունքներից չ՚կայ հայ մայրութեան յոյսն,
Այս անուշ մահագեղն բնաւ դեղաթափ չունի։

Արմենեան քո ծնունդը ձեռք ծնտին լալիս,
Արձակի՛ր կրթութիւնդ խաւարի կապանքից,
Ով որ մարդկային ազգին կեանք ու սնունդ է տալիս՝
Ազգայնութիւն նմանապէս կ՚ծնանի նորանից։

Մ. Փ.

60.

Գերի հայի աղօթքը։

Գո՛հ ենք Քեզնից, ով Բարերար,
Օրհնեալ լինի միշտ Քո անուն.
Թո՛ղ արդար արևդդ այդ լուսավառ
Բերէ իւր հետ մեզ փրկութիւն.
Ո՛հ, ուրախ օ՛ր շընորհիր, Տէ՛ր,
Մեր խղճալի հայրենիքին,
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնումեն քեզ եռանդագին։
Մի՛ տար, Աստուած, որ կործանուի
Կուսակրօն հայոց աշխարհ.
Թո՛ղ քաղցր անուն Հայաստանի
Մնայ կենդան միշտ մեր համար։
Բայց մեզ դուռն քո ողորմութեան,
Յեսու, Մովսէս մեզ ուղարկի՛ր,
Որ այս դժնեայ Եգիպտոսից
Աւետեա՛ց մեզ տանեն երկիր։
Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարոզեցաւ Աւետարան՝
Փայլեց դրօշը ծիրանաձին,
Կանգնեցաւ խաչ քրիստոսական,
Ուր նուիրական Նահատակներ
Դէմ վիշապին զենուորեցան.
Պատերազմի կանաչ դաշտեր
Նոցա արիւնով ներկուեցան։
Ուր Հայրեր մեր երանելի.
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ենջեցին ծաղկապսակ։

Ս. Շահազիզեանց.

61.

Սգալի մահ Զէյթունցի պատանւոյ.

Դու զնով խնդրես, մայր իմ անուշ,
Ե՛կ, մի՛ դողար, մնտեղի՛ր հոս.
Անլաց աչք դիտէ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս։
Թրքաց մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Ինչպէս երբեմն որբանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրև հրեշտակ նուագելով։
Զիս հանգչեցուր 'ի հող՝ ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
«Նորեկ որդւոյս կենացն արև
Զեզի համար փայլի, հայեր».
Այսպէս յայնժամ դու կ'երդիր
Օրօրոցիս նստեալ քովեր։
Անոնց համար շնչաւ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Կարմիր կայլակք ցայտին վէրքէս,
Սակայն, մայր իմ, նայէ՛ չորս դին,
Զարիւնքռուշտ քիւրտերն տե՛ս,
Հազարներով փռուած գետին։
Կերտաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Ինչպէս վեշտապ մրընչելով՝
Ցանկարծ մեր վրայ յարձակեցան.
Ցընցեց Զէյթուն գլուխն ժայռոտ,
Իւր վեհից մէջ թօթափեցան։

Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Զի չէ՛ մեռած հայոցս կրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ։
Խնդայ Մասիս, մայր իմ և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Որ արդ կիջնեմ 'ի ծոցն անլոյս։
Խաչ մի անկէ վերտաս՝ ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մ. Պէշիքթաշլեան.

62.

Հայոց աղջիկ.

Դու տեսե՞լ ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ՝ կանանչ տերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս։
Դու տեսե՞լ ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փրթրթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բոլորքը պար բռնած։
Բայց լուսինը խիստ խաւար է,
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զ'արժեն նորա մէկ պաչին։

Երկու թըշին վարդ են նստել,
Ձերմակ ճակտին մէկ շուշան.
Ժպիտը բերնից ցած չի գալիս,—
Անմեղութեան է նըշան:
Տէ՛ս, նա առաւ կարմըրելով
Իր ընկերից դահիրան,
Դրըմզրըմբեցուց փափուկ մատով
Ու ըսկսեց լեզգինկան:
Նաղուք մէջքը ծառի նըման
Տատանում է զեղեցիկ,
Մէկ թռչում է նա անդուման,
Մէ՛կ գընում է խիստ հեզիկ:
Հալվում է խեղճ կարլճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով:

Ռ. Պատկանեան.

63.

Կանանց բաղդը*).

Դուք տեսո՞ւ էք վանդակում
Խղճիկ թռչուն բանտարկած,
Որ յուսահատ երգում է,
Աղատ կեանքից նա զըկված:
Կամ լալիս է կամ լռում,
Կամ խղճալի ձեզ նայում.
Նա ձեզանից, պարոններ,
Աղատութիւն է խնդրում:

*) Այս ոտանաւորը կարդացուած է մի կիսակնօրեայ ժողովի մէջ, Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» դահլիճում; 1872 թուին.

Նորա տխուր վիճակը,
Աւա՜ղ, մի սիրտ չէ՞ շարժում,
Այլ ամեն մարդ ուրախ է,
Երբ նորա ձայնն է լսում:
Այս խեղճ գերի էակը
Է մխիթար հայ կանանց,
Որ դարէդար խստաբար
Զոյս պատի մէջ է փակուած:
Նորանց տուած է լեզու,
Նոքա ունին խելք, իմաստ,
Բայց անողորմ մարդիկը
Նոցա դարձրել են դրաստ:
Այս ինչ այն ինչ գործերում
Կինը խառնուել չէ՞ կարող.
Պատճառ, մարդիկ միմիայն
Պիտի լինին հէնց իշխող:
Կանայք չունին իրաւունք
Աղատ կարծիք մի յայտնել,
Պատճառ, մարդիկ ասում են՝
Կինը չ'գիտէ բնաւ դատել:
Եթէ ոչինչ բանի մէջ
Կինը յանկարծ սխալուի,
Ի՞նչ կայծակներ, Տէ՛ր Աստուած,
Իսկոյն գլխին կ'թափուին:
Իսկ թէ բողոք կամ մի ձայն
Հէնց ցանկանայ նա յայտնել
Ամեն կողմից կ'ասեն թէ՝
Ո՞հ, մեծ յանցանք է գործել:
Ինչի՞ կանանց, ո՜հ, Տէ՛ր իմ,
Զե՛ս ստեղծել դու զօրեղ,
Որ նոքա էլ երևան
Անմեղ, արդար ամեն տեղ:

Էնդուր զոհ եմ, երջանիկ,
Ով յարգելի պարոններ,
Որ տեսնում եմ ես ձեզ հետ՝
Կին, օրիորդ ընկերներ։

Տիկին Կատ. Արզումանեանց.

64.

Ապոլոնի քնարը իմ ձեռքում.

Դեռ նոր ելած Մորփէոսի
Խաղաղ գոգից (ուրթ ժամին)՝
Պատրաստվում եմ ներկայանալ
Ապոլոնի ըսպասին....
Եւ ահա՛ նա իր քընարը
Մեկնեց դէպ՝ ինձ և ասաց.
«Առի՛ր, որդեակ, դու այն երգը,
«Որին սրբտով ես սիրած»։
Ձեռքից առի... բայց արտասուք
Ծովի պէս ինձ խեղդեցին...—
Հայի ներկայ սև վիճակը
Պատկերացաւ իմ աչքին։
Հայրենիքի դրութիւնը,
Իբրև մի սար ահագին,
Ծանրացաւ, ո՛հ, սրտիս վերայ,
Ճընշեց, խեղդեց իմ հոգին...
Շուտ լարեցի ես քնարը
Եւ զարկեցի թելերին.
Փլուեց սրբտիս ծանրը սարը
Եւ որոտաց խիստ ուժգին։
Նորա ձայնը զընաց հեռու՝
Նոյնպէս տըխուր, վըշտագին,
Անբաղդ հայի ցաւն ու վիշտը
Ցայտնեց ամբողջ աշխարհին...

«Ի՞նչ ես անում», գոռաց յանկարծ
Ապոլոնը զարմացած.
«Սուգ, լաց, վա՛յ, ա՛խ, կըսկիծ, մրմունջ—
«Ա՞յդ է երգը քո սիրած»...
«Տո՛ւր քընարը. նա չէ՛ միայն
«Արտայայտիչ վըշտերի,—
«Այլ դորանով պիտի գովուի
«Գեղը գերող աչքերի»...
—«Ա՛ռ», ասացի, «ա՛ռ Ապոլո՛ն»՝
Եւ դարձրըի յետ իրան.
«Շատ եմ երգել ես Երոսին,
«Շատ եմ պաշտել և՝ նորան.
—Շատ եմ քաղել թարմ վարդերից
«Ես Աստղիկան դրբախտին,
«Շատ եմ խաղել Ադոնիսի
«Դերը նորա առաջին...
—«Բայց այժմ—ո՛չ, հայը ողորմած...
«Քանի պառաւ Հայաստան
«Կըլուում է իւր ուսի վերայ
«Ճընշող լուծը Տաճկական.
—«Քանի թուրքը կապած ունի
«Թըշուառ հայի ոտք ու ձեռք,—
«Քո քընարը էլ իմ ձեռքում
«Չէ՛ հընչելու սիրոյ երգ»...
—Ապշած աչքով Ապոլոնը
Երկար նայում էր—անխօս...
Վերջը թողեց իր քընարը
Եւ վերացաւ Ոլիմպոս։

Սիմէոն Սափարեանց.

65.

Յայցելութիւն Տ. ՄԱԿԱՐԱՅ Վեհ. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց 'ի Բագու*).

Ելցուք հապճոն, ելցուք խոնարհ 'ի յողջոյն,
Մեք 'ի համբոյր ելցուք Օծեալ սուրբ Աջոյն.
Զի հայրս մեր ահաւասիկ խնամոտ
Շնորհէ հրճուանս իւրոց որդւոցս անձկոտ:

Օ՜ն մատիցուք 'ի սուրբ Նորին օրհնութիւն,
Եւ քաջալեր դայցուք, և՛ սէր, և՛ աւիւն.

---

*) Բագուի համար 1888 թ. հոկտեմբերի 22-ը մի անմոռանալի օր պէտք է համարել, որովհետև այդ օր իւրաքանչիւր ճշմարիտ հայի սիրտը և հոգին տրոփում էր բիւր բերկրանքով: Այո՛, բիւր բերկրանքով, որովհետև այս առաջին անգամն էր, որ Բագուն, որ Բագուի ազգաբնակութիւնը բաղդ է ունենում հայոց հայրապետ, հայոց Կաթուղիկոս տեսնելու և Նորա՝ հայութեան պարծանաց պարծանք Ս. Էջմիածնից բերած՝ և՛ Սէրը, և՛ Օրհնութիւնը, և՛ Խաղաղութիւնը վայելելու:

Հայոց Լուսաւորչեան մայր եկեղեցու մօտ, մեծ հրապարակի վերայ, խիտ խիտ խռնուած բազմութիւնը սրտատրոփ և անհամբեր սպասում էր Վեհափառ Հայրապետին: Կէսօրվայ ժամը 12-ն էր, որ մի առանձին շփոթմունք, մի շշնջիւն թագաւորեց խուռն բազմութեան մէջ: Լճացած ժողովը սկսեց ալէկոծուիլ, տատանուիլ, շարժուիլ, տեղահան լինիլ: Նոցանից ամեն մինը կամենում էր տեսնել հայոց հայրապետին. տեսնել, լա՛ւ տեսնել: Եւ ահա՛ հայրապետական կառքը, թև առած, եկաւ կանգնեց. «Կեցցէ՞ Վեհափառ հայրապետը, կեցցէ՞ Մակար Առաջին», որոտաց ամբողջ հրապարակը: Եւ իսկոյն մինը միւսի ետևից դուրս եկան կառքից՝ Սինոդի Նախագահ Զիւնական Թադէոս և Շամախու թեմի առաջնորդ Սմբատեան Մեսրոպը արք-եպիսկոպոսները, Սեդրակեան Արիստակէս և Այվազեան Կարապետ Սրբազանները, Բաղտասարեան Սահակ և Մարգարեան Պողոս վարդապետները և Թարգման Մելիք-Ադամեան Ռուբէն: Ամենից յետոյ երևեցաւ Մերունաղարդ Վեհափառ հայրապետը,—մէկ նայեցէ՛ք,

Նորայն զեղցի սիրան անբաւ գորովով
Յերդս մեր, 'ի խինդ և բերկրանս յոլով:

Կեցցէ՞, զոչեմք, կեցցէ՞ հայր մեր Տէր Մակար,
Զերմ մաղթանաց ձայնք հնչեսցին անդադար.
Հովուապետիս մերոյ պահեա՛, Տէ՛ր, զկեանս՝
Հօտին իւրոյ սիրելւոյ 'ի սիրտս:

Հ. Ղուկասեանց.

—բարձր հասակով, առոյգ և զուարթ դէմքով, սուր և շրջանկատ հայեացքով, սպիտակ և փայլուն ալիքներով, մի ձեռին գաւազան, իսկ միւս ձեռին փոքրիկ, բայց գեղեցիկ, ընդելուզեալ խաչ և խկոյն. «Կեցցէ՞ Վեհափառ հայրապետը, կեցցէ՞ Մակար Առաջին» թնդաց օդը երկար, շատ երկար: Եւ ապա Վեհափառ հայրապետը, շուրջառ գցելով, հոգևորականաց և երգեցիկ մանկանց խմբի ներդաշնակ երգեցողութեամբ և առաջնորդութեամբ ուղևորվեց դէպի Լուսաւորչեան մայր եկեղեցին, աջ և ձախ խաչակնքելով ծոմացեալ ժողովրդին: Այստեղ Վեհափառը աղօթեց, համառօտ, բայց զգացմունքով ատենաբանութիւն մի արեց և ապա, գովելով Բագուի հայոց «մարդասիրութիւնը», «պահպանիչով» օրհնեց ժողովրդին:

Վեհափառը, չորս օր մնալով Բագվում, Շամախեցի Գէորգ Պողոսեան Լալայեանցի յատուկ Օծեալ հայրապետի համար շքեղ զարդարած տանը, կարևոր կարգադրութիւններ արեց, այցելեց հայոց եկեղեցիները և դպրոցները. այցելեց և իգական գիմնազիոնը, օրհնեց «Մարդասիրական Ընկերութեան» նոր կառուցանելի երկսեռ դպրոցի հիմքը, օրհնեց և «Աղքատանոցի», արդէն վերջացած, շինութիւնը, բարեմաղթելով նորա հոգաբարձութեանը աւելի և աւելի առաջադիմութիւն:

Հայկական Ազգի Մերունաղարդ Վեհափառ հայրապետը՝ Տ. Մակար Առաջին, թողնելով Բագուն գեղեցիկ և ուրախ տպաւորութեան տակ, հոկտեմբերի 26-ին, չորեքշաբթի օր, բարեհաճեցաւ վերադառնալ 'ի Ս. Էջմիածին, տանելով Իւր հետ հայ հասարակութեան սրտի խորքից հիւսած «մաղթանքների» և «կեցցէների» փնջերը և նորա հիւրասիրութեան ու համակրական ցոյցերի յաւէրժական յիշատակը:

Գ. Ք. Գրիգորեանց.

66.

Աբբեցողի կատակը.

Եղբա՛ր, ուժից ընկած պոդապլով
Էլ աւելի չե՛մ կարող խմել.
Կարելի է, որ մեռնեմ շուտով,
Ուզումեմ շուտով կատակս ձեզ յայտնել։

Ինձ այն գինետանը թաղեցէ՛ք,
Ուր շատ անգամ հարբել եմ.
Գերեզմանս այնպէս փորեցէ՛ք,
Որ տակառի տակին պառկեմ։

Ոտներս պատի կողմն ուղղած,
Բերանս լենի լուլի տակ.
Երկու ձեռնով ունենամ բռնած
Ամպին գինով լի բաժակ։

Թաղման հանդէսս մի՛ կատարէ՛ք
Պատարագով, զանգակներով.
Դիակիս վերայ գինի թափեցէ՛ք,
Բաժակները չբրլխակցնելով։

Գերեզմանիս վերայ քար չդնէ՛ք,
Տակառն արձան է ինձ արժան.
Կպրով միայն չորս խօսք գրեցէ՛ք՝
«Հարբեցողի է սա տապան»։

Գերեզմանիս տեսութիւն գալով
Շուտ շուտ, ինչպէս լաւ ընկերներ,
Իմ խեղճ հոգուն ողբմի տալով՝
Կոնծեցէ՛ք լեր լեր բաժակներ։

Բայց դեռ քանի հոգիս բերանումն է,
Տուէ՛ք, եղբարք, ինձ մի շիշ գինի.

Ամոթ է, որ մահու հրեշտակը
Գայ և ինձ հարբած չգտնի։

Թարգ. գերմ. Գ. Բարխուդարեանց.

67.

Որբ Մանուկ.

«Вечеръ былъ, сверкали звѣзды».
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Երեկոյ էր, աստղ էր փայլում,
Դուրսը ցուրտ էր և սառոյց,
Փողոցի մէջ գնումէր մանուկ,
Ողջ կապուտած դողումէր։

Ո՛վ Աստուած, մանուկն ասումէ,
Սառել եմ և քաղցած եմ.
Աստուած իմ, ո՞վ կտաքացնէ,
Կըկերակրէ ինձ որբիս։

Անցնումէր պառաւ կին այնտեղ,
Եւ որբի ձայն նա լսեց,
Տարաւ իւր տուն և տաքացրեց,
Եւ հաց տուեց ուտելու։

Եւ պառկեցրեց անկողնի մէջ,
«Ինչպէս տաք է», նա ասաց.
Ծածկեց աչքեր, սիրուն ժպտաց,
Եւ քնեց նա հանգիստ քուն։

Աստուած խնամումէ թռչնիկին,
Եւ ցողումէ նա ծաղկին,
Անապատման որբ մանուկին
Չի թողնի նոյնպէս Աստուած։

Իշխան Բագրատունի։

68.

Աստուծոյ Գովեստ.

(Թարգմ).

Երբ սկսվի օր, Ստեղծողը գովե՛ր,
Գովե՛ր եռանգով, երբ զարթի երկիր.
Արևի ծագման գովե՛ր դու նորան,
Աստուած կընդունի միշտ սէրի ընծան։
Գովե՛ր դու Ստեղծող, փայլէ ծաղիկ,
Երբ բզզէ մեղուն, երբ երգէ թռչնիկ.
Այս դաշնակցութեամբ բարձրացրո՛ւ քո ձայն,
Մօտ և ամեն տեղ է ուշք աստուածային։
Գովե՛ր Արարիչ, երբ կէսօր կանգնէ,
Գովե՛ր և զիշեր,—Նա կնշմարէ
Թէ ցայգ թէ ցերեկ քո անկեղծ նուէր,
Քո աղօթք, եռանդ, ջերմ սրտիդ ձայներ։

Իշխան Բագրատունի.

69.

Կիլիկիա.

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր։
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զեմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ եռուր արև։

Տեսի դաշտերն Ոնուրիոյ,
Լեռն Լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկինս Իտալիոյ,
Վենետիկ և իւր կոնտոլներ։

Կղզի նման չկա մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարև.
Ցանկամ տեսնել զեմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ եռուր արև։

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իդձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հէգին ի տենչ.
Ցիշատակաց իւր կարօտի։
Ցորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարև.
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ եռուր արև։

70.

Կենաց բաժակ.

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէ՛ք,
Քաջ Հայոց կերպի կոնծեցէ՛ք
Բաժակներդ դարդրկեցէ՛ք
Մեր Հայ ազգի կենացը։

Հայոց երիտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկուճն էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նուիրենք։

Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն Հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն.—
Այս բաժակը դարդրկենք։

Արանց, որ մեր սիրան զրաւում են,
Մեզ զգօն ճամբով վարում են.
Որոց կեանքը մեզ օրինակ,—
Մի երբեակ «կեցցէ» ասենք։

Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է,—
Այս բաժակը նըւիրենք:

Եղբարց, որք դարդից ազատ են,
Մահուան հանդիստ վայելում են,
«Ողորմի Հոգուն» ասելով
Այս բաժակը նըւիրենք:

Բայց որ դեռ դինին փայլում է,
Ու մեզ իրան մոտ կանչում է,
Բաժակներըդ դարդըկեցէք
Բոլոր Հայի կենացը:

Ռ. Պատկանեան.

71.

Ն Ո Ի Է Ր

«Հայասատանի Սոխակին».

«Ծագեա՛ հեզիկ»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Երգի՛ր, Սոխակ Հայասատանի,
Քո քաղցրաձայն երգ սիրալի:
Թռի՛ր, պատմի՛ր դու, մե՛ր Սոխակ,
Հայոց աղդին այս յիշատակ:
Երգի՛ր նոցա այս մեր հանդէս*),
Որ ուշնումենք մենք սիրապէս:
Ասա՛ խումբ խումբ հայ զաւակներ
Երգեն ահա՛ այս մաղթանքներ:—

*) Գրուած է 1872 թ. Բագուի Հայոց «Մարգասիրական Ընկերութեան» իններորդ տարեդարձի առթիւ և երգուած է, նոյն ուշի հանդիսում, Հայոց Երկսեռ Դպրոցի ուսանողներից:

Գ. Ք. Գրիգորեանց.

«Կեցցէ՛ մեր այս ընկերութիւն,
«Որ տալիս է մեզ կրթութիւն:
«Կեցցե՛ն Սորա վեհ Անդամներ
«Աղնիւ գործքով շատ տարիներ»:

Ա. Գրիգորեանց.

72.

Ե ր ա զ.

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մոր մոտ էր:
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս, որ երազ էր:
Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.—
Նա՛ յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր, մայրենի
Ցիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր:
Կուրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք գնում էին,
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. Շահազիզեանց.

73.

Գ ր ե ն ա դ ե ր ն ե ր.

Երկու գրենադեր գնումէին Ֆրանսիա,
Որ գերի էին Հիւսիսում ընկած*).

*) Ռուսիայում:

Եւ երբոր եկան, հասան Գերմանիա,
Այն տեղ թեքեցին գլուխներն վաստակած։

Այս տեղ լսեցին այն տխուր վէպքը,
Թէ նոցա սիրուն Ֆրանսիան կործանուած,
Յաղթուած ու ջարդուած քաջազուն զօրքը,
Եւ կայսրը, կայսրը*), թշնամուց գերուած։

Նոքա միասին լաց էին լինում,
Այդ արտասուելի լսելով լուրքը.
Վա՜յ, ասաց մինը, «ի՛նչպէս է ցաւում,
Ինչպէս է այրում, ա՜խ, իմ հին վէրքը»։

Երկրորդը ասաց. «վերջացաւ բանը,
Եւ ես կամէի քո հետ մեռանիլ,
Բայց կին ու զաւակ թողել եմ տանը.
Նոքա առանց ինձ կարող են կորչիլ։

«Ի՞նչ փոյթ է ինձ կինս, որդիքս ի՞նչ փոյթ են,
Սրտիս բաղձանքը աւելի լաւ է.
Թո՛ղ գնան, հա՛յց մուրան, եթէ սոված են,—
Կայսրը, իմ կայսրը գերի տարած է»։

«Կատարի՛ր, եղբայր, իմ մի խնդիրքը,
Եթէ ես այժմ մեռնիմ այս երկրում,
Տա՛ր դէպ ի Ֆրանսիա դու իմ դիակը,
Թաղե՛ր ինձ այն տեղ Ֆրանսիայի հողում։

«Կարմիր թելից կախ պատուանշանը
Դի՛ր դու քո ձեռով իմ քաջ սրտի վրայ
Եւ աջ ձեռիս տուր իմ հին հրացանը,
Այլ և իմ սուրս կապի՛ր մէջքիս վրայ»։

«Եւ այսպէս պարկած, ականջ կը դնեմ,
Ինչպէս պահապան, գերեզմանումը,

*) Այսինքն Նապոլէօն առաջինը։

Երբ թնդանօթի որոտը լսեմ,
Այլև խրխնջող ձիերի տրոփը

«Եւ կայսրը կ'անցնէ իմ վերայ ձիով,
Կը շառաչեն սուսեր, և նոյն րոպէին
Իմ գերեզմանից դուրս կը դամ զէնքով,—
Եւ կը պաշտպանեմ կայսրին, իմ կայսրին»։

Թարգ. Գ. Բարխուդարեանց.

74.

Որբ հովուհի.

Ես եմ որբիկ խեղճ հովուհի
Աշխարհս է այն դեղ—մարդը,
Շունս է միայն ինձ սիրելի
Եւ ընկերս՝ գառնուկը։
Իմ զարդս են այս ծաղիկները,
Եւ հայելիս՝ պարզ վտակ,
Պատսպարանս՝ անտառները,
Լապտերս՝ վառ արեգակ։
Ադամանդս՝ ժայռ քարերը,
Եւ թանգ ոսկին անթառամ,
Մեսաքսենիս՝ կանաչները—
Փափուկ, մաքուր, պատուական։
Ես պարծենալ չեմ կարող, չեմ,
Որ և իցէ ուսումով,
Միայն քաղցր երգել գիտեմ
Եւ կեանք վարել սուրբ սրտով։
Այլ ևս ինձ բաներ պէտք չեն
Այս աշխարհի նեղ կեանքում—
Ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր,
Ո՛չ հայրենիք և ո՛չ տուն։

75.

Ի քաջութիւն Հայկայ.

Երկինք զուարթ ակնարկէր,
Նահապետն ի սիրտ ցնծայ,
Զանձն Աստուծոյ ի նուէր,
Ցար և կենօք ճոխանայ.
Աստուածապաշտն ի յասպարէզ
Գոռոզն ինքնին կորանայ։

Արուեստ մատանց մեր նախնւոյն
Եհերձ ի զրահ երկաթի,
Որ կամէր առնուլ պաշտօն,
Կործան արկանել երկրի.
Դիւցակրօնից սա պարագլուխ
Էառ զիւր վարձն արժանի։

Բռնակալին գուժ մահու
ՑԱսորեստան հնչէ շոյտ,
Որպէս ալիք խիստ ծովու՝
Մարդիկ խմբին ի մի կոյտ.
Բռունք երկրի խրախոյս բառնան,
Բուռն արկանեն զզինու։

Այլ պինդ ճայթմունք աղեղանց
Քաջականգուր հսկային,
Հանգոյն ահեղ որոտմանց՝
Պակոյց զսիրտ ամբոխին.
Ուր հզօրաց ձեռք թուլացեալ,
Փախչիլ, թաղչիլ պիտէին։

Եկայք, սերունդք, սոյն վիհիս
Զօնել նմա շուրջ պատակ,

Զմեր քաջութեան արդասիս
Ցանմահ փառացն յիշատակ.
Զի ծանիցէ աշխարհ զմեզ
Թէ եմք նորա իսկ զաւակ։

76.

Աղգասէր.

Երբ պանդոկումն եմ, ու իմ յանդիման
Կան կերակուրներ թանգ ու պատուական,
Մի՞թէ չեմ յիշում վիճակն իմ ազգին,
Զե՞մ ասում «Հայե՛ր, օգնեցէ՛ք Հային»։

Թատրօնում նըստած՝ առաջին կարգում,
Ու մըտքիս պէսպէս խորհուրդ են ծագում.
Դպրոց... Թէատրօն... Հայոց զոլք... ուսում...
Զե՞մ ասում «Հայե՛ր, գաղթեցէ՛ք Արզրում»։

Կալուածատէր եմ. անտեսը իմ տան
Հաւաքեց բերեց ինձ փող բաւական.
Ես չե՞մ հասկանում ազգիս հանգամանք,
Զե՞մ ասում «Վանին խիստ պէտք է մի բանք»։

Մահիճըս կակուղ, վըրէս տաք վերմակ,
(Ես շատ բարի եմ քընի ժամանակ,
Մանաւանդ երբոր փորս էլ է ալկուած)
Զե՞մ ասում «Հային տուէ՛ք խորշ ու հաց»։

Օրն է միգապատ, տափը թաց ու ցեխ,
Բեռնակիր մշակը ոտքն չունի տրեխ.
Տաք տեղից ասած չե՞մ հազար անգամ
«Էէ՛ր երկաթուղի չունի Հայաստան»։

Կընկաս չորս կանգուն կերպասէ ազին
Ո՞ւքան լաւ խորհուրդ բերեց իմ մտքին.
Զասայի՞ Հային «Զեզ համար ժըլատ,
Իսկ եղբարց համար պիտ լինել առատ»։

Դուստրըս ինքթիթուք, որդիս՝ քօռփուսում՝,
—Ականջիդ կասեմ՝ այդ է զուտ ուսում—
Բայց երբ զընում եմ ես Թուրքի-Մայդան,
Հայ դպրոցներին ես չեմ միշտ պաշտպան։
Այսպէս՝ տարիներ և ամբողջ իմ կեանք
Արել եմ միայն ես լոկ շաղփաղփանք.
Իսկ դուք միամիտ, շուտ-խաբուող Հայեր,
Անունըս զըրուք խելօք աղգասէր։

Գամառ-Քանիպա.

77.

Ելէ՛ք, ելէ՛ք, ՇՆ, դուք ասսի,
Հոգ, անձկութիւն ու տաղնապ,
Եկէ՛ք ծիծաղք և խաղք մեզի,
Հաճոյք գոլով սիրոյ կապ։
Զ'պակասեն զբօսանք մեզմէ,
Կարևոր բան մ'ալ այն է,
Զիս հրաւիրող ամենքդ հո՛ս,
Ձեր եռանդն այս մեծ է։
Բայց պէտք է խորհիք, մոռածողք,
Թէ ի՛նչ ձեր բաղդն որոշէց,
Միշտ սիրեցէ՛ք ու բաւ է,
Ձեզ երջանիկ այն կընէ։
Դէ՛, սիրոյ համբոյր տուէ՛ք արդ,
Այդ թո՛ղ լենի մեզ սուրբ զարդ,
Հայոց համար այսպէս պիտի,
Որ նոցա եռանդն զարթի։
Միշտ յիշեցէ՛ք ձեր նախնիքը,
Ամո՛ւր պահէ՛ք այն պարտքը,
Որ միշտ հնչուի ձեր ականջին,
Հաւատացէ՛ք այս դարին։

78.

Կոյր երգիչ.

Երկու աչքով կոյր ծերունին,
Ձեռք առած իւր որդուն,
Մի հասարակ ջութակ ձեռին
Ման է գալիս տանից տուն։
Նա անկարող աշխատելու
Եւ հաղիւ հաղ քայլելով,
Իւր անձն, որդին կերակրելու՝
Հաց է մուրում երգելով։
«Ահա՛, հոյրիկ, տասց աղան,
«Մեծ տան առաջ ենք կանգնած.
«Երգի՛ր այս տեղ, բնակիչք այս տան
«Հարուստներ են անկասկած»։
«Եւ կանգնած է պատուհանում
«Շատ գեղեցիկ մի տիկին,
«Այնպէս քաղցրիկ ցած է նայում,
«Նա մեզ կըտայ հացի դին»։

Կոյր երգիչը ածել սկսեց
Մի շատ տխուր եղանակ,
Եւ թոյլ ձայնով այսպէս երգեց
Նա մի և նոյն ժամանակ.
«Ո՛վ պարոններ և տիկիններ,
Ողորմեցէ՛ք ծերուկիս.
Արդէն անցան շատ տարիներ,
Ինչ հանգել է լոյս աչքիս։
Եւ իմ համար պայծառ լուսով
Երբեմն արև փայլում էր,
Եւ հրաշալի բնութեան շքով
Եւ իմ աչքը զմայլում էր։

Սակայն իմ հին մեղքի համար
Տէրը պատժել ինձ վճռեց,
Եւ այն օրից թանձր խաւար
Աչքերիս վրայ Նա սփռեց։
Նորա վճիռը միշտ արդար է,
Չեմ գանգատում Նորանից.
Մարդերի սիրտը կարծր քար է,
Գանգատ ունիմ նոցանից։
Աստուած շնորհեց ինձ մի դստրիկ,
Գեղեցկութեամբ չկար հատը.
Բայց անօրէն և չար մարդիկ
Խլեցին ինձնից իմ բաղդը։
Ձայնիկ ունէր քաղցրահնչիւն,
Սիրտը բարի և քնքուշ.
Ինքը աշխոյժ, ինչպէս թռչուն,
Բարքով համեստ ու անուշ։
Սատիկ աղմուկ, մի մութ գիշեր,
Վեր թռցրեց ինձ խոր քնից,
Ես լսեցի աղջկան ձայնը.
«Հայրիկ, օգնի՛ր, տարան ինձ»։
Ցուսահատված վազում էի
Խարխափելով դէս ու դէն.
Մ՞խ, ես օգնել կարող չէի,
Եւ ծեր էի, կոյր, անզէն։
Եւ այն օրից մնացի անտէր,
Պատմում եմ ցաւս աշխարհին.
Կոյր աղքատին, ո՛վ պարոններ,
Մի՛ խնայէք հացի դին»։

Սիրուն կինը կարեկցութեամբ
Պատուհանից լսում էր,
Արտասուքը առատութեամբ

Նա աչքերից թափում էր։
Նա վե՛ր առաւ իւր քսակը
Եւ ցած ձգեց ծերուկին.
«Ահա՛, հայրիկ, իմ խեղճ հայրիկ,
Ահա՛, առ քեզ հացի դին»։—
«Մ՞խ, այդ ձայնը ինձ ծանօթ է»,
Կանչեց ծերը դառնագին.
«Դստրիկ, տուաջդ հացի շատ է,
Դա դագաղիս կը լինի դին»։

Վերջին անգամ երգեց ծերը,
Միւս օր նորան թաղեցին
Նոյն արծաթով, որ ըստացաւ
Իւր աղջկանից հացի դին։

Գ. Բարխուդարեանց.

79.

Ուսանող։

Երբ որ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարցայ,
Թէ՝ ի՞նչ վիճակ ես ուզում.
Ասի՝ ուսանողութիւն։

Աստուած ուզեց զարդարել
Ինձ, դիպայ շորեր կարել.
Ասի՝ էն դու կանանց տո՛ւր,
Ինձ մի նրշանազգեստ տո՛ւր։

Կապտածրդի գրդակ տո՛ւր,
Մէջքէս կապէ՛ հատու սուր.
Մառանումիս լաւ դինին
Թո՛ղ միշտ անպակաս լինի։

Իմ սիրելի նաղելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.

Փըղըշտացի ախոյեան
Տե՛ս իմ սուրն է իմ պաշտպան։
Ո՛վ չի իլել ուսանող,
Լաւ է, որ միշտ մընար հող,
Քանց Աստուծոյ լոյս արևն
Անանոց պէս վայելէր։
Ո՛վ չի կոնծել երգելով,
Ընկերաց հետ պաչուելով,
Նա չըգիտէ ցնծութիւն.
Եղո՞ւկ սրտին, վա՜յ հոգուն։
Ով չի երդուել ընկերաց
Պաշտպան լինել հայրենեաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել։
Մեզնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թո՛ղ անանոց կարդն ընկնի,
Թո՛ղ մեր մէջ նա չի մընի։

Ռ. Պատկանեան։

80.

Գեներալ Յովհաննէս Դաւթեան Լազարեանցի Տապանագիրը *).

Երբ մանուկ էի—շորերս պատռատած՝
Ասեղն էր տալիս ինձ ապրուստ և հայ.
Բայց երբ կատաղի երիտասարդութեան
Արիւնը իմ մէջ ըսկսեց եռալ՝
Փըշրեցի ասեղն—և նորա փոխան
Առի զենուորի հըրացան, խանչալ։
Եւ այնուհետև իմ հըզօր ձեռքը
Զարդարեց պատուով իմ ուսն ու կուրծքը։
Ինձնից դողումէր, պէս տերև աշնան,
Քաջ արծուասիրտ ամբողջ Դաղըստան։
Անցան տարիներ... ճրնշուած Հայաստան,
Ոտք դրրի քո մէջ՝ սարսեց Տաճկաստան...
Էլի մի տարի—և ահա՛ տապան
Կոխեց դռռ մահը Արցախու հըսկան...
Անցո՛ղդ, ժանդոտեց սուր և հըրացան,
Կորաւ աշխարհից իմ փառք, իմ նըշան.
Բայց կը մոռանա՞յ արդեօք Հիւսիսը,
Թէ ի՞նչ քաջեր է ծընել Մասիսը...

Սիմէօն Սափարեանց.

*) Գեներալ Յովհաննէս Դաւթեան Լազարեանցը ծնուած է 1820 թ. Ղարաբաղու Շուշի քաղաքում և կրթութիւն ստացած տեղական արքունի դպրոցում։ Նա, մի առանձին հպարտութեամբ, նայելով այն ասեղի վերայ, որով պարապելիս է եղել դերձակութեամբ, կոտրում է նորան և մտնում զենուորական ծառայութեան մէջ 1839 թուին։ Այդ ժամանակից նա պատերազմական կեանքի դպրոցի մէջ կրթվելով և միանգամայն գրաւելով Պետութեան ուշադրութիւնը իրա քաջութեան, ընդունակութեան, հանճարի և աղնիւ բնաւորութեան վերայ, հասարակ զենուորի պաշտօնից սկսած, հասնում է գեներալ-ադիւտանտի բարձր աստիճանին։ Հանգուցեալ Լազարեանցի կենսագրութիւնը և, հետևաբար, նորա պաշտօնական ծառայութիւնների փառաւոր պատմութիւնը թողնում եմ իմ համաքաղաքացի պ. Գր. Նիկողոսեանին, որը, աւելի և աւելի մօտիկ լինելով հանգուցելու կեանքին և գործունէութեան, խոստացած է մի աշխատութիւն նուիրել ազգին «Գեներալ Լազարեվ և գաղթականութիւն» խորագրով։ Վերջին ժամանակներում, այն է՝ 1879 թ., հանգուցեալ Լազարեանցը, Ախալ-Թէքէ անուանուած Թուրքմէնների դէմ բացուած պատերազմի մէջ, ռուսաց զօրքին գլխաւոր հրամանատար նշանակուելով և տակաւին իրա բազկի զօրութեանը և իրա թրի զընգոցին թշնամուն չ'զոհած, ի՞նչ ասեմ... մի խոցով հիւանդանում է և նոյն թուի օգոստոսի 14-ին մեռանում «Զաթա» կոչված տեղում։

Գ. Բ. Գրիգորեանց.

81.

Թատրոնական երգ *).

«Արիացիր, զոնեայ»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Եկա՛յք, ընկերք, սիրապէս
Կատարելու մի հանդէս.
Ահա՛ շը.քեղ տեսարան։

Շնորհիւ ռուսայ Արքային՝
Մենք ազատ ենք գլխովին՝
Սիրել մեր Ազգ և Կրօն։

Թո՛ղ ուրեմն, իմ Հայե՛ր,
Արիանան ձեր սրտեր՝
Գովել մեր հայրենիքը։

Պատճառ, նորա սուրբ հողը,
Միրգ և պտուղ և ջուրը
Օրհնեալ է մեր Արարչէն։

Դէ՞, ուրեմն, շուտով մենք
Հայ ազգի կենաց խրմենք.
Օ՞ն, մի ծափահարութիւն։

Ա. Գրիգորեանց.

---

*) Այս երգը երգուած է Բագուի Հայկական թատրոնում երկրորդ ներկայացման ժամանակ, «Դեվերտիմանի» միջոցին, 1871 թ. յունուարի 23-ին։ Ի դէպ. Բագուի Հայկական թատրոնի սկիզբը դրուած է (թող յանդգնութիւն չ'լինի ասելու) տողերիս գրողի նախաձեռնութեամբ, և իմ, և տեղիս Բէալական Գիմնազիօնի ուսանող անմոռանալի ընկերներիս մասնակցութեամբ Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» խորհրդական ժողովի մեծապատիւ անդամների նիւթական օժանդակութեամբ։

Առաջին ներկայացումը, այն է՝ «Դալալ-Ղաղօն», Փուղինեանցի և «Գիշերուան Սարը Խէր է» Գ. Սունդուկեանցի, տրուեցաւ

82.

Մուֆտայ բան շա՛տ ենք սիրում.

Երբ որ ուզում ենք մենք մի բան անել,
Ի հարկէ, առաջ սկսում ենք խօսել՝
Թէ այս ինչ բանը շատ օգտաւէտ է
Եւ ունենալը անհրաժեշտ է.
Բայց երբ որ տեղը գալիս է փողի,
Մեր դրպանը խիստ կերպով կը կաղի.
Այն բան սովոր ենք մենք շատ սիրել,
Միայն փող չըտալ—մուֆտայ վայելել...

Օրինակ՝ պատահում է ժողովում
Մի որ և է բան է առաջարկվում,
Սովորաբար ընդունում ենք ուրախ,
Ուզում ենք իրագործել անյապաղ.

Ն. Կրասիլնիկեանցի, ծովի ափին գտնվող, նոր շինութեան մէջ, 1870 թ. դեկտեմբերի 28-ին, բարեգործական նպատակով։

Առաջին պիեսայի մէջ մասնակցում էին հետևեալ գիմնազիստ ուսանողները. Դալալ-Ղաղօի դերը կատարում էր Աւագ Գրիգորեանց (իմ նուաստութիւնս), Սինդուխտինը՝ Աղեքսանդր Քալանթար, Կիվկիվինը՝ Գրիգոր Մարղուլեանց, Ցարդինը՝ Նիկողայոս Շահնազարեանց, Ժամպուլինը՝ Վասիլի Աւշարեանց, Ցը.քվիտաձէինը՝ Ղևոնդ Տէր Օհանեանց։

Երկրորդ պիեսայի մէջ.

Օսկան Պետրովիչի դերը՝ Գասպար Եաղուբեանց, Մարթայինը՝ Աղեքսանդր Քալանթար, Կէկէլինը՝ Սարգիս Մալաֆէեանց, Ցարութիւն Ճարտարովինը՝ Գրիգոր Մարղուլեանց, Քէտիսէինը՝ Ղևոնդ Տէր-Օհանեանց։ Բէժիսեորի պաշտօնը, ըստ մեր խնդրանաց, կատարում էր Ղզլարցի պատուական երիտասարդ պ. Պետրոս Ցարութիւնեան Ասլանեանց։

Գ. Ք. Գրիգորեանց։

Բայց երբ որ բացւում է ստորագրութիւն՝
Խոյս տալն ունինք մենք սովորութիւն...
Փողն անուն մենք չենք սիրում լսել—
Սիրում ենք մուֆտայ, ձրի վայելել...

Ուզում ենք ունենալ հայ լրագիր,
Ամենօրեայ և ինքն էլ միծաղիր.
Բայց երբ որ բաժանորդ ենք մենք գրվում՝
Խմբագրի փողերը չենք էլ ուզարկում.
Եւ կամ թէ մէկի սատացած համարը
Տասն հոգի ենք վեր առնում կարդում.
Ի՞նչ հարկ կայ աւելորդ փողեր մխել,
Քանի լենում է մուֆտայ վայելել...

Սիրում ենք հայոց թատրոն ունենալ,
Մեր հայ բեմին պաշտպան հանդիսանալ.
Բայց գալիս է օրը ներկայացման,
(Երբ մենք պիտ՝ մխենք քանի մի թուման)
Ցանկարծ հրաւիրվում ենք աղգականից,
Կամ չենք յետ ընկնում մի ինչ որ ասնից.
Այդ մահանայով թատրոն չենք գնում,
Պատճառ, մուֆտայ տեղ մենք շատ ենք սիրում:

Յովակիմ Սոխակեան.

83.

Հէյնէից.

Եթէ ծաղիկներն յանկարծ իմանան,
Թէ սրտիս ցաւը շատ խորը գընաց՝
Անկասկած ինձ հետ կուլան, կերերան,
Որ կեանքիս նորէն ինձ բաշխէ Աստուած:

Եթէ սոխակներն կերգով մը լսեն,
Թէ հոգւով, սրտով հիւանդ եմ, մեռած՝

Իսկոյն, ախրելով, անուշիկ կ'երգեն
Ջանալան երգեր մրխիթարանաց:

Եւ եթէ աստղերն, արեւն և լուսին
Ցաւիս հասկանալ իմ կարողանան՝
Երկնքի տակէն, հաստատ, վար կիջնին,
Որ խօսք մը ասեն մրխիթարական:

Բայց ո՛չ ոք սրտիս ցաւը չը գիտէ...
Իմ ցաւիս գիտցող միայն մէկ մը կայ...
Ջանին ես մեռնիմ, ինչ կուզէ ինձնէ,
Որ միշտ կը վառէ, կերէ անխնայ:

Մկրտիչ Ալիխանեան.

84.

Բ ն ո ւ թ ի ւ ն.

(*Թարգմանութիւն*).

Ես շատ կը սիրեմ փայլուն աստղերը,
Բայց ո՛չ թէ այն լայն կապոյտ երկնքի.
Զէ՛, չէ՛, աւելի կուզեմ, կը սիրեմ
Փայլուն աստղերը կուրծքի վերայի:

Ես շատ կը սիրեմ լսել խշխշոց,
Բայց ո՛չ թէ ծառի խիտ տերևներու.
Զէ՛, չէ՛, աւելի կուզեմ, կը սիրեմ
Խշխշոց խոշոր նոր թուղթ փողերու:

Ես շատ կը սիրեմ սուս փուս թռչնոց,
Բայց ոչ թռչունի, որ չունի դալար.
Զէ՛, չէ՛, աւելի կուզեմ, կըսիրեմ
Սրտիս թռչնոց անուշիս համար:

Ես շատ կը սիրեմ, որ կըլ-կըլ վազէ,
Բայց ո՛չ թէ առուն բարձրէն դարիվար.

Զէ՛, չէ՛, աւելի կուզեմ, կը սիրեմ,
Որ նրան գինի վազէ բիկէս վար։

Ես շատ կը սիրեմ հովը բարալիկ,
Բայց չըգիտենաք թէ օտար երկրի.
Զէ՛, չէ՛, ես միայն կուզեմ, կը սիրեմ
Քաղցր, անոյշ հովն մեր Հայաստանի։

Մկրտիչ Ալիխանեան.

85.

Մի լուսնեակ գիշեր.

Երկնակամարի կապուտակ դաշտում
Հանդարտ սահում էր փայլունակ լուսին,
Եւ ադամանդեայ փաղփիւն կանթեղներ
Ոսկէ թելերով շարած չորս կողմին։

Ծորում էր ծոցիցն շիթեր շողշողուն,
Սփռում, ծաւալում դաշտ ու հովիտներ,
Եւ կախարդական լուսով թափանցիկ
Գեղաղարդում էր անտառ ու ձորեր։

Զեփիւռն էլ մեղմիկ իւր անոյշ հովը
Խաղաղ փչում էր բնութեան խորքից,
Սօսափիւն տալով կանաչ տերևներ
Կաղնի ու սօսի ծառերի ծայրից։

Սոխակ և սարեակ, նաև գեղձանիկ
Անտառի միջէն երգում մեղմանոյշ,
Եւ ոստոստելով թռչում ճիւղէ ճիւղ,
Մերթ սուլում խմբով, մերթ որոշ որոշ։

Բնութեան չքնաղ գեղեցկութիւնը
Այսպէս փայլում էր ամէն տեղ պայծառ,
Եւ Արտեմիսն էլ, շքեղ պճնուած,
Հրճվում էր ժպիտն յայտնն լուսավառ։

Անդ կանաչ թաւշեայ գողտրիկ բոյսերը,
Ծաղիկների հետ գրկուած խառնիխուռն,
Կարծես մետաքսեայ թելերով գործած
Գորգ էր թանկագին՝ ոտքին տակ փըռած։

Մինչդեռ զմայլած այդ երևոյթով
Ընկած էի խոր յիշողութեան մէջ,
Յանկարծ ջինջ լուսին անհուն ծաւալում
Խուսեց ու ծածկուեց ամպերի եաքում։

Իսկոյն և տիրեց խորին լռութիւն
Բնութեան վերայ և ամէն շնչոյ.
Լքեալ պաղեցան բոլորն տեղն 'ի տեղ,
Զբրկուած փարոսից մթին գիշերոյ։

Երբեմն էլ այսպէս էր քաջն Վարդան,
Որ փայլ էր տալիս Հայոց զընդերին.
Սոխակ քաղցրաձայն Սուարայր դաշտում
Էր սուրբ Եղիշէն խաչը աջ ձեռին։

Երբ ընկաւ Հսկայն վառված վէհ սրտով,
Մարեց լուսինը Հայոց աշխարհին.
Տխուր ամպերը պատեց երկինքը,
Թողեց խաւարում վիճակը Ազգին։

Յարութիւն Տէր-Գաբրիէլեան.

86.

Ե՛կ, Տէ՛ր Յիսուս, ողորմեա՛ մեզ,
Ողորմութեան ժամ է արդէն։
Ե՛կ, Բարեխնամ, այց արա մեզ,
Այցելութեան ժամ է արդէն։
Ե՛կ, Մարդասէ՛ր, փրկեա՛ զմեզ,
Փրկչիդ շնորհաց ժամ է արդէն։
Ե՛կ, Բազմագութ, խնայեա՛ 'ի մեզ,
Խնամող սիրոյդ ժամ է արդէն։

87.

*Առ աղնուափայլ օրիորդն Նունէ Դատեան, 'ի պատասխանի բանաստեղծութեան նորա «Ունայնութիւն ունայնութեան» *),*

տպեալ 'ի 629 համարի «Արշալոյս Արարատեան» լրագրոյ.

«Աձեցէք և բաղմացարուք
«և լցէք զերկիր».
ԾՆՆԴՈՑ.

Զի՞նչ զքեզ ստիպեաց՝ օրիորդ աղնիւ,
Առեալ 'ի ձեռին՝ զտխուր քո քնար,
Աշխարհ և նորա՝ զբարիս անթիւ
Անուանել ունայն՝ այդքան անարդար:

Գի՞տես, կոյսդ չքնաղ, զի՞նչ է այս աշխարհ,
Ստեղծուած է բարի, զոր Աստուած ալար.
Սա Նորա պարգև՝ 'ի վայելս մարդկան,
Ապա ո՞ր խղճիւ դու կոչես ունայն:

Բանք Սողոմոնի ծերոյն անառակ
Զքոյ սիրտ քնքոյշ՝ իսպառ վրդովեաց.

---

*) Մեզանում, կարծես, սովորութիւն է դարձած, որ երբ մինը մի որ և է կարիք է զգում, կամ մի որ և իցէ, — թէկուզ չնչին, շատ չնչին, — կորուստ է ունենում, կամ, մանաւանդ, երբ նախասահմանութեան մի որ և է մահու վճիռ է կատարուած լինում, կրկնում է, տեսնում ես, սովորութիւն դարձած հին երգը. «Էհ, աշխարքս դարդակ է, փուչ է, անգութ է, խաբեբայ է» և այլն, և այլն, մոռանալով, որ Աստուած աշխարհս բարի է ստեղծել և մարդու համար է ստեղծել: Հէնց այս առիթով — 'ի դէպ — տպագրում ենք այստեղ մեծ. Մարիամ Ն. Շաղուբաթեանցի քառորդ դար սրանից առաջ գրած գեղեցիկ և հետաքրքիր պատասխանը:

Գ. Բ. Գրիգորեանց:

Նա ասաց զայս, երբ անչափ, անքանակ
Զեխեցաւ 'ի փառս՝ անկաւ յախտս մեղաց:

Զառամեալ հասակ՝ սիրտ նորա հոգի
Յոգնեալ 'ի փառաց՝ մաշեալ 'ի յախտից
Բարբանջել եռուն՝ այս անզգայի
Թէ աշխարհ ունայն է տուն աղէտից:

Բայց դու, բարեկամ, զաշխարհ մի՛ ատեր,
Զէ՛ սա արարեալ՝ քեզ ոչինչ չարեր.
'Ի ծոց քոյ ծնողաց՝ ծլե՛ր ու ծաղկի՛ր,
Աշխարհիս բարիքս զեռ շատ վայելե՛ր:

Աղնիւ քո ծնողք՝ երբ 'ի քեզ նային,
Քոյդ գեղեցկութեամբ՝ խանդակաթ զմայլին,
Իշխեա՛, դու՛, անխի՛ղճ, զնոսա ստիպել
Զքեզ զարդդ աշխարհի՝ ունայն անուանել:

Գնա՛ 'ի պարտէզ՝ տե՛ս ծառս և ծաղիկ,
Վարդից բոզբոջմունք՝ թռչնոց դայլայլիկ,
Խոռվեա՛ դու զնոսա՝ եթէ ոյժ ունիս,
Ասա՛ աշխարհս է ունայն, խաբուսիկ:

Երբ ծէր քեզ ասցէ ունիլ ամուսին,
Զգողարիկ զաւակունս՝ և զսէր նոցին,
(Ասա՛ ինձ ծածուկ, ես ես եմ աղջիկ)
Կամիցի՞ս կոչել՝ զաշխարհ խաբուսիկ:

Էհ, «ունայնութիւն» բառ «ունայնութեան»
Զի՛ք 'ի մեր լեզու՝ և ո՛չ բառարան,
Զէ՛ այս խիստ պատգամ՝ նորահաս աղջկանց,
Մի՛ հաւատասցուք ծերոց բարբաջմանց:

Կեցցո՛ւք յաշխարհի՝ սիրեսցո՛ւք զաշխարհ,
Սիրեսցո՛ւք զբարիս՝ որպէս է հրաման.
Զարդարեալ զանձինս՝ գործովք միշտ արդար,
Ցուցցուք թէ աշխարհս՝ չէ՛ իսպառ ունայն:

Սիրեսցո՛ւք զաղգ մեր՝ լեզու և հաւատ,
Պարծեսցուք յաւէտ միշտ մեր հայ անուամբ,
Ո՛չ հարստութիւն՝ ո՛չ վիճակ ազգատ
Զմեզ ստիպեսցէ կոչել այլ անուամբ։

Եւ երբ այսպիսի՝ առաքինութեամբ
Հասցուք 'ի յաւուրս՝ խորին ծերութեան,
Գուցէ թէ յայնժամ՝ համեստ հեզնութեամբ
Եւ մեք կրկնեսցուք՝ աշխարհս է ունայն։

Մարիամ Ն. Շաղուրաթեանց.

88.

Զձեզ, որդի՛ք Արամեան,
Կոչէ հայաստան,
Զարթեայ, ասէ, 'ի քնոյ,
Ինձ հանդիստ ո՛չ զոյ։
Ո՞ւր իցեն զաւակք իմ,
Ո՞ւր են իմ նաժիշտք,
Ո՞ւր են ոսկէհուռ զարդք իմ
Հայրենի օժիտք։
Ո՞ւր մեծասասա գաւազան,
Զոր հայկ ինձ յանձնեաց,
Ո՞ւր քաջատէգ խումբ մարտկաց,
Ո՞ւր հայք գիւղաքանց։
Ո՞ւր են անթիւ քարոզիչք,
Ոյք ականք բազմաց,
Ո՞ւր ներկուռ են իմ վարժիչք
Դեռաբոյս կոյսեաց։
Զձեզ կոչեմ, զաւակք իմ,
Լուարուք իմ ձայնի,
Ցիշեցէ՛ք զկամն իմ,
Զոր ձեզ ջամբեցի։
Որդիք էք դուք հայկայ—

Ժառանգորդք իմ ասն,
Որդիք սէգն Արամայ,
Որդիք Տիգրանայ։
Զմայրն ձեր որբացեալ
Մինչև ցե՞րբ թողուք,
Զերկունս իմ յիշեալ
Զայնիս իմ լուարուք։
Հայաստան մայր, կալ զյոյս
Լուր ձայնից որդւոց,
Սրբեա՛ յաչաց զարտասուս,
Տեղի տուր ցաւոց։
Զկամն զոր մեզ ջամբեցեր
Արդ մեք յիշեցաք,
Եւ զհայրենի թագն մեր,
Զոր մեք կորուսաք։
Հերիքասցին աղէտք քո,
Մայր մեր Հայաստան,
Կառուցաք մեք 'ի սէր քո
Զքնաղ զապարան։
Ասա՛ երցեն քեզ վարժիչք,
Որոց փափագիս,
Ասա՛ ներկուռ ուսուցիչք ,
Որոց իղձ ունիս։
Երդումն անխաբ երդուաք
Կատարել զուխտ մեր,
Սէր զոր 'ի մեզ վառեցաք՝
Է առաջնորդ մեր։
Կեցցե՛ն անդամք ուխտին մեր
Բազկաւ Անեղին,
Կեցցէ՛ անխախտ փոքր հօտ մեր
Վասն Հայաստանի։

Պ. Փափազեան.

89.

Հայ զինուորի երգը.

Զինուոր էի Հայոց ազգին մեր իմ,
Երբ Հայաստան քարքանդ արեց Թշնամին.
Պինդ պինդ ցաւեց սիրտը արի Հայերուն,
Այն օր նոքա թափել տուին դեռ արիւն,
Շատ շատ քաջեր ընկան ասոից ու անդիից,
Ես էլ ընկայ Թշնամիի սուր նետից.
Իմ մարմինը դաշտի միջին է ընկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չէ՛ Թաղած.
Դուն մի՛ ճնար աչքդ արցունք օրն ի բուն
Սիրականիդ, ի՛մ սիրական, մտի՛ր քուն,
Առատուն կուգայ չարադուշակ դուժկանը,
Սուգ, ողբ, կրսկիծ նա կը նիւթէ իմ տանը.
Երբ որ լսես վաղաժամիկ իմ մահը,
Ա՛ռ երկու թի ու երկաթէ սուր բահը,
Ա՛ռ քու հետը մի ըսպիտակ մեծ պատան,
Փորէ՛ խորին ինձի համար գերեզման.
Գերեզմանիս վրայ բլռնի վարդենին,
Վարդը բացուի, աչքը գրաւէ ամենին.
Սոխակին էլ թող գրաւէ նա հոգին,
Քաղցր տաղեր թող ներշնչէ սոխակին,
Թո՛ղ սոխակը անդ.քրս պատմէ ամենուն,
Թո՛ղ լսողը ողորմի տայ իմ հոգուն:

Գամառ-Քաթիպա.

90.

Ա.ղէն տա՞նն է.

—Զարմանք բան է՝ հէնց գիտենաս
Ա.ղէ.ք տանը չին նստում.

Իսկի չելաւ, վուր մի գրթնիմ
Ա.ղալոյին իր աշնում:—

Մի՛ արմնա, պարուն Սարգիս,
Էս աշխարքի ադաթին,
Իշխանք, գանա, դու խաբար չի՞ս,
Վուր քասիբին կու տաին:

Ա՛ռ օրինակ՝ թէ մեծավուր
Ապալեանիրը ուսին,
Գայ գրրան մօտ, հարցնէ աղին՝
«Տա՞ննն է».—տանն է, կոսին:—

Նրրա էդնից մի փեշաքար,
Էլի էն նոքրին հարցնէ.
«Տա՞ննն է աղէն». կրնծին տալով
Խեղճին իսկոյն դուս կոնէ:

Թէ աղի մօտ լաւ շորերով
Կուգաս՝ տանը կու գրթնիս.
Վայ թէ չուխէդ հրնացած է,
Լաւն էն է, տուն չի մրտնիս:

Թէ սալոպով աղջիկ պարոն
Կուգայ՝ թող նե՛րս հրամայէ,
Թէ գաթիպով պառաւ Ջալօն
Հարցնէ—կոսին տանը չէ՛:

Թէ վուր ձեռիդ քիսա բռնած,
Պարոնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատուով ներս մրտնում իս,
Գլխի վրայ տեղ ունիս:

Թէ դուքանդար իս, հիսաբով
Փուղի էդնից իս էկի,
«Տա՞ննն է աղէն». կոսին—հալա
Ժամիցը տուն չի էկի:—

Էս է հիմիկուայ ադաթը—
Կուզես ջեզրից տըռաքի՛,
Թէ քասիբ իս, ջուրը ընկի՛,
Թէ խօջա իս՝ տուն մըտի։

Ռ. Պատկանեան.

91.

Զարթի՛ր, մայր Հայաստան, 'ի լոյս արփենի,
Նոր առաւօտ շողեաց քեզ շող ծիրանի։
Աւետարերն եկեալ շեղ 'ի բերանի՝
Զիմաստութեան ձօնէ քեզ սուրբ ձիթենի։
Աղո՛ւ աղաւնի
Նոյեան տապանի,
Զարթի՛ր և պակեա՛ զորդիս գեղանի։
Ծովահայեաց սիրուի կա՛յ անդ հանդրուան,
Եւրոպէ դշխոյին վերջէն դիտարան,
Արքային մեր Թադի գոհար պատուական,
Բիւզանդիոյ երկրորդի ժառանգորդ անուան։
Անդ և ձեմարան
Ազգիս Արամեան,
Դաստակերտ հոյակապ Վեհին Խալիպեան։
Նախիջևան պայծառ քաղաք մեր ծնընդեան,
Ո՛վ համբաւ բազմագանձ վաճառուց հայկեան.
Ցաւերժ դու պանծացի՛ր որդւովք բազմութեան,
Շքեղ քո տաճարօք, խանդիւք գեղազան։
Մեք յՈւստամնարան
Դիմեմք Խալիպեան.
Դառնամք նաւք ակաղձուն զանձու դիտութեան։

Գ. վ. Այվազեանց.

92.

Առ Ցիսուս.

Զձայն մանկանցս, ով Տէր Ցիսուս,
Լո՛ւր, որոց դու միայն ես յոյս.
Է՛ջ, երթիցուք քո ի սեղան
Եւ ի սրտիցս զբազմարան
Քեզ ծարաւեալ ոգիքն մեր,
Արբո՛ նոցա յանոյշ քո սէր։
Լո՛ւր մեզ, Ցիսուս, լո՛ւր զմեր ձայն.
Դու զԱզգս օրհնեա՛ և զվարժարանս։

Տէ՛ս, Տէ՛ր, մատց մեր զխաւար,
Եւ ծագեա՛ զլոյս քո հոգեվառ,
Տէ՛ս ի մեր սիրտ ախտից զհոյլ,
Ցառաքինի ի ջանս եմք թոյլ,
Տո՛ւր մեզ զշնորհ քոյին հզօր,
Զի մի՛ ի կրից պատրիմք մոլոր։
Լո՛ւր մեզ, Ցիսուս, լո՛ւր զմեր ձայն,
Դու զԱզգս օրհնեա՛ և զվարժարանս։

93.

Զինուորի երգ.

(Թարգմանութիւն).

Զինուորիս երգերը, եղբա՛ր, լսեցէ՛ք,
Աշխարհիս բաները լա՛ւ ճանաչեցէ՛ք։
Մէկն ունի մեծ տներ, միւսն զիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի։
Շորերը թանգագին, փողը միշտ քաղցած,
Տո՛ւր ձիուն միշտ գարի, ինքդ կե՛ր չոր հաց։

Թէ քաջ պատերազմես՝ կ'ասեն մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես՝ կ'ասեն ճնաս բարև։
Ո՞ւր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
Սհա՛ քեզ լաւ վասատակ քսան մեկ տարուան։

Գ. Դողոխեանց.

94.

Զէյթունն, անկախ դու աշխարհիկ,
Քո տար ու ձոր են անառիկ,
Սմեն մի քար և անկիւնդ
Շաղախել է քո արիւնդ։
Հէյլէ, հէյլէ, հէյլէ, հէյլէ, հէյլէ։

Դեռ ևս քո զօրեղ բազկում
Ռուբինեանց երկիրն է շարժում,
Ցիշատակ նախնի զիւցազանց
Պատկերն է քո քաջ զաւակաց։
Հէյլէ, հէյլէ. . . . . .

Մզրախդ է ունեցած կայքն,
Քո ապրուստն է և քո կայքն,
Բռնութեան լուծն թուրք մարդու
Էդ զէնքով ես թօթափել դու։
Հէյլէ, հէյլէ. . . . . .

Կեցցէ Գրիգորեան հաւատը,
Հայ պահել իւր ժողովուրդը.
Հէյլէ, հէյլէ. . . . . .

Մ. Փ.

95.

Սղասու մօր երգը.

Զարթի՛ր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աչերը,
Թերթերունքդդ քունը թօթուէ, գիրկը հանդի՛ր քու մօրը.

Բաւէ քեզ որքան բարի հրեշտակք հեքաթ ասին երազում,
Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ՝ տեսնես աշխարհում։
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արևն է տեսնում։

Դուն կըմեծնաս, բոյ կըքաշես—չինար բոյիդ ես դուրբան,
Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դուլինիս քաջ Վարդան,
Իմ մտաներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիդդ թուր կըկապեմ, այն էլ ինքս եմ սրրել։
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արևն է տեսնում։

Մեր բախումը ձի է կայնած՝ քի՛ղ է մընում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես, սա՛ քու թուրը մահաբեր,
Քու հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,
Քու եղբարքը դերութեան մէջ... քաջ, միայն դո՛ ես քընած...
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արևն է տեսնում։

Զէ՛, իմ որդին շուտ կըզարթի, ձին կըհեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կըսրբէ, կըդադրեցնէ լաց ու կոծ.
Հայ եղբայրներ, քիչ էլ կացէ՛ք, իմ Սղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց ու իւր նըժոյգ ձին նըստաւ։

Գամառ - Քաթիպա.

96.

Խրախոյս հայ նորակոչ զինուորին*).

Զարթի՛ր, որդեակ, ուշ բեր, վե՛ր կաց,
Պատերազմի փող հնչեց.
Զարթի՛ր, կոչէ ձայն հայրենեաց,
Կենաց, մահու ժամ հընչեց։

Պատրաստել եմ քո զէնք, քո սուր,
Եւ քո գօտին ոսկեթել,
Եւ մի պսակ ոսկեփեթուր
Երկինք կանխաւ պատրաստեր։

Հաւաքել եմ քո զէնքերդ,
Ահա՛ գլխիդ վերև կան,
Ինչպէս երբեմն քո գրքերդ,
Երբ կ'երթայիր վարժարան։

*) Կովկասու Հայերը Պետական զինուորագրութեան մէջ ընդունուեցան 1887 թուականից, որ հայութեան համար մի փառաւոր, մի գեղեցիկ ապագայ է խոստանում։ Ահա՛ ինչ է ասում «Արձագանք» շաբաթաթերթը այդ մասին.

«Այն երիտասարդների համար, որոնց կ'վիճակուի ռուսաց փառաւոր զօրքի մէջ ծառայելու, սա լինելու է ամենաընտիր մի կրթարան։ Զօրքերի շարքում ծառայելը կ'ընդլայնացնէ ժողովրդից դուրս եկած գուգազի (նորակոչի) մտաւոր հորիզոնը, կը հարստացնէ նորան գիտելիքներով. թէ սորան և թէ լուսաւորեալ անհատին ծառայութիւնը կ'շնորհէ համերաշխութեան զգացմունք, որ ամենից աւելի կարևոր է իւրաքանչիւր հասարակութեան համար։ Երիտասարդները, որոնք կ'կանգնին փառաւոր ռուսական զօրքի դրօշակների տակ, պէտք է աշխատեն արժանի հանդիսանալու իրանց այն ազգակիցների հոչակին, որոնք անմահացրել են իրանց անունը ռուսաց պատմութեան էջերի վերայ, որ ճանաչում է և փառաբանում է Մագաթեանի, Արղութեանի, Բեհբութեանի, Տէր-Ղուկասեանի, Լազարեանի, Շելկովնիկեանի քաջագործութիւնները...»։

Գ. Ք. Գրիգորեանց։

Ելի՛ր, կապեմ սուր քո մէջքդդ,
Ասպար կախեմ քո ուսդդ,
Եւ մի գլուշակ ոսկեփեթուր
Թող ծածանի աջ թևդդ։

Մի՞թէ դու չես յիշեր, երբ որ
Գրիչ ու թուղթ ստուի քեզ,
Փոխան դոցա — ըսի — մի օր
Ուրիշ բան մ'ալ կուտամ քեզ։

Ահա՛ փոխան գրչի՝ քեզ սուր,
Փոխան թղթի՝ կռուի դաշտ.
Գնա՛, կեանք տուր Կայսեր համար,
Մայրդ մեռնի երկինք հաշտ։

Խ. Հ.

97.

Շուշանիկ։

Ի՞նչ հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դու մայր էիր զթառատ,
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անդարատ։

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամէն ժամ.
Քո մաղերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր սպառ։

Արդ հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրայ ազգը քո խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտ, հողին քեզ հետ տանիս, մաքրուհի.
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատ քեզ ընկեր.
Աջն ու խաչը քեզ պահապան զոր գիշեր:

Յ. Կարինեանց.

98.

Ի քաջն Վարդան.

«Ընդ ամենայն երկիր եկ բարբառ
«Նորա և մինչև ի ծագս աշխարհի
«են խօսք նորա»:

ՍԱՂՄՈՍ.

Թէ որ ամպերին ուրախ, համարձակ
Գան գլուխ հանեն սուրբ Մեսրոպ, Սահակ,
Եւ հարցնեն ինձնից, թէ ո՞վ է Վարդան,
Որին ո՛չ երկրում, ոչ վերև տեսան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Վարդան երբ ծընաւ, նոքա մոան էին:

Թէ թուղթ և մատեան ձեր առաջ հանեն,
Ղևոնդեան սուրբ հաբք տաճարաց բեմէն,
Եւ հարցնեն ձեզնից, թէ ո՞վ է Վարդան,
Որ իւր Վարդ անուն՝ փոխել է Վարդան.
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդանիս անուն նոքա կընքեցին:

Թէ որ Վարդանիս նաղելի մայր, տատ
Այսպէս խեղճ սրբից խօսեն անընդհատ,
Թէ ո՞վ էր այն քաջ, սէգ, գեղազիտակ,
Որին չըտուին ոչ կաթ, ոչ խրատ.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Վարդան մեծացաւ հէնց նոցա ձեռքին:

Թէ ձեր տանեաց շուրջ բոլորին ծիծառք,
Ու երգուեն ձեզ թէ, իրենց նախահարք
Ամեն ծաղքի տակ դրին բոյն, դարան,
Միայն Վարդանի տանիք շունչ չառան.
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդանիս բերան նոքա երգ դրին:

Թէ Աւարայրից Արսէն և Արտակ
Հայոց զընտերից բերեն ինձ նամակ,
Որի մէջ երգուեն, թէ Հայոց քաջին
Զեն ծանօթ բընաւ հայ զոր զօրավարք.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Վարդանիս ընկերք այդ քաջերն էին:

Թէ դարիւ դարիւ Եղեմի գետեր
Գան մրմրալով ծեծեն ձեր կողեր,
Եւ հարցնեն ձեզնից, թէ ո՞վ է Վարդան,
Որից Եղեմին բարև չըտարան.
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդան թէ ապրեց՝ նոքա ջուր տուին:

Թէ որ վանքերից ձայն տան անդադար
Անոյշն Եղեշէ ու ճարտարն Ղազար,
Եւ հարցնեն ինձնից, թէ ո՞վ է Վարդան,
Որին չըտեսած՝ հոգեվարք եղան:
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Սէր մեր Քաջի հետ իրենք կապեցին:

Թէ որ ձեր հանդէպ գլխով ալեոր
Մեր սեպուհ սարեր կանգնեն գլխակոր,
Ու այս ձև խօսեն, որ իրենց ծնկան
Երբէք չէ ննջել իմ անոյշ Վարդան.
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդան զօրացաւ նոցա թևերին:

Թէ որ Արտազից տխուր և տրտում
Դէպ ինձ դարձ առնեն շուշան ու քրքում,
Եւ ասեն այսպէս, թէ ինչո՞ւ Վարդան
Հետ հայոց քաջաց չ՚ելաւ Շաւարշան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Վարդան նոցա ծոց տուեց իւր հոգին։
Բայց թէ մեր տիկնայք հայոց աշխարհին
Ցառնեն համբաւեն, որ քաջ Վարդանին
Ոչ մարտի կրկէս, ոչ ի մէջ քաջաց
Տեսան խաչ ձեռին մահաշունչ ընկած,
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդան երբ մեռաւ՝ նոքա զոյժ բերին
հայոց աշխարհին։

Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Իւր հետ հեծեծանք քաշեց անբաժան.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Տաք արիւն թափեց նորա փրկութեան.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Իւր ժանտ թշնամիք դրրեց գերեզման.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան՝
Իւր մաքուր ժամեր, իւր լեղու, հաւատ
Տուեց մեզ խրատ, պահել անարատ։
Իսկ թէ հայ Մուսայք տաղերով պնդեն՝
Երկինք երկիր էլ վկայ մէջ բերեն,
Որ հայոց սրտի սեղանի վերայ
Երբէք չէ տօնուել անուն Վարդանայ.
Որ ճշմարիտ հայ՝ չէ՛ եղել Վարդան,
Եւ ոչ էլ հայոց եղել է պաշտպան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Որ այդ անձ արբշիռ, այդ անձ անօրէն
Չէ՛ եղել Վարդան, այլ Վասակ Սիւնին։

Սահակ Սարկաւագ.

99.

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժս ինձ յետ դար, կըտրիճ դառնայի,
Նրժոյգ ձի նըստած, պեխըս ոլորած,
Զեռըս թուր առած ես դաշտ կ՚երթայի։

Կ՚ասէի հայոց օրիորդներին՝
«Ծախեցէ՛ք հագի ձեր թանգ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—
Ժանգոտած ու գուլ են մեր թըրերը,
Տուէ՛ք բեհեղեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնոյ վէրքը,
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մաղերից.
Այսպէս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը»

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընդուկներըս լի ոսկով, արծաթով,
Շատերու նման ես չէի լինիլ
Երբէ՛ք ազգասէր ունայն խօսքերով։

Թէ ես լինէի մի երկրի իշխան՝
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խեղճուկ հայ ազգին լինել օգնական։

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի բոպէ
Աստուած լինէի մեր հողագընտին,
Ի՞նչ սուր սրլաքներ պիտի շաղ տայի
Մեր արենարբու թըշնամեաց գընդին.
Նենգ... Թուրք մոլի, Պարսիկ ոխերիմ,
Դարեւոր ոսոխ դու Ցոյն կրօնամոլ,
Գիտցի՛ք որ՝ իմ սուր երկայրի սրրից
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին։

Ռ. Պատկանեան.

100.

Երգ ուսանողաց*).

Թռչե՛նք դէպի լոյս, գիտութիւն՝
Աղատութեան մենք դրօշակով.
Թռչե՛նք, այո՛, դէպ մարդկութիւն
Սէր, միութեան քնքոյշ սրտով։
Трай-рай ли-ламъ, мои друзья!
Սէր, միութիւնն է՛ մեզ ընծայ։

Սիրե՛նք, ընկերք, կրօն, աղգութիւն,
Որ նմանենք «Ոսկի» դարուն,
Պատճառ, տուեց աղատութիւն
Մեզ Վեհ Կայսրն և ամենուն։
Трай-рай ли-ламъ, мои друзья!
Գիտութիւնն է մեզ մի՛շտ ընծայ։

Կեցցե՛ն հայոց վարժարաններ,
Որք տալիս են մեզ կրթութիւն.
Կեցցե՛ն նոցա հոգատարներ
Եւ խնամատուն պետագողներ։
Трай-рай ли-ламъ, мои друзья!
Հայոց աշխարհն է՛ մեզ ընծայ։

Ա. Գրիգորեանց.

101.

Հայրենիք.

Թէ իմն հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն։

Թէ հայ մուսային նրատառուչ նուագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ հայաստանիս սև բաղդին հագագ
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն։

Թէ իմս հայրենեաց կլիսամեռիկ շունչ
Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ հնչիկ հեծէ անշշունչ.
Ո՞հ անկարեկիր իմ լալիքս է այն։

Եւ հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարուան պարծանաց դարուն
Արձագանգ տուողն՝ աղաղակս է այն։

Իմ հայաստանիս յաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սև սև թերթերուն էջ սրտակոտոր
Արտասուք դրուած՝ իմ աղիքս է այն։

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն.
Թ՝աչքէ անցընես շամփրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն։

Թէ հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Խնկած տեսանես՝ իմ ուժս է այն.
Թէ դէնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն։

Թէ արեամբ ներկեն ակունք եղեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն.
Թէ քաղցր ու ամբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն։

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք տուտակեն՝ երակներս է այն.

Թէ Տիգրիս, Գեհոնն, Փիսոն մռնչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն։

Թէ սառնամանիք ձմռան բքաբեր
Լեռներն է պատեր, իմ դաղաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր
Ցրտադին փչեն, իմ շնչիկս է այն։

Թէ վառակ վառակ ցօղէ ղՀիշատակ
Զայս տրամավաստակ, աչքերս է այն.
Թէ սրտաձայնիկ երգէ ղՀայաստան,
Կանչէ ղՀայաստան՝ անկեղծ սէրս է այն։

Թէ մթին խորշերն ու ձորեր լռեն,
Սէրով ծածկին, մենաստանս է այն.
Թէ ողբ կրկարդան վայրերն եղեմին,
Ճնշած լերդերուս արձագանգն է այն։

Եւ Հայաստանիս հողերը ուխտիս
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթողին խնդիս՝
Ո՜հ, մայրակարօտ շրթունքներս է այն։

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապաբաղդ՝ իմ ճակատս է այն.
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պատակ
Գրած սգաւոր՝ գլուխիկս է այն։

Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղտաւարս է այն.
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսս է այն։

Ուր տխուր նստեր, մաղերն են ծածկեր
Իւր սևուկ աչքեր՝ սիրականս է այն.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր,

Ցուսով կոթներ՝ Հայաստանս է այն.
—Գերեզմանս է այն։

Ուր երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն,
Ցայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն։

Սիմոն Հայկ Մ. Ցէէկեան.

102.

Թէ ծխաքարշը ձեռիս
Սենեակումս նստած եմ,
Քընթիցս ծուխ հանելիս՝
Կարծում եմ թէ իշխան եմ։

Երբ քամին ծուխս փչի,
Ես պինդ ծիծաղում եմ,
Ասում եմ՝ մեր գործերը
Էսպէս անցաւոր են։

Ադնի՛ւ խոտ, դու զօրութիւն,
Կեանք ու ուժ ես ինձ տալի,
Ա՜խ, կարնայի քեզ գովել
Ինչքան սիրտս է տալի։

Ո՛վ երկինք, տուր էս խոտին
Դու արև, և անձրև շատ,
Եւ սորա մշակողին
Օրհնութիւն, կեանք ու բաղդ։

Մենակութեան ժամանակ
Դու ինձ լաւ ընկեր ես,
Թէ իմ սիրտս նեղանայ՝
Քեզ կ՚առնեմ ես ձեռս։

Թանկ ես, Թուրքի ծխախոտ,
Հարուստներու բան ես,
Հոգիս էլ տամ՝ քեզ կ'առնեմ
Ու կ'ածեմ զբրպանիս։

Ինչքան էլ դատարկ լինի
Փողերիս քիսակը,
Պէտք է անպակաս լինի
Բերնիս ծխախոտը։

Ո՛ւսանող՝ ան ծխախոտիշդ,
Շուտ կ'անցնի քու կեանքը,
Ու ծխելով միտք ալա,
Ունայն է աշխարքը։

Ք. Տ.-Պ. Պատկանեան.

103.

Վանեցու ամենօրեայ երգը.

Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածից յետոյ.

Թուրքը հասաւ... Էլեմ-էրթամ
Եղնուկներս հաւաքեմ,
Տանեմ անոր անկուշտ աչքից
Մի խալուաթ տեղ պինդ պահեմ։

Տասը-քսան ջուխտ եղներից
Մնացեր է երկու հատ.
Անոնց ալ, հա՛, շուտ իմ ձեռնից
Կ'առնու Քիւրդը անհաւատ։

Հերու կրակ տուեց-վառեց
Տուն ու տեղս-տեղերս.
Մալ ու միւլքս բիւթին խրեց,
Տարաւ կոյս աղջիկները։

Սրսէնիս ալ (ա՜խ, պալա-ջան)
Անօրէնը ըսպանեց,
Հարևանիս մեռած աղջկան
Աչքն ճամպուռմ նա թողեց...

Հօ-հօ-հօ, շո՛ւտ արէք, եղներ,
Հեռանանք, կորչինք սա տեղէն.
Հրե՛ն Թուրքը... հրե՛ն Քիրդեր
Կրգան ուզիշ մեր վրէն...

Զէ՛, եղնուկնե՛ր... հոս կայնեցէք.
Թող ձեզ տանի Օսմանլին.
Ասկէ ետև ալ ո՞ւմ համար
Պիտի վարէք դուք գետին.

Խեղճ Սրսէնի՛ս, աղջիկներո՛ւս,
Թէ՞ տանը չորս պատերուն,
Անոնք մեռան, տունը այրուեց,
Ղազաբի գայ Օսմանլուն.

Բարբաջ ըլլա Թուրքի տունը,
Թախտը ջարդուի Սուլթանի,
Բալքա հայու մարած ատաղը
Գէնոյ վաղուան պէս փայլի...

—Հա՛յու Աստուած, անդութ Աստուած,
Ալ ո՞ր տանն պիտ' լսես
Մեր աղօթքը, մեր ողբ ու լաց,
Մեր աղաղակ ազէկէզ...

Սիմէօն Սափարեանց.

104.

Ցոյս.

Թող փրչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սասսիկ ձիւն թող գայ,

Ո՛լքան որ կուզէ՝ թոռղ կատղի հիւսիս,
Ցուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ։

Թուխպը թոռղ պատէ երկինքը պայծառ,
Թանձրը մառախուղ երկիր թոռղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնըւին իրար,
Ցուսով եմ, վաղ-ուշ արև պիտ ծագէ։

Թոռղ գայ փորձութիւն, թոռղ գայ հալածանք,
Խաւար թոռղ դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չէն հային տառապանք,—
Միայն՝ չի հատներ խղճուկի յոյսը։

Գամառ-Քանիպա.

105.

Տաղ ի գլմաց իւրաքանչիւր հայկազնուոյ առ Հայաստան.

«Ա՛ռ զամբիւղ».
ՍՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Թշուառ Հայաստան, տուն ատելութեան,
Փութա՛ բժշկել ըզվէրք քո բնութեան,
Քանզի ցաւն այն չունի դեղ ու ճար,
Որ զաղա հասանի վերին ուժգնութեան։
Ո՛հ, ո՞ւր ես, ո՛հ, ո՞ւր ես, ո՛հ, ո՞ւր ես,
Անմման Ներսէս *)։

*) Հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս Հինգերորդ Հայկական Կաթուղիկոսը ծնված է 1770 թ. մայիսի 1-ին, Աշտարակ գիւղում։ Ներսէսը, որի մկրտութեան անունն էր Թորոս, որ իրա պապի անունն է, 7 տարեկան հասակից սկսած՝ սովորում է ս. Էջմիածնի Ժառանգաւորաց Դպրոցում 13 տարի, և 20 ամաց հասակում աւագ սարկաւագ ձեռնադրվում իրա կնքահայր Գալուստ արք-եպիսկոպոսից, Ներսէս վերակոչվելով և ապա—քանի

Ի սէր քո կրեաց բազում աշխատանք,
Ետես շատ լաւ օր և շատ անարգանք,
Որդիքը, իբրև Կայէն ոխացեալ՝
Հասուցին նմա վիշտ և սգատանք։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Վատ արարք նոցա էին անսահման,
Զեռ ցուդայ նմա եղեն դաւաճան,
Ապերախտութիւն նոցին յայտնապէս
Իջոյց զնա ի մութն գերեզման։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Կորուսիր դահըդ, կորուսիր թագըդ,
Խաւարեցաւ քո լոյս արեգակըդ,
Այնպիսի որդի՝ էլ չես դատնել,

մի տարուց յետոյ—վարդապետ։ Ներսէսի գործունէութիւններին նայելով, իբրև հոգևոր անձն, նա միանգամայն արժանաւոր էր իրա վեհ կոչման մէջ, իբրև դաստիարակիչ, իբրև քարոզիչ և իբրև բարեկարգիչ առաջնորդ։ Իսկ տեղը եկած ժամանակ, նա համ քաջ զօրապետ էր, համ էլ հեռատես քաղաքագէտ։ Այսպէս,—օրինակի համար,—երբ 1826 թուին պարսիկները մեծ բազմութեամբ յարձակվում են Ռուսական Հայաստանի վերայ և հետզհետէ գրաւում Շուշի, Գանձակ, Շամախի և այլ քաղաքներ, մեծամեծ վնասներ պատճառելով՝ Ներսէսը, որ այն ժամանակ եպիսկոպոս էր և առաջնորդ Թիֆլիսի վիճակին, հայ քաջերի մի խումբ կազմելով և ինքն էլ նոցա պարագլուխ հանդիսանալով՝ դուրս է գալիս Պարսից դէմ և ոչնչացնում նոցա արշաւանքը։ Երբ, 1843 թուին, Յովհաննէս Կաթուղիկոսը վախճանվում է, Ներսէսը, ազգի միաձայն հաւանութեամբ, արժանանում է Կաթուղիկոսական գահին և իրա գեղեցիկ և ընտիր և ազգօգուտ գործերով յաւերժացնում իրա անունը, 14 տարի հայ եկեղեցու և ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար հոգալով և աշխատելով։ Սորա հայրապետութիւնը, իրա ժամանակ, «Ոսկեղէն Դար» կարելի էր համարել հայերի համար, բայց ի՞նչ անես, 1857 թուի փետրվարի 13-ին կնքում է իրա բազմարդիւն կեանքը, սուգի մէջ թողնելով հայոց ազգը։

Սոխակ.

Որ նա ուղղէ քո վատ վիճակը։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։
Նա էր միմիայն որդիդ պարզերես,
Յոյս չ՚կայ մէկն էլ ծնանի այնպէս.
Դար և ժամանակք շատ կըլլանան՝
Որ հառաչանօք կ՚ասես. «Ո՛հ, Ներսէս»։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։
Թող, որ իմ վկայս լինի Սէյհատը,
Քրիստոնէական կրօնի հաստատը,
Որ ըստ փրկչական անսուտ հրամանի՝
Լաւն անցել է, մնացել է վատը։
Ո՛հ, ո՞ւր ես, ո՛հ, ո՞ւր ես, ո՛հ, ո՞ւր ես,
Անմոռան Ներսէս։

Պետրոս Մաղաթեան.

106.

Տ. Ներսէս Ե. Կաթողիկոս.

(Ապրսամ իւր զօրաց Ներսէսի նկարագրութիւնը կրնայ)։

Պոլսոյ Մատենադարան
ՍԵՐԵՐԸԿԵՒՆՑ
Ասարան

....Հա՛, գացի տեսայ մեծ մարդը, Հայաստանի հովիւը, Ներսէս։ Իմ մեծ հասակովս ո՞րչափ պզտիկ երևցայ առնոր քով։ Ի՞նչպէս նկարագրեմ զինք. կերպարանը զիս դիւթեց, լեզուն զիս զրաւեց, քանի մը վայրկենի մէջ զիս բոլորովին գերեց։ Թէ որ հրամայէր, որ երթամ Ա-րարատ լեռը շալկեմ իր առջևը բերեմ՝ կուրօրէն պիտի երթայի։ Մեր Եղիշէ վարդապետը միայն պիտի կրնար պատկերը ճիշտ քաշել՝ եթէ ողջ լինէր։ Այս սու�՝ ը վկայ, կարդաւոր չէ այն, այլ քաջ զօրապետ մը, հեռատես քաջադէտ մը։ Ես, որ վազրի, օձի առջև գրանուած և անոնց աչքին մէջ անվեհեր նայած եմ, չ՚կըրնար ցայ վայրկեան մը շարունակ Ներսէսի աչքին մէջ նայել, որու կայծերը սրտիս մէջ կ՚թափանցէին։ Իրաւի, Սասունցիի դէմքն ունի, այլ ոչ մեր տկար խելքը. երկու մանր շողուն բիբեր կ՚եռան կապոյտ շարժուն լճակներու մէջ, թաւ ունքն ու արտևանունքը կ՚աքօղեն իր խորհուրդները, փայլուն կունտ ճակտին վերայ գրոշմուած է Հայաստանի ճակատագիրը՝ կապոյտ որոշ գծերով՝ որ յօնիցը մէջ տեղ մերթ կ՚ուռին և կարծես թէ գլխուն փոթորիկը կ՚յայտնեն. ալնիւ սև մօրուն ու նուրբ պեխը կ՚ծածկեն իր հեղնալի ժպիտը։ Հապա նա ստատնի պէս ձի կը հեծնէ և մնդկի պէս կ՚սահի ամեն տեղ, ամեն բանի կ՚հասնի, ամեն ձայն ու շշուք կ՚լսէ, տկարն ու կարօտը կ՚զգուէ, կ՚սփոփէ, մեծերուն հետ խրոխտ ու հրամայող, եկեղեցականին սաստող է։ Ձեռքն աւետարան չունի, այլ մտրակ. գլուխը վեղար չունի, այլ կլոր պըղնձէ սաղաւարտ, որու գագաթը միայն փոքրիկ խաչ մը կայ. կռնակը փիլոն չունի, այլ սպիտակ ոչխարի բուրդէ վերարկու մը. ոտքերը հողաթափ չունին, այլ բարձր կօշիկներ, որ մինչև ծունկերը կը ծածկեն. կուրծքը ոսկի նշաններ չունի, այլ վառ սիրտ մը, որ..... իր աթոռն ոսկեփայլ գահ ու բարձ չէ, այլ ամէհի սև երիվար մը, որ տիրոջը պէս կրակ ու վառօդ կ՚սիրէ։

Մ. Սամուրեան.

107.

Դաշնակ Հայկեան Թատրոնի որ ի Խաս գիւղ։

Ժամանակաց՝ անցից՝ վսեմ կրթարան
Եւ նոր զիպաց՝ նոր զգացմանց կարդաղիր.
Ահա՛ մեզ նոր՝ արդ կ՚կանգնի տեսարան
Թէ՛ կրթութեան՝ թէ հաճոյից արդաղիր։
Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից

Հայաստանի սուրբ դաշտերուն
Եւ կ'ցրուի սրտից թախիծ,
Երբ հայրենեաց յիշեմք զանուն։
Ո՛վ սուրբ Հայաստան
Փառաց օթեւան,
Որբ զաւկներդ հոս
Քեզ պիտի ողբան։
Հոս երազ անմահ
Քո նախնի փառաց
Մեզ պիտի վառէ
'Ի սէր հայրենեաց։
Մայրիկ Հայաստան,
Փառաց գերեզման,
Որբ որդիքդ այրիդ
Հոս պիտի ողբան։
Կ'վերածնին հոս ոսկի դարք,
Հոս տեղ մաքեր կրնան սրուիլ։
Կ'շտկուին հոս անկիրդ բարք,
Հոս և ծիծաղ կրնայ դառուիլ։
Ո՛վ սուրբ Հայաստան,
Քաջաց օթեւան,
Հոսկէ որդիքդ հոն
Գիրկդ պիտի դան։
Հոս ոՀ հայ լեզուին
Նոր զարդ՝ ձեւ կառնու,
Կեանք անմեղ ե'երկինք
Կաղդեն սրտերու։
Քաղցրի՛կ Հայաստան,
Մեր հարց օթեւան,
Ծոցդ որդիքդ, որ դան՝
ԷՐ պիտի ողբան։

Գ. Գ. Զ.

108.

Մի՛ լար.

«Ո՞տար զգլուխ իմ ի ջուր և
«զաչս իմ յաղբերս արտասուաց»։
ԴԱՆԻԷԼ.

Իմ վեհ հայրենեաց աւերակաց մէջ
Զեռքերս ծոցումս շրջում եմ տխուր.
Հոգիս ցաւոց մէջ, աչքումս արտասուք,
Ցցուած սրտիս մէջ նետեր սայրասուր.
Որբ և անտէրունչ զաւակ եմ հայի,
Զբտեսի երբէք գգուանքը բաղդի.
Ընկերս է միայն մի ջախջախ քնար...
Եղբա՛ր-ք, ինձ ի՞նչպէս ասում է.ք. «մի՛ լար»։

Մանկութեանս օրեր՝ ստուերի նման՝
Ինձ բիւր վշտաց մէջ թողին ու թռան.
Ա՜խ, բայի աչերս հայրենեաց գրկում,
Տեսի լոյս ու սուգ իմ սուրբ աշխարհում.
Իմ աղէկտուր հառաչանքներին
Զրկայ չափ, սահման, ոՀ Տէր երկնային.
Աւերակաց ծով է իմ սուրբ աշխարհ,
Եղբարքս ինձ ի՞նչպէս ասում են. «մի՛ լար»։

Տեսէ՛ք թէ ի՞նչպէս հայկայ խեղճ ազգի
Մարած, անցած է ճրագը կեանքի.
Սեաւ սուգ է պատել ամբողջ Հայաստան,
Եւ ժամանակաց անհուն ովկիան
Կուլ տուեց մեր փառք, ճոխութիւնք այնքան,
Ազգ և հայրենիք կորան անխնամ.
Ամեն տեղ մահ, սուգ, անփարատ խաւար.
Եղբա՛ր-ք, ինձ ի՞նչպէս ասում է.ք. «մի՛ լար»։

Ժանդոտան, փլման հին փոշուց տակին
Աշխարհասատան սրեր քաջ հային.
Ահա անտէրունչ խղճուկ Հայաստան,
Գրկած դիւցազանց մեր լուռ գերեզման,
Գոչում է. «Հայկ իմ, քաջդ Արամ, Տիգրան,
Արտաշէս, Վասհան, արի՛դ իմ Վարդան,
Զարթիք, օգնեցէք ինձ մորս թշուառ».
Եղբարք, ինձ ի՞նչպէս ասում է.ք. «մի՛ լար»:

Հայ ազգի առատ լի ճոխութեանց հետ
Իսպառ մթացան կանթեղք լուսաւէտ:
Ննջեցին Ներսէսք, Մեսրովբ, սուրբ Սահակ,
Խորէն, Եղիշէ, Դաւիթ և Եղնակ.
Թանձրամած խաւար վատ ոգիութեան
Եկաւ ու պատեց աշխարհ մեր համայն.
«Մեռաւ հայութիւն», լսուեց ձայն օտար.
Եղբարք, ինձ ի՞նչպէս ասում է.ք. «մի՛ լար»:

Խեղճ հային չկայ ուստէք օգնութիւն,
Զարդ փշուր եղանք ուժով թշնամւոյն,
Երբ վաս, անկրօն պարսկի գիշախանձ
Արեան ծարաւի սուրը շողշողաց,
Անտէրունչ հայը գառնուկի նման՝
Զը խնայելով իւր անպարտ արեան՝
Գոչեց. «մորթեցէք մեզ Փրկչի համար».
Եղբարք, ինձ, ի՞նչպէս ասում է.ք. «մի՛ լար»:

Կրօնի հայրենեաց և ազգայնութեան
Փրկութեան՝ ծերից ուղղած՝ սուրբ սեղան
Դարձաւ մեզ համար մի սպանդանոց.
Մանուկն անդամ խաչ ի պարանոց՝
Կ'փութայր անձկով դէպ ի Գողգոթայ,
Որ եկեղեցին հաստատուն մնայ,

Արդեօք ո՞ր բերան, ո՞ր լեզու ճարտար
Խեղճ վարդապետիս տալով վերթար,
Կարող է ասել թէ. «մի՛ լար, մի՛ լար»:
Ա՛զգ իմ, դու ո՞ւրքան յաւ ու վիշտ տարար,

Յովսէփ Վ. Փինաչեան.

109.

Պ ա ր - ե ր գ.

(Վայլս.)

Ի խումբ 'ի պար,
Հայրենասէր պանդուխտ Հայ.ք,
Ի թիւդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն:
Ա.հեղգդոչ
Առ Հայս հանուր տան գանգիւն,
Հրաւէր կարդալ Հայ դիւցազներուն:
Ի խումբ ի պար,
Ո՛վ Հայրենեաց քաջ որդիք,
Մեր ոտից տրոփիւն բարէ թնդացուց:
Ակնկալու
Հայ սրտերն բոցակէզ
Ցաղթական փառաց խմբել գհանգէս:

Ս. Պ. Փափազեան.

110.

Ե ղ բ ա յ ր ե մ ք մ ե.

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենազեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
— Զունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Տուր լինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցրուին ի բաց։
Ընդ աստեղաք ի՛նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն.

Երբ ալէոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով.
Ընդ աստեղաք ի՛նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ լացինք մենք ի հընուտ..
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտասր և զինդուտ,
Որ բաղմաճնուն ըլլայ մեր Ջան.
Ընդ աստեղաք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղաք ի՛նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Մ. Պէշիկթաշլեան.

111.

Պար Նախարարաց.

Ի զուր են, ի զուր, բռնաւոր,
Ընպառնալիք քո ամենայն.

Ոչ քո շղթայք չեն զօրաւոր
Ցընկճել զոգիս մեր Հայկական։
Զմարմին միայն զայս մարմին
Կարես գերել քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրտ Հայկազանց են միշտ ազատ։
Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել զշանթս արդարութեան
Ի գլուխ ձեր, ով արիւնարբուք՝
Որ աւերէք զՀայաստան։
Ի զժոխս անկցին թշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան.
Կեցցե՜ն Սրբոյ և Հայրենիք,
Կեցցէ՛ անմահ մեր Հայաստան։

Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան.

112.

Հայի խօսքը.

«Իմ արևը, ա՛յ մարդ,
Թէ ձեռքիս սուր լիներ՝
Ես նրան՝ ոնց մի չարթ,
Կ՚թեփուէի, աղբեր.
—Սո՛ւր տուր ձեռքս,
Փորձի՛ր խօսքս։
«Հնոց քարապանուկ
Ուղեցայ անել
Մօտ եկաւ մի թուրք,
Պսպղայ սուրը, ա՛ղբեր.
—Սո՛ւր տուր ձեռքս,
Փորձի՛ր խելքս։

«Սուրը վրա բերեց,
Ամա էլ ի՞նչ, որտեղ.
Պուկ եկայ աղաքից,
Տրաքուեցի էնտեղ.
—Սո՛ւր տուր ձեռքս,
Եւ տե՛ս բերքս։
«Մի մարդ թուրք, մինը հայ—
Խի՞ հայը թէղ փախաւ.
Վայրի ձոր—էլ քօմնադ չկար,
Սուրը պսպղաց—թէ՛ք առ.
—Սո՛ւր տուր ձեռքս,
Տե՛ս խլա լինքս։
«Նա հաւատով տուեց,
Ես քարը վեր կալայ,
Որ սուրն էլ նշանց տուեց—
Պուկ եկայ, կորայ—
—Մ՛ի մեծ, տո՛ւր սուրը,
Փորձի՛ր իմ կուռը։
«Բա՛հ, հայվանութիւն է
Սուր-թուր չունենալը.
Հայվանն էլ ունի
Իր եարաղն, ագռէր.
—Սո՛ւր տուր ձեռքս,
Տե՛ս իմ գործս...»

Աղերս. Արարատեանց.

113.

Երգ Վարդան այ.

Իմ խայրենեաց խոզի Վարդան,
Խոզիս խոզուդ ընի ղուրբան,
Որ Տղմուտի ափերի մօտ
Վաթսուն խաղար կարիձներով

Զարկիր, ղարկուար, ընկար քաջ քաջ,
Պարսիկ սփռած ի ձախդ ու յաջ.
Իմ խայրենեաց խոզի Վարդան,
Խոզիս խոզուդ ընի ղուրբան։

Աւետարան ու խաչն առեր
Յերկինք տարեր, բարձրացուցեր,
Եւ դու ալ խետ թողեր գացեր,
Անուշ արեդ խոզուն տուեր,
Ուր խայրենեաց փայլի արև
Շուարշանայ դաշտի վերև.
Իմ խայրենեաց խոզի Վարդան,
Խոզիս խոզուդ ընի ղուրբան։

114.

Երգ ցաւագին.

Իմ սիրելի զաւակունքս
Կ'թափառին օտար աշխարհ.
Ես ուր գիմեմ, որ փնտրեմ.
Կ'ծառայեն այլոց խոնարհ։
Եկա՛յք, որդե՛ակք իմ,
Ձեր մօրն այցելութեան։

Դարեր անցան, լուր մը չ'առի,
Իմ քաջերս մեռան, կորան,
Կուլամ, արիւնս կը սառի,
Մէկը չունիմ տայ ինձ դարման։
Եկա՛յք, որդե՛ակք և այլն։

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,
Եւ կարօտոյն իմ որդեկաց
Պիտի լիջնեմ սև դերեզման։
Եկա՛յք, որդե՛ակք և այլն։

Եւ դու, հովիւ թափառական,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց.
Եկ արտասուենք թանդ կորսեան
Տխուր մահուան մեր որդեկաց:
Եկա՛յք, որդե՛ակք և այլն:

Իսկ դու, Կռունկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու աչքէս ի բաց,
Յեսին ողջոյնս տա՛ր զաւակաց,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած
Եկա՛յք, որդե՛ակք իմ,
Ձեր մօրն այցելութեան:

115.

Ինձ համար չէ.

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը.
Եւ մրայն կուսի աչքերը,
Նոցա արցունք չե՛ն ինձ համար:

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը.
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով ոտն կատարելը.
Զատիկ օրուան ուրախ ասելը
«Քրիստոս Յարեաւ» չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ Ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ արկիլը,
Գերեզմանիս վերայ արտասուիլը
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար:

Բայց ինձ համար կու գայ ժամը,
Կ'երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահաբեր սպանիչ զընդակը
Անդ պատրաստած է ինձ համար:

Ք. Պատկանեան.

116.

Հայրենիք.

Իմ հայրենիքս գիս կը կանչէ,
Հեռու եմ հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ հայաստանէն:

Մի՞թէ արծաթ, ոսկի, գոհար
Կ'սփոփէ՞ հայաստանը.
Այն որ կ'ողբայ որդւոց համար
Խղճալի հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի հայաստանը,
Բոբիկ ոտքով, աղտոտ մազով
Կ'արտասուէ հայաստանը:

Անգութ երկինք ալ չէ՛ յիշեր,
Մոռացեր է հայաստանը.
Անսիրտ հայերն ալ չեն սիրեր
Անուշիկ հայաստանը:

Ո՜հ, թողէք գիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ հայաստանը.

Անուշ երկիր կոյս անարատ
Անելման Հայաստանը։

Արև ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևը ալ մարեր է,
Սև հագեր է Հայաստանը։

Թշուառ սրախս ձայն կը կարէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛հ, չեկայ հայ, որ սփոփէ
Նուաղեալ Հայաստանը։

Թէև կըարի իմ վերջին շունչս,
Պիտի պոռամ Հայաստան.
Պըլլուիմ մէյմ՝ իմ հայրենեացս,
Հապա մանեմ դերեզման։

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կարել այս ձայնս չէ՛, չէ՛ կարող
Սոսկումին դերեզմանին։

Ա. Հայկ.

117.

Ի ննջմանէդ ալքայական, զարթի՛ր, նաղելի իմ, զարթի՛ր,
Եհաս նշոյլ արեգական, զարթի՛ր, նաղելի իմ, զարթի՛ր։
Պատկեր սիրուն տիպ բոլորակ,
Լրացելոյ լուսնոյն քաղակ,
Ո՛չ գտանի քեզ օրինակ. զարթի՛ր և այլն։
Այդ քո տեսիլդ զոր դու ունիս,
Արար ծառայ քեզ զգերիս,
Արևակէզ դուցէ լինիս. զարթի՛ր և այլն։
Դարին սրտիս քանի կոծամ,
Է՞ վարդ կարմիր և անթառամ,

Տե՛ս թէ զնարդ խոշնալի կամ. զարթի՛ր և այլն։
Տապ և խորշակ ժամանեցին,
Զթերթք դեղոյդ այրել կամին,
Քանզի էանց գիշերն մթին. զարթի՛ր և այլն։
Է անելման իմ գովելիս,
Ի ՄԷՋ ականց զեղ քո մատանիս.
Ի ռահեակ սոյն թուականիս. զարթի՛ր և այլն։

118.

Ղ ո շ մ ա.

Իմ անվարքութիւնս աշխարհի վերայ
Զայն արձակեց երգի, քնարի նման.
Մատնելով վաղուան համարի վերայ,
Շուարեալ եմ անդոյս շուարի նման։

Անցաւոր կենաց մէջ զարդով մանեկայ,
Անոյշ ծաղկով, անոյշ վարդով մանեկայ,
Ինձ թուի՝ շնորքով, վարքով մանեկայ,
Սխալեցայ յիմար արդարի նման։

Քառասուն և եօթը անցուցի ամը,
Զիմացայ ի՞նչպէս է աշխարհի համը,
Մոռացայ Մովսէսի բերած պատգամը,
Պահեցի ծրարեալ քանքարի նման։

Տխուր և տրտում եմ, ինչպէս սգաւոր,
Մարմնովս հարուստ եմ, հոգով էքաւոր,
Ոչ դոյ ինձի նման անդարձ մեղաւոր,
Շրջող աշխարհի մէջ խաւարի նման։

Գործովս ամբարիշտ միայն և ո՛չ հեզ,
Գաբրիէլն եմ, Տէր իմ, աղաչեմ զքեզ,
Զի դու ես կեանք, յարութիւն, յարո՛ և զմեզ
Զորեքօրեայ մեռեալ Ղազարի նման։

Գաբրիել Մելիքեանց.

119.

Ի՞նչ անենք.

«Ի՞նչ անենք»... Ամո՜թ այսպէս ասողին,
Ամո՜թ, բի՜ւր ամօթ յուսահատուողին,
Մա՜հ, մա՜հ, հազա՞ր մահ հէգ վըհատուողին...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Ասէ՛ք՝ ի՞նչ կ'անէ ջուրը ընկածը,
Ասէ՛ք՝ ի՞նչ կ'անէ քաղցած-սովածը,
Ասէ՛ք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Զբրամոյնք ճըգնին՝ քանի ուժ ունին,
Քաղցածը մաշէ շեմքը դրացիին,
Փախչել կըհնարի կաշկանդած գերին...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Հարուստ՝ հէր ոսկիդ սընդուկ դըրել ես,
Կըտրիճ՝ որ օրուայ ուժըդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէր, ազգըդ սիրել ես...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Հարուստ՝ գիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենին լաւ է, քան թէ ոսկու դէզ,
Թէ մեռնիս՝ ոսկիդ հե՞տդ կըտանես...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Կարի՛ճ՝ ալ կ'անցնի քանի մի տարի,
Այդ թըշնդ վարդը խապառ կըխամրի.
Չի թողուիր միայն յիշատակ բարի...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Թէ ուզէ Հայը՝ նա շատ բան կ'անէ,
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Հայը կըստիպէ Վեհ Պատրիարքին
Յորդորակ սըփռել բոլոր Հայ ազգին,
Թոթուել-զարթեցնել մեր թըմրած հոգին...
Եղբարք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»:

Գամառ-Քաթիպա.

120.

Նուագ առ ամենաերանելի Կոյսն.

Ի բարձունքս երկնից յարևելս ուղղեալ,
Թանձրաբարդ լուսատիպ մեծ ամպ բարձրացեալ,
Անկարակն ուղղածիր շընչան բոլորեալ,
Շուրջ զբրովք զօրք երկնից դասադաս պարեալ,
Զբքնաղ տեսարան, մեծ հանդիսարան,
Մեղ Սիօնի մանկանցս նոր Աւետարան.
Երգեցէք քաղցրաձայն՝ ընդէ՞ր լռեալ կայք,
Նուագայ սերովբէից լերուք համանձայնք:

Ի կեդրոն շընչանիս ամբոռ կառուցեալ,
Վերամբարձ սեամբ լուսոյ կամար առձրգեալ,
Քառակերպ կենդանեաց զաթոռով կեցեալ,
Հոյլք ամենայն վերնոց անդ ներկայացեալ.
Զբքնաղ տեսարան, և այլն:

Ի լուսակերտ դահոյս մեծ դշխոյ բազմեալ,
Վայելչութեամբ գեղոյն էքնաղ պանծացեալ,
Նըմանատիպ յիակս է՛ ոչ ոք տեսեալ
Կամ յապայն ծնանիլ ո՛չ ուրուք հանդերձեալ.
Զբքնաղ տեսարան, և այլն:

Զգլխով Տիրուհւոյն արեգակն ծագեալ,
Եւ ընդ գարշապարօք լուսին նոր ծընեալ,
Մոլորակայ հընդից զլուրեաւ ցոլացեալ,
Եւ համակ աստեղայ անդէն զումարեալ.
Զբքնաղ տեսարան, և այլն:

Ի դիրկս Տիրուհւոյն Մանուկ առբաղմեալ,
Աստուածորդի, Փրկիչ Յիսուս անուանեալ,
Յահէ նորա երկինք համայն սասանեալ,
Թեւաքօղ անմարմնոց սուրբ, սուրբ Տէր կոչեալ.
Զբ.քնաղ տեսարան, և այլն։

Սերովբէ վարժ. Պատկանեան.

121.

Ի՞նչով պէտք է մեր սրտերը ազնուացնենք,
Եւ մեր միտքը փայլուն լուսով պայծառացնենք.
Ինքնակրթութեամբ միայն, ինքնակրթութեամբ։
Ինչով պէտք է մեր ծնողացը ուրախացնենք,
Ընկերաց մէջ ազնիւ բարի անուն վաստակենք.
Առաքինութեամբ միայն, առաքինութեամբ։
Ի՞նչով պէտք է մեր բաղձանքին հասանենք,
Ամեն տեսակ դժուարութեանց հեշտութեամբ յաղթենք.
Ջանասիրութեամբ միայն, ջանասիրութեամբ։

122.

Իմ սիրտս վշտահար ա,
Վիշտս մին չէ, հազար ա,
Անտէր ազգի որդւոցը
Վիճակը միշտ թշուառ ա։
Զաւակներս հանուեն,
Ուսմունք է պէտք, ֆուր դիմեն,
Հայք կարդին դպրոց չունեն,
Եաղինը անյարմար ա։
Սեմինարիա ասելով՝
Հայ դիմնազու սպասելով՝
Արտասուքս դառաւ ծով,
Բայց հայը անտարբեր ա։

Մէ՛ հ, Աստրախանի հայեր,
Ինչո՞ւ էք դուք անտարբեր,
Ձեր հարուստ դիրք ու փոդեր
Արդեօք ինչո՞ւ համար ա։
Մի՞թէ չէ պէտք ձեզ անուն
Եւ անվերջ երանութիւն.
Մարդս առանց բարութիւն՝
Կարելու անդէպք ծառ ա։
Ինչանեղ որ կայ մարդ անուն,
Պէտք է լինի մարդկութիւն.
Մարդն էլ առանց ազգութիւն՝
Ձեղաձին հաւասար ա։
Ի՛նչ անեմ ձեր հայութիւն,
Երբ չունէք հայ դպրութիւն.
Հայն առանց հայ կրթութիւն՝
Օտար թշնամուց չար ա։
Գիտէ՞ք, ինչու, եղբայրներ,
Զունիք հայոց ուսման սէր՝
Զէ՛ք մտել հայ դպրոցներ,
Սիրելն էլ ձեզ դժուար ա։
Ես Կարինն եմ հայասէր,
Կուզեմ զաւակներս էլ
Ինձպէս լինին հայ պատկեր,
Ազգս անհոգատար ա։

123.

Հայոց դին ի.

Լցրէ՛ք, եղբարք, ձեր բաժակները,
Եւ քաջ պարպեցէ՛ք.
Այսպէս դինին բոլոր աշխարքումը
Դուք դրանելու չէ՛ք։

Ո՛չ Թուրքի է այս և ոչ Մաճառի,
Ո՛չ Ֆրանսիայի.
Թող ուրիշն օտար գինի խմի,—
Մերն է հրաշալի։
Շամպայն գինին—կանացի գինի է,
Այդ մեր գինին չէ՛.
Խմել, կոնծել թէև կարելի է,
Բայց սիրելու չէ։
Խրբիմի գինին լաւ գոված գինի է,
Բայց այս էլ այն չէ՛.
Ճաշից յետո խմել կարելի է,
Բայց երգելու չէ։
Կախեթու գինին պատուական գինի է,
Թէև Հայոց չէ՛.
Բայց ափսոս, որ օտարի է,
Նոյեան տընկած չէ։
Երասխի մօտ՝—այնտեղ է մեր գինին,
Օրհնեալ է Երասխ.
Երասխի մօտ ամենքն են գեղեցիկ,
Ամենքն են ուրախ։
Այդ գինին պարգևեց մեզ Աստուած,
Ու դրախտիցը հանեց,
Երբ Հայ Նոն, աշխատանքից մաշուած,
Նորան աղաչեց։
Նոն խմաստուն մարդ եղած պիտի լինի,
Որ այդպէս ճարտար
Նա ճմլեց, քամեց, խմեց մեր գինին
Ու շինեց տակառ։
Ուրեմն, եղբա՛րք, բաժակը լցրած է՝
Ջամբեցէ՛ք անվախ.
Թէ լենք որ՝ մէկը շատ տրխրած է՝
Նրան գինի կը տանք։

124.

Մուխամմադ.

Լսեցէ՛ք, ով իմ հայեր, մի՛ կարծէք նոր լուր եմ ասում,
Իմացէ՛ք, ձեզ շահաւէտ էս խօսքերս սուր եմ ասում.
Ո՛վ կուզէ, թող լաւ լսէ, նրան օրախս գիւր եմ ասում,
Ո՛վ կամի, թող հասկանայ, նրան իմ ջան հիւր եմ ասում.
Բայց բարին չիմացողին մոքի աչքը կուր եմ ասում,
Արդեօք նրան ի՞նչ անուն տամ, նրան խելքից թիւր եմ ասում։

Լսեցէ՛ք ու կիմանաք մեր վաղուցվայ անցքը, հայե՛ր,
Թէ ի՞նչպէս հոչակուած էր անուամբ Հայոց ազգը, հայե՛ր,
Այլոց պէս հայն էլ ունէր մեծ տէրութեան փառքը, հայե՛ր,
Թագաւոր, զօրք, զօրավար, քաջ ու ազնիւ վարքը, հայե՛ր,
Անհամար գեղ ու քաղաք ունէր մեր աշխարհքը, հայեր,
Բայց հիմիկ ի՞նչ մընաց մեզ, մեր ցաւերը բիւր եմ ասում։

Թշնամիք մեր աշխարհքը քանդեցին, աւերակ թողին,
Էն մեծ մեծ քաղաքներից Անին մեզ օրինակ թողին,
Մեր թագ, գայսոն խլեցին, Հայաստան անձրագ թողին,
Էն հայոց բազմութիւնը մազի նրման բարակ թողին,
Սպանելով, գուրս քշելով՝ ցիր ու ցան ոսքի տակ թողին,
Մեր անսէր վարքիցն էր ողջ, չէ թէ էս ձեզ զուր եմ ասում։

Բայց հիմիկ ամեն աշխարհ թափառական մենք ցրուել ենք,
Զրկուած հայրենիքից, նախնեաց վարքից հեռացել ենք,
Մեր հաւատ, մեր ազգ, լեզուներ չենք պաշտում, ուրացել ենք,
Սրտացաւ չե՛նք մէկ մէկու, մոլի վարքով խստացել ենք,
Թշուառ ենք, մեր լաւն ու վատ չենք հասկանում, կուրացել ենք,
Ի՞նչ ասեմ, որ միտն ասեմ, հայե՛ր, մեղ թուք մուր եմ ասում։

Թէ ուզենք մեր վիճակը էսպէս խեղճ, թշուառ չի՞ մնայ,
Ոչ մէկ հայ ազգատ, անրան, բեռնակիր տաւար չի՞ մնայ,

Կը պառի ազգի շահը, այլոց ձեռք աւար չի մընայ,
Միաբան մեր հոգս կանենք, մեր մէջ մարդ շիւար չի մընայ,
Կրկին մեզ լոյս կը ծագի, մեր օրը խաւար չի մընայ,
Թէ առնենք ուսման համը, որ փրկութեան դուռ եմ ասում:

Տեսէք թէ ուրիշ ազգեր ուսումով ի՞նչ կարգի հասան,
Վաղ էին խեղճ, վայրենի, հիմիկ ազնիւ վարքի հասան,
Զուռնէին կարգ ու կանոն, հիմիկ էնպէս սարքի հասան,
Սաղ աշխարհ իրանց ձեռն է, էն իմաստուն բարքի հասան,
Եւ ո՞չ թէ հայի նման ամենից թափուր եմ ասում:

Ինձ կ'ասեն« Մի՛ գանգատվիր, յոյս ունեցիր հայի մասին,
Հայը միշտ հետևող է լաւ անուան համբաւի մասին,
Մի՛ կարծիր նա չի ցաւում իւր խորտակուած նաւի մասին,
Համբերի՛ր և քո հայն-էլ ճար կանի իւր ցաւի մասին».
Ի՞նչ ասեմ, մի՞թէ կարնամ էլ խօսք բացել դաւի մասին,
Սուրհնն եմ, էսպէս խօսքեր օրէնը հարիւր եմ ասում:

Յովսէփ Քուչուբէգեանց.

125.

Գ ե ր ե զ մ ա ն ք Հ ա յ ո ց.

Լուռ և տխուր դաշտեր գեղեցիկ
Քաջ որերոյն ածիւններով դեռահեղ,
Ուր սուլիր շերմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ,
Զարմենազան հազար ծաղիկ գունագեղ:
Աւա՜ղ Հայոց արևուն
Աւա՜ղ Հայոց քաջերուն,
Որոց կրբեմք մեք արիւն,
Օրհնեալ է, Հայ.ք, ձեր անուն:

Ո՛, վեհ նախնեաց, կարիճ եղբարց սուրբ շերիմ,
Ձայն մը տուէք, որ մեր արտասուքը ցամքի.

Վանկ մը հերիք ցաւած սրտիցս, որ բերկրիմք,
Մեզ ժրպտեցէք շեջեալ ասաղ Հայրենի
Աւա՜ղ Հայոց, և այլն:

Բացէ՛ք, բացէ՛ք, մամռոտ սափորք սրբակիրք,
Ցուցէ՛ք՝ քաջայն ոսկորտիքն համբուրեմք.
Եւ համբուրէ մեր և սգաւոր Հայրենիք,
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգեմք:
Աւա՜ղ Հայոց, և այլն:

Գե՛տք Հայրենիք, քանի ի ձեզ կան ալիք,
Եւ ղուն լուսին, քանի կանթեղդ վառ ճեայ,
Դուն ալ, սոխակ, քանի ունիս դայլայլիկ,
Երգեցէք ղՀայն, լըսեն սերունդք ապագայ:

Նշան Զօրապետեան.

126.

Լըռեց: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու Լուսինն աչքէս խլեցին.
Մընացի մենակ՝ հոգիս վըրդոված,
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ տրած:
Եւ այնուհետև ամեն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:
Ա՜խ, ցոլա, փայլէ՛, տխրադէմ Լուսին,
Գուցէ՛ քու փայլեց փայլ տաս և Հային:
Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի դահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը—աշխարհն Հայաստան:

Գամառ-Քանիպա.

127.

Ծեր Մասեաց ողբը.

Լսի՛ր, մանուկ Հայաստան,
Ծեր Մասեաց ողբերգութեան
Պարսաւամբ շանթն Հայրենեաց
Իւր եղբօր ընթացքը կենաց.
Ո՜հ, ո՜հ, ծերունւոյս կսկծանաց:
Ո՞ւր են իմ արգանդածինք,
Որոց ջամբեցին իմ սանինք,
Օր օր քնա-երգն մռայլան,
Իւրեանց մոր երկունքն ուրացան.
Ո՜հ, ո՜հ, յոյսերս ունայնացան:
Ո՞ւր են իմ բնիկ կրօն ու ծէս,
Որով հանդերձեցի ձեզ.
Սուրբ աւանդս անարգեցիք,
Աղանդներով պատուաստեցիք,
Ո՜հ, ո՜հ, մինչ անզգոհ ժառանգեցիք:
Եղեմական բարբառով
Վարժեցին ունկնդ սիրով,
Այժմ Հայութեան մթնոլորտն
Պղծում է քո խորթ կոկորդն.
Ո՜հ, ո՜հ, դուշակում քո կորուստն:
Բարքն ու վարքն իմ սէրիս
Օրինակ էր աշխարհիս,
Այժմ խրատիլակ է.ք դարձել,
Ցիշոցի անուն է.ք ստացել.
Ո՜հ, ո՜հ, իմ վախճան մերձացել:

Մ. Փ.

128.

Խնդա՛ այսօր, Հայաստան,
Հայրենիք մեր սիրական:

Եկա՛յք, եղբարք, միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան:
Բարձրացա՛ արդ, Արարատ,
Տխուր թախիծ քոյդ զգաթ:
Եկա՛յք, եղբարք, միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան:
Փայլեսցի խաչ Քրիստոսի
Ի լոյս ճակատ հայ-ազգի:
Եկա՛յք, եղբարք, միաբան
Լիցո՛ւք զՏեառնէ գոհաբան:
Մեծ են փառք քո, Արարիչ,
Մեծ են քո շնորհք, Տէ՛ր փրկիչ:
Եկա՛յք, եղբարք, միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան:
Մեր կեանք մեր փառք յաւիտեան
Զոհեաց 'ի քեզ, Հայաստան:
Եկա՛յք, եղբարք, միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան:

129.

Երգ մի զօրականի.

Խնկքը ու միրաք արիւնաշաղախ
Օրերը կը սպասեն, որ կան անցապաղ:
Այս օրերն են, որ աշխարհ կը քանդեն,
Այս օրերն են, որ աշխարհ կը փրկեն:
Զէնքի շառաչիւնը թէ երկինք հասնէ,
Բայց մեր դրօշակը յաղթութիւն յայտնէ,
Հրճուանք ու պարծանք է այն իմ համար,
Ամեն ցանկութիւնքս կը ստանան կատար:

Սրընթաց ձիուս կողերը կը խթեմ,
Որ քաջերի մէջ շուտով հասանեմ.
Հայրենեաց համար չէ ինչ իմ աչքում
Ո՛չ վէրք, և ո՛չ մահ, և ո՛չ գերութիւն:

Թէ սուր թշնամին սիրտս թափանցէ՝
Ունիմ ես մի ոք, որ խոցս ծածկէ.
Ունիմ ես մի ոք, որոյ նուէրքը
Հզօր քան բալսամ, կ՚բուժեն իմ վէրքը:

Իսկ թէ թշնամիք ինձ գերի առնուն,
Կը դայ կը գանէ նա ինձ մութ բանտում.
Երկու գեղեցիկ աչունքը փայլուն
Կը լուսաւորեն խաւարիս անկիւն:

Թէ մահ հանդիպի պատերազմի մէջ,
Կը դայ իմ հրեշտակ կինս սիրատենչ,
Արիւնաթաթախ մարմինս լուանող
Իւր արտասուքով նա չի ձանձրանալ:

Մ. Բուտաղեան.

130.

Ծնունդեան երգ.

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, ասեն աւետիս աշխարհի: Ծընաւ նոր արքայ 'ի Բեթղեհէմ քաղաքի. որդի՛ք մարդկան օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի և երկրի 'ի խանձարուրս պատեցաւ. ո՛չ մեկնելով 'ի հօրէ, ի սուրբ այրին բաղմեցաւ:

Այսօր ցնծան երկինք 'ի վերուստ մեծապայծառ աւետեօք, և արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ, և հրեղենաց բազմութիւնքն յերկնից յերկիր

վայր իջեալ: Այսօր հովուացքն տեսեալ զարդարութեան արեգակն, և ընդ հրեշտակս երգէին. փառք 'ի բարձունս Աստուծոյ:

'Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ:

«Շարական».

131.

Մրմունջ պանդխտին.

Ծովի դէմ նստած՝ երգ էի երգում,
Սիրտս էր յուզուած՝ և հոգիս տարտում.
Ծովն ծփում էր՝ շառաչներ հանում,
Սրտիս հառաչն էլ՝ օդումն էր ցրվում:

Ծովի ալիքներ՝ զարնելով ժայռին,
Յետ էին սահում՝ մէջ անտակ ծովին.
Սրտիս ալիքն էլ՝ բաղխում էր կրծքիս,
Փշրում փշրվում՝ վէրք տալով լերդիս:

Ի՞նչ էր մրմռում ծովն ծածանուտ,
Ես չէի կարող լինել խելամուտ.
Բայց իմ ալեծուփ սրտիս խոր ծփանք
Էր իմ հայրենեաց տխուր հեծեծանք:

Ես երգում էի երգն պանդխտին՝
Սիրուն «Ծիծեռնակ» ընկեր նժդեհին.
Գեղամայ ծովակ հայրենի երկրին
Պատկերանում էր աչքիս առաջին:

Միտքս թռչում էր յԱրագած, Մասիս,
Սիրտս քաշվում էր հայրենեաց մայնիս.
Ալեծուփ էր ծով՝ ալեծուփ հոգիս,
Ունկնդիր չլկար հայրենի երգիս:

Օտարն ի՞նչ կըգգայ՝ թէ քանի՛ նուագ,
Քանի՛ տարիներ երգով «Ծիծեռնակ»
Հնչած են տարեր, հնչած են դաշտեր,
Ողի զգեցած բիւրաւոր սրտեր։

Ի՞նչ վիշտ անհնար երգողին համար,
Երբ օտար է ինքն, օտար իւր քնար.
Երբ չըկան ընկերք, չըկան լսողներ,
Որ իր հետ բաժնեն բազձանք ու վշտեր։

Ա՜խ, ե՛րգ, տասցի, հոգւոյս արձագանք,
Պանդխտի սրտին միակ սփոփանք,
Մինչև ե՞րբ արդեօք ես պիտի երգեմ,
Հայրենի սիրով հալուիմ ու մաշուեմ։

Երբ այս հառաչներ սրտէս դուրս թռան,
Ցօղոտ աչերէս շիթեր թորեցան.
Թորեցան կաթ-կաթ գրկիս մէջ ընկան,
Հող չէր հայրենի, որ ցօղեն թանան։

Նայեցայ ծովին, նայեցայ հովին,
Նայեցայ երկնից կապոյտ կամարին.
Ա՜խ, Տէ՛ր, գոչեցի, խնամող վերին,
Չէ՞ որ Դու Տէր ես ծով ու ցամաքին։

Չէ՞ որ Դու գիտես, որ այս ծով անհուն
Զուտի այնքան խոր ալիքներ ստհուն,
Որչափ սրտիս խորք շարժուն երերուն
Ցիշատակ ունի անցած օրերուն։

Մի՞թէ հայրենի տարեր ու ձորեր
Էլ պիտ՝ չըլսեն իմ երգ ու տագեր.
Գէթ մի ժամ մի օր իմ աչաց ցօղեր
Պիտի չըթրջի՞ն նախնեաց շիրիմներ։

Կ՚աղաչեմ Քեզ, Տէր, տուր ինձ գէթ մի օր
Երգել ու կանչել սրտովս բոլոր

Այն հողին վերայ, այն երկնից ներքև,
Ուր աչքս տեսաւ առաջին արև։

Անդ ուր ծնեցաւ Հայոց Ամենոր,
Ուր երգեց մայրս ինձ համար ՝ի՛ր։
Անդ թող ամփոփին ոսկերք պանդխտին,
Որ կարօտն առնուն Հայրենի հողին։

Նէեմիա.

132.

Ցաղկերա.

Ծաղկա՛ հեղեկ, արև քաղցրիկ,
Զլոյս պայծառ քո գեղեցիկ,
Զի ՀԵՄԵՍՏ արքայ հզօր,
Մերս Ցաղկերա պերճ՝ փառաւոր։
Դու թագաւոր այլազգական,
Ըզսա ծաներուք մեր աէր իշխան։
Սմա վայելէ փառք և պատիւ,
Սա հաւասար ոչ գերազնիւ։
Ծաղկեսցի քո, տէր պատուական,
Ամոռ և սուր և գաւազան։

133.

Թալանած գեղ.

Ծուխը ամպի պէս կելուէր գէպի վեր,
Տրնտրզի նրման բոցը կը քալէր.
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի
Անսիրտ անհոգի մատնած են կրակի։

Հայերն հօտի պէս սարսած կըվազեն,
Անցնող-դարձողէն օգնութիւն կուզեն.
Օգնութի՞ւն։ Խեղճե՞ր։ Կատղած Օսմանլին
Զար մահ կըսպառնայ զարհուրած հային։

Հայի հաւաքած մալը ազգատին
Հելալ փայ եղաւ անկըշտում Քիւրդին,
Խեղճը յուսահատ կաշէ երկընքին,
Կըսպասէ նըպատ հրեշտակաց ղօրքին։

Խաբուսիկ յոյսեր... Դեռ շատ ու շատ դար
Պիտի խաբուին, հա՜յ, ինչպէս խաբուեցար։
Թէ ինքըդ չանես քու գըլխու ճարը,
Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը...

Խե՜ղճ մարդ, մի անգամ մեռնելէ վախցար,
Մինչ մահուան օրըդ հազար մահ տեսար,
Հազար մեռնելըդ հազար ցաւերով,
Զաւակիդ փոսը ձեռքովդ փորելով...

Դու միշտ եղբօրըդ անտէրունչ թողիր,
Մատիդ ծայրովը նորան չօգնեցիր.
Գլուխն առաւ խեղճը, գընաց հեռացաւ...
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ։

Դու կարծեցիր թէ ոսկին մեծ բան է,
Ամեն մի ցաւի, դարդի դարման է.
Ապա հէ՞ր ոսկիդ քեզի չի օգնեց,
Կընկաղ, զաւակիդ մահէ չի փրկեց...

Ա՜խ, հայե՛ր, հայեր. թէ որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհուէր յօգուտ հայ ազգին՝
Առմիշտ կըդաղրէր ձեր լայն ու կական
Ու դրախտ երկրաւոր կըլար Հայաստան։

Գամառ-Քամիպա.

134.

Նամակ*).

28 Ապրիլի 1880 թ.

Բարեկամ, դուք իմ կեանքից տեղեկութիւններ էք խնդրում. մի՞թէ մի բանով ես արժանացել եմ ազգասէր բարեկամիս այդպիսի ուշադրութեան։ Ո՛չ, կարծում եմ, որ այդպիսի հետաքրքրութիւն շարժել է ձեր մէջ ո՛չ ուրիշ բան, բացի միայն ձեր անձնական համակրութիւնը դէպի ձեր անկեղծ բարեկամը։ Ի՞նչ տեղեկութիւն տամ ձեզ, երբ իմ կեանքը անցեալում կեանք չէ՛մ հաշվում, այլ իսկական կեանք կ՚տեսնեմ միայն այն օրից, երբ կ՚տեսնեմ Հայաստանի պատկերը, նորա կեդրոնական քաղաքը և կազմակերպութիւնը. այդ օրից միայն բոպէներին գին կ՚դնեմ, որովհետև իւրաքանչիւրը նոցանից կ՚անցնի Հայաստանի հողի վրայ, վասն որոյ և կ՚լինի աւելի մեծագին քան թէ իմ մինչև հիմայ անցրած բոլոր տարիները միատեղ, որ ծննդեանս օրից սկսած, 2 յունիսի 1852 թ., հասնում է 28-ին։

Եւ յիրաւի, մի՞թէ մինչև այժմ կեանքի, հարուստ ազգականների, անսիրտ մարդիկների հետ արած իմ անդադար կռիւները մի բանի տեղ կարելի է դնել երբ այդ պատերազմների մէջ ինձ չէ՛ ոգևորել ո՛չ Հայաստանի հողը

---

*) Այստեղ տպագրում եմ այն նամակը, որ պ. Գր. Նիկողոսեանը ուղղել է ինձ, դեռ աշխարհական ժամանակս, երբ ես նորա կեանքից, իբրև համաքաղաքացի (Նուխեցի) տեղեկութիւններ էի խնդրել։ Նամակը տպելուս նպատակն էր, որ կարողանայի ընթերցողներին ծանօթացնել պ. Նիկողոսեանի ո՛չ միայն կեանքի, այլ և նորա ձգտումների, տրամադրութեան և գրական ոճի հետ։

Գ. Ք. Գրիգորեանց.

և ոչ էլ նորա վրա ապրող գեղեցիկ հայուհու աղատութեան սէրը... Ո՛, այդ հայուհին է, որ մի արիւնարուշա օֆիցերի, ձեր բարեկամի, թրի դեմից քաշքաշվելու ձայնը փոխել սարսեց մի թոյլ գրչի ճռճռոցին, որով անհանգիստ եմ՝ անում ես հայ հասարակութիւնը հէնց այն օրից, երբ տեսայ Էրզրումը, Հայաստանի ապագայ մայր քաղաքը, ուր սիրաս սկսեց ուրիշ կերպ բաբախել միաքս ուրիշ կերպ տրամադրուիլ և լեզուս ուրիշ կերպ խօսիլ: Այն օրից Հայաստանի հողի վրա ինձ հետ մի անբացատրելի փոփոխութիւն պատահեց՝ ես ստացայ ոյժ, վստահութիւն և պէտք՝ դուրս գալ գրականական ասպարէզը «Մշակի» էջերի մէջ: Հայաստանի հողի վրա զգացի միայն, որ կայ աշխարհում աներևոյթ հոգի, որ ընդունակ է փոխել մարդու բոլոր էակը՝ մահացածին անգամ շունչ տալ՝ հոգի փչել և զգեստաւորել, վասն որոյ այն օրից ես հասկացայ, որ հայը չի կարող ապրել և երջանիկ լինել, երբ նա դուրս է Հայաստանի հողից, օդից և ջրից...

Ահա, բարեկամ, ինչու եմ դադարել յիշել իմ անցեալ կեանքի մէջ տեսած բոլոր մրրիկները, բուք ու հարուածները, որոնք ձեզ լաւ են յայտնի, ինչպէս իմ համաքաղաքացուն և պատանեկութեան ընկերիս: Բայց խոստովանվում եմ, որ մի բան իմ անցեալից միշտ կ'մնայ անմոռաց, միշտ երգելի և այդ իմ մանկական յիշատակներս են, որ կապված են իմ պաշտած հանգուցեալ քրոջ Մահիզարի պատկերի, երգերի և ընկերութեան հետ: Երևի եղել է՛ք ուսիաբնակ Վարդաշէնում, տեսել է՛ք նորա շքեղ բնութիւնը, նսեմատուեր կոյս անտառները, մերթ կապոյտ, մերթ ձիւնապատ լեռները. այդ լեռներից դէն մի օրուայ ճանապարհ է եղել Կովկասի սարսափ Շամիլի կացարանը, բունը: Ես յիշում եմ, ինչպէս երաղում, որ Վարդաշէնի փոքրիկ ուսիայներին, նոցա մէջ և ինձ, արգելում էին ծնողները գնալ սարից թափվող ջրվէժի

տակ լողալու, հաւատացնելով, որ աւազակ լէզգիները թափառում են այն տեղ, բայց մենք միշտ արհամարհում էինք այդ սպառնալիքը և վազում ջրվէժի տակ: Ահա այդ ժամանակ էր, որ, ինչպէս պահապան հրեշտակ, խլկոյն նկատում էր տանից իմ բացակայութիւնը իմ պաշտած քոյրը և իր անբաժան լէզգի գեղեցկուհի ընկեր Ֆէհրիի հետ գալիս էր ետևիցս և ուսերի վրա փախցնում էր տուն: Ո՛, քաղցր են ինձ համար իններ մանկական տարիներս, որ անցրել եմ Վարդաշէնում, որտեղ բաժանեց ինձ իմ լալագին քրոջ դրկից ազգականներիս ցանկութիւնը, որ ուզեցին ուղարկել ինձ անիծեալ Թիֆլիս լուսաւորվելու և իմ ազատ բնութիւնը փոխելու համար... Աւաղ, մի քանի տարից յետ այցելելով իմ հօրական տունը, էլ չկարողացայ արժանանալ Մահիզարիս դրկին, «եղբայր» կանչելով նա փչել էր հոգին. նորա սուրբ կուրծքը համբուրելու տեղ, համբուրեցի միայն նորա սառը գերեզմանը...

Ահա, բարեկամ, խոստովանվում եմ, որ Հայաստանի հողից դուրս ինձ համար սրբազան՝ միայն այդ գերեզմանն է. ուրիշ ոչինչ...

Ձեր մտերիմ՝

Գրիգոր Նիկողոսեան.

135.

Ջան դիւլում, ջան ծաղիկ.

Ծառիս տակը մանիշակ, ջան դիւլում, ջան ջան,
Իմ եարը քանց քեզ շիշակ, ջան ծաղիկ, ջան ջան.
Ուրթ թումանիցն անց կենամ, ջան դիւլում, ջան ջան,
Քեզ կանեմ եարիս մշակ, ջան ծաղիկ, ջան ջան:

Ջաղացի դուռը տաշած,
Աղլեխիս դիւլը քաշած.

Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկի զալամով քաշած։
Անձրև եկաւ շաղալէն,
Ուռռու տերև դողալէն.
Հրէս եկաւ իմ աղբէրն,
Ալ ձին տակին խաղալէն։

Կանգնել ես ախա բախա,
Լաչակիդ տուած կախ ա,
Սև աղայ, սպիտակ աղջիկ,
Բռնել էք իրար եախա։

Արևն ընկաւ մեր պատին,
Ալքայութիւն իմ տատին,
Հոգիդ զատուի, այ տատի,
Ինձ խի՞ տուիր կռնատին։

Սարէն կ'գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրվան թագաւոր։

Սարի թրթնջուկ թաղա,
Ջաւդ ու մեխակ քեզ մաղա,
Ինձ պէս նազանի աղջիկ՝
Քեզ պէս տղին ո՞նց սազայ։

Ջրի վերայ սաղ պըտի,
Իմ օրդակը զաղ պըտի,
Ի՞նչ եմ անում Թուլենդին,
Իմ եարը Շահաբաղ պըտի։

Նախրատափին խնկի ծառ,
Խնծոր քցեմ՝ արի՛ տա՛ր,
Ուրբաթ շաբաթ քեզ մնդլաթ,
Հոյս կիրակի արի՛ տա՛ր։

Մի բարձ եմ արել, իմն ա,
Մինն էլ եմ արել, իմն ա,
Գեանջու քարվանն գալիս ա,
Միջի Թաւադն էլ իմն ա։

Մեր դրան առաջին մի դարան,
Աղջիկներն եկան, նի դառան,
Կուռս տարայ, որ բռնեմ,
Շարած մարգարիտ դառան։

Աղջի՛կ աղջիկ, ա՛լ աղջիկ,
Աչքերդ չալ չալ, աղջիկ,
Դու մեր տանը հարս պըտես,
Իմ քիրը քեզ տալ, աղջիկ։

Իմ աղբէրը սարուսմն ա,
Շուին գոտկածալուսմն ա,
Աղբէ՛ր ջան, շուրդ ածա՛,
Քիրդ Լօռուայ քարուսմն ա։

Տեղ եմ քցել՝ փոթ կ'տայ,
Բարձ եմ դրել՝ սոթ կ'տայ,
Մեռնեմ միջի քնողին,
Անոյշ խնկահոտ կ'գայ։

Ես աղջիկ եմ, ա՛լ կուզեմ,
Ալս ծալուծալ կուզեմ,
Որ տունը որ ես մտնեմ,
Ոսկին սարէսար կուզեմ։

Աղբէ՛ր, հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ,
Ճամբայ երթող շէկ աղբէր,
Դուքան բաղարիդ մեռնեմ։

Ա՛յ աղայ, դու բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին,

Կանչի կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին։

Մեր տան յեանէն մի մառան,
Տղերքն եկան՝ յետ դառան,
Ձեռս տարայ թէ բռնեմ՝
Դիփ լալ ու մարջան դառան։

Ջուր է գնում արխումը,
Աբրըշում ա չարխումը.
Էն օրին էրնեկ կուտամ,
Ջոմարդ կանգնես խալխումը։

Աղջիկ, կապէդ ա՛լ պիտի,
Բոխչէդ ծալէծալ պիտի.
Ում տունն էլ դուն երթաս,
Ոսկին տարէտար պիտի։

Ես աղջիկ եմ՝ ալ կուզեմ,
Բոխչաս ծալէծալ կուզեմ,
Երբ որ եարիս տուն կ'երթամ՝
Գոտիկս թիրմա շալ կ'ուզեմ։

136.

Երգ պանդուխտ պատանեկի.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։
Ա՜խ, թըռի՛ր, ծիծեռնակ,
Ծընած տեղս—Աշտարակ,
Անդ շենի՛ր քո բունը
Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալեոր

Հայը ունիմ ոգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր։
Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարև տուա՛,
Ասա՛ թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վերայ։
Դու պատմէ՝ թէ ինչպէս
Ատա՛ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել կէս։
Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թայ աչքիս
Քունը մօտ չի գալիս։
Ասի՛ր, որ չի բացուած՝
Թառամեցայ միացած
Ես ծաղիկ դեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած։
Դէ՜հ, սիրո՛ւն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ
Դէպ ի Հայոց երկիրը,
Ծնած տեղս—Աշտարակ։

137.

Երգ ի մահ Տրդատայ.

(Օթելիայի երգի եղանակով.)

Կորուստ անդարձ ողբանուէր,
Կորուստ անվերջ արտաւթեան,
Հայոց ազգը ինչ անտէր,
Աւա՜ղ բաղդիդ, Հայաստան։

Լացէ՛ք, լացէ՛ք թշուառացած,
Լացէ՛ք, որդիք Թորգոմայ,
Ահա՛ տեսէ՛ք անշնչացած
Սուրբ մարմինը Տրդատայ։

138.

Երգ յաղթական.

Կեցցէ՛ Շապուհ, կեցցէ՛ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
Կեցցէ օրուան այս յաղթութեամբ
Եւ իբր արև փայլի անամպ։

Իւր թշնամիք փախչին հապճեպ
Իբրև ըզմեգ լուսոյն հանդէպ.
Եւ տարածի իւր զօրութիւն
Յոր վայր վազեն նըշոյլք արփւոյն։

Քեզի նման, Մազդեզանց քաջ,
Զեղաւ հզօր ոչ ոք յառաջ,
Եւ ո՛չ յետոյ իսկ ոչ երբէ՛ք
Լիցի յԱրիս, և ո՛չ ուրեք։

Կեցցէ՛ Շապուհ, կեցցէ՛ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
Եւ տիրասէր զօրս իւր՝ ըզՊարս՝
Իւր հետ տանի փառաց ի փառս։

139.

Կեցցե՛ս, քաջ Սամէլ, փառք ու պարծանք հայ անուան.
Կեցցես, քաջ Սամէլ, դու ես միմիայն
Փրկիչ տան Հայկազեան։
Դու որ ուրացող խարդախ քո հօրից
Վրէժ առնել պատրաստ ես,

Քեզ միայն՝ քեզ միայն փառք հայկազունքս կ՚տանք
Քեզ դարէդար յաւիտեան։
Կեցցե՛ս, քաջ Սամէլ, փառք ու պարծանք հայ անուան.
Այդ մեծ քաջութիւն վեհ անունդ կ՚պսակէ,
Այդ ջերմ հաւատը քեզ կ՚պահպանէ
Եւ կ՚զօրացնէ, դիտենք իսկապէս
Թէ քաջ հայի պէս նահատակ կ՚դառնաս.
Ուստի քեզ միայն փառք հայկազունքս կ՚տանք
Քեզ դարէդար յաւիտեան։

140.

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը.
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Է արեգակը։
Կանաչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ.
Բայց չէ ոչ մինը
Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ։
Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամեն տեղ շատ կան.
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման։

Գ. Բարխուդարեանց.

141.

Կրամբամբուլի.

(Թարգ. ռուսերէնից.)

Կրամբամբուլին էս էն օղին է,
Որ մեղի քաջ ծանօթ է,
Որոյ համը չի տեսնելը
Ուսանողին ամօթ է.
Բայց հանապազ, իմ սիրելի,
Մենք կոնծում ենք կրամբամբուլի։

Հայրս անդադար ինձ գլում է.
«Որդի-Ջան, շո՛ւտ աւարտէ,
Տէ՛ս, գրերդ լա՛ւ սերտէ,
Ժամանակդ արագ անցնում է».
Բայց նորա պարոն որդին
Կոնծում է կրամբամբուլի,
Կրամբամբիմբամբուլի, կրամբամբուլի։

Թէ գարդն ու հոգսը ինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջիկը ինձ խաբում է
Ու հաւատարիմ չէ՝
Կ'ասեմ՝ աղջիկ, իմ նազելի,
Քու տեղ կ'սիրեմ կրամբամբուլի։

Թէ լերդս ու թոքս իմ մաշուկ է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմելն ու քէֆ անելը
Բժիշկին ինձ արգելում է,
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,
Ես կ'կոնծեմ կրամբամբուլի։

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է որ՝ պրսակուեմ,

Եւ պարաքն ու կարգը ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սալքեմ,
Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կ'առնում առատ կրամբամբուլի։

Բայց երբ կուզայ կեանքիս վերջը,
Մահս-էլ առաջիս տեսնեմ,
Օղին կածեմ բաժակիս մէջը,
Հոգեհանիս-էլ կ'ասեմ.
Վերջին անգամ, իմ պատուելի,
Ե՛կ տուաքացնենք կրամբամբուլի,
Կրամբիմբամբուլի, կրամբամբուլի։

Գերովբէ Պատկանեան.

142.

Զէյթունցու հրաւիրակ.

Կիլիկիայից եմ ես գալիս,
Հայաստանի կարիճներ,
Ազատ, անկախ Զէյթունցին եմ,
Բերում եմ ձեզ հրաւէր։
Զէյթունցին եմ,—որը պարզած
Ազատութեան դրօշակ,
Անահ ձգում է ոտների տակ
Տաճկի լուծը անարգուած։
Վրէ՛ժ, վրէ՛ժ է որոտում
Կիլիկիայի լեռնացին,
Էլ համբերել, էլ լուծ տանել
Անկարող է Զէյթունցին։
Նա իրաւունք է պահանջում
Արեան գաշտում սուրը ձեռք,
Մարտի հրաւէր է նա կարդում
Լուծը ջարդող—վերջին երգ...

Բայց ի՞նչ պատկեր սարկուԹեան
Նկարվում է իմ առաջ.
Կրել շղԹայք Մոնգոլական,
Ո՛չ ձայն հանել, ո՛չ հառաչ...
Վզերդ ծուռ, խոնարհ, սարուկ,
Օտարների փէշերց կախ.
Միշտ անբարբառ, տանող, խղճուկ
Մինչ ե՞րբ, հայեր... ա՛խ ու վա՛խ...
Մինչ Տաւրոսի ազատ որդիք
Պարզած դրօշն ապստամբ,
Մինչ ԶէյԹունի հողն ու ջուրը
Պիտի ներկուի հայ արեամբ,
Հայրենեաց այս ճգնաժամին
Եւ անտէրունչ և հոգեվարք,
Երբ այս ժամը պիտի վճռէ
Հայաստանի վերջին բաղդ՝
Դուք անտարբեր, անհոգ նստած,
Պատեհ ժամը չէ՛ք տեսնում:
ԶէյԹուն կարօտ է օգնուԹեան,
Նաև օգնել չէ՛ք ուզում:
Մի՞Թէ այնքան է նուաստացրել
Անարդ լուծը ձեր հոգին,
Որ երկնչում է՛ք ձեռք մեկնել
Դէպ՝ անպաշտպան ԶէյԹունցին:
Մի՞Թէ ձեր մէջ այնպէս է շէջել
Հերոսական զգացմունք,
Որ անմրմունջ կարէ՛ք տանել
Այսուհետև տաճկի Թո՛ւք...
Ի զէն ի զէն,—դէպ ի Տաւրոս,—
ԱզատուԹեան դրօշի տակ՝
Արեան գնով ստանալու
Ազնիւ մահ կամ ազատ կեանք:

ԵԹէ չը լսէ՛ք դուք այս հրաւէր,
Որպէս անարդ գերիներ,
ԵԹէ կապանք ստրկուԹեան
Նախադասէ՛ք մահից վեր՝
Կ'խորտակուի մի բուռն ԶէյԹուն,
Կ'անհետանայ անտարակոյս.
Եւ Հայաստան կ'կորցնի
ԱզատուԹեան վերջին յոյս:
Եւ կ'կարդայ ծանր նախատինք
Բոլոր աշխարհ ձեր դլխին.
«Թէ զէ՛նք առնել չը կարացիք
«Վճռողական րոպէին»:
Ե՛ւ յետնորդներ և՝ պատմուԹիւն
Կ'անիծեն ձեր յիշատակ.
Վատ էր—կասեն—Հայաստանցին,
Որ չունեցաւ ազատ կեանք:

Ադ. Ափրիկեանց.

143.

Վանեցու «Հաւատամքը».

Կը հաւատամ, որ աշխարհի վերա
Հայիցը քամբազդ հարգիլ ազգ չը կայ.
Նա թէկուզ տանջուի, տընկայ համաշայ,
Բայց հզօրին միշտ ստրուկ պիտ՝ դառնայ:

Կը հաւատամ, որ խեղճ հայի համար
Կայ երեք աստուած—մինը միւսից չար.
Հայր—աստուած, որ է Տաճիկը—գազան,
Որդին—Քուրդը, խակ Հոգին—Եւրոպան:

Կը հաւատամ, որ Հայրը իր Որդուն
Լաւ խրատից ու խրիկից Հայի տուն,

Որ եկաւ տանջեց, վոթեց շատ երիւն,
Զարչարեց, խաչեց, թաղեց խեղճերուն.
Ու յետոյ յարեաւ գլխաց Պարսկաստան,
Արեան գաշտ շինեց՝ նստեց յաջ անկեան։

Գալոց է նովին կատաղութիւնով
Եւ իր հօր տուած փայլուն զէնքերով,
Ի դատել (ջընջել) հայն ու հայաստան,
Գազանութեանըն որոյ չի՛ք վախճան։

Կը հաւատամ և հոգի—աստուծուն—
Լուսաւորեալին և կատարեալին,
Որ կազմեց Բերլին դաշնագրութիւն
Եւ ազատութիւն խոստացաւ հային.

Որ խօսեցաւ մեծ կոնգրեսների մէջ,
Պարլամենտներում տրաւ հաղար վէճ.
Որ քարոզեց իր առաքեալներին
Լոկ խոստմունքներով առնել սիրտ՝ հային։

Կը հաւատամ, որ հային շատ ունի
Մեծ մեծ մարդիկներ—օտարին գերի,
Որոնք շինում են այլոց պալատներ,
Բայց չեն կարկատում իրանց հօր տներ։

Կը հաւատամ, որ եթէ հայն իւր
Գրլխին տուողին ոտքը չը լեզէր
Եւ ձեռքից չը տար հրրացան ու սուր՝
Թուրքի լծից վաղ ազատուած կըլէր։

Իսկ ոչք ասեն՝ թէ կը դայ ժամանակ,
Որ Թուրքը հային կը տայ ազատ կեանք,
Կամ գազան Քուրդը կը սիրէ նորան,
Կամ կ՝ազատէ խեղճին Եւրոպան,—
Այնպիսիքը թող լենին նրզովեալ,
Կամ հայաստանի մէջը կուսանալ։

Իսկ մեք, որ կոյր չենք, այլ ճանաչում ենք
Մէկին և Միւսն, պիտ՝ խոստովանենք,
Որ հային չը կայ հէչ ազատութիւն,
Քանի չը դիտէ վոթել նա երիւն...*)։

Սիմէօն Սափարեանց.

144.

Պանդուխտ առ կռունկն.

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՛ վաղեր երամիդ՝ շուտով կը հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Թողեր եմ ու եկեր իմ մըլքերս ու այդիս.
Քանի որ սէս կ՝անեմ՝ կու քաղուի հոգիս,
Կռունկ, պահ մի կայի՛ր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան գՋըրի տալապ.
Կռունկ, Պաղատատ ինչնուս կամ թէ ի հալապ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

---

*) Տաճկա-հայը երբէք չէ կարող «վոթել երիւն», երբ նա սովոր չէ՛ «վոթելու» արհեստին, երբ նա սովոր չէ՛ զէնքի գործադրութեանը, և, վերջապէս, ընտելացած չէ՛ անվեհեր սրբոտով նորա հետ։ Իսկ ռուսաստանցի, իսկ Կովկասցի հայը—շնորհիւ զինուորակոչութեան, զէնքի գործածութեան մէջ կատարելագործվելով՝ կ՝պաշտպանէ պետական շահերը, կ՝պաշտպանէ և՛ իւր գլուխը, և՛ իւր ընտանիքը Բաշիբուզուկ «դալի-հէյդարներից»։

Գ. Բ. Գրիգորեանց.

Սըրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,
Այս սուտ աստընուորիս դարդերն իմացանք.
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աստընուորիս բաներն կամաց կամաց է,
Մինթէ Աստուած լսէ, դրռնակըն բացցէ.
Ղարիպին սիրան է սուգ, աչերն ի լաց է.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիբին սիրան է խոց, ձիկերն է վէրէմ.
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Ո՛չ ըզլուր օրն զիտեմ, ո՛չ ըզկիրակին.
Զարկած է զիս շամփուրն, բըռնկած կրբակին.
Այրիլըս չե՛մ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Պաղտատու կուգաս, կ'երթա՛ս ի սէհրատ,
Թըղթիկ մի գրրեր եմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վըկայ լինի քո վըրաղ.
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

Գրրեր եմ մէջ թըղթիս՝ թէ հոս մընացի,
Օրիկ մի օրեր զաչերս չըբացի.
Սի՛րելիք, ձեզնէ կարօտ մընացի.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չ'տուիր, ելար գնացիր.
Կռունկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացի՛ր։

145.

Հայատանցի պանդուխտը.

Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իւր երկիրները և կեդրոնանում է քաղաքներում։ Աղքատութիւնը ստիպում է նորան թողնել իւր տունը, իւր ընտանիքը, իւր ամուսինը, իւր զաւակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք, աղքատութիւնից ազատուելու համար։ Բայց այդ տեղերում ևս, նորան հանդիպ է դուրս գալիս, էապէս, նոյն աղքատութիւնը, զուցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով։ Դիցուք, գեղում ստանում էր նա օրինակ հինգ ղուրուշ, իսկ քաղաքում ստանում էր ութն կամ տասն. բայց ի՞նչ օգուտ այն երեք կամ հինգ ղուրուշ յաւելուածից, մինչ չէ մնում նորա ձեռքում։ Քաղաքի մէջ, համեմատութեամբ շինական կեանքին, եթէ ոչ աւելի՝ գէթ հարիւրին քառասուն առաւել է ծախքը։ Եթէ մարդը հինգ ստանալով աղքատ էր գեղում, աղքատ կը լինի Պոլսի մէջ կամ այլ քաղաքներում, ութն կամ տասն ստանալով։

Բացի սրանից, ընտանեկան կեանքից զրկվելը, դժոխային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա այն մի քանի յաւելեալ ղուրուշները, անտուն, վարատական և անմաքուր կեանքը, որ պիտի անցուցանէ նա զանազան լիջևաններում։ Երեկոյեան պիտի գայ վաստակեալ, ուժաթափ, շատ անդամ և վնասուած անդամներով, իսկ լուսաբացին նոյն եղիպտական ծառայութիւնը, որ սպասում է նորան։ Չ'կայ այն ընտանեկան մխիթարութիւնը, ամուսնու և զաւակների մոերմական, գողարիկ և անմեղ հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը, և այս բոլորը ան-

խորհուրդ, առանց հիմնական հաշուի և չ'կամելուց արմատական կերպով դարման տանել իւր աղքատութեան։ Եւ այսպէս, իբրև դրաստ, իբրև մեքենայ, ծառայելով արտասուելի օտարութեան մէջ, տասն-քսան տարի, կամ մեռնում է այն տեղ, թողնելով իւր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ կամ վերադառնում է դէպի իւր երկիրը։ Վերադառնում է... բայց ոչ այնպէս առոյգ և զուարթ, ինչպէս դուրս էր եկել այնտեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թօշնած։ Վերադառնում է իւր տունը, երբ կորուսել էր աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւնը։ Ուրեմն, վերադառնում է նա միմիայն իւր ներկայութեամբ, իւր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը յաւելցնելու համար։ Եւ ահա նորա տասը և ութը կամ քսան տարեկան որդին, որ ամեն և ղօրացել էր իբրև մի ծաղիկ իւր սեպհական հողի վերայ, առնում է ձեռքը իւր հօր պանդխտական գաւազանը և գնում է...

—Ո՞ւր բարով։

«Պոլիս, Տրապիզոն» և այլն և այլն։

—Ինչի՞ համար։

«Աշխատելու և ընտանեաց օգնելու։ — Կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ։

Անցնում է սորա վերայով մի քանի տարի, յանկարծ, այս նորեկը լուր է առնում, որ իւր ծերունի հայրը վախճանել է, մայրը հիւանդ է։ Մի փոքր ժամանակից և մայրը մեռնում է։

Պանդխտակիցքը գալիս են նորան մխիթարելու։ Մի երկու բաժակ գինի.... մի քահանայ, մի «հոգւոց» և պանդուխտի սիրտը պաղում է այն աշխարհից, ուր ծնել էր նա... ի՞նչ բանի համար վերադառնայ։ Նա գտնելու չէ իւր տունը, իւր ծնողքը, նորան աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և մի ամայի բնակարան, եթէ և այն չէ

անցել օտարի ձեռք։ Նա որոշում է ինքն պանդխտութեան մէջ, և այս որոշումով յօժարում է մինչև տակը խմել թշուառութեան բաժակը։ Այո՛, ինում է նա, բայց տունը մարեցաւ։ Մի դերդաստան ընկաւ հասարակաց խումբից։

Արդեօք հրքան դերդաստանք ընկնում են այսպէս։

Միքայել Նալբանդեանց.

146.

Հայոց աշխարհիկ.

Հայոց աշխարհիկ, դարուն է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՞վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՞վ դու իմ սրբոյս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ եկել է, եկել
Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սև սև ամպերն են դարձել ի փախ,
Այն ձերմակ ձերմակ սարերն են անվախ.
Զընիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
Քաղցրիկ կըռկըջով գլուխ դեռս հազար.
Ցայն բարձրը ժայռից, որ երկնուց են մօտ,
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ։
Ահա՛ քո բլուրներ, հայոց աշխարհիկ,
Այն քո բիւր բլուրներ ու բիւր վըտակիկք,
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան ցուրտ ձրմեռդ ու ձիւներդդ շատ.
Լերինք ու հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսի նման,
Կապուտակ սարերդ գունդզգուն պրսակ
Կապեն ի գլուխ զինչ նոր թագորակ.

Ի ծայրից սարից, որ երկնուց են մնա՝
Փըռուի մինչ ի խորն հօրոան ու մորոա.
Գետեղերքն ամէն բացել են շուշան
Պայծառ ղընղընով*) ցընցըղկեն ղընան,
Սարեղերքն ամէն ղվարդն երևցուցին,
Ա՜հ կարմրուկ վարդեր, ղաւակք Եդեմին:
Պըլպուլն ի հեռուանց թողեց ճըղնարան,
Ծովեր, ցամքըներ թևեց անգումանն**),
Ոսկունքն ղըրաւ ի սարին վերև,
Սարին վերևէն ի վարդին տերև,
Հայոց աշխարհիկ, քեզ երես բարև.
Սարեկն ի սարին եկաց ու մընաց,
Անմեղ նախընծով եղաւ երդասաց.
Արագիլն յերդիս մաքրեց իր բունիկ.
Կանգնեցաւ կըղաց «Հայոց աշխարհիկ».
Արտուտիկըն թռաւ, թռաւ վարուվեր,
Մանրիկ ճըլըրլով ասաց շատ բաներ.
Ցատրակիկն ինքաւ, ինքաւ ցած ու ցած,
Կըրծկունքն ի դեսին ըզվռուվռու ճըվաց.
Հովիւն ու հօտաղ գառինք, եզն ու կով
Գոհացան զԱստուած՝ մարդեր շուրջ դալով:
Հանց քեզ տէրն է տուել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայոց աշխարհիկ.
Դրախտիկն անցեալ քեզ դարձեալ գայ գարնամբ
Զինչ պայծառ արևն, որ ծածկեր ի յամբ:

Բայց Նահապետիս ի՞նչ ասեմ ծերուկ,
Որ եմ քան զամէն ծաղիկ վաղանցուկ.
Իմ դարունս անցել ու հասել աշուն,
Ցամքած տերևուկս ըսպասեմ հովուն

*) Ալիք, ծփանք: **) Ցանկարծ, վաղվաղ:

Թէ ե՞րբ ի լերանց ծոցուն փըչէ խոր
Զըդէ անկըսկիծ զիս ի մահուն ձոր:
Նահապետիս կեանքն եղաւ բաւական,
Խընդութեամբ կեցաւ ի յիւրն Հայաստան.
Ժամ է, որ երթայ ի յայն հայրենիք,
Ուր իսկի չ'զատուին եղբարք սիրելիք.
Խընդութեամբ կ'երթամ քեզնից, Հայաստան.
Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման.
Ի քո ծոցէդ վեր կանգնեցաւ Ադամ,
Ես ի քո ծոցէդ ա՛ռնեմ անթառամ:

Ա՜յ մանկտիք, եկէք շուրջ Նահապետիս
Ականջ դիք շայիր*) հօրդ յետքի ձայնիս.
Պլպուլն ու սարեկն երգերն են նորել.
Իմն՝ հետ տատրակին հոգու հաւասարել.
Մանկտիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սրբուով եմ սիրել.
Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է Հայրենեաց փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահութեան,
Խոան ոսկեզօծէ զգառներուն բերան.
Յոսկեթել ամպոց յայգուն զովագին
Թորթոր ինչանէ ցօղիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արևուն շաղուած
Գայ ի խաւարծիլ մանանայ կենաց:
Ո՜հ լերունք ծաղկած, ո՜հ ջուրք ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերա ի յիս ածէք մնա.
Հողմունք անուշիկք եկէք մնա ի յիս,
Շունչ ու երգս առէք, տարէք ի Մասիս,

*) Քերթող, երգահան:

Տարէք վերջին շունչս ի տուն տապանին
Ու լըսեցուցէք զաւկայ Թորգոմին։
Զե՛զ կ՚ասեմ, մանկունք սիրունք նազելիք,
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ՚ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն,
Ծառն՝ արմատով ծառ, տունն՝ հիմամբ է տուն։

Հ. Ղ. Ալիշան.

147.

«Օրհնեա՛լ Տէր, ուսո՛ ինձ
«զարդարութիւնս քո».
ԺԱՄԱԳԻՐՔ.

Հանել եմ աշխարհ իմ կորիծ որդիք,
Ո՛չ գիտեմ օրէնք և ո՛չ հօր պարտիք,
Որ նոցա այնպէս մարդեմ ազգիս մէջ,
Որ որդունք չընեն, այլ խելօք մարդիկ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ նոցա կըրթեմ ճշմարիտ հայեր։

Սովրում են, այո՛, անդուլ անձանձիր
Հայ աղջիկ, տղայ՝ ինձնից ուսում, գիր.
Բայց ես անզօր եմ ձիր, շնորհ, տաղանդ
Քո պէս լիուլի տալ նոցա աւանդ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ նոցա կըրթեմ բարձրակիրթ հայեր։

Զերթ ձագ թեւիս տակ առել են ծուար
Ծանօթ, անծանօթ, ազգական, եղբայր.
Բայց ես դեռ չունիմ այն ձեռք կառավար,
Որ նոցա խաղաղ պահեմ հեռ իրար.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ նոցա կըրթեմ միաբան հայեր։

Վատթար մոլութիւնք զերթ մնայլ ամպիկ
Պաղ պաղ ոտներով իջան իմ տանիք.
Տանեացս վերևէն դէպ իմ ընտանիք,
Ու բաժին տուին նոցա պիղծ չարիք.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ նոցա կըրթեմ բարեպաշտ հայեր։

Դէպ մեր սուրբ ժամեր, դէպ իմ ազգ անզօր
Զունիմ ըզգօն սիրտ, գործեր փառաւոր.
Զունիմ վառ բորբոք իմ մէջ այն հաւատ,
Որով շատ սըրբեր ելան Քո դըրախտ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ արդար գործեր հանեմ Քո յեթեր։

Ապրում եմ ազատ, անկարգ, անհաշիւ,
Ո՛չ գիտեմ հօր յարգ, ո՛չ ծերի պատիւ,
Ուր որ ոտք դըրի բարութեան փոխան,
Կախեցի այնտեղ չարութեան ոստայն.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ գործով ցոյց տամ, թէ եմ հայատէր։

Թէ շէն գիւղերում, թէ ձոր, յանապատ
Իմ կըարիճ ձեռքից կորան մարդիկ շատ,
Հարց Քո սարերին, կապոյտ ծովերին,
Ի՞նչ չեմ ես ըսհել իմ չար կրքերին.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ ողջ հայ անուն բերեմ Քեզ նուէր։

Դաւով, քրստութեամբ մինչ ցրբանտ և մահ
Գերել եմ ի զուր մարդիկ անխընայ.
Թէ իմ վատութիւն գաս հանել հանդէս՝
Ինձ չար կըգանես քան բիրտն Հերոդէս.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր։
Որ ես էլ սիրեմ Քո պաշտած սուրբ սէր։

ԿորուԹիւն, նախանձ, անվերջ ծուլուԹիւն
Մաշեցին իմ կեանք, քանդեցին իմ տուն.
Ես քանց այն Թռչուն՝ խեղճ եմ և Թշուառ,
Որ չունի դադար և առատ պաշար.
Ինձ արդարուԹիւն՝ ուսո՛, օրհնեա՛լ Տէր,
Որ ես էլ յարգեմ աշխատանք և սէր։

Մ՚յ իմ պաշտելի, ա՜յ ազնիւ հայեր,
Աստուած պինդ պահի ձեր կեանք ու արև.
Թէ որ միշտ այսպէս ձեր յանցանք և ղեղջ,
Ձեր վատԹար գործեր, ձեր հոգի և խիղճ
Բանաք անդադար Օրհնեալի առաջ
Ու ձեզ յոգնուԹիւն խնդրէք Իւր սուրբ խաչ,
Կերդնում՝ ձեր յարև, որ Օրհնեալն Իւր յԱջ
Միշտ Իւր ԵԹերից կ՚օրհնէ ձեր որդիք,
Ու նոքա կընեն ճշմարիտ մարդիկ.
Կ՚օրհնէ հայրաբար ձեր ազգա մանկտիք,
Ու նոքա կընեն բարեկիրԹ մարդիկ.
Կ՚օրհնէ զԹուԹեամբ ձեր ազգ, համազգիք,
Ու նոքա կընեն միաբան մարդիկ.
Կ՚օրհնէ մշտապէս ձեր տուն, ընտանիք,
Ու նոքա կընեն բարեպաշտ մարդիկ.
Կընտէ ընդ միշտ ձեր խնդիրք, մաղԹանք,
Ու անհետ կանէ ձեզնից տառապանք.
Կրտայ ձեզ երկար, երջանիկ օրեր,
Ու դուք չէք լինիլ ապարդդ հայեր.
Կրանկէ ձեր մէջ սէր, արդարուԹիւն,
Ու դուք կունենաք ամբիծ հայ անուն։

Ապա ԹէՀ կ՚ապրէք անարդարուԹեամբ,
Ու դեռ կրդործէք չարիք ձեր ձեռամբ.
Ապա ԹէՀ անդիղջ կ՚ապրէք ընդունայն,
Ու կրվրդովէք արդար ԵՀովայն,—

Են իսկ ձեր բաժինք չարիք ահաւոր,
Որպիսին կրեց Անին փառաւոր։

Սահակ Սարկաւագ.

148.

Երգ Մեծին Վարդանայ.

Հուր բարկուԹեան համայն հայոց.
Բորբոքեալ ղերդ բաց բարկաճաԹ.
Ու կայծականցրս բիւր բիւրոց,
ԶարԹոյց ի մարտ սարս սառնապատ։
Զի՞ վարանիմք արդ ասա եղբա՛րք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.
Զեռամբ յԱրտաղ, Տղմուտ, ՚ն դրոյդ, ՚ի դրոյդ
Ի դրոյդ Թռչիմք սլանամք, սլանամք, սլանամք։
Հուր ղէն ի ձեռին
Եւ վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան
Եւ յոր երկինք հանդիստատես
Զաշխոյժ նախնեաց հեղու ի մեզ.
Հապո՞ն քաջք քաջաց
Ընդ Սասան կուրծս
Մխեսցուք մկունս
Ուժդին ի հարուած։

Ռ. Սէտէֆեան.

149.

Համեստափա՛յլ կոյս, սրտիդ սրբազան
Դու լսում ես քո վառ զգացմունքին,
Բայց և՝ ուղեղիդ լուրջ դատողուԹեան,
Որոնք միացած քեզ քո ընտրեալին

Արժան են գատում և ամուսնական
Առարկում են քեզ կապը ցանկալի,

Բայց նախ քան քո այդ կանքիդ եղակի
Երջանկութեանը ժամը մոտեցած
Եւ բաղմախորհուրդ օրհնուած բաժակի
Քաղցրը և դառը արդէն վայելած,
Ես կամիմ ասել քեզ խօսք քանի մի,
Եւ դու լսի՛ր ինձ, քնքոյշ արարած։—

Երբ որ երջանիկ կը դայ ժամանակ՝
Դու մայր կը լինիս մի սիրուն մանկան,
Որին անդադար կը սեղմես անյագ
Խանդաղատալից կուրծքիդ մայրական,
Եւ համբոյրներդ նորա անատակ
Կը հանդչին դէմքին հրեշտականման.

Երբ որ նա պայծառ իւր աչքիներով
Կը նայէ դէմքիդ ժպտող երջանիկ,
Կը գրկէ վիզդ իւր ձեռքիներով,
Կը սեղմէ այտիդ իւր սիրուն այտիկ
Եւ նորաբարբառ իւր անմեղ լեզուով
Արդէն թոթովել կըսկսէ «մայրիկ»,—

Ո՜հ, ուսի՛ր նորան մեր քաղցրաբարբառ
Մայրենի լեզուի ախորժ հնչիւններ,
Ուսի՛ր այդ լեզուով աղօթել, կարդալ
Այդ լեզուով խօսել, իւր զգացմունքներ
Այդ լեզուով յայտնել և ուրախանալ
Այդ լեզուով միայն, այդ լեզուով տխրիլ։

Ուսի՛ր դու նորան, որ երկնքում կայ
Գերագոյն Մէկը, որին կոչում են
Խելօքներն «Աստուած», որի ինքնակայ
Տնօրէնութեամբը կառավարվում են

Մարդիկ և աշխարհ. որի մշտակայ
Սուրբ աւանդները—հաւատ, յոյս, սէր են։

Ապա այնուհետ՝, երբ նա մեծանայ,
Ցուցի՛ր աշխարհը իւր գեղ ու տգեղ
Երևոյթներով։ Ուսի՛ր շրջակայ
Հրաշալի բնութեան օրէնքը անշեղ։

Ուսի՛ր պատմութիւն. պատմի՛ր մեծատառ
Նորա վեհ մարդկանց գործեր պանծալի.
Պատմի՛ր ամօթով և գործերը դառ
Հայրենակործան դաւաճանների։

Եւ երբ որ կը դայ ժամ օրհասական
Եւ հայրենիքը կը կանչէ մարդիկ,
Ցայնժամ քո բոլոր քնքոյշ մայրական
Զգացմունքները թող մնան լռիկ
Եւ խօսէ միայն ազգասիրական
Վառ զգացմունքը սիրոյ անդրանիկ։

Եւ պատմի՛ր նորան թէ ի՛նչ անպատում,
Բայց և վայրենի երջանկութիւն կայ
Վառ պատերազմի ամեհի դաշտում,
Ուր մարդիկների կուրծքերի վերայ
Արեան սոսկալի վարդեր են բուսնում
Եւ ուր փառքի մօտ գրուած է և մահ։

Եւ այնուհետև դէմ և յանդիման
Թշնամու զօրքին ուղարկի՛ր նորան...
Եւ պարծի՛ր, խնդա՛, երբ նա յաղթութեան
Դրօշը արիւնոտ կը բերէ ծածան.
Իսկ եթէ մեռած կը բերեն նորան,
Ո՜հ, մնայր, պարծի՛ր, լա՛ և օրհնի՛ր նորան։

Միքայէլ Հեղեան.

150.

Վանեցւոց խրախոյս.

Հերի՛ք, որդեակք, այսքան տարուայ տառապանք,
Հերի՛ք, դաժան անգութ քրդին ոտն ընկանք.
Քանի խոնարհ ղլուխ տուինք դայլերին,
Այնքան ծանր բեռը դրին մեր վզին։

Հերի՛ք, եղնե՛նք, ցոյց տանք՝ թէ մենք հարազատ
Տին քաջերու արիւն էինք և ազատ.
Թէև չունինք ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ,
Մեր բահերն էլ կ՚անեն նորանց շանսատակ։

Ինչքո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նորանք մարդ չեն, այլ լեռնական վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսում ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նորա տէրն ազգար։
Հերի՛ք, եղնե՛նք և այլն։

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Նոքա մեր վրայ լըռիկ արցունք են թափում.
Զե՛ն խնայել, թէև ու թիկունք կը հասնին,
Շուտով կը դան, կը միանան սուրբ գործին։
Հերի՛ք, եղնե՛նք, ցոյց տանք, և այլն։

Մնակեան.

151.

Հայ-մեռնինք.

Հայ մեռնինք, ո՛չ, եղբարք, ո՛չ, օտարէն չը կայ յոյս,
Մի՛ աչուրներդ դարձընէք յայս, յայն կոյս.
Օտարն զձեզ թէև սիրէ իւրաքար,
Օտարն, ա՜հ, միշտ է օտար։

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ, որ դուք թափէք արցունք արիւնով.
Ով որ հայ չէ, հայուն ցաւերն ան չըզգար,
Ի՞նչ կը խաբուինք անպատար։
Մի՛ դուք ձեր յոյսըն մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերդ ցուցընէք անգութին.
Արդեաւ անոնց կը յուսայք օգնութիւն,
Ձեր կը ծաղրէ մերկութիւն։
Գիտեմ, ձեր բեռը ծանր է, ով հայեր,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցնեն օտարներ,
Թողէ՞ք զօտար, տուէ՞ք եղբայր եղբօր թեւ,
Եւ զօրացէ՞ք անդ եթեւ։
Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի,
Մի՛ վհատիք, ցուցուցէ՞ք սիրտ հայերի,
Զէ՛ կարող բաղդ յաղթել ազգին այն քաջի,
Որ բաղդին դէմ կ՚կռվի։
Ձեր հայրերուն ո՛չ շղթայք, ո՛չ սուսերներ
Զը կարային ընկճել ո՛չ միտք, ո՛չ սրտեր.
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար, հէք,
Ի՞նչ, այն քաջաց որդիք չէ՞ք։
Զէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննման,
Որ հայրենեաց ձենձերեցան 'ի սեղան...
Զէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց, որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք։
Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ՚ազգային,
Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին.
Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց,
Երանի տայք օտարաց։
Օ՜ն, ով կ՚ըզգայ 'ի սիրտ եռանդ և ոգի՝
Թողու զօտար և իւր նախնեաց հետևի.
Մեր կեանքը հոն է, ուր կրօնից մեր սեղան,
Այն է հայոց վառարան։

Եղբարք, հայուն կեանքը երբէք չը մարիր,
Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր.
Որչափ սիրէ մշտայաղթ խաչ Քրիստոսի՝
Հայն ալ անոր հետ կ'ապրի։

Ի՞նչ կը վախնայք... գլուխնուդ վերայ չէ՞ք տեսներ
Քառաթևին գիւտարտուռ վեհ ստուեր,
Զայն սուրը փայտին բուն շաղեցին ձեր հարքը
Իրենց վսեմ արեամբը։

Դուք ալ Խաչին խարսխեցէ՛ք ձեր յոյսը,
Եւ հաւատացէ՛ք պիտի ծագի ձեր լոյսը.
Նա ազգութեանդ եղաւ պարիսպ ամրափակ,
Նա ձեր ըլլայ ղէնք, դրօշակ։

Ո՛չ, հնար չէ, որ կորուի այն ազգը,
Որ հաւատարիմ մնայ Խաչին միշտ ոտքը,
Նորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար,
Որչափ կրօնիս կեանք՝ յաշխարհ։

Այն վեհ կրօնիս և ազգութեան անունով,
Հայ եղբարք, ձեռք ձեռքի տուէք հուր սիրով,
Առելութիւն, քէն մերժուին, ցն, 'ի բաց,
Անիծեցէ՛ք ղազգատեաց։

Ամենուդ սիրտ՝ զլայուն սէրն հայրենեաց,
Ամենուդ միտք թռչի յօդուտ համազգեաց,
Ու ձեր յեսին եղբօր արցունք ու ցաւ միշտ
Ըզգացէ՛ք իբրև ձեր վիշտ։

Օտարին հաց մեզի տնունդ չէ՛ բնաւ,
Օտարին ջուր, ոչ չ'մարեր մեր ծարաւ.
Մեզի կենաց տուող և մեր պահապան
Է աւազանն հայկական։

Այն Աւազանն, այն հայութեան կնքատուն,
Ո՜հ, չ'ուրանամք, եղբարք, յուսով զաղփաղփուն,
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս,
Թո՛ղ մարի յայն սուրբ կրակէս։

Թո՛ղ ամենքս ալ ընդունի նոյն դերեզման,
Վասն զի նոյն էր ամենուս ալ որբան...
Հայ ծնանք մեք, Հայ ապրի՛նք, Հայ և մեռնինք,
Օ՜ն, Հայ մնանենք և յերկինք։

Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան.

152.

Երգ ի մեծասանելի օրդ տարեդարձի Ազգային Սահմանադրութեան.

Հայկա՛զն որդիք, հապ՝ օ՛ն ի դաշտ
Ձեռք սիրտ համբոյր եղբօր տալ հաշտ.
Հապ՝ օ՛ն, դէպ հոն՝ ուր միաբան
Մենք ուխտեցինք, որ անբաժան
Ըլլանք մէկ սիրտ, մէկ ոգի,
Հայ ազգութեան տալ հոգի։
Ամենքս մէկ սիրտ, ոգի ե՛ն անուն,
Ամենքս մէկ յոյս, հաւատք ե՛ն արիւն,
Ամենքս զաւակ մէկ հայրենեաց,
Իսկզբանէ այսպէս եմք օտարացած։
Եկէ՛ք ամենքս մէկ ոգի,
Հայութեան տանք նոր հոգի։
Տեսէ՛ք, Հայը Հայուն համար
Կանգնել է հոն դափնի կամար.
Մեզ կ'սպասեն Հայկեան կուսանք,
Վարդ, մանիշակ, ծաղիկք հաղարք.
Օ՜ն, ամենքս մէկ ոգի,
Հայութեան տանք նոր հոգի։
Վարդից կոկոններ սէր բուրեն,
Կուսին մատներ սէր կը գրեն,
Մանկաւիք ուրախ սէր կը գոչեն,
Մուսայց քնարք սէր կը հնչեն.

Սիրով և մենք մեկ ոգի,
Առնունք մեկնով նոր հոգի։
Սի՛րով բացուած անմեղ սրտեր,
Գիտցէ՛ք հայուն նշանն է սէր.
Օտարին պէս չըլլանք դաժան,
Ի բաց մերժենք սիրտ մերժուժան.
Առելութեան չար ոգի
Թողունք, առնենք հայ հոգի։
Բա՛ւ է, ալ բա՛ւ է, եղբա՛ր,
Հայն բաւ կրեց վիշտ, տառապանք.
Մինչ մեր թշուառ աւուրց յաւարտ,
Ծագի պայծառ արևն զըւարթ.
Ըլլանք մեկ սիրտ, մեկ ոգի,
Հայաստանի տանք հոգի։

* * *

153.

Ինն և տասնեւորդ դար և Հայաստան.

Հայոց աշխարհ, բաղդդ է բացուել,
Նայի՛ր երկինք, ստադդ է ծագել,
Աստուած քեզ նոր դար է տուել.
Դէ՛ վե՛ր կաց, վե՛ր կաց, ո՛ւռ ելլ, լուսաւորի՛ր,
Վե՛ր կաց, կանգնի՛ր, պայծառացի՛ր։

Հայոց աշխարհ, անձրև խմի՛ր,
Ուսման նախշուն վարդեր բացի՛ր,
Կանաչ կարմիր դու զարդարուի՛ր.
Դէ՛ վե՛ր կաց, վե՛ր կաց, ո՛ւռ ելլ, աչքերդ սրբի՛ր,
Վե՛ր կաց, կանգնի՛ր, սևերդ հանի՛ր։

Հայոց աշխարհ, էլ մի՛ մթնիր,
Թո՛ղ անց կենան քո սև գիշեր,
Որ քեզ ծագի պայծառ օրեր.

Դէ՛ վե՛ր կաց, վե՛ր կաց, ո՛ւռ ելլ, քնարդ լարի՛ր,
Վե՛ր կաց, կանգնի՛ր, երգի՛ր, պարի՛ր։

Սամուէլ Գիւլզատեանց.

154.

Շուշանիկ.

«Հայոց աղջիկներ»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Հայոց սիրուններ, դո՛ւրս եկէք մէյդան,
Աշխարհ տանի ձեր սիրուն թամաշան։
Հայոց սիրուններ, ասէ՛ք ձեր հօր, մօր՝
Շուշան է պարում Վրաց թագաւոր։
Հայոց սիրուններ, ծագի՞ ձեր Շուշան,
Վրաց թագաւոր՝ Վրաց չէ՛ հաւան։
Վրաց սիրուններ, ի՞նչ սիրուն Շուշան
Հայոց աշխարհից քաղեց ձեր Արքայն։
Վրաց սիրուններ, բա՛ց արէ՛ք ճամբան,
Հրէն գալիս է ձեր թագուհին աննման։
Վրաց սիրուններ, ո՞վ կարէ չափել
Այն բարակ ունքեր, սև սև մեծ աչքեր։
Այն մարմար երես՝ սև մազի միջում,
Կարծես գիշեր է, լուսնեակ է ծագում։
Վառվում է, վառվում իւր կօլօր թուշեր,
Ո՞նց Գողթան կարմիր գինու բաժակներ։
Հայոց Շուշանիկ, քո բոյին զուրբան,
ալվնում է մէջքդ տաք մոմի նման։
Հայոց դրախտի ի՞նչ թռչուն ես դու,
Որ քեզ տանում ես խելք ու միտք մարդու։
Այն թեթև ոտերդ, թև առած ուսերդ
Թռչում են Մցխէթ, ծփալով մազերդ։
Հայոց Շուշանիկ, օտարանում ես,
Էլ չես տեսնիլ քո Հայրենեաց երես։

Հայոց Շուշանիկ, գընա՞ս դու բարով,
Հաստատ մնաս միշտ դու քո հաւատով։
Գողթան երգիչներ, հնչեցէ՛ք ձեր սաղ,
Հարս փեսայ դառան Մասիսն ու Կովկաս։
Գողթան երգիչներ, ձեր ձայնին մատաղ,
Երգէ՛ք, պա՛ր բռնեն Կուր գետն ու Երասխ։

Սամուէլ Գիւլզատեանց.

155.

Գ ե ր ի Ց ո յ ն.

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թրռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւաղ, այս բանտում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես։

Հանապազ տանջուելոյ քո ճակատագրով,
Սրտումն շղթաների ձայներ կրելով...
Ձե՛մ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ կամ լինիլ ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռվիլ,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանիլ,
Բայց, աւա՛ղ, այս բանտում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես։

Զը գիտեմ ի՞նչպէս է կռիւն հրդեհվում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարվում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափվում է ազգ-արիւն, բայց ես չե՛մ այն տեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարվիմ անծանօթ կապված,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատուած։

Յովհաննէս Քուչուբէգեանց.

156.

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միաս է.ք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,
Ա՜խ, սիրտս խորվում, ցաւիս չըկայ վերջ։

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վերայ առաջս է դրած՝
Աչքս ակամայ վերան եմ ձըգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։

Տեսնում եմ և, ա՜խ, միտքս է մոլորվում,
Դառն արտասուքով աչքս պըղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մըթնեց,
Արևն-էլ խաւրեց, էնդուր որ տխրեց։

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ի՞նչ կըտեսնեմ,
Էն սև սև աչերն՝ սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային զալամով քաշած։

Էն սև սև աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին զըժոխքից հանեց,
Ես-էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կըրակի էրուած, խորոված։

Էլ ի՞նչ կըտեսնեմ ես ձեզ ման-գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամոթից վարդն-էլ է գեղնում,
Երբ-որ ձեր կարմիր թըշերը տեսնում։

Բլբուլն-էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թրռչում է, թրռչում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում։

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չե՛մ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէզամաղ կ՚անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես։

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատն-էլ օտար, օտար և լեզուն,
Աղջիկն-էլ օտար ու ձեզ չի նըման,
Հայոց աղջիկներ, դուք էք աննըման։

Ձեր սէրն է միայն սրբատում պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշուած
Օտարութեան մէջ դեռ կըպահպանի։

Գէորգ Միրիմանեանց.

157.

Արշալոյս Հայաստանի.

Հայաստանեայց սև ախրագին օրերը
Փարատեցան, նոր հորիզոն բացուեցաւ.
Մեզի համար չեն այն մթին ամպերը,
Զի արշալոյս պայծառ դարձեալ փայլեցաւ։
Յուրախութիւն, ո՛ հայեր,
Որդիք հայոց ա՛Արամայ.
Ձեզ փառաւոր պողոտայ
Հորդեն երկինք լուսաբեր։
Դուք գիւցազանց ձեռ էք, հայե՛ր, քա՛ջ եղիք,
Ցառա՛ջ գացէ՛ք, յառա՛ջ, ահա՛ ասպարէզ.
Մայր Հայաստան ձեզ կ՚նայէ աւասիկ,
Սեղմացուցէ՛ք իր արտասուքն աղեկէզ։
Թշուառութեան բաժակը
Մինչև տակը խմեցինք,

Արդ ուղարկեց մեզ երկինք
Աւետաբեր հրեշտակը։
Այն հրեշտակը, որ Վարդանայ վեհ հոգին
Ի Աւարայրի նահատակաց սուրբ գունդը
Ներկայացուց ամենակալ Արարչին՝
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր անդունդը։
Արդ ձեզ կուգայ, հայկազունք,
Նոր աւետիս բերկրելով.
«Զէ՛ այլ ձեզ բաղդն խռով,
Դուք քաջարեաց, ո՛ մանկունք»։
Օ՛ն խայտացէ՛ք, Գողթան երգեր թո՛ղ հընչեն,
Թո՛ղ արձագանգ տան և հովիտք, բլուրներ.
Մեր սրտերը, որ սուրբ սիրով կը տոգոփեն՝
Թո՛ղ միանան ու կորնչի անսուրբ հեռ։
Ի՛ամէն տարի ցնծութեամբ,
Մենք այս շքեղ հովտին մէջ,
Հեշտին պարուց ելևէջ,
Ընենք դարձեալ միութեամբ։

Սիմոն Հայկ Մ. Ջելէկեան.

158.

Հապա, քաջազունք,
Հայոց զաւակունք,
Առէ՛ք աղեղունք
Ի մահ երագունք.
Անտառք ըսպասեն,
Կենդանիք սարսեն
Զինուցդ ի ձայնէն.
Շեշտակի նետեր
Թափեցէ՛ք, քաջեր,
Ցերէս անվեհեր։

Վաղեմք, ուր վանդ,
Այն մեր զբօսանք.
Որսոց պրշաւանք
Մարտից են կրթանք։
Երթամք գունդ ի գունդ,
Յաղեղ և մրկունդ,
Յուսով սրտաթունդ.
Շամփրեմք կենդանիս,
Իբր զթշնամիս
Ի մեր հայրենիս։

159.

Երգ երեկոյեան.

Հրեշտակ զուարթուն
Հրզօր պահապան մեր,
Որ զաւուն ողջոյն
Ըզմեզ խնամեցեր։
Ի մուտ արփւոյն
Դու լոյս անստուեր ես մեր,
Անմուտ արև
Կացցես մեզ այս գիշեր։
Քուն քաղցր անփորձ
Շնորհեա՛ ի փառս Աստուծոյ
Եւ զծնողս հոգւոց և մարմնոց կեցո։

Գ. վ. Այվազեանց.

160.

Պար-երգ.

Հայկազունք, պա՛ր բռնենք,
Թև ի թև, ծն, ելնենք,

Ցնծութեան ձայներով
Եւ զուարթ սրտերով։
Զի ահա՛ ի նոր բաղդ
Զայն կուտայ երկինք արդ,
Ի սուրբ կոչումն ուխտեմք հաստատ
Անձնուէր դող պատրաստ։

Ս. Պ. Պ. Փափազեանց.

161.

Երգ ի դէմս քաջին Վարդանայ

Հայրենասէ՛ր Արամեանք,
Զի՞ կայք ՝ի քուն ընկղմեալ,
Բացէ՛ք զաչս ձեր հոգեկան,
Տեսէ՛ք զօրս ձեր ժամանեալ։

Ո՞ւր են փառք, ձիր ձեր նախնեաց,
Ո՞ւր են պատիւ վեհ արանց,
Որ զաշխարհ Հայաստանեայց
Լցին փառօք դիւցազանց։

Ցառաջ մատիք ինձ լսել,
Շառաւիղք քաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ Վարդանայ։

Որ զգլուխ իւր կենաց չափ
Եդ ի փրկանս իւր ազգի,
Եւ կընքեալ զայն իւր արեամբ՝
Եղև փրկիչ հայրենի։

Սուրբ խաչ փայլեաց փրկական
Հոգւոց ազգիս հայկական,
Պահեա՛ զմեզ, Տէր Աստուած,
Եւ աշխարհիս փորձանաց։

Լուսաւորեանց, Հայաստան,
Լուսով խաչին փրկչական.
Հնչեա՛ աշխարհ ամենայն
Զփող մեծի աւետման։

Բարձրացի՛ր արդ, Արարատ,
Պանեալ ծաղկօք զքոյդ գագաթ.
Աղգիս Հայոց խնդութեան՝
Լե՛ր դու վկայ յաւիտեան։

162.

Երգ ծաղկացանի.

«Տիծեռնակի» եղանգկով.

Հ՛ատիկ, դու, ի՛մ հատիկ,
Ա՛հա մութ քո արնիկ.
Արեգից զրկվելով՝
Ենջի՛ր ասա, դու, խեղճիկ

Ա՛հա ես կը ծածկեմ
Քո երես սառ հողով.
Գերեզման կը շինեմ
Քեզ համար՝ իմ ձեռով։

Եթէ դու լինէիր
Բանախօս կենդանի,
Գուցէ ինձ կ՛ասէիր
Տխուր բան այսպիսի.

«Զրկվելով արեգի
«Շողշողուն վառ լուսից,
«Էլ ի՞նչ կեանք այսպիսի
«Պիտ կըրեմ այս բանդից»։

Հ՛ատիկ, դու, ի՛մ հատիկ,
Մի՛ տխրիր հոգալու.

Այստեղ է՛ շատ փափկիկ
Եւ հանդիստ՝ քընելու։

Շուտով դու կը զարթնես
Գեղեցիկ ոստերով
Եւ կըրկին կըլինես
Նոյն ծաղիկ՝ նոյն հոտով։

Հ՛ատիկ, դու, ի՛մ հատիկ,
Դէ՛հ, լըսիր իմ խօսքին,
Որ կ՛ասեմ ես այժմիկ
Մի առ մի զըլխովին.

—Նոյնպէս ինձ կըսպասի
Այդպէս մութ գերեզման,
Որ մարդիկ տխրալի
Հառաչեն իմ թաղման։

Ես այնտեղ ննջելով
Կըսպասեմ մեծ յուսով,
Երբ փրկիչ ինձ ձայնէ.
«Վե՛ր կացիր, Գրիգորէ՛»։

Թարգմ. Ա. Գրիգորեանց.

163.

Ցաւուր գործադրութեան ազգային Սահմանադրութեան.

20 օգոստ. 1860, Կ.Պոլիս.

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք.—սիրա կը գիմանա՞յ,
Սիրա որ ազգասէր ըլլալ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դու անտարբեր ցարտ մնալ յաւէտ։

Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու հոգին հեռու մղենք, հեռու,
Սիրտ սրտի կապուած, թև թևի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած.
Օ՜ն, վազենք առաջ, ի սուրբ խաչն վստահ,
Օ՜ն, երթանք յառաջ, և անձնանուէր՝
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր.
Հա՛յ, մի՛ վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,
Ցկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ հայերն յառաջ թող անցնին.
Խաչ, սէրն են նշան ճշմարիտ հայուն,
Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ հայուն:

Սիրոյ զրօշակներ
Թո՛ղ արդ պարզուին,
Հաշտութեան ձայներ
Թո՛ղ արդ հնչուին.
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ,
Սուտ են, որ ըսեն
«Հայք զերար կ՚ատեն»:

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը
Եկէք, հայկազունք, եկէք միանանք.
Եւ սփոփենք մեր վշտացած մոր սիրտը,
Օրհնելով Տէրը, որ մեզ պարգևեց
Մեր Ազգին կապն ու հոգին,
Ազգային Սահմանադրութիւն
Յաւերժասոյն արդիւնաւէ՛տ:

Ս. Պ. Պ. Փափազեանց.

164.

Ես հայոց ազգին մէկ բան եմ ուզում,
Եւ այդ մէկ բանն է—հիմնաւոր ուսում:

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

Եղբարք սիրելիք, մեր սրտերու մէջ,
Ինչպէս երկնային արևգակ անշէջ,
Թո՛ղ պահէ հաստատ երկնային Տէրը
Անգին հայրենեաց բոցավառ սէրը:

Կեցցէ՛ մեր հաւատ, երդենք միաբան,
Մեր ազգայնութեան միակ պահապան,
Նորա մռայլող, ուրացող հային
Անուանենք ընկեր մատնիչ Յուդային:

Կեցցէ՛ յաւիտեան մեր գանձ թանգագին—
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին.
Թո՛ղ նա զօրանայ ծաղկի և ածի
Ապահովութեամբ Աստուծոյ աջի:

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

165.

Վարդան Մամիկոնեանի երգը.

Հիմի՞ լռենք, եղբարք, հիմի՞ լը
Երբ մեր թշնամին իր սուրն է պրբել,
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,

Աստուծ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից Թագ և՛ խօսք և՛ զէնք,
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռուեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարշ բողոք վարուց տալիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պրատենք.
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդո՞ւխտ, հալածեա՜լ եղբարք, ուր գիմենք.
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկառեց,
Աղգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մեռ է, ի՞նչ անենք,
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք, երբ մեր Թըշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի Ի՞Լ լռենք։

Հիմի Ի՞Լ լռենք՝ մարդիկ ի՞նչ կ՛ասեն,
Երբ մեր տեղ քարինք ապառաժք խօսեն,
Զի՞նչ ասել, որ Հայք արժանի էին
Այդ սարբկական անարդ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անզամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է Թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք Թըշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք։

Ռ. Պատկանեան.

Պետրոսեան
Սերեմ Գեկեանց
166.

Մամիկոնեան մեծ Վահանի պատասխանը.

Հիմի Ի՞Լ խօսենք, եղբարք, հիմի՞ էլ
Երբ ընտանեկան երկպառակութեամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտաբ ոտքով կոխել ենք.
Հիմի Ի՞Լ խօսենք։

Հիմի Ի՞Լ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց.

Մինչ մնացել էր Պարսից լոկ մասեան
Գունդը մեր վաթսուն հազարի դիմաց,
Երբ մեր վատութեամբ՝ ոդջ կորուսել ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատնով լցնենք Դուին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամենը մենք կատարել ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է Հային.
«Եթէ Ասորու նման աշխարհում
«Զկայ մի վատ ազգ, բայց քան Ասորին,
Էլ վատ է Հայը». մենք այս ասենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախում է անարգ հայկականներին,
Մինչ սարուկ մարդիկ նստան մեր գլխին
Եւ մեզ կարծում են հոգ լրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխոդ ոտքը լեզում ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեւերը կտրած,
Անարգ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝
Կարգում է տեսուչ քան իւր չար մտաց
Եւ մենք դեռ՝ «կեցցէ արին» գոռում ենք։
Հիմի է՞լ խօսենք

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,

Այդպիսիներին դարձեալ պատվում ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Էլ մեր երեսին մնաց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք։
Ո՛չ, թէ չենք ուզում հոդէց հոդ կորչել
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, ազատենք,
Ապա թէ խօսենք։

Միքայէլ Նալբանդեան.

167.

Ցառա՞ջ գնացէք.

Հայկական սեռի արի զաւակներ,
Ժամ է մեզ պաշտել մեր իրաւունքներ.
Ահա ծագեց արշալոյսը,
Ելէք, դո՛ւք էք Հայի յոյսը.
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէք։

Ցառա՛ջ գնացէք, սիրելի՛ Հայեր,
Հերի՞ք է թըմրած մնացինք շատ դարեր.
Հասաւ, եղբարք, ժամանակը,
Ձեզ կանչում է ազգի պարտքը.
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէք։

Բարձրացրէ՛ք կրկին Հայութեան փառքը,
Այն որ ունէին վաղ ձեր նախնիքը...
Թող օտարը դարձեալ չ՚ասէ
Թէ՝ Հայութիւն դեռ քընած է...
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէք։

Ցառա՛ջ գնացէք, ամօթ այն Հային,
Որ չէ ծառայում իւր ազգի շահին.—
Նա անկիրթ է, խեղճ և թշուառ,
Նա օտար է, չէ՛ մեր եղբայր.
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէք։

Ցառա՛ջ գնացէ՛ք լուսաւոր խելքով,
Կեանքի արժանի ազնիւ պարծանքով.
Արուեստ, ուսում և դիտութիւն
Խոստանում են մեզ փրկութիւն,
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէ՛ք։
Ցառա՛ջ գնացէ՛ք, սատացէ՛ք կրթութիւն,
Դիտեմ, չէ՛ սառել ձեր մէջ այն արիւն՝
Որ երբեմն մեր սուրբ նախնիք
Ծաղկացրին ազգ ու հայրենիք։
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէ՛ք։
Ցառա՛ջ գնացէ՛ք. ձեզ մեր հայրենիք
Պիտի ճանաչէ հարազատ որդիք.
Նա ձեր համար պատրաստ ունի
Դափնեայ պսակ ձեզ արժանի.
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէ՛ք։
Ցառա՛ջ գնացէ՛ք, յառա՛ջ, եղբայրներ,
Ձեռք ձեռքի տալով, միացրած սրտեր.
Ահա՛ մնա է յաջողութիւն,
Ահա՛ հանդէպ ձեր բարութիւն. . .
Ցառա՛ջ, յառա՛ջ գնացէ՛ք։

Յովհ. Քուչուբէգեանց.

168.

Հա՛յ ապրինք.

Հա՛յ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ ըզմեզ կ'ողջունեն Երկինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Հա՛յ ապրինք.—մեր հայրն է այն դիւցազուն,
Որ զաղատութիւն սովրեցոյց մարդուն,
Ու մեզ վեհ Անուն մը տըւաւ բաժինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։

Մեր աշխարհն է սուրբ։—Մեր հողուն վրան
Աստուած է քալեր, հանելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան.
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
Կրօնից նախկին սեղան է Մասիք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Հայուն պերճ անուն՝ ո՛չ միայն երկիր՝
Այլ և յեթերից մէջ շողայ լուսալեր.
Քաջ հայկին ասատեղք անմահ են յերկինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Հա՛յ ապրինք.—ո՞ր ազգ կայ հայուն նըման,
Որ ունենայ հին պարծանքներ այսքան,
Ո՞ր ազգ հայուն պէս շքեղ հայրենիք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Ըսէ՛ք, ո՞ր ազգին ջրս առաքեալներ
Երկնից Թագաւորն է դեսպան ղրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ենք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Քրիստոսի ունինք անգրանիկ օրհնենք,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք.
Հայը զարմացոյց զերկիր և զերկինք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։
Մեր ազգ հեաւոզ է ճիշդ Յիսուսի,
Որ Խաչն այսչափ զար առած է յուսի.
Ո՛չ, չը խոնարհիր, չըլար դասալիք.—
Եղբարք, հա՛յ ապրինք։

Այո, Խաչին կեանք՝ կեանք է վըշտալից,
Այո, հայուն կեանք՝ կեանք է յաւալից.
Բայց Խաչն՝ յաղթութիւն ունի վեհ կընիք.—
Եղբարք, հայ ապրինք։
Ոչ, ճակատագիր մեր չէ՛ միշտ տըխուր՝
Ըվթշուառութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մ՚ունինք...
Եղբարք, հայ ապրինք։
Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարծիլ, որ վեղ ունին հարք.
Չ՚ըլլանք հայ անուան չըլլանք նախատինք.—
Եղբարք, հայ ապրինք։

Խորէն Արք-եպիսկոպոս Նար-Պէյ.

169.

Առ Հայաստան.

Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս որրան,
Դու և բնիկ իմ հայրենիք.
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ի վեհ անուանդ սիրտ իմ, ո՜հ, յոյժ
Ոգևորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ
Ի քեզ՝ ի քեզ, յոյս իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայաստան, անուն փարելի,
Ի քեզ հանդիստ Նոյեան տապան
Եգիտ և քև ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Գեաք քաջանաջք ազգնապուղիս
Զհոգդ բարի աւնեն յուսթի,
Քև ապրիմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ, փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան,
Քո զեփիւռին քաղցր է շնչիւն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զոր շնչեցին և զօրացան,
Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Յովհ. Միրզա—Վանանդեցի.

170.

Հնչեցին լարք դեղդեղ ի սուլ
Փնարայ Հայոց սոփերայ,
Եւ ի Մասեաց ձայնք ծն անդուլ
Երգովք սխորժ մաղթանաց։
Դիրուատեցին ի քաղցր ի նուագս
Ապգանուէր գործք սիրալեր,
Հրաչակ հարցեն երկրի
Փառաւոր անուան քաղցրիկ։

Երկարեցին աւուրք կենաց
Տեառն Գէորգեայ մեր պետին*),

*) Երջանկայիշատակ Գէորգ Զորրորդ Կաթողիկոսն Ամենայն Հայոց վախճանեցաւ 1882 թ. դեկտեմբերի 6-ին։ Նորա կեանքի

Եւ հիւսեցին թագ պարծանաց
Մեծարգիւն հայրապետին։

Օն, հայասան, խինդ ի դէմս, խինդ ի դէմս
Կայ օրհնեալն ի հանդէս, ի հանդէս,
Զգեցի՛ր հանդերձ ծիրանիս,
Եւ տուր յուզերձ զաւետիս։

Հոգեհաւոր իմ որդիք,
Գալի ահա պաշտպան հրոյր,
Եւ պաշտելի հայրենիք
Պանծացի ի Տէր Գէորգ։

Վահրամ վ. Մանկունի.

171.

Հրաւէր դէպի ուսումնարան.

(Նուէր հայ մանուկներին.)

Հայոց մանուկներ, փոքրիկ կորիւններ,
Վշտահար հոգուս միակ բժիշկներ,
Վա՛ր կացէք շուտով, բացէ՛ք ձեր աչքեր,
Տեսէ՛ք ի՞նչ քաղցրիկ երգում են ծաղր։

Արևն էլ ահա զարնան վարդի պէս
Բացել է իրա փայլունակ երես,
Եւ վարդակարմիր ճառճանչներ պէսպէս
Սփռել, զարդարել դաշտեր գեղատես։

Ահա արտուտը, սիրուն սոխակը,
Իր ձագուկներով և ծիծեռնակը

Թռչում են ուրախ կապուտ երկնի տակ
Եւ երգում իւրեանց երգը ներդաշնակ։

Տեսէ՛ք, մինչ անգամ և մրջիւնները
Մաքրում են շտապով իւրեանց բները,
Նոքա շինում են շտեմարաններ՝
Ձրմեռուայ համար ածելու սերմեր։

Դուք էլ, մանուկներ, վա՛ր կացէք շուտով,
Ձեռք ու երեսներդ մաքրեցէ՛ք ջրով,
Եւ դէպի երկինք պարզած աչքերով՝
Աղօթք կարդացէ՛ք ջերմեռանդ սրտով։

Մանուկներ, խնդրեմ, ձեր արդար բերնով
Եւ քանի կաթիլ ջերմ արտասուքով՝
Խնդրեցէ՛ք Փրկչից, որ խեղճ հայ ազգին
Միշտ պահէ անփորձ իւր թեւի տակին։

Խնդրեցէ՛ք Փրկչից սրտով և հոգով,
Որ իւր փրկարար մաքուր արիւնով
Ջրէ, ջարացած հայ ազգի այգին,
Որ տայ արժանի պտուղ իւր հօտին։

Խնդրեցէ՛ք Փրկչից, անմեղ մանուկներ,
Ա՜խ... մեր մէջ ցանէ միութեան սերմեր,
Որ սիրենք միմեանց, որպէս եղբայրներ,
Մի սիրտ, մի հոգի լինինք ողջ հայեր։

Խնդրեցէ՛ք Փրկչից, որ պահէ հաստատ
Մեր Սուրբ Աթոռն 'ի Վաղարշապատ,
Տայ պայծառութիւն մեր եկեղեցուն,
Յարատեւութիւն մեր մաքուր Կրօնին։

Աղօթքից յետոյ՝ դուք զուարթ սրտով
Հարկաւոր գրքեր ժողովէ՛ք շտապով,
Դէպ ուսումնարան արագ քայլերով
Վազեցէ՛ք խկոյն ուսման փափագով։

և նորա իմաստուն ու փառաւոր գործունէութիւնների հետ ծանօթանալ ցանկացողներին կ'հրաւիրէի կարդալ «Սոխակի» հինգերորդ հատորի մէջ՝ 186—195 երեսները։

Գ. Բ. Գրիգորեանց.

Այնտեղ են բոլոր ձեր ընկերները,
Այնտեղ ձեր բարի վարժապետները,
Վարժատունն է ձեր առաջին մայրը,
Վարժապետը—ձեր բարի ծծմայրը։

Թագաւոր, իշխան..., ապայ թէ ապջիկ,
Այս մեծ աշխարհում թէ՛ մեծ, թէ՛ փոքրիկ,
Ուսումով միայն հասան մեծ փառքի,
Ուսումն է ճրագ համայն աշխարհքի։

Վարդենի.

172.

Ի մ է ր գ ը.

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրում,
Մենակ բրսած ծաղկի նման դաշտում։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն ամառ գարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնվում է միշտ այսօր.
Առպարիզիս նեղ է ճանփան ու փոշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»։
Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բոպէ՝ բաղդը ժըպտայ ինձ պայծառ.
«Հա, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը»։

Ցանկալիս՝ փրչեց անառուժելի հիւսիսին.
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին.
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Մէջ, մտեցի՛ր օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հեռը սև հող ու նեղ գերեզման,
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վրաս ծածկած վերմակը։
Բայց, ա՜խ, երբ որ կ՚անցնի տիս ու տարի,
Կրմամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ—կըկորչին.
Բայց կ՚ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր անկործան...
Ես երգեցի երգ ողբոն ու անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թէ այնքան անդութ կ՚լինի Լեռա դեռ,
Որ անունս անգամ կ՚անէ նա անհետ։

Ռ. Պատկանեանց.

173.

Ա զ գ ա յ ի ն ե ր գ.

Հայրենիք մեր շքեղ փառաց յիշատակէ այս նոր,
Եկէ՛ք, եղբարք, հայ զիւցազանց ներբող ձօնեմք այսօր,
Այո՛, այո՛, ներբող ձօնեմք այսօր։
Աւարայր դաշտ, ուր նահատակք անկան հայկայ որդիք,
Պահ մի սրտին նոր աշխուժին վերանան օն մեր միտք,
Այո՛, այո՛, վերանան օն մեր միտք։
Հոն կ՚տեսնեմք Աստուածային և ազգային սուրբ սէր,
Ու միութիւն, որով եղեն հիկու և վեհ հայեր,
Այո՛, այո՛, հիկու և վեհ հայեր։

Երգեմք, եղբարք, քաղցր ի նուագս օրհնեմք քաջաց այն
խումբ,
Որք Պարսից դէմ պաշտպանեցին Ազգն ու հաւատն մեր
սուրբ,
Այո՛, այո՛, ազգն ու հաւատն մեր սուրբ։
Օրհնեալ են միշտ Վարդան, Խորէն, Արտակ, Տաճատ, Համայակ,
Ներսեհ, Վահան, Արսէն, Գարեգին ու սուրբ Վարդանանք,
Այո՛, այո՛, բոլոր սուրբ Վարդանանք։

174.

Ազգկայ երգ.

ՐՍՏ ԵՂԱՆԱԿԻՆ.

Ты душа-ль моя,
Красная-дѣвица,
Ты звѣзда-ль моя,
Ненаглядная.

Հանգիստ, իմ անոյշ, անցար գնացիր,
Միայն վերք անբոյժ սրտում թողեցիր.
Սոխակն գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ զրաւում։

Բեղանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի.
Ցերեկը մենակ փակուած սենեակում,
Ողբում եմ անյայտ, ոչ ոք չէ լսում։

Գիշեր է գալիս—մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս, քունս չէ՛ առնում։
Մաղեր թուխ, երկայն, աչեր զրաւիչ
Ի՞նչ հասակ, ի՞նչ ձայն, ի՞նչ հոգի կարիճ։

Ո՜հ, սիրտս այրուած, ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ յիշում։

Անգութ. ինձ խարեց, ուրիշին սիրեց,
Ա՜խ, նա ինձ դեռ վաղ պատրաստեց դագաղ։

Ս. Շահազիզեանց.

175.

Հայութեան պատգամաւորը.

Հայե՛ր, ա՜խ, հայեր, ի՞նչու դուք այդպէս
Առաջուան պատուից վայր գցեցիք ձեզ.
Ո՞ւր է ձեր նախնի բարեպաշտութիւն,
Ո՞ւր բարք ու վարքի, հոգու սրբութիւն։

Ձեր զաւակները չե՛ն ամուսնանում,
Վայրի տունկի պէս անպէտք են մնում,
Փոխանակ աճել և զարգանալու՝
Դառնում են չոր փայտ, կրակն ածելու։

Թէ երկու ու կէս պատկուողներ կան՝
Այն էլ չե՛ն ջոկում եւ ազգական.
Հայեր, վայե՞լ է այդ սոդոմական,
Զզուելի գործը ձեր բարի անուան։

Շատերն էլ հայի ազգկունքը թողած՝
Այլազգի հետ են ապօրէն կապուած.
Ապրում են անկեանք, մեռնում անզաւակ,
Աստծու և ազգի կամքին հակառակ։

Բազմութիւն հայից չորս միլիոն մնաց
Այդպէս վարուելով՝ ընդդէմ օրինաց.
Հայե՛ր, միթէ դուք չե՛ք խղճահարվում,
Որ այդպէս ազգը կորուստ է մատնում։

Հայե՛ր, պատուեցէ՛ք լուսաւորչական
Ձեր եկեղեցու օրէնք, պատուիրան.
Մի՛ շեղուէք նրա սուրբ կանոններից,
Մի՛ քանդէք հայի այդ տունը հիմքից։

Վերջապէս, հայե՛ր, դուք ամուսնացէք
Հայ աղջկայ հետ՝ հայ կրօնի հոգով.
Հայ աղդի համար դուք պատրաստեցէք
Հայ մարդիկ, կրթուած, խրատուած խելքով:

Ես Կարինն եմ, այսքան ծերացած,
Ձեր յաւից, դարդից մէջքս կեռացած,
Հայե՛ր, խղճացէք, ի սէր Աստուծոյ,
Ինձ ուղարկողին, որ է հայութիւն:

176.

Կարնոյ բանդարկեալներուն.

Ձայնը հնչեց Երզրումէն, հայոց լեռներէն,
Թունդ-թունդ եկան հայոց սրտեր ղէնքի շաչիւնէն:
Հայ դիւդային դարուց 'ի վեր սուրը չը տեսած՝
Դաշտը թողուց, ու հրացան բահի տեղ առաւ:
Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարուեց ու տեղ տուաւ միութեան ձայնին:
Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը խեղճին
Ձեր երդեր հայուն տեսնել նա այս վիճակին:
Եւրոպային հասաւ լուրը հայ դեղջկի շարժման,
Ուրախական ոգջոյն տուաւ հայրենասէրներին:
Ցնծա, մնայր մեր, ո՛վ հայասան, որդիքդ միացան,
Ութը դարու սուգ ու թախիծ քեզնից վերացան:
Ուսումն ու լոյս—ազատութիւն արդ քե՛զ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ոգվի պաշտպան անվիհեր:

177.

Առ Զեփիւռն Ալէմաղի.

Զմեռն անցաւ, դարունն է արդ,
Բլբուլի զէմ բացուում է վարդ,

Լեռներ դաշտեր զորդով ծածկուած,
Կենդանութեան արին նոր զարդ:
Շոշ լուսնեակին
Կոյսն ու ծաղիկ
Միմեանց զբդուին
Սիրատարփիկ:
Ա՛խ, փափկասուն մանկիկ զեփիւռ,
Անուշ հոտով ծաղկանց սիրուռ,
Աղբերց վրայէն լուսակարկաչ
Ինչպէս թռչին կուսին առաջ:

178.

Ղամբարափայլ սրբոյ տօնիս, աւեսիս.
'Ի միտ առցուք զխորհուրդ բանիս, աւեսիս:
Քանզի յերկնից Տէրն խոնարհի, աւեսիս.
'Ի կոյս մօրէ այսօր ծնանի, աւեսիս:
'Ի Բեթղեհէմ քաղաք Դաւթի, աւեսիս.
'Ի գերեզմանէն Եւայի, աւեսիս:
Աստղ մի պայծառ յերկինս յայտնի, աւեսիս.
Առաջնորդէ մոգոց դասի, աւեսիս:

Ղազար վ. Ճանկեցի.

179.

Լեւոն վեցերորդ բանաստեղծ.

Մտաւ արևս երջանկութեան, գլխիս պատեց մութ,
Գլխիս պատեց մութ.
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս ի՞նչպէս անցան շուտ,
Ի՞նչպէս անցան շուտ.
Գիշեր ցերեկ կ'հառաչեմ, չ'կայ ինձ օգուտ,
Չ'կայ ինձ օգուտ.
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս որո՞ւն ես պատմեմ,
Որո՞ւն ես պատմեմ.

Աշխարհ ինձի աւերակ է, մինչ հայէ զուրկ եմ,
Մինչ դահէ զուրկ եմ,
Մինչ թագէ զուրկ եմ։
Ո՜հ, հայրենիք իմ անաւերունչ ցաւոց մէջ հեծէ,
Ցաւոց մէջ հեծէ.
Մի՞թէ սիրոս ապառաժ է, որ չը հառաչէ,
Որ չը հառաչէ.
Իւր հայրենիք, պալատ, զինուորք ի՞նչպէս չ՚յիշէ,
Ի՞նչպէս չ՚յիշէ։
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս, Փարիզ, քե՛զ պատմեմ,
Փարիզ, քե՛զ պատմեմ.
Դու մի՛ լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ։
Ամիս է դար, օրը՝ տարի, ո՜հ, ժամերս՝ ամիս,
Ո՜հ, ժամերս՝ ամիս.
Սէր Կիլիկիոյ անտէր դահոյս լալով կոչէ զիս,
Եգիպտացիք, ազգ խուժադուժ քանդեն հայրենիքս.
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս, Լոնդոն, քեզ պատմեմ,
Դու մի՛ լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ։
Մէջ վանդակիս փակեալ Լեւոն սկզ տխուծն հայոց,
Սկզ տխուծն հայոց.
Բացէք վանդակս, եւրոպացիք, տեսէք զայժն հայոց,
Տեսէք զայժն հայոց.
Վերջին ոյժն եմ, վերջին ճիրան եմ Ռուբինեան գահուն,
Լուսինեան գահուն։
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս էլ ո՞ւմ ես պատմեմ,
Էլ ո՞ւմ ես պատմեմ.
Փարիզ, Լոնդոն աւերակ են, իզուր մորմոքեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ։

Վերջին կտակս ձեզ, ով հայեր, սիրով միացէք,
Հոգւով միացէք.
Ձեր միութեան և սիրոյ մէջ սատար խնդրեցէք,
Փրկիչ խնդրեցէք։
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս ձեզ պատմեմ, հայեր,
Ձեզ պատմեմ, հայեր.
Աշխարհ ձեզի աւերակ է՝ թէ դուք չունիք սէր,
Թէ դուք չունիք սէր։
Ո՜հ, բաց արէք ձեր հին վէրքեր. դուք էք ձեզ խոցած,
Դուք էք ձեզ խոցած.
Հայն 'ի հայոց, ոչ յօտարաց է միշտ յաղթուած,
Է միշտ յաղթուած.
Քէն և նախանձ հայոց ազգի տուն տեղն է քանդած,
Տուն տեղն է քանդած։
Դուք ձեր վէրքեր, դուք ձեր խոցեր սիրով բուժեցէք,
Սիրով բուժեցէք.
Աշխարհ ձեզի աւերակ է, թէ զերար չ՚սիրէք,
Թէ Մասիս չ՚սիրէք,
Թէ կրօն չ՚սիրէք։

Ս. Գնունի.

180.

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
Միշտ ազատ, ուրախ խմում ենք գինի։
Տրա լա լա լա և այլն։
Ամեն սար ու ձոր, ամեն տափ, մերի
Մեր պալատներն են սաղ բոլոր տարի։
Տրա լա լա լա և այլն։
Մեր տատմանը մեզ լաւ է պահում,
Մեր ամեն հոգսը նա ինքն է քաշում։
Տրա լա լա լա և այլն։

Թէ գոլծ պատահի, ու լաւ կատարենք,
Միշտ մեր փայլը մենք հալալ սատանում ենք։
Ցրա լա լա լա և այլն։
Ամեն երկրումը ջոկ անուն ունենք,
Ամեն տեղ սիրող մենք հեշտ ճարում ենք։
Ցրա լա լա լա և այլն։
Ուրեմն խմենք լեք թասով գինի,
Մեղ նման քէֆով ոչ ոք կեանք չունի։

181.

Անվերջ գանգատներ.

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Զունի ուսում՝ խելք ալ չունի.
Խելոքներըս այդ լաւ գիտենք,
Բայց, ա՜խ, միայն մենք կլիսենք։
Մեր խեղճ ազգը հալածած է,
Երկրէ երկիր տարագրած է.
Բաղդաւորներըս այդ լաւ գիտենք,
Գիտենք և միայն կլիսենք։
Հայ մշակը երկիր չունի,
Երկիր չունի՝ հարկ շատ ունի.
Հարուստներըս մենք այդ գիտենք,
Գիտենք և միայն կլիսենք։
Հայի ազան գրքեր չունի,
Վարժարանը վարպետ չունի.
Գիտուններըս այդ լաւ գիտենք,
Գիտենք և միայն կլիսենք։
Հայ տէրտէրը կարգալ չ'գիտէ,
Հայ տիրացուն շատ տգէտ է,
Եպիսկոպոսս այդ ճիշդ գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կլիսենք։

Աչքըս դարձնում արևմուտքին,
Արև ծագէ Սլաւոն ազգին.
Հայի արևն, ահա՛ վեց դար,
Համատարած պատէ խաւար։
Հայի գանգատ, անվերջ գանգատ,
Ցրտունջ ու լաց, սուգ անընդհատ...
Ե՞րբ ապա սատ, ե՞րբ սրոյ շաչիւն,
Փոգի ձայներ, մարտի գոչիւն...

Գամառ-Քաթիպա.

182.

Վահագնի գիշերային այցելութեան երգը

գէպի Աստղկայ ոսկեայ ապարանքը.

Մտաւ Արփին, պատեց խաւար,
Մութ խաւարը գիշերին,
Նինջ ու թմբիր ցանեց Քունը
Լուռ և խաղաղ աշխարհին։
Լուռ է Նաղեկ, ալիքները
Նաղ-նաղելով են ծլփում,
Որ նաղանի Կիւսի նիրհը
Զբաղանդարեն յատակում։
Լուռ է գետը—Արածանին—
Ուշիկ հոսով է հոսում։
Որ Նրհագի ծանր քունը
Զբվերդովէ իւր խորքում։
Լո՛ւռ է անտառ, ո՛չ մի տերև
Զէ՛ սոսափում, չէ՛ շարժվում,
Զի Պարիկը նինջ է ննջում
Իւր մամուապատ անձաւում։
Լո՛ւռ է երկինք, լո՛ւռ է գետինք,—
—Ամենուրեք լռութիւն.

Խաղաղական քաղցր քնով
Քնած է ողջ բնութիւն։
Բայց Աստղունից լեռան վրայ
Դեռ հսկում է զիցուհին,
Քուն կամ հանգիստ մոտ չեն գալիս
Նրա կարօտ աչերին։
Նա տանջվում է իւր անկողնում,
Անկողնումը լուսապատ,
Եւ արփալի հուր-աչերը
Յառած են դէպ՝ Աշխարհատ։
Ահա Տարօն սատանուեցաւ,
Սատանուեցաւ, դղրդաց,
Ամպրոպային ահեղ թնդմամբ
Լեռն ու անտառ որոտաց։
Այդ հսկան է—շէկ Վահագը—
Հսկայական ընթացքով
Տատանում է երկինք, գետինք,
Տատանում է լեռ ու ծով։
Բայց զիցուհու զողարիկ սիրտը
Անուշ զողով զողզողաց,
Երբ զիւցազնի մերձենալը
Իւր ամրոցին նա զգաց։
Կրկին տիրեց լռութիւնը—
Խորհրդաւոր լռութիւն,
Նա զիւցազնին հանգիստ տուեց,
Հանգիստ տուեց իւր գրկում։

Ռաֆֆի.

183.

Աղօթք մանկական.

Մեր փոքրիկ հօրին՝ նայի՛ր դու, Տէր, Տէր,
Տէր Յիսուս Քրիստոս՝ խնամող հոգւոյս մեր։

Երբ քոյ անուանով՝ այստեղ ժողոված
Կարդում ենք այս երգ՝ առ քեզ, ով Աստուած.
Սուրբ Աստուած հզօր՝ Հոգիդ սուրբ ընդ հոր,
Սիրի՛ր քոյ շընորհ՝ մեր մէջ ատատնոր։
Ոսկէք և ժամեր՝ մեր կենաց համար
Սրա՛, որ չանցնին՝ զուր և վայրաբար,
Որով կարենանք՝ այս և այն կեանքում
Ուրախ վայելել՝ բարիքդ անտրտում։
Վասն զի դու ես՝ Տէր մերոց կենաց,
Եւ քեզ կարող ենք՝ հասնել քոց փառաց։
Բարերար Աստուած՝ մեր հոգւոյ աչքը
Բա՛ց, լուսաւորեա՝, տեսնել քո փառքը։
Մ՛ոռ մեզ քո դիրքը՝ օրհնի՛ր դու մեզ, Տէր,
Այն մանկանց նման՝ որոնց օրհնեցիր։
Ցաւել 'ի մեզ, Տէր՝ հաւատ, յոյս և սէր,
Որ քան զամէն բան՝ քեզ սիրենք մենք, Տէր։
Էիդ անմահի՝ միշտ ձայն գոհութեան
Մեր թոթով լեզուից՝ մատչի յաւիտեան։

Մ. Ե. Ս.

184.

Շուայլութիւն.

(Թիֆլիսեցու զանգատներ).

Մէկը, տեհար—շլեսպայով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կոտրն աչքերին՝—
Լուս ընկաւ քո առաջին։
Էսէնց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Պեսերբուրգումը, միթօմ,
Աւարտել է իր ուսում,

Փիլիսոփայ է, կոսես,
Խուրը արկէմն է խոսում։
Էսէնց է, մոդա է և այլն։

Մի ձեռը նա, փրքվելով,
Ունի շալվարի ջիբում,
Կոտրտավելով միւս ձեռով
Իւղած մազերն է քօքում։
Էսէնց է, մոդա է և այլն։

Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,
Մէջքը կոտրած կատւի պէս,
Երբ չափումեն բուրվարը։
Էսէնց է, մոդա է և այլն։

Մէկը, տեհնումիս, պոչը
Թրև է տալիս դայրաթով,
Կոսես, քուչէքի աւլելը
Վիր է կալի փոդրաթով։
Էսէնց է, մոդա է և այլն։

Մէկէլն, օչխարի նման,
Էրնէն կապիլ է դըմակ,
Կոսես, դարբնի մինծ փուքսով
Փըչած ընի իր քամակ։
Էսէնց է, մոդա է և այլն։

Ա՜խ, էն դամբի պէս դոլծած
Էրեանների էն քուղը,
Սապոգների ճռճռոցը՝
Քանդում են իմ ըղուղը...
Էսէնց է, մոդա է և այլն։

Զի՛մ կանայի, հա՛խ Աստծու,
Բարկութիւնն իմ սանձել,

Սկսում եմ վա՛յ տալով՝
Մեր կնանիքն անիծել...
Էսէնց է, մոդա է և այլն։

Էդ անիծուած չար մոդան
Էլ չէ՛ տեւում մէ տարի,
Գէլաքնուրի ծախողն
Էնքան չ՚ունի մուշտարի։
Էսէնց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Յ. Մէլիք-Յակոբեան.

185.

Երգ Հայրենի.

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Յետ դառնաշունչ ձմերայնոյն,
Եւ ի գաւառն իմ Հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն,
Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուողեն նորեկ ծիծառունք,
Ի քեզ ես դարձ առնում յայնժամ,
Ո՛վ յանկալեզ իմ Հայաստան։

Ո՛չ Հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք,
Ոչ քան զ քեզ չքնաղագեղ
Իտալեան պայծառ երկինք.
Հեռի ի քէն պանդուխտ զոլով,
Քոյովդ յար տապիմ անձկով,
Ի խանձարուրդ լմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնում քեզ դարձ։

Գայցեն աւուրք, ուր մանկութեան
Անկցի զկոցս իմ զեղ զալար,

Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթև ի դարշապար,
Ուր հեգ Մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր,
Ջնինջ ի ծոցդ առնում յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Մ. Պէշիկթաշլեան.

186.

Թարգմանութիւն յիտալականէ.

Մնասցես բարեաւ, սէ՛ր իմ, սէ՛ր,
Հրաւէր մարտից որոտաց՝
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց։
Մի՛ լար, հոգւոյս իմ հատոր,
Թ՝անկայց մարտին ես ի դոռ,
Տեսցուք յերկինս մեք զերեար.
Եղբայրադաւ չէ՛ նախանձ,
Որ բոլբոքեալ յիս վառի
. . . . . .
. . . . . .

Մ. Պէշիկթաշլեան.

187.

Երկու քոյր.

Մեղնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալևոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ արգեղ, միւսը գեղեցիկ.

Մի օր արգեղը ասաց միւսին.
«Երթանք ծովի ափ, քուրիկ, միասին»։
Սիրունը գընաց առաջից տրտում,
Տրգեղը եանից օխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրոջ գըլորեց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկէ՛ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քե՛զ լինի, պարգևէ՛ ինձ կեանք»...
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
«Քուրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ՛ բաւական,
Կուտամ քեզ ոսկի պըսակ պատուական»։
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
«Քուրի՛կ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտարունջ»։
Տրգեղի սիրաը դարձել էր ժէռ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար։
Զկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջըրիցը հանեց, դըրեց ափի մօտ,
Նստա ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զորցուց նորա մարմնոյ դիւթ հիւթը։
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մաղերից.
Երբ օր ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.

Երբ մրտաւ դահլիճ շընչեղ զարդարած,
Տեսաւ տրգեղին փեսի մօտ կայնած,
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ պըսակ.
«Լըսէ՛, իմ ծընող, լըսէ՛, սիրական,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան.
«Լըսէ՛, ժողովուրդ, լըսէ՛ անխըռով,
«Հարազատ քոյրըս դըլորեց ինձ ծով»։
Միւսն օր դահլիճքը խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին։
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»։

Ռ. Պատկանեան.

188.

Իտալացի աղջկայ երգ 1859 թուականից.

«Մեր հայրենիք Թշուառ, անտէր,
Մեր Թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչումէ,
Հանել իւր վրէժ, քէն ու օխ։

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատված։

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։

«Նայի՛ր նորան, երեք գունով
Նուիրական մեր նշան.
Թո՛ղ փողփողի Թշնամու դէմ,
Թո՛ղ կործանուի Աւստրիան։

«Ինչքան կին մարդ, մի թոյլ հակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն։

«Ահա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս։

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնէ.
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի։

«Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա, թէև չե՛մ կարող դալ
Բայց իմ հոգին քեզ ընկեր։

«Գնա, մեռի՛ր դու քաջի պէս,
Թո՛ղ չ՝տեսնէ Թշնամին
Քո թիկունքը, թո՛ղ նա չ՝ասէ
Թէ վատ է իտալացին»։

Ասաց, տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մեսաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ։

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,

Առաւ զէնքը, սուր, հրայան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր։

—Քուրի՛կ—կանչեց քաջ պատանին,—
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան։

Նա սուրբ է ինձ, երբ մկրտված
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրված։

Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի։

Ասաց, վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն Իտալեան։

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է,
Տեսանելով այսպէս սէր,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Զէ՛... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

Միքայէլ Նալբանդեանց.

189.

Թուրքաց «Ալաջադաղնան» երգը.

Մայրի՛կ, ինձ հրաման տուր՝ վարժելու գնամ,
Այնալու թուանքս ձեռքիս ունենամ,
Պատերազմից պրծնեմ, կենդանի տուն դամ։
Էս ի՞նչ խարաբ ճանապարհ ա, գնալ գալ չը մնաց,
Աւե՛ր դառնայ Ղարադաղը, ջահել չը մնաց։
Ղարադաղի գլխից աղբիւր է բղխում,
Հայրս լալիս, մայրս էլ—ճամբէս է պահում,
Սիրուհիս անհամբեր ինձ է սպասում։
Էս ի՞նչ խարաբ ճանապարհ ա, գնալ գալ չը մնաց,
Վերան դառնայ Ալաջադաղը, նիզամ չը մնաց։
Ղարադաղ ասածը մի բարձր սար ա,
Սրտիս վերայ քաշուածը էս ի՞նչպէս դաղ ա,
Եարաբ ո՞ւմից հարցնեմ սիրուհիս ս

ա։
Էս ի՞նչ խարաբ և այլն։
Մուխթար փաշան ասաց դաֆայ կը խմեմ,
Մոսկովը տեսնելուս՝ գլուխս կը ջարդեմ,
Կռուի խառնուելու վախտ՝ թողնեմ կը փախչեմ։
Էս ի՞նչ խարաբ և այլն։

Շաւարշ.

190.

Հայի դանդատը.

Մեզի մոռցաւ Հայոց ազգը,
Չի լսիր մեր պաղատանքը,
Տեսնել չուզէ մեր տանջանքը.
Ապա որի՞ն մենք դանդատինք։

Ա՛ստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր—շատ հեռի ես,

Այժմ ալ խոշոր գործերի ես.
Ապա որի՞ն մենք դանդաղինք։

Յոյնը մեզի ասը կ'ասէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը, կ'ասեն, վատ է.
Ապա որի՞ն մենք դանդաղինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրբան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք դանդաղինք։

Մեր տեղը քաջ կարիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուդայ,
Մենակ՝ ճամբայ ցուցնող չիկայ.
Ապա որի՞ն մենք դանդաղինք։

Հայի դաշտե՞ր, արե՞ան դաշտեր,
Շատ կուլ տուին հայի քաջեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելէր,
Մեր դանդատին վերջ կը դնէր։

Գամառ-Քանիպա.
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Ասորեան

191.

Բուրատան *)

Մնաս բարով, Բուրատան, ափսո՜ս, վարդերդ չը տեսի,
Սիրուն տեսքիդ կարօտած՝ պայծառ զարդերդ չը տեսի,

*) Այս բանաստեղծութիւնը, որ փոխաբերական մտքով գրուած է Ղ. Հայոց դպրոցի վերայ, գրել է պ. Գ. Մուրատեանց (այժմ Մելքիսեդեկ Եպիսկոպոս) 1865 թ. ապրիլի 15-ին, Հանդուցեալ Պ. Շանշեանցի նոյն դպրոցում տեսուչ եղած ժամանակ և տպուած է Կ. Պոլիս «Եղծ» խորագրով գրքոյկի մէջ։

Գ. Ֆ. Գրիգորեանց.

Երկնային շաղ ու ցօղով լուացած պատկերդ չը տեսի,
Արշալուսի հետ ծիծաղող՝ բացած աչերդ չը տեսի։

Թողնու�մ էզպէս կիսատ՝ չիմանալով ի՞նչ կը լինիս.
Կը ջրվի՞ս, կը պահպանվի՞ս, թէ թուխպի յուսով կը լինիս.
Կը բացուի՞ս, կը զարդարուի՞ս, թէ ինձ պէս ախուր կը լինիս.
Անպահապան Բուրատանն՝ երբէք զարդարուն չը տեսի։
Մնաս բարով, Բուրատան և այլն *)։

Շատ եմ թողել չափած, ձեռած Բուրատան քեզի պէս.
Հողը փորած, ծառեր տնկած այգեստան քեզի պէս.
Լարով քաշած, ուղիղ շարած ծառաստան քեզի պէս.
Սիրաս միշտ կարօտ մնայ՝ ծառերս ծաղկած չը տեսի։

Միրեցի ես սիրուն պարտէզ՝ լաւ ցանկապատ Բուրատան,
Սերմի համար շատ ման եկայ՝ մերթ Եւրոպէ, միշտ Հայաստան,

Ծաղիկների լաւն ընտրեցի՝ տնկեցի սիրուն ծառաստան,
Աչքերս կարօտ մնացին՝ հասած պտուղները չը տեսի։

Հայաստանի հողի վրայ դրախտի տեսն լսեցի,
Սիրուն տեսքովն սիրահարուած՝ նորա պատկերն նկարեցի,
Անմեղութեան, ճշմարտութեան ցրված սերմերն հաւաքեցի,
Գարնան վերայ ձմեռն եկաւ՝ բացված ծաղիկներ չը տեսի։

Դրախտի սիրովն երված՝ հալածական շատ ման եկի.
Բերրի հողում, մաքուր օդում՝ ես մի պարտէզ որոնեցի.
Հայաստանի սուրբ ջրերն՝ առուներով բերել տուի.
Խարդախներն պղտորեցին՝ անարատ ծաղիկ չը տեսի։

Պարտիզումս տնկեցի ես շատ թզենի ու ձիթենի,
Սողոմոնի այգու նման՝ շատ նոնենի ու նշենի,
Ոսխներ դարան մտան՝ խառնեցին բարդի վայրենի,
Պարտէզս աւեր եղաւ՝ պաղալի ծառեր չը տեսի։

*) Իւրաքանչիւր տան վերջը՝ առաջին տունը պէտք է կրկնել։

Անմեղութիւն որոնելով՝ վարդ, մանիշակ շատ ցանեցի,
Սոխ ու սխտոր պաշտեցին՝ իմ դրացիքս եգիպտացի,
Բուլբուլի տեղ բայղուշ դրին՝ մութն աւերակ սիրեցին,
Փշի մէջ, տատասկի մէջ՝ վարդը բացուած չը տեսի։

Քանի՛ քանի՛ պարահէզներ էսպէս խոպան մնացին,
Կամ հարաւ և կամ հիւսիս խիստ ցօթ ու ցրտով քանդեցին,
Ոչ մէկն չը խղճայ խեղճ քրանաթոր պարտիզպանին,
Գարունն անցաւ, ամառն եկաւ, պարտիզի կարօտ մնացի։

Ծաղիկներս առան, տարան՝ օտար երկիր, օտար սահման,
Ամեն ծաղիկ իր հողն ունի՝ էս մի օրէնք է բնական,
Տէրն ուրիշ տեղ չը անկեց, այլ դրախտն ի Հայաստան,
Հայաստանի բնիկ տունկն՝ օտար տեղ ծաղկած չը տեսի։

Ո՛վ իմ սիրուն Բուրաստան, վարած, մշակած եմ թողնում,
Ի՞նչ կը լինիս, չե՛մ իմանում, սիրտս շատ կոտրած եմ թողնում,
Ջրերդ օտար ականից՝ մշակվ հարբած եմ թողնում,
Ո՛չ մի անտէր այգեստան՝ ծաղկած ու հասած չը տեսի։

Բուրաստանն անտէր, անջուր, պարտիզպանն ո՞նց կը թողնի՝
Մատաղաշ որդին օտար յուսով լաւ ծնողը ո՞նց կը թողնի,
Սոխակին վարդից խլումն՝ խեղճ սոխակը ո՞նց չը թողնի,
Բաժանած սիրտը սէրից՝ երբէք վիճիթար չը տեսի։

Քո անուն, քո յիշատակ՝ սրտումս պահած կը լինի,
Սրտի պէս Բուրաստան՝ ո՞վ երբէք տեսած կը լինի,
Սրտի մէջ բուսած վարդն՝ շարունակ ծաղկած կը լինի,
Անմեղութեամբ վառուած սիրտն՝ երբէք անապատ չը տեսի։

Աշուղի շնորհք չունիմ՝ քո սէրն ինձ աշուղ կը լինի,
Սէրն շատին լեզու տուաւ՝ ինձ էլ սիրտն կը լինի,

Համ կ'երգեմ, համ կը կանչեմ՝ քանի բերնումն շունչ կը լինի,
Իմ Բուրաստան, իմ Վարժարան, ա՜խ, ես քեզ ծաղկած չը տեսի։

Գարեգին Մուրատեանց.

192.

Արամ—երգ.

Մեր քաջ հայոց զօրութիւնք,
Վի՛ր կացէք, ասաց Արամ,
Առաջեաւ բացէք նշան,
Գնանք հայ լեզուն տարածենք.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։
Նիւքար զսարուին Ասորին
Բարբառ զոչէ առաջին.
Գլուխն յաշտարակ մեխեցէք,
Որ յերկնից սորուի հայերէն.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։
Յորդան տուք զօրք, օ՛ն, յորդան
Դէպ ի կողմն Արևմտեան,
Պայտպես Քաղեայ Տիտան,
Դիք ի ասպատ ի դամբան.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։
Յորդան տուք, օ՛ն, զօրք յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան,
Բընքուշախօս ամբոխին
Տալ ըղձեղու հայկական.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։
Ո՛վ չըգիտէ հայերէն,
Ոչ ճանաչէ հայ նա զՈրէն,
Որ բանիւ հայոց արար

Այս մեծ աշխարհ մեզ համար.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։
Ի ծովէ մինչև ի ծով
Թո՛ղ խօսին հայ բարբառով.
Ներհակողին նիզակով
Ցուցէք, ո՛հ, ասայ Արամ.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ։

193.

Առ աստղն Հայրենեաց.

Մեր սիրուն հայրենեաց
Բևեռը շողշողող,
Մեր սիրուն քաջազանց
Ամբիւններն ցարդ հսկող։
Պայծառ աստղ, որ այժմիկ
Լոյսդ կընես թափանցիկ,
Մինչև հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց։
Ո՛վ քաղցր լոյս դու մխիթար,
Տարագիր հայոցս թշուառ,
Ի՛նչ աշխոյժ նոր ի նոր,
Ի՛նչ աշխոյժ ոգևոր
Կարծարծ ես սրտերնուս,
Ով հայոցս միակ լոյս։
Զէ՛, ալ չ՝վհատինք բնաւ, ո՛վ հայեր,
Մեզ քաջալեր են լոյս և ժամանակ.
Զէ՛, ալ չ՝վհատինք բնաւ, ո՛վ հայեր,
Ժամանակին հետ յառաջ ընթանանք.
Յառաջ ընթանանք հոն, ուր հրաւէր,
Հրաւէր կարդան մեզ նախահարց աստղեր.
Թէ հայկայ որդիք եմք,
Թէ հայկայ արիւն կրեմք,

Ամենքս էլ ի սուրբ սէր
Հայրենեաց ի նուէր.
Քաջ որդիք պանծալի
Ըլլամք միշտ արժանի։

194.

Մայրենի լեզու.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յոդուած.
Մանկական լեզուիս թոթովանք տրկար
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար։
Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցրը հնչում ես ինձ դու.
Կամիմ ասելի քաջ ծանօթանալ
Քո ձոխ գանձերին, հոգւով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից։
Հընչի՛ր, դու, հընչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի՛ բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու մոռացած վաղուց.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով։
Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է այո՛ միւս ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրբոյ սէրը յայտնել արժան էր.
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

Ստ. Նազարեանց.

195.

Ուսիր առաջ քո մայրենի լեզուն.

Ծառայել հայրենիքին և օգնել նորա կարիքներին կարելի է այն ժամանակ, երբ դու տեղեակ ես նոցա, երբ դու ուսումնասիրել ես նորա պիտոյքները, երբ դու իմանում ես քո ազգի լեզուն: Ամենայն ուսման հիմք և գիտութիւն ստանալու միակ և ճիշտ ճանապարհը լեզուագիտութիւնն է, և եթէ դու կամենում ես կարդով ու հեշտ սովորել ուրիշ լեզուներ, աշխատիր ուսանել նախ քո մայրենի լեզուն: Լեզուն է ազգայնութեան առաջին և գլխաւոր նշանը. լեզուն է այն միակ կապը, որ ազգի անդամներին կապում է միմեանց հետ. այս պատճառով կարելի է ասել, թէ իւր մայրենի լեզուն չիմացողը՝ համարեա թէ իւր ազգութիւնից հրաժարած և իւր ազգից օտարացած է: Սա բնութիւնից գրած մի պարտականութիւն է, որ մարդս իմանայ իւր ազգի լեզուն. այս բնական պարտքը նոյն իսկ վայրենի ազգերը կատարում են ճշտութեամբ, չնայելով, որ նոցա լեզուն անկիրթ է, աղքատ, չմշակուած. ուրեմն որչափ անպատշաճ բան կ՚լինի, եթէ մեկը ազնիւ, հարուստ, հիմնաւոր և մշակուած լեզու ունենայ և չկամենայ սովորել: Բայց մայրենի լեզուի գիտութիւնը բացի օգտակար լինելուց, պարտք էլ է. ամեն մարդ պարտաւոր է իւր հայրենիքին և ազգին ծառայել, բայց այս պարտքը մարդս չէ կարող ըստ արժանոյն լրացնել, եթէ իւր լեզուն լաւ չիմանայ: Այս պատճառով ուսեալ և կրթեալ ազգերի մէջ մեծ ամօթ և նախատինք է իւր լեզուն չիմանալը և շատ անգամ ընկերութիւնների մէջ այսպիսիներին չեն ընդունում և նոցա երեսին չեն մտիկ տալիս: Ուրեմն ամենայն մարդ՝

իւր ազգային պարտականութիւնները կատարելու համար՝ պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, որով և կարողանայ իւր ազգի հետ միանալ, նորա ուրախութիւններին ուրախակից և նեղութիւններին վշտակից լինել:

«Մայրենի լեզու».

196.

Քաջ Վարդան Մամիկոնեան.

Մեր նախնիքը ազգի համար
Իւրեանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ անկրկիզ
Սուրը առած վազեցին:
Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախոյսը մեր հաւատն էր.
Սրանով նրանք քաջ անունը
Իրաւամբ ժառանգեցին:
Նախնեաց փառքին ժառանգաւոր,
Ժառանգ է մեզ քաջ Վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրը հաւատոյ վեհ պաշտպան:

197.

Մեծափառ ալքայն մեր
Ի մարտ կամի ելանել,
Լարեցէք աղեղներ,
Որպէս մեզ վայել:
Մանուշակ ու շուշան
Թող զարդարեն ճանապարհ,
Անդադար թող ծափ տան
Սար, դաշտ ու անտառ:

Հնչեցէ՛ք փողերն
Անուշաձայն երգերով,
Այսօր քաջ արքայ մի
Կամի ելանել։
Կեցցե՛ս դու, քաջ Վահան,
Դու յառաջ, ծն, յառաջ,
Նետերից շատ պարսիկ
Թող գլորվին տրոփ, տրոփ։

198.

Երեկոյեան երգ շինականաց.

Մարդս եկաւ, եկաւ դաշտից՝ դաշտիցը,
Կանանչ դաշտից, դալար դաշտից տուն եկաւ,
Տուն եկաւ ու դուռը դրեց նըստեցաւ.
Շալկին խուրձ էր, խուրձ ցորենի, արտիցը։

Խուրձըդ վե՛ր դիր, Թող բաց անեմ թոկերը,
Մէջ-քէդ առնում այդ սուր, այդ սուր գերանդին,
Սուր այդ, սուր այդ գերանդիով հնձել ես,
Հնձել ես ու խուրձ կապել ես ցորենը։

Մ՛խ, ճակատըդ թայ է եղել քըրտինքով,
Թող ճակատըդ, Թող որ սրբեմ իմ ձեռով, իմ ձեռով,
Իմ ձեռովս գոտիդ բացեմ՝ խուրձըդ առնում իմ ձեռով,
Խուրձըդ առնում—ծանրը բեռըդ շալակէդ։

Սառը ջըրով ձեռըդ լուա՛, ոտքըդ լուա՛, երեսըդ,
Ձեռքիդ, ոտքիդ ես ջուր կ՛ածեմ, երբ լուանաս երեսըդ.
Սրբի՛ ձեռով քո երեսէդ քըրտինքըդ,
Գլուխըդ լուա՛ սառը ջըրով, ձեռքդ, ոտքըդ, երեսըդ։

Ես քեզ համար հաց թխեցի, սիպտակ, փափուկ գարեհաց,
Ես քեզ համար պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր.

Գառան մըսէն շամփրի վըրայ խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած։

Կուժը լեքը կարմիր գինին դըրած է,
Իմ ձեռագործ կըտաւ սուփրան փըռած է.
Ձեռըդ լուա՛, հանդստացիր, իմ սիրական ամուսին,
Լուսնիակը երևում է երկնքումը փայլելով,
Պատուհանէն լոյս է ձըգել սուփրի վըրայ շողալով։

Երևում է հացն ու կաթը, պանիր,
Երևում է կարմիր գինուց սափորը.
Մէկ ես, մէկ դու, մէկ պահապան հրեշտակը
Ուտենք, խմենք ու զոհանանք Արարչէն,
Հանդըստանանք աշխատանքէն, որ քաշեցինք ցերեկը։

Ռ. Պատկանեան.

199.

Երգ ուսանող մանկանց.

Տաճկական «Սեաստապոլ»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Մահկանացուդ դու՝ բաց դուռն սրտիդ,
Արագ արագ,
Որ կարողանաս խօսք տալ մոքիդ։
Ես ինձնից երբէք չեմ կարող ոչինչ,
Աւա՛ղ աւա՛ղ,
Ճառել և գրել գոնեա և փոքր ինչ։
Սուրբ գրքի խօսքերն սէր են քարոզում
Արագ արագ,
Որով միայն կարեմք բնակիլ երկնքում։
Բոպէք և ժամեր՝ քո կենաց համար,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Պատրաստվել են որ՝ հոգւոյդ առնես ճար։

Ո՛վ դու կարդացող՝ զաւետարանն սուրբ
Արագ արագ,
Արծարծելով միշտ՝ կարդա՛ անդադար։
Վերջինդ մի՛ա բեր՝ բարի գործ գործի՛ր,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Հաւատա, յոյս և սէրդ՝ գործքիդ հետ խառնի՛ր։
Բայց ողորմութեամբ քաւել մեղքերդ
Արագ արագ,
Զանց չ՚առնես երբէք՝ պատուէր եղ Տէրդ։
Ամեն օր և ժամ աղօթքով միայն,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Զարդարի՛ր հոգիդ՝ ու անձդ համայն։
Ցաւխեան էլ դու՝ ցաւ, վիշտ, նեղութիւն,
Արագ արագ,
Զե՛ս տեսնիր երբէք՝ այլ սէր, ցնծութիւն։
Էին անմահի՝ զոհութիւն, պատիւ
Արագ արագ
Մատուցցուք ամենքս՝ օրերով անթիւ։

Մ. Ե. Ս.

200.

Մ ա ր շ։

Մեղ նոր արև ծագէ, բացուի լոյս բոցավառ,
Մեզ առաջնորդ սուրբ երէցներ, ունինք խաչ ու խաչվառ.
Զօրավա՛ր քաջ Վարդան, դիմենք յառաջ 'ի սուր,
Դիմե՛նք բանալ կենաց շաւիղ, հայեր, մեր առաջներ.
Հարսանեաց հարսանեաց սուրբ հանդիսարան,
Մեզ նոր ուխտ կանչումէ լինիլ փրկիչ կրօնի, փրկիչ
հայրենեաց.
Հայոց ծաղկունք թոռմին, հայերք թէ պղծուին,
Մեզնից ցող ինկոց բուրմունք կամին.

Զէնքեր պատենից մէջ եռ գան կրակ դարձած,
Պարսից արեամբ հանգուցանել խնդրել զբազուկս քաջաց.
Նժոյգներ խրխնջան, զերկիր փորեն, տոփեն,
Դիմենք յԱրտաշ դաշտ, դիմենք յԱւարայր
Մեր հայրենիք, մեր ազգութիւն, կրօն,
Գալ ժողովել 'ի սուրբ տօնս, հրաւիրել զամեն հայս։

201.

Գ ի շ ե ր ը Վ ա ն ա ւ մ։

Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանման իր լուսով։
Նա նայում էր—լռիկ-մընջիկ՝
Իբրև մի կոյս դէպի Վան.
Նորա աչքերին երևում էր
Բիւր ցաւալի տեսարան։
Նա տեսնում էր անթիւ Քրդեր՝
Բռնած սուր, թուր, հրացան՝
Կոտորում են... կողոպտում են...
Աւերում են Հայաստան...
Եւ կարծես թէ երկինքիցը
Ասում էր այդ լուռ վրկան.
«Վերա՛յ հասիր, հայ-ազգասէր,
«Զեռքից զընաց Հայաստան...»։

Սիմէօն Սափարեանց.

202.

Ա ն ո ւ ր ջ ք։

Յամասվերջն Ապրիլի զպատուհանս բացի,
Զէիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի։

Արտասուք եռանդունք դայտս իմ այրեցին,
Զի անդարձ դերութիւն յուշ իմ մուտ ածին։
Լեղուապէս դառնացան վէրք վրհատ հոգւոյս,
Թրմրեցան ղդայարանքս, հատան ելք շնչոյս։
Ափսոս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի 'ի ծննդեանս վատ օր։
Մաշեցայ, թոշնեցայ, մրսի խոր 'ի քուն,
Զչար կսկիծ հէք դերւոյս արկ 'ի ծով անհուն։
Դըշխոյն մեծ անմահիկ եղ ինձ յայց աեսլեամբ,
Որպէս թէ 'ի փոսոյ ղես ելոյծ ձեռամբ։
Աներկմիտ մնա մատեայ 'ի համբոյր ոտին
Գերբնապէս սքանչելեօք ղես ազատողին։
Բամք ձայնեղ թըռչնակաց ձոխ դայլայլեցին,
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին։
Երանի ասացէ՛ք կարմրացայտ վարդիս,
Քաջալերս տուք նըմա 'ի գով պաշտպանիս։
Աւաղ իմ նեղասիրտ կարձամիտ լալոյս,
Զիա՞րդ ղես կարծեցի կորուսեալ անյոյս։
Նախատինք իմ նեղչայ նեաք եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց։
Ցաւագնեալք՝ օրհնեցէ՛ք զանուն Տեառն յաւէտ,
Դի՛ք զլոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ։

Յ. վ. Ալամդարեանց.

203.

Նոր տարուայ մաղթանք.

(Հայ մանուկների համար).

«Արևն ելաւ, Զէյթունցիներ».
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Յաւիտենից անմահ Աստուած,
Տէր և իշխան ժամանակաց,

Լսէ՛ մեր ջերմեռ աղաչանքներ,
Արտասուաթոր պաղատանքներ։
Ո՜հ, Աստուածային ողորմութեամբդ՝ Բարերար,
Օ՜ն, ցրուէ՛ մատաղ մեր սրտերի խոր խաւար։
Նոր տարւոյս հետ մեզ նոր հոգի
Տուր միտք, նոր լոյս ծագէ, Ա՛ստուած,
Լցուած բարի գիտութիւնով,
Ջ՛հնանք միշտ խեղճ շուարած.
Ո՜հ, բա՛ւ է, ոլքան ագիտութեամբ տանջեցանք,
Օ՜ն, արժան արա քո շնորհաց, որ ցնծանք։
Նոր տարւոյս հետ մեր խեղճ ազգին
Տուր սէր՝ սրտով սիրել միմեանց,
Տալ թև թևի, տալ մէջք մէջքի,
Միշտ ունենալ բարի նախանձ.
Ո՜հ, Տէր, խորտակէ՛ տակլութեան չար ոգին,
Օ՜ն, տուր միութեան հոգին թշուառ հայ ազգին։
Նոր տարւոյս հետ այդ արա, Տէ՛ր,
Մեր անուշիկ հայրենիքին,
Ազատ լերան ծեր դաղաթէն
Թող փայլի մեր յուսոյ արփին.
Ո՜հ, տուր կիսափուլ տաճարներիդ շինութիւն։
Օ՜ն, թող ամեն տեղ փայլի խաչիդ զօրութիւն։
Նոր տարւոյս հետ վիշտ, տառապանք
Հեռու, հեռու կորչին մեզնից,
Եւ կենսատուր լոյս մի ցոլայ
Այրարատեան մայր Աթոռից.
Ո՜հ, հովուապետին մեր զօրացո՛ զաւազան,
Օ՜ն, Տէ՛ր, քո աջովդ կնքէ գիր մեր փրկութեան։
Մեր եղբայրնե՛ր, մեր քոյրիկնե՛ր,
Լա՛ւ աշխատանք ուսում առնել,
Սիրե՛նք անխոնջ կարդալ գրել,
Մեր ծնողաց յոյս պատկել.

Ո՜հ, մեր սրտացած շնորհքներով նոր տարիս,
Օ՜ն, շնորհաւոր թող լինի մեզ ամենիս։

Յովսէփ վ. Փինաչեանց.

204.

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ ել ի տուն,
Մի՛ հարցանէք—ո՞վ էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսաղեղ։

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ի՜նչ օր էր և ի՜նչ ժամ,
Ցորում տեսի ես կեանք նոր։

Լիաձրրաղ յայնմիկ տան,
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Ցոտին կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տան,
Զոգիս դրաւեաց յիւր 'ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտափայլ մարմին էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիքն վարսք քարշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմաց շքեղ երևոյթ,
Ցօնից աչաց այտից դեղ,
Շրթանց, լեզուին համանոյշ
Խոստանային ինձ կեանք նոր։

Մէջ ասացի, թըմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ
Զաշխարհ համայն մոռացայ
Ի դեղ կուսին ափշեցեալ։

Բամբ կոչելոյն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բաղդ մախային,
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին։

Եթէ զաշխարհ լի գանձիւք
Ինձ ոք բաշխէր ի պարգև՝
Ո՛չ տեսանէր այնքան լախ,
Որքան 'ի գալս առ կուսին։

Արդեօք՝ զուցէ՞ յաշխարհի
Սիրոյ նման ինչ հրզօր,
Սէր ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

Նանրախորհուրդ ազգ մարդկան՝
Շատ մի՛ սիրեր զու զաշխարհ,
Նա թշնամի է անդուլթ,
Զար քան զքարբ մահաթոյն։

Ցանցիւ սիրոյ զքեզ կարթէ,
Ի հաղբ անել ըմբռնէ.
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ։

Յ. Վ. Ալամդարեանց.

205.

Օրօրք Հայկական.

Ննջեա՛, Վարդան, անուշ քնով,
Օր օր կ'ասեմ ու նանի,

Քընոյ հրեշտակն իւր թևերով
Օր օր օր օր իմ զաւակիս,
Օր օր կ'ասեմ հրեշտակիս։
Ննջեա՛, ննջեա՛, անուշ զաւակ,
Շուտ մեծացիր և մարդ դառ.
Լեր պիտանի հայրենիքիդ,
Հայրենիքիդ քո թշուառ։
Օր օր և այլն։
Գիտե՞ս, արդեօք, ո՞վ էր պապդ,
Եւ ինչ գործեր նա արաւ.
Նա Վարդանն էր, որ իւր գործքով
Հայրենիքին փառք բերաւ։
Օր օր և այլն։
Քո անունն էլ նոյնպէս Վարդան,
Քաջ Վարդանին նմանի՛ր,
Նորա տուած օրինակով
Հայրենիքիդ ծառայի՛ր։
Օր օր, և այլն։
Գիտացի՛ր որ ամենայն մարդ
Պարտական է իւր ազգին
Սիրել, օգնել և թէ պէտք է
Հայրենիքիդ ըզհ լինել։
Օր օր, և այլն։
Դէ՛հ, մեծացի՛ր ու քաջացի՛ր,—
Ազգիդ վերայ մտածի՛ր,
Զեռքդդ եկած ամէն բարիք
Նորա համար մի՛ խնայիր։
Օր օր և այլն։

Կ. Մամիկոնեան.

206.

Երգ Աւարայրի.

Ռուսաց «Осѣдляю коня»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Ելոյդս կ'թամբեմ և աշխոյժ ու արագ
Կ'սլանամ, կ'թռչեմ դէպ 'ի դաշտն Աւարայր.
Եւ այնտեղ Վարդանի սուրբ շերիմն խնկելի
Կ'գտնեմ, կ'համբուրեմ և կուրծքիս կ'սեղմեմ։
Կ'պատմեմ ես նորան իւր որդւոյ քաջութիւն—
Թէ ինչպէս նոքա սուրբ պահում են ազգութիւն.
Կաթնահամ աղբերաց և կործան տաճարաց,
Հաղարապոյն ծաղկանց, մաքուր ջինջ վտակաց.
Այլ ա՜ւաղ, դեռ շատ կան անտարբեր մարդիկ
Անզգայ հայրենեաց դառն վիճակին.
Այլ ոչինչ և նոքա կ'դառնան, դեռ յոյս կայ,
Կ'բացուին աչքերը, կ'հասկանան ազգի սէր։
Սակայն դառն է վիճակ տարաբաղդ ազգիս,
Վերատին կորուստ սպառնում է նորան.
Եւ մուսայն Մասեաց ձեռքը ճակատին
Լալիս է, արտասվում, այս խօսքերը կրկնում.
«Սպառեցաւ ազգ հայկեան, այլ տեղ գաղթելով,
Եւ բաղդից իւր դաժան յաւէտ տանջուելով»։
Այլ ոչինչ և նոքա կ'դառնան, դեռ յոյս կայ,
Կ'բացուին աչքերը, կ'հասկանան ազգի սէր։

207.

Մանկունք Հայկայ.

Նորաբոյս խայտիք մանկունք Հայկայ,
Օն մատիք յայս վեհ հանդէս.
Զի զուարթուն հոգին հայրենասէր

Ի Մասեաց դիմէ ցայս վայր։
Մատերուք, ձայնէ, շառաւիղք իմ,
Որք անդուլ ցանկայք դուք առ իս,
Զի ես տամ խոնջեալ ձեր ճակատուն
Պանծաշուք պսակ փառաց։
Սուրբ պսակաց հասին ժամք,
Օն, ճեպեսցուք, բարեկամք,
Առեալ զնուագ ներդաշնակ,
Երգեսցուք զերգս նոր։
Վասն յարկիս պերճ հանդերձանք
Ազգին ի մեզ սրտից հրճուանք,
Կայտառին բարձունք ի լոյս համակ,
Բերկրապատար հրճուեսցուք
Ի սոյն հանդէս զեղաշուք։
Նորահրաշ բերկրութեամբ
Դարձ առնէ արդ դարուն,
Լուսափայլ շողշողեն
Մեզ արփին գեղաշուք։
Ծաղկասփիւռ զարդարին
Բուրաստանք բանաւոր,
Քաղցրաձայն նուագէ
Աստ երգանք հոգեւոր,
Զերգս սիրոյ յորդոր։

208.

Ի սուրբ Վարդանանք.

Նորահրաշ պսակաւոր և զօրազլուխ առաքինեաց. վասն զի զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու. Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր զԹշնամին. վարդապոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի։

Երկնաւոր Թագաւորին զինու յաղթեալ պատերազ-

մին. խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս. Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի. խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ։

Բենական լուսով լցեալ արիացեալն քաջ Արտակ. Թաթաւեալ 'ի կարմրութիւն բոսորային բըղխեալ աղբիւրն. զվիրական ըմպեալ զբաժակ և մկրտեալ արեամբն իւրով. դասակցեալ ընդ անմարմինսն՝ երրորդութեան երգել զփառս։

«Շարական».

209.

Ստեփանոս Նազարեանցի տապանագիրը*).

Շիրիմ, բացիր դու մայրական քո ծոց՝—
Կենդանի մեռեալ է գալիս քեզ հիւր.
Հողածին մարդ է, բայց լուսոյ որդւոց
Ծանում է երկրիս զիտութեան աղբիւր։

---

*) Ստեփանոս Տէր-Եսայեան Նազարեանցը ծնուած է 1812 թուին, Թիֆլիսում, և սկզբնական կրթութիւնը սկսելով Ղարաբաղցի Պօղոս վարդապետի մօտ, շարունակում է Ներսիսեան դպրոցում 6 տարի և աւարտում այնտեղ։ Սորանից յետոյ Նազարեանցը գնում է Դորպատ և տեղական համալսարանում բարձրագոյն կրթութիւն ստանալով՝ աւարտում է իբրև ամենաառաջադէմ ուսանողներից մինը, և, իբրև արևելագէտ, պրոֆէսոր է նշանակվում Կազանի համալսարանում և ապա 1848 թուին Մոսկվայի Լազարեան ճեմարանի Լիցէօնում բարձր մասնագիտական դասատուների համար Պարսկական և Արաբական լեզուների դասախօս հրաւիրվում։

Նազարեանցը յայտնի էր ոչ միայն հայ հասարակութեան ընթերցող դասին, իբրև յայտնի գրող, հայագէտ, այլ նա յայտնի էր, նոյնպէս, թէ ռուս և թէ եւրոպական գիտնականների շրջանին՝ իբրև լեզուագէտ։ Նազարեանցի համար մայրենի լեզուի մշակութիւնը կեանքի խնդիր էր, այդ պատճառով նա սկսեց

Թող հանգչի սորա սուրբ ոսկրները
Քո մշտախաւար, լուռ խոնաւ գերեզման.
Քանի լուսինը, արեգն, աստղերը
Պայծառ փայլում են կապոյտ երկնքում,
Քանի որ Ստեղծողն արարիչ ձեռքով
Չէ կլարել երկրի գոյութեան թելը,
Սորա անունը խունկ ու սաղմոսով
Անվերջ կը յիշուի Հայաստանումը:

Երջանի՛կ շերիմ, ընդունի՛ր դորան,
Դա չէ՛ լոկ գիակ հողածին մարդու.
Դա իր մէջ ունի մի ճոխ շաւիմարան
Հայոց աշխարհի գրականութեան:

հիմն դնել աշխարհաբառ, կենդանի լեզուի զարգացման, որից տարածուեցաւ և շատ տեղեր:

Նաղարեանցը, համարձակ կարելի է ասել, առաջինն էր, իւր ժամանակ, որ եռանդով պարապում էր գրականական ասպարիզում, որի հետևանքն էր նորա մի քանի ուսումնական գրուածքը: Նա իւր աշխատութիւնների մէջ աւելի և աւելի ժողովրդականութիւն սացաւ «Հիւսիսափայլ» ամսագրի հրատարակութեամբ, սկսած 1858—1864 թիւը: «Հիւսիսափայլը», այդ բառի ընդարձակ իմաստով, կատարելապէս փայլում էր իւր գեղեցիկ և օգտակար յօդուածներով, որոնք սէր և եռանդ էին զարթեցնում ընթերցողի սրտի մէջ և նորա հոգու քնարի լարերին մի առանձին զարկ տալիս: Հէնց այս բոպէին էլ, որ այս տողերը գրում եմ, «Հիւսիսափայլը» ժողովրդի մէջ հաղուագիւտ գիրք է համարվում ընթերցանութեան համար, որի եռևից ճրագով են ման գալիս: Նաղարեանցը, որ երբեմն կեանքի բարօրութեան և ազգային և ընդհանուր գործերի մասին շեշտելով և դղրդելով էր խօսում, վերջին տարիներում, գրեթէ, լռութեամբ է անցնում և, վերջապէս, 1879 թուի ապրիլի 26-ին մեռանում է 67 տարեկան հասակում, թողնելով ազգի մտածող դասին խոր ցաւակցութեան մէջ...

Գ. Բ. Գրիգորեանց.

Դա արևմուտքից ուսման քաղցրիկ ջուր
Բերաւ ու արբոյց Հային, իր որդուն.
Դա «Հիւսիսիցը» գիտութեան «Փայլեր»
Ալեակից նորա ամպամած հոգուն:
Դա առաջինն էր, որ յանդգնեցաւ
Գերեզման փորել գրաբառ լեզուին.
Դորանով ծաղկից և շունչ ըստացաւ
Կենդանի խօսքը—բարբառը Հային:

Դա ներկայացաւ իր ազգին պէս մայր,
Որ ցաւով ծնեց աշխարհիկ լեզուն.
Դորան չը ազգեց խօսքը—բիրտ, յամառ
Իր ընտրած շաւղում (անյաղթ գիտութիւն):

Դա դրցեց Հայի թրմրած կեանքի մէջ
Մի զարմանալի յեղափոխութիւն.
Դորանով վառուեց կրքակը—անշէջ
Մայրենի լեզուի Հայ սրտերի մէջ:

Սիմէօն Սափարեանց.

210.

Պլպուլն Աւարայրի.

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ դիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ պլպուլիկդ երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ հոգւոյս հետ.
Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրբոտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ Թունա առաւ.
Ի խաչին թեւէն թրուայ ու հասայ
Գրտայ զքեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ:

Պլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին,

Եղիշեայ հոգեակն է քաղցրաղբուցիկ,
Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ.
Զրմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
ՅԱրտաղ գայ զգարուն ի Թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մ՚արդեօք տայ Վարդան։

Հ. Ղ. Ալիշան.

211.

Յաղթական երգ.

(Մարշ Նապոլիոն Ի-ին).

Ո՞վ երջանիկ օր, անկաւ էար Նապուհ,
Հայոց աշխարհի անհաշտ թշնամին,
Այժմ վատ պարսիկ ու թշուառական
Պիտի հնազանդի մեր արի սրին։
Կեցցէ՛ վեհ Արշակ, քաջ, առիւծազօր,
Կեցցե՛ս յաւիտեան, ո՛վ դու մեր ալքայ,
Դեռ քո պէս ոչ ոք չէ՛ եղել հզօր,
Մատաղ քեզ մեր կեանք՝ երկինք են վկայ։

212.

Հայ հանճար.

Ո՞ւր ես, Հայ հանճար.—անցե՛ր ես, անցեր...
Հին և երկայն դարք այլ և այլ բազդով
Մեր Հայ հայրենեաց վրայէն սահելով՝
Սև ու սպիտակ քօղերով պատեր
Զաղուորն այն ծածկեր,
Անցե՛ր են, անցե՛ր։
Այն աշխարհ՝ որ շատ աշխարհաց մայր էր,
Որ սփռեց զազգեր մինչ՚ի ծայր երկրի,

Արդեամբ իր հողուն մատամբ ճարտարի՝
Լեցեն զրկերով տանէր ու բերէր
Զանազան բերքեր,
Անցե՛ր է, անցե՛ր։
Այն որ զառաջին շինուածն է կանգներ,
Սարերն ծածկեր հանց փտտած տախտակ,
Պատերով պատեր ըզծովուն յատակ,
Բերդի տակ, լերան զրլուխ դեռ քաշէր,
Զանդունդ կամրջէր,
Անցե՛ր է, անցե՛ր։
Հայրենեաց պաշտպան զէնքով զէնք քշէր,
Հիւսսի հարաւոյ գներ զէմ վահան.
Վազէր յարևմուտս, յԱթէնս հմտական,
Հելլէն հանճարոյն զէմ զՆայն հանէր՝
Անդաղթ հոչակեր,
Անցե՛ր է, անցեր։
Թ՚ոպ... լըսէք թմբկին... թ՚ոպ. թնտան սրտեր.
Հայրենեաց է ոճն, հայրենեաց համբաւ.
Ո՞վ լաւք, ո՞վ քաջք, ձեզ վարձք հոչակեցաւ.
Արի՞ւն և քրտի՞նք, ձեզ կապուին թագեր...
Հա՜յ.ք, ո՞ւր արդիւնք ձեր.—
Անց՚եր է, անցեր։
Պարեն պատանիք, ծիծաղին ծերեր.
Կուսանք ամբիխածք վարդերով վառուան,
Պարկեշտ երախտեաց գովեստք բարձրացան.
Առաքինութիւնք, ահա՛ պատիւ ձեր...
Հա՜յ.ք, դուք լոկ անտէր
Անցե՛ր է.ք, անցեր։
Անցա՞ն, մարեցա՞ն ուրեմն հայ լուսեր...
Ա՜հ, Հայաստան, ո՞ւր քո փառքն փայլուն.
Ո՞ւր քո ճարտարաց աշխատանքն անհուն.
Ո՞ւր քաջ և զիտուն որդւոցդ արդիւնքներ.

Ո՞նց քո բիւր փառքեր,
Անցե՛ր են, անցեր...
Անցիք դուք այլ սև սրտիս սև ամպեր,
Անկէք հայ հողուն սև քարին վրայն...
Ո՜հ, քանի՞ հազար կանգուն լայն ու երկայն.
Ո՜հ, ո՞նց ցեղուցեղ անձինք հոն եկեր,
Եկեր ու անկեր՝
Անցե՛ր են, անցեր։
Ըզսև գիրն հայոց՝ կարդացէ՛ք, ազգեր,
«Կարկառ Հանդստեան տոհմի տան Հայկայ,
Համարի 'նդ մեռեալս և ինքն 'ի քուն կայ»։—
Մեռեալ չեն ուրեմն հայ հայրենիք մեր.
Հայաստան անկեր՝
Բայց ո՛չ է անցեր։
Հա՛յ ազգ, հայ հանճար, քունն է զքեզ բռներ,
Քո՛ւն թանձր և երկայն, բայց ո՛չ մահ անյոյս.
Ո՞վ արթնցընէ զազգն իմ 'ի նոր լոյս,—
Եւ հազարներ տամ այնոր, տամ բիւրեր,
Որ զաչքն բացնէր,
Ու չլար անցեր։
Ո՞վ բանայ զՀայկայ աշխոյժ աչուիներ,
Ո՜հ, ո՞վ կանգնէ զքեզ, հանճար հայրենի...
Ե՛լ կանգնէ՝ զու զքեզ, զաւակ ես երկնի,
Լայս ծագէ մթէդ, և՛լ կանգնիր 'ի վեր.
Հերիք քընեցեր.
Գիշերդ է անցեր...
Կ'երգնու Նահապետ, կանչէ ձեզ, հայե՞ր,
Հանճարն է մեզ կեանք. զնա վառեցէ՛ք,
Մեծ պզտիկ՝ այսոր սիրով վառուեցէ՛ք...
Ծագէ՛, հա՛յ հանճար, փայլէ՛ բիւր լոցեր,
Իմանան ազգեր՝
Թէ հայ.ք չե՛ն անցեր։

Նահապետ (Հ. Ղ. Ալիշան).

213.

Ո՜հ, ի՜նչ քաղցր բան՝
Ըլլալ զինուորական,
Սուրն 'ի մեր ձեռին՝
Հայրենեաց պաշտպան։
Տրա լա, լա, լա, լա, և այլն։
Ո՜հ, ի՜նչ անուշ բան՝
Ըլլալ ուսուցիչական.
Կրնալ հայրենեաց
Սրդ ծառայել։
Տրա լա, լա, լա, լա, և այլն։
Ո՜հ, ի՜նչ անպէտք բան՝
Ըլլալ ուսուցիչատեաց
Եւ մեր հայրենիք
Պանդուխտ հալածել։
Տրա լա, լա, լա, լա, և այլն։

(Ցաւելուած)

Ո՜հ, ի՜նչ անգին բան՝
Ըլլալ կոնծաբան,
Կոնծել միշտ անփող,
Թափառել անբան։
Տրա լա, լա, լա, լա, և այլն։
Ո՜հ, ի՜նչ դժուար բան՝
Ըլլալ թղթաբան,
Տարուել միշտ փողը,
Գլխուն տալ հողը։
Տրա լա, լա, լա, լա, և այլն։

214.

Հայ դիւցազունք.

Ով որ ծանօթ է պատմութեան ազգիս,
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին.
Նոքա գնացին, ցէր եա մեզ կրկին
Սէդ Կարօն, Մուշեղ և քաջ Աղասին.
Ապրին պաշտպանք մեր ազգին—
Կարօն, Մուշեղ, Աղասին։
Պիտի միշտ պարծի Քանաքեռ աւան,
Որ ծնաւ ձեզպէս կորիւն անմահ.
Դու Արարատայ ամուր ախոյեան
Փառք և ցնծութիւն Աքանաղեան տան։
Ապրին պաշտպանք... և այլն։
Մասիս, Արագած, Նպատ և Ցիպան
Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան,
Դուք նոցա գլխէն տեսէք Հայաստան,
Ուր տեղ վտանգ կայ, հասէք օգնութեան։
Ապրին պաշտպանք... և այլն։
Մինչ մեր սև բախտէն գաղան Հասան-խան
Լբլկէր խեղճ հայոց վշտոք զանազան,
Դուք նորա դարձաք սարսափ յաւիտեան,
Զօրս նորին վանեալ տարայք ցիր ու ցան։
Ապրի՛ն պաշտպանք... և այլն։
Զի՛ մոռանար Անին զայն ձեր յաղթութիւն,
Որ քրդաց, պարսից արարի՛ք նկուն.
Այնու հայ դերեայ հասաք յօգնութիւն,
Խումբ խումբ լուծեցի՛ք զառնալ յիւրեան տուն։
Ապրի՛ն պաշտպանք մեր ազգին—
Կարօն, Մուշեղ, Աղասին։

Ղ. Կ.

215.

Նորընտիր գինուորի նամակ Ա. Ֆրիկայից իւր նորահարսի մօտ, Ֆրանսիա.

(Թարգ. Բէրանժէից).

Ողջոյն քեզ, ընկե՛ր... ահա՛ իմ լուրեր.
Մեր խիստ պատերազմ վերջացաւ արդէն,
Փառք և յաղթանակ ստացան ուրիշներ,
Բայց ես ղրկվեցայ իմ քաջ ձեռներէն...
Թէպէտ մենք սակաւ է՛ հարչարվեցանք
Փոխադարձ անխնայ այն սաստիկ կրակում,
Բայց և յաղթեցինք, բոլորը առանք,
Միայն երկու զունա մնացին իմ մէջքում։
Հիւանդանոցում արդ մեռանում եմ ես,
Եւ արիւնահան մարմինս գնեց.
Ահա՛ այն ոսկին ուղարկում եմ քեզ,
Որ մարմնիս համար նա արդէն ինձ տուեց։
Եւ որովհետև ես պէտք է մեռնիմ,
Եւ իմ մահ արդէն առաջս է կանգնած,
Ես մտածեցի, որ, սիրելի՛ դ իմ,
Գոնէ դու շահվիս, չ՝ լինիս զրկված։
Ո՛հ... դառն է լինել ինձ մենակ թաղված
Երկրի մէջ հեռու իմ հայրենիքից.
Լաւ էր, եթէ տան լինէի մեռած,
Զրկվելու չէի քո արտասուքից։
Իմ վերայ դուցէ խաչ կանգնած լինէր,
Իմ գերեզմանիս—փորձելու իմ սէր—
Դուցէ թէ դար ես սիրեցած ընկեր,
Եւ «սիրում եմ» ձայն նա նորէն լսէր։

Երբ ես մօրս հետ բաժանվում էի,
Ծերուհին սաստիկ հիւանդ էր արդէն.
Այժմ կ'իմանայ՝ մեռել է որդի—
Կ'մեռնէ անշուշտ նա նոյն իսկ րոպէն...

Նա գուցէ հիւանդ չէ՝ այժմ առաւել,
Բայց երբ կ'կարդայ նա այս իմ նամակ,
Չի կարողանայ ոչ մի բառ ասել...
Նոյն տեղ կ'մեռնէ նոյն իսկ ժամանակ։

Ի՛մ փոքրիկ ընկեր—իմ բարի Ֆինդալ—
Ուղարկում եմ քեզ ինձանից ընծայ.
Սիրի՛ր և չ'տաս նորան իմանալ
Ո՛չինչով այս իմ յանկարծակի մահ։

Ֆինդալ յոյս ունէր—այս գիտեմ արդար—
Տեսնել իւր աէրին քաջ կօռնէտ դարձած,
Եւ կ'սկսէ լալ անոգոբմաբար,
Երբ նա կ'իմանայ, թէ ես կամ մեռած։

Ո՛ղջ եղիր... մի՛ լար... ես հրաժարվում եմ...
Ես քեզ չե՛մ կարող տեսնել առաւել...
Զօրքում, ուր արդէն ահա մնում եմ,
Ո՛չ ոք կարող չէ արձակուրդ առնել...

Եւ քահանային ահա կանչեցին,
Ինձ պատրաստում են հեռու ճանապարհ...
Ահա իմ վճիռ արդէն կարդային...
Ո՛ղջ եղիր, ընկե՛ր... ինձ մի՛ մոռանար...

Իշխան Բագրատունի.

216.

Գարուն.

Ո՛հ, ի՛նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փրչես հովիկ,

Ծաղկանց վերայ դուրդուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՝ անցի՛ր սրտէս 'ի բաց։

Ո՛հ, ի՛նչ աղու և սրտագին
Ծառոյ մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան 'ի քոյ ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՝ երգէ՛ սրտէս 'ի բաց։

Ո՛հ, ի՛նչ մրմունջ հանես վրտակ
Ականակիա և հանդարտիկ.
Քո հայելւոյդ մէջ անապակ
Նային զերկնք վարդն ու աղջիկ.
Բայց չե՛ս վտակ իմ հայրենեաց,
Գնա՝ հոսէ սրտէս 'ի բաց։

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա Հերթան սրտէս 'ի բաց։

Մ. Պէշիքթաշլեան.

217.

Վարդանի և իւր զօրաց երգը.

ՎԱՐԴԱՆ.

Ո՛վ հայկազունք, ո՛վ դիւցազունք,
Ահա՛ ձեզ նոր հանդիսարան.
Բայե՛ք աչքերդ, հերի՛ք ննջէք,
Տարիք դարեր են անցական։

ԶՕՐԱԿԱՆՔ.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Մեր կեանքը ղոհ բոլորանուէր
Մատաղ անել հայոց ազգին,
Նորա լեզուին և կրօնին։

ՎԱՐԴԱՆ.

Առէ՛ք սուրեր, նետ ու ագեղ,
Ելէ՛ք ընդդէմ ձեր թշնամեաց.
Ձեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէ՛ք յօտար ազգաց։

ԶՕՐԱԿԱՆՔ.

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբ որ պարապ տանն է նստած,
Մեզ ապարէզ անմահ փառաց
Կռուի դաշտն է նշանակած։

ՎԱՐԴԱՆ.

Հա՛յ զօրականք, ձեր նետերը
Կապարձից մէջ հերիք մնան,
Ձեր երկիրը Պարսիկ ոտից
Ընդէ՞ր լենի այդպէս կոխան։

ԶՕՐԱԿԱՆՔ.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր սուրբ երկրից հալածական
Առնել անկրօն Պարսից ազգը,
Փրկէլ խաչն է մեզ օգնական։

ՎԱՐԴԱՆ.

Հայոց հովիւք, ձեր ոչխարները
Է՞ր սար ու ձոր թափառական
Գազանաց ճանկն ընկած ողբան.
Է՞ր չ՚լսէք նոցա կական։

ԶՕՐԱԿԱՆՔ.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան, խաչ ի ձեռին
Առաջնորդել հայոց ազգին,
Ի ժամ սրբոյ պատերազմին։

218.

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Տէր մեր Աստուած,
Լէ՛ր մեզ ողորմած,
Դու ես լոյս լուսոյ,
Մեր հոգին զօրացո՛ յաւիտեան։
Ո՛վ Տէր դու մեր Աստուած,
Ո՛յժ տուր բազկաց,
Վանենք ոսոխք,
Պահենք կրօն.
Աստուած, մեր հոգին
Զօրացո՛ յաւիտեան։

219.

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴՈՒ ԵՐԳ.

(Գերմանականից.)

Ուղեղ գնեցունից ես տուն եմ զընում,
Փողոց, ա՛յ փողոց, էգ ի՞նչ եմ տեսնում,
Ա՞ջ գնամ թէ ձա՞խ՝ ծուռ են երկուսն էլ։

Լուսի՛ն ջան՝ ուէխրդ ինչի՞ է ծռած,
Մէկ աչքդդ կապուել միւսը կէս բաց.
Դու էլ ես կոնծել, ա՛յ դու անամօթ.
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուան ծանօթ։

— Բա՝ էստեղ էստեղ,—տե՛ս լապտերներն էլ
Ձե՛ն կարող ուղեղ ոտքի վրայ կանգնել։

Մէկ պարզ են վառվում, մէկ՝ սաստիկ խաւար
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անդադար։

Աղբէր՝ էս գիշեր ամէնքն են հարբել,
Ի՞նչ բան է մենակ մենակ ծոմ պահել,
Չէ՛, էգ կըլենի իստակ զըժութիւն,
Ուրեմն նորից նոր դառնամ գինետուն։

Գէորգ Դողոխեանց.

220.

Երգ առ Հայաստան.

Ողջոյն ընդ քեզ, Հայաստան,
Մեր դիւցազանց գերեզման,
Ողջոյն, ...
Պսակեալ փառօք հայրենի։

Երկինք խրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդք ծըլին ոտքին տակ,
Իւր մէկ նայուածքն երկնագեղ
Քու արտասուացդ ըլլանք դեղ։

Ո՛հ, ի՞նչ անուշ նըւադներ
Պիտի հնչեն սոխակներ,
Երբ քու ճակատըդ պսակէ
Ծաղկէոնեան դափնիէ։

Մանուկն յորոց կը խայտայ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ.
Երբ որ նշոյլք կը ժպտին,
Հայ աստեղայ նորածին։

Ո՛հ, շերմացդ քով ալ հանդչի
Անմահութեան վեհ ոգի.
Մինչ զուարթունք ի բարձանց
Պսակս սփռեն հայկազանց։

Փափուկ մատունքդ թող դրոշմեն
Այն տառերով ոսկեղէն.
Մեր սրտին մէջ «աէր և լոյս»,
Մեր հոգւոյն մէջ «վեանք և յոյս»։

Քու վըշտերուդ փոխանակ
Երկինք կանգեց յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման՝
Քեզի Օրէնք շնորհեցան։

Ա. Յ. Այվազեան.

221.

Սաթինիկ և Արտաշէս մանուկ.

«Կտուր կտուր»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Ալոր մոլոր Կուրն էր դալիս Կովկաս սարերէն,
Մի անմման ձայն էր տալիս էն միւս տիերէն.
Փախէք, ասաղեր, արև ծագեց Կովկաս սարերէն,
Սաթինիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնեակէն։

Հայոց քաջեր, քաջ զրէք զենքեր շուտ ձեր ձեռքերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիք դուք իմ սիրոյ սրէն։
Քի՛ զ եմ ասում, քաջ Արտաշէս, դուրս եկ վրանէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ սև սև աչքերէն։

Տաք տաք արիւն զուր մի՛ թափեր անմեղ սրտերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ կարմիր թըշերէն։
Մի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս գունդերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ սիրուն ունքերէն։

Մի՛ խրոխտար քո յաղթական սէգ սէգ քայլերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ փունջ փունջ մազերէն։
Բաց շուտ շղթայն գերի բռնած եղբօրս ոտերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս դու իմ բլբուլ լեզուէն։

Քէն մի՛ պահիր, վրէժ մի՛ ուզեր իմ Ալաններէն,
Բարձր է Կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն։
Ձայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դուրս եկ մէյտան, թէ չես վախում սիրոյս նետերէն։

Ալան, Ալան, յաղթութիւնս առիր իմ ձեռէն,
Ո՞նց դիմանամ, հալվում է իմ թուրս քո կրակէն։
Ալա՛ն, Ալա՛ն, փառք ու պսակս առիր իմ գլխէն,
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն։

Ա՛յ դու անգութ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
Ո՞նց դիմանամ, չեմ հովանում Կուրի ջրերէն։
Տուր ինձ թեւեր քո մոտ թռչեմ Կուրի վրայէն,
Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճրագի լուսէն։

Հաղար կրտամ, տասն հաղար իմ ա՞թիւ դանձերէն,
Քեզ ինձ կ'առնեմ հարս-թագուհի քաջ Ալաններէն։
Ոսկւոյ անձրև շաղ կրտամ քո գլխիդ վրայէն,
Սէլ կրգնայ մարգարտէ քո ոտի տակերէն։

Կ'թափեմ Կուրը լայքա ոսկի կարմիր մորթերէն,
Ծածկուի գետը ընծայաբեր բարձած ուղտերէն։
Ասաց, հեծաւ արի ալքայն սևն իւր ձիերէն,
Արծուի նման ճնշեց, անցաւ Կուր գետի մէջէն։

Հասաւ, հանեց իւր կարմիր թոկ օղն ոսկեղէն,
Զրեց, ընկաւ Սաթինիկի մէջքի մէջտեղէն։
Թո՛ւր, փախի՛ր, իմ գեղեցիկ սև ձիս հրբեղէն,
Մէջքիդ մարալն որս եմ բռնել Կովկաս սարերէն։
Թո՛ւր, փախի՛ր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թեւիդ վերի Կոյսն եմ խլել քաջ Ալաններէն։

Սամուէլ Գիւլզատեանց.

222.

Ո՛վ դու հայ աշխարհ, աշխարհ եղեմեան,
Հայ մարդոյ համար վայր նուիրական.

Է՞ր քո որդւոց մէջ դաւաճան ծնան՝
Հայ մարդոյ սրտին դնել սև նշան։
Տիգրան, Միհրդատ, նա և քաջ Վարդան
Քո դոռ թշնամեաց ի՞նչպէս դէմ կենան,
Երբ Փառնակ, Վասակ, մատնիչ Մեհրուժան
Իւրեանց հայրենեաց լինին դաւաճան։

223.

Ի Մեծափառ աւուր երկրորդ շնորհաւոր գալստեան Արեգակնափայլ Նասր-Էդդին Շահի պարսից այցելութիւն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի)* (30 օգոստ. 1889 թ.)

Շ է ր.

«Հնչեսցեն լարք»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Որ հաճեցար բարձր ըստ կամաց
Քոց այցելել այս վայրաց,

*) Նորին Մեծութիւն պարսից Նասր-Էդդին Շահը, Եւրոպա ճանապարհորդելով՝ իւր վերադարձին, համաձայն իւր խոստման, բարեհաճեց այցելել և՛ հայութեան պարծանաց պարծանք սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը, և Նորա գահակալ Կաթուղիկոս ամենայն հայոց Տ. Տ. Մակար Առաջնոյն։ Վեհափառ Կաթուղիկոսը Նորին Մեծութեանը հետևեալ խօսքերով է ընդունում։ «Օրհնեալ է վերին տեսչութիւնը, որ Ձեզ, արքայ, ընդ ծով և ընդ ցամաք ուղևորեց և անվնաս հասցց այստեղ։ Շնորհակալ եմ Ձերդ Մեծութիւնից, որ Ձեր խոստման համաձայն հաճեցաք երկրորդ անգամ այցելել այս սրբավայրը։ Ցաւսով եմ, ինչպէս որ չէք մոռացել մեզ, նոյնպէս էլ չմոռանաք անպակաս անել Ձեր վեհագոյն խնամատարութիւնը Ձեր հպատակ հայերից՝ իմ սիրելի ժողովրդեան մի մասից։ Գերագոյն էակը թող ողջ և առողջ հասցնէ Ձեզ Ձեր Գահը, անսասան պահելով յաւիտեան»։ Ընդունելութիւնը, որ շատ փառաւոր և հանդիսաւոր կերպով է կատարվում, նկարագրուած է «Նոր-Դար»-ի 146 №-ում։

Գ. Բ. Գրիգորեանց.

Պատուել զայս յարկ 'ի Քո շնորհ,
Արփիափայլ Հիւրդ հզօր։

Հաճեաց ընդ այս առհաւատչեայ,
Նուք՝ առ փառօքդ դուշնաքեայ,
Հաճեաց ընդ այս մեր սուղ պաշտօն,
Զոր Քեզ հանեմք մեք 'ի ձօն։

Հնչեսցէ միշտ այս տուն Ուխտի
Շահն Շահիդ զեկ բարի.
Ցիշեսցեն միշտ և հրճուեսցին
Զմեծ անուանդ Նասր-Էդդին։

Միաբերան Բարձրելոյն
Ահա պարզեմք յօրհնութիւն.
Հրեշտակ բարի ռահահոդդ
Շահն Շահիդ առաջնորդ։

Անփոյթ և զերծ 'ի չարէ
Զքեզ 'ի դահդ հասուսցէ.
Քև խնդասցէ Պարսկաստան,
Քև հպատակ ազգ Հայկեան։

Պալեանց.

224.

Ե զ ի շ է.

(Հեղինակութիւն).

Ոսկեծըղէ, գեղեցկատիպ
Ո՞վ իմ զրքոյկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբաղդ օրը
Դու քարոզող անմրռունչ։
Ո՞վ պիտի տար այն անբսպառ
Սէրն ու զութը դէպ Հային,
Թէ որ մարդիկ քեզ, ո՞վ զրքուկ,
Երբեմն չէ կարդային։

Քեզ կարդալով՝ կըմոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին
Դէպ հայ եղբարքս զութ ու սիրով
Միշտ կըլցուի իմ հոգին։
Մըտքիս մէջը ես միշտ կասեմ.
«Սերունդք Վարդան մեր Քաջին
Անհընար է՝ անփառունակ
Ըստուկ մընան կամ կորչին»։
Կամ տեսնելով հէգ հայ տէրտէր,
Սուրբ Ղևոնդին կըյիշեմ,
Ու յուսահատ տրտում մըտքեր
Ինձմէն հեռու կըքըշեմ։
Եղիշէին հայք կարդալով,
Նոր յոյսերով կըլցուին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոյ առջև կըբացուին։
Հայ պատանի՝ շուտ շուտ կարդա
Այս գըրքուկը ոսկեատառ,
Որ համոզուիս թէ՝ մեր Հայը
Կորչելու ազգ չէ՝ խսպառ։

Գամառ-Քանիպա.

225.

Մ ա ղ թ ա ն ք ա ռ Տ է ր.

Ո՛վ Տեր Աստուած, լսուր մեր բարբառ,
Ուղղեալ սրտէ միշտ վշտահար.
Փութա՛ զրեթա՛ հայոց թշուառ,
Մի՛ օտարաց լեցին աւար։

Նայեա՛ց տըխուր աւերակաց,
Մեր հարց անշուք լըքեալ շերմաց,
Ա՜խ, Հայաստան, մայր սրդազգեաց,
Ի բիւր հառաչս կոծէ 'ի լաց։

Ուր Հայորեար աքնին պանդուխտ,
Ո՜հ, ընդ տար վայրս բազմակարօտ,
Զունին պաշտպան մերձ 'ի կորուստ,
'Ի վտանգս կրեն հարուածք անգութ։

Ցուր շունչ քոյդ հայ որդւոց համայն,
Ի չեք դարձցին վաշ ոսոխք չար.
Եւ 'ի կրօն սուրբ Հայք Հայաստան կեցցեն յաւէրժ,
Կացցեն պայծառ, կացցեն պայծառ։

Վահրամ վ. Մանկունի.

226.

Ուղերձ յաւուր օրհնութեան բացման ճեմարանի Ս. Էջմիածնի.

Ո՜հ, գե՛ղ ջքնաղ ըղգացմանց 'ի վառ՝
Ցուզքն այսօր հոգեպարար.
Հրապոյրք 'ի միս 'ի սիրտս կայտառ,
Եւ յորդեն իղձք 'ի հայրեար։

Ո՞չ այս հանդէս վեհ և շքեղ—
Մինչ ասա պաշտին յօրհներգս դեղդեղ,
Նաւակատիք Տանս փառահեղ—
Գուշակէ քաջ յուսոց 'ի ղեղ։

Ո՞չ այս հանդէս քաղցր աւետեաց
Հընչէ ըղձայն Հայաստանեայց,
Հարսին լուսոյ տայ հրճուագգեաց,
'Ի ձայն հրաւէր՝ 'ի վայրս զալրեաց։

Ցորում՝ ահա՛ 'ի թեւս ուխտից,
Հանդիսակցեալ կարօտալից,
Նաև Ոգի Սուրբ Հայոցնից
Վերասլանան մաղթանք սրբոց։

Փառք միշտ ձեռին Նըւիրական,
Որ զայս կանգնեաց ըղձեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան,
Բանայ ըղդրունսն՝ գործել 'ի Ջան։

Ո՜հ, զի վսեմ՝ լայն ասպարէզ
Հարթեաց սովաւ յուսմունս պէսպէս,
Որ հովուեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ աջքն՝ անմերձ։

Սա է երկիր, սուրբ, բանաւոր,
Ո՛չ աւետեաց և մեղրածոր,
Եւ ո՛չ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգևոր։

Սա սրփռեսցէ զեռանդս սուրբ Հարց,
Մեծն Գրիգորի և Թարգմանչաց՝
Սահակ, Մեսրոպ, ա՛հեռևողաց,
Ի սիրտս համայն այսց ժառանգաց։

Պահեա՛, Աստուած, զայս նոր Տաճար,
Ցօգուտ 'ի փառս Հայութեան յար.
Պայծառացո՛, Տէ՛ր Բարերար,
Ցարդիւնս ատոք և պերճափառ։

Եւ ընդ սրմին միշտ պանծասցի
Ի փառաւոր յիշատակի
Անուն Սորին Վեհ Հիմնադրի՝
Տէր Տէր ԳԷՈՐԳ Հայրապետի։

Վահրամ վ. Մանկունի.

227.

Երգ Ռուսաց Կայսրին.

«Боже, Царя храни!»
ՀԻՄՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին—
Հայկեան Պաշտպանին

Երջանիկ օրով,
Ընտանիքով.
Թող զօրքով Նա քաջայ
Վանէ թշնամեայ։
Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին։

*
* *

Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին,
Որ Հայ գործերին
Նա լինի պաշտպան
Միշտ անխափան.
Եւ տայ ազատութիւն—
Պահել ազգութիւն։
Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին։

Ա. Գրիգորեանց.

228.

Երգ, սէր և գինի.

Ուրախ լինինք, եղբարք, քանի—որ կրտրիճ ենք,
Թէ չէ՝ շուտով կանցնի մեր մանկութիւնը,
Կու գայ մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,
Ապա ի՞նչ պիտ՝ անենք մենք ան ատենը։

Արտորանք երգելու՝ քանի—որ շունչ ունինք,
Թէ չէ՝ գարնան ծաղկի պէս շուտ կու թառամինք.
Ափսոս է, ափսոս է մեր ոյժն ու սիրտը,
Ցաւ կ՝լինի մեր սրտին անցած օրերը։

Ե՛կ սիրենք, ե՛կ սիրենք, եղբարք, մէկզմէկու,
Մեր մէջից դէն-ձրգենք չար բամբասանքը,
Բայ սիրով, պարզ աչքով մէկ մէկու նայինք,
Թող սիրով անց-կացնենք մեր մանուկ կեանքը։

Եղբարք՝ խմենք գինին հայ—ազգի կենացը,
Որ ամուր պահպանէ իւր սուրբ հաւատը,

Քաջ սրտով, վառ սիրով սիրէ իւր հաւատը.
Ուրեմն դարդրկենք մենք մեր դաւաթը։

229.

Ո՞ր մահկանացուն այս երկրիս վերայ
Երջանիկ ժամեր վայելել կրնայ.
Եւ ո՞րն է այն վարդ ծլած աշխարհի,
Որ ձեռայդ մէջ խկոյն չը թոռմի.
Չէ՛ն չէ՛ն երջանիկ ո՛չ ժամք սիրանըւէր,
Որ դրդուէ հոգմիկ ըզկուսին մաղեր։

Թէ մաօք զրկես զերկին և զերկիր,
Եւ ամէն գաղանիք քեզ մերկանային,
Անհնար է քեզ ըլլալ երջանիկ,
Այլ գժիսեմ բաղդին թշուառ խաղալիկ.
Զէ՛ք չէ՛ք երջանիկ, ո՛վ գժբաղդ հայեր,
Մինչդեռ հայրենիք չէ՛ք մրխիթարեր։

Ի զուր գիւցազունք պատերազմական
Դաշտերուն վերայ կանգնեցին նշան,
Հաղիւ սասյան յաղթութեան պսակ,
Կորզեց ձեռքերնէն զայն մահու հրեշտակ.
Ո՛հ, չէ՛ք երջանիկ, ո՛վ գժբաղդ հայեր,
Մինչդեռ հայրենիք չէ՛ք մրխիթարեր։

230.

Ո՛չ ձեզ ո՛չ չեր, չե՛ք յաջուղուած,
Ո՛վ ժանաք առ ձեզ գոչէ Աստուած,
Որ գհայրենեաց ուրանայք սէր,
Եւ զնորուն խնդրէ՛ք աւեր։
Երկինք զձեզ դատապարտեն
Եւ հայրենիք խոտեն, մերժեն,

Ելէ՛ք 'ի մէնջ 'ի բաց գնայք,
Անէծք ոյց չեն ճշմարիտ հայք,
Ի մէնջ ի բաց գնայք,
Անէծք ոյց չեն ճշմարիտ հայք (2)։

Խորէն եպիս. Գալֆայեան.

231.

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Մի՞թէ սա է Պարսկաստան,
Որի պատկերն է Սոդոմ և Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբելոնեան խմոր.
Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Մի՞թէ սա է Յունաստան,
Որ իր բռնութեամբն դերել է աշխարհ,
Աղգի ճիգն ու ջանքն յաւիտեան կործան.
Զէ, չէ, չէ, չէ, սխալ է,
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Մի՞թէ սա է Տաճկաստան,
Ուր իրաւունքից կանայք են զրկուած,
Կանանոցի մէջ կենդանի թաղուած.
Զէ, չէ, չէ, չէ, սխալ է,
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Մի՞թէ սա է Ֆրանգստան,
Որ իր ճոխ զգեստիւք ոիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է նա.
Զէ, չէ, չէ, չէ, սխալ է,
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Ահա՛ սա է Հայաստան,
Որ իր քաջութեամբ հաւատն ու կրօն
Պահպանել է մինչև 'ի յայսօր.
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ճիշդ է.
Մեր աշխարհն այդ է, մեր աշխարհն այդ է։

Մ. Փ.

232.

'Ի յօբելեան հիմնարկութեան «Մարդասիրական Ընկերութեան» Հայոց Բագուայ*).

Որ վառեցեր 'ի զգօն հոգիս
Սէր առ եղբարս, առ ընկեր,
Լուսաւորչին հիմնել յանուն
Զընկերութիւնս Մարդասէր։

---

*) Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութիւնը», յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի, Բարձրագոյն հաստատուած է 1864 թ. մայիսի 21-ին, Ռուսիայի Կայսր և՛ ազգութեան և՛ Հայրենիքի նահատակ Աղեքսանդր II-ի օրով և Նորին Մեծութեան Հայրական առանձնաշնորհութեամբ։

«Մարդասիրական Ընկերութիւնը» իւր 25-ամեայ յօբելեանը տօնեց 1889 թ. մայիսի 21-ին, կիւրակէ օրը։ Հանդէսը, որ կատարվում էր ընկերութեան հին դպրոցի, Լուսաւորչի մայր եկեղեցուն կից, գեղեցիկ և շքեղ զարդարած բակում, սկսուեցաւ «Боже, Царя храни!» հիմնով։ Հանդէսին մասնակցում էր պ. Կարա-Մուրզան՝ իւր 150 հոգուց բաղկացած երկսեռ երգեցիկ-երաժշտական խմբով, որ յատկապէս այդ օրուան համար էր պատրաստել։ Աւելի ուշադրութիւն գրաւեց, մանաւանդ, ներկայ, պ. Կարա-Մուրզայից ձայնագրած, «Որ վառեցեր» երգը, որի համար նա, պ. Կարա-Մուրզան, ստացաւ «Մարդասիրական Ընկերութեան» նախագահ պ. Խր. Անտոնեանից մի ոսկեպատ գիրք-ժեօրական փայտիկ։ Հանդիսում կարդացուեցան, բացի

Լե՛ր զօրավիգ, ով Տէր, 'ի գործս,
Վարչայ Սորին հանապազ՝
Յարատևել յեռանդ անշէջ,
Արդեամբ՝ փայլել աննուազ։
Կեցցե՛ն բարերարք
Գործոյս և սատարք.
Կեցցե՛ն երջանիկ
Մարդասէր ոգիք.

Հ. Ղուկասեանց.

233.

Ուրդիք քաջ Հայկայ, արի՛ք ընդ առաջ,
Տեսէ՛ք ձեր արքայն իւր գահը բազմած.
Խրախոյս կարդացէ՛ք հայ զօրականք քաջ,
Սուր 'ի ձեռ առնել, յաղթել Ալանայ։ (2)

Ընկերութեան 25-ամեայ գործունէութեան հաշուից, բազմաթիւ ուղերձներ, ճառեր և շնորհաւորական հեռագիրներ։

Հեռագիրներից նշանաւոր է, մանաւանդ, Մոսկուայից ուղարկուած պ. Շահազիզ-Կամսարականի հետևեալ բանաստեղծական հեռագիրը. «Какъ воздухъ становится все легче въ прекрасное майское утро, такъ на душѣ дѣлается все отраднѣе въ виду двадцатипятилѣтней годовщины общества. Оно благополучно прошло свой тернистый путь и уже успѣло положить прочный фундаментъ своему существованію. Слава обществу! Тутъ впервые сталъ раздаваться голосъ на поднятіе человѣческаго достоинства и братскаго союза. Не кстати-ли увѣковѣчить сіе юбилейное торжество, воздвигнувъ памятникъ незабвенному учредителю общества, доктору Ростомянцу, честно прослужившему дѣлу милосердія? Пусть недремлющее духовное око его взглянетъ на это видимое выраженіе признательности; пусть онъ новой силой пробудитъ въ присутствующихъ чувство долга и самознанія!»

Գ. Բ. Գրիգորեանց.

Ձեռն 'ի ձեռին տուէ՛ք, գնա՛նք պատերազմ,
Վանե՛նք թշնամեաց, ջնջե՛նք մեր երկրից.
Հայ անուան համար լինե՛նք մենք միշտ կազմ,
Մեռնել քաջաբար, չընկնել մեծ փառքից։

Արտաշէս արքայն փառօք պանծացած,
Մեզ է առաջնորդ, դէ՛ն ձգենք երկիւղ.
Հայաստան կանչենք կուրծքերս դէմ դրած,
Բառնամք մեր երկրից տիրած մառախուղ։

Ուրեմն կեցցէ՛ տուն քաջ Արտաշէսին,
Որ նա վանեց քաջ Ալանայ ազգին.
Ազատեց երկիրը օտար յեղերից,
Կանգնեց անմահ արձան մեր առաջին։

«Արտաշէս և Սաթինիկ» ողբերգութիւն.

234.

Ողջոյն տուէ՛ք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն։
Ողջոյն տուէ՛ք տերեկաց
Արարատի գաւառներուն։
Ողջոյն տուէ՛ք Աւարայրի
Արիւնաներկ սուրբ վայրերուն։
Ողջոյն տուէ՛ք տխուր լուսնին,
Որ լուսատնէ սև շերիմներուն։
Ողջոյն տուէ՛ք ոլոր մոլոր,
Մոլոր վազող գետակներուն,
Ողջոյն տուէ՛ք պղտոր բոլոր
Աղէ լեղէ աղբիւրներուն։
Ողջոյն տուէ՛ք ի հող լծած
Արքայական պալատներուն.
Ողջոյն տուէ՛ք գետնատարած
Սրբոց անբիծ մասունքներուն։

Ողջոյն ծաղկանց առէք խումբ խումբ,
Որ կան թաղուած հովիտներում,
Ուր հայ սոխակ թումբէ ի թումբ
Կեանք կլինդրէ դեռ շատերուն:

235.

Զարթի՛ր, սիրտ իմ վշտահար,
Նոր առաւօտ քեզ ծագեաց,
Պարք մուզայից շուրջ գքեւ
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:
Պանծա՛ դիւցազն մեծ արքայ փառաք,
Ձեմն առեալ յերթս քո երգով,
Ո՛չ արեւ, ո՛չ լուսին ո՛չ աստղեր, ո՛չ երկին
Հասանին քոյդ փառաց, յաւերժացի՛ր:
Ուրախութեան օր է այս
Բերկրեալ սրտից գեռահաս.
Պարք մուզայից շուրջ գքեւ
Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

236.

Ma chére et trés aimable

Ա.***

Պայծառատես բաղդն իմ անգին,
Շորեր հագած ըստ նոր ձեւին,
Այսօր եկել էր սուրբ Ծաձար—
Փրկչից խնդրել օրեր երկար:
Ոգջ կոյսերից նա, ճշմարիտ, գեղեցիկ էր,
Ի՞նչ սիրուն էր, ի՞նչ սիրուն էր, ի՞նչ սիրուն էր:

Աչքեր նորա փայլում էին,
Անոյշ ժպիտ էր երեսին,

Թշեր նորա վառուած կարմիր,
Գերում էին ինձ գեղալեր:
Հրեշտակ էր նա, հրեշտակ էր նա, հրեշտակ էր նա,
Երես փայլուն, վիզն գեղեցիկ և մարմարեայ:

Նորա վարսակրն երկնագեղ,
Իբրև գիշեր սև, թուխ, շքեղ,
Այնպէս, ասեմ, գեղեցիկ էր,
Որ տեսանողն կը ցնորվէր.
Նորա համար դադաղ մրսնել ես սեւատես,
Պատրաստ եմ ես, պատրաստ եմ ես, պատրաստ եմ ես:

Բայց առաւել սրբատաշարժիկ
Էր հայեցուած նորա քաղցրիկ,
Սիրելի էր հայեցուածն այն,
Ջիր և շընորհ էր ընութեան.
Ո՛հ, դու Ա.***, ո՛հ, դու Ա.***, ո՛հ, դու Ա.***,
Տանջեցի՛ր ինձ, տանջեցիր ինձ, Աստուած վկայ:

Յանկարծ տեսնեմ—ժամը պրծաւ,
Եւ նա հաւեստ... նա մօտեցաւ,
Գլուխ խոնարհեց երկրպագութեան
Եւ համբուրեց Աւետարան:
Ո՛հ, ի՞նչ շարժուածք, ո՛հ, ի՞նչ գընացք Զրքնաղն ունէր,
Երկնային էր, երկնային էր, երկնային էր:

Նա դուրս եկաւ հեզ շարժուելով,
Իւր մեծ քրոջ ձեռն բռնելով,
Նա հեռացաւ, ես կանգնեցի
Եւ, վիզս ծռած, շա՛տ նայեցի:
Առանց նորան, պարոնե՛ր իմ, արդարն ասեմ,
Ես կը մեռնեմ, ես կը մեռնեմ, ես կը մեռնեմ:

Adieu, mon Ange, ma chére A**a!
Adieu, ...

Մնամ պաշտող, Սէր իմ, միշտ քեզ,
Բայց իմացի՛ր, մաշվումեմ ես։
Ասացի ես, ով պարոններ, այլ չի տեսայ,
Ո՞ւր գընաց նա, ո՞ւր գընաց նա, ո՞ւր գընաց նա։

Ս. Շահազիզեանց.

237.

Աղասիի երգը.

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գեանին նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տրված՝ լալիս եմ, օրրս խաւարած։
Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, ա՛յ իմ քաղցր Մասիս՝
Աղի արտասուքով էրուած, խորոված,
Երեսիդ նայեմ, մընամ քարացած։
Ծընող, ապրականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարաբ ե՞րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով։
Աչքիս ծով դարձաւ ճամբին նայելով.
Մէկ գուշ, որ գլխիս պըտիտ է գալիս,
Թէ ե՞րբ մէկ խաբար կ՚հասնի ինձ բարով,
Հոգուց հանելով ասում եմ լալիս.
«Նազլու իմ, Նազլու, անուշն Նազլու,
Սիրտս խորովի՝ անուշդ յիշելով.
Նազլու իմ, Նազլու, հրաշալի Նազլու,
Աղասին քեզ ապ՚ իր յեարին բարով։
Սարերի գագաթին, ձորերի միջին,
Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,

Երեսիդդ գըկուած, քո սիրով մաշուած՝
Տատրակի նըման փշի վերայ նըստած։
Նազլու իմ, Նազլու, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրվել, աչքերս խաւարել,
Թող մէկ շունչդ առնեմ, յեարդ հոգը մտնեմ,
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կ՚լինեմ։
Քի՛ղ եմ մընում, քի՛ղ, քու ջանին մեռնեմ,
Հոգ ու դերեզման ես վըրէս ունեմ։
Քանց իմ սառը մարմին էլ ի՞նչ դերեզման
Ինձի պէտք կուգայ, երեսիդ զուրբան»։

Խաչատուր Աբովեանց.

238.

Նոր-Նախիջևանի երգ.

Սամուարը պատուական է,
Մէջին ջուրը բաւական է,
Ձայ խորթողին աչքը սիրեմ,
Ձեռքէն բռնեմ, քովս բերեմ։
Ձայ ասած բանդ խիստ ազնիվ բան է,
Մարդուս սիրտը ուահաթ կանէ.
Ձայ խորթողին աչքը սիրեմ,
Ձեռքէն բռնեմ, քովս բերեմ։
Հանէ՛ ռոմին շիշան հանէ՛,
Դեղին չայը կարմիր կանէ.
Ձայ խորթողին աչքը սիրեմ,
Ձեռքէն բռնեմ, քովս բերեմ։
Արծթի պատնոս, թաս ու գաւաթ,
Ռոմի շիշան մէջը դրած.
Ձայ խորթողին աչքը սիրեմ,
Ձեռքէն բռնեմ, քովս բերեմ։

239.

Վերջին վարդ.

(Գերմանականից).

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իւր կրծից,
Ինձ պարգևեց, վերջին վարդ։

Մանկութեան ոսկէ ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ
Դու ես միայն, վերջին վարդ։

Գարնան օրերն անցել են.
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ սպասումեմ քու տեսքին,
Դու, ամառուայ վերջին վարդ։

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքս բերի՛ր, վերջին վարդ։

Շատ չի տևիլ՝ կ'բացուի
Առաջիս սև դերեզման,
Էս աշխարհից միայն քեզ
Հետս կ'առնում, վերջին վարդ։

Բ. Պատկանեան.

240.

Վարդան Մամիկոնեան.

«Մեր քաջ Հայոց զօրութիւնք»
ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Վարդան մեր քաջ զօրավար,
Թուրը ձեռին ոսկէվառ,

Կանչում է իւր քաջերին,
Ջարդել գլուխ Յաղկերտին։

Հայոց զօրքերն զունդագունդ,
Մեծաբարբառ, գոռով թունդ
Հաւաքվում են Արտաշատ,
Մայրաքաղաք մարդաշատ։

Հայոց զօրքերն անհամար,
Դրօշակներով են պայծառ,
Ամէն կողմից շտապած՝
Վազվզում են կատաղած։

Ղևոնդեանց խումբը անմահ,
Անվախ, անդող և անահ,
Խաչը բռնած Քրիստոսեան,
Բորբոքում են զօրքն Հայկեան։

Կանայք Համեստ, անմեղ,
Վառված սիրով Աստուածեան,
Դուրս են թռչում տներից—
Վազել գաշտը ծաղկալից։

Քաղցրախօսիկ և սիրուն
Օրիորդներ փափկասուն
Ոսկէ ձրգում են շորեր,
ապնում են սուր մահաբեր։

Փառք և պարծանք յաղթական
Քե՛զ, սիրելի ազգ Հայկեան,
Որ քո սիրով բորբոքիչ
Միշտ եղել ես քաջ Քրիստոնեայ։

Դէ՛, գնացէ՛ք, առիւծներ,
Ո՛վ աչքի լոյս, քա՛ջ Հայեր,
Ջարդեցէ՛ք զօրքն պարսկական,
Դրէ՛ք գետին անկենդան։

Դէ՛, գուրս թռէք ասպարէզ,
Ախոյաններ, քաջապէս,
Փշրեցէ՛ք դուք կատաղած
Սրեր, թրեր թշնամեաց։

Ս. Շահազիզեանց.

241.

Երգ աւազակաց.

Վառեց երկինք իւր լապտեր
Աւազակաց համար,
Հնչեն հողմունք, փոթորիկ,
Մեր պալատն է անտառ։

ԽՄԲԱՊԵՏ.

Երբ որ մեռնիմ, ով ընկերներ,
Գինիներով խօսք տուէ՛ք որ՝
Լի բաժակներ ձեռներիդ,
Գաք ու պարէ՛ք շերմիս բոլոր.
Եւ առ 'ի զոհ մեծ քաւութեան՝
Հոգւոյս բարի պաղատելով՝
Պիտի ցողէ՛ք իմ գերեզման գինիներով,
Գինիներով հարիւր բաժակ,
Գինիներով հարիւր տակառ,
Գինիներով գինիներով։

242.

Հառաչանք Անուոյ.

«Անին եմ շատ մարդաբնակ,
Մնացել եմ դառն աւերակ».
ԱՂ. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ.

Տխուր տխուր ձայն եմ տալիս իմ Ախուրեանէն,
Զրկայ ոչ ոք ձայնս լսող Շիրակ գաւառէն։

Հայ եմ կանչում միշտ յուսահատ նորա ափերէն,
Իմ արձագանք ես եմ լսում խոր խոր ձորերէն։
Ո՜հ, կուլացան իմ սէգ աչեր անյաղ ողբալէն,
Ինձ սփոփանք ոչ ոք բերեց Ծերուկ Արաքսէն։
Ո՜հ, թուլացան իմ թև, թիկունք օտար ձեռքերէն,
Ինձ ոյժ, կորով ոչ ոք տուեց Մասեաց քաջերէն։
Աղաղեցան իմ դաշտավայրք անջուր մընալէն,
Զեկան դարձան Եփրատ, Տիգրիս նոցա վրայէն։
Անկան կործան իմ ամրութիւնք ժանտ, բիրտ ազգերէն,
Ոչ ծեր Մասիս, ոչ Արագած գրթաց իմ վրէն։
Պղծեցին իմ շքեղ տաճարք քուրդ, թուրք անօրէն,
Ինձ ոչ նրուէր, ոչ օգնութիւն հասաւ Տարօնէն։
Ցիր ցան արին անզութ տաճիկք որդիքս իմ գրկէն,
Ինձ ոչ զէնքեր, ոչ կրտրիճներ հասաւ Կարինէն։
Ցաւեր ունիմ ես բիւրաւոր, բայց ո՞վ իւր տեղէն
Թնդաց, շարժեց՝ դարման բերել հզօր Զէյթունէն։
Դուրս եկ, Աշոտ, աղիողորմ ողբա՛ քո շերմէն,
Տե՛ս թէ ի՞նչպէս կորաւ Անիդ անսիրտ հայերէն։

Սահակ Սարկաւագ.

243.

Մաղթանք Օգոստափառ Կայսեր Ռուսաց.

Տէ՛ր, պահեա՛ զԿայսր մեր հզօր Ինքնակալ.
Թագաւորեա՛ դու մեզ ի պարծանս.
Թագաւորեա՛ Կայսր յերկիւղ թշնամեաց.
Թագաւոր Ուղղափառ.
Տէ՛ր, պահեա՛ զԿայսր մեր։

244.

Տարեմուտի երեկոյին.

Տարեմուտի երեկոյին
Մայրս թխեց կարկանդակ,

Մէջը դրաւ Հոնի կորիզ,
Իբրև բախտի նշանակ։

Կորիզն, ասաց, ուր որ ընկնի,
Դովլաթաւոր կըդառնայ,
Ո՛ւր որ գնայ, ի՞նչ գործ բռնի,
Փառք ու պատիւ կ՚ստանայ։

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկաւ ինձ բաժին,
Եղբայրներս սրտնեղելով՝
Նախանձեցան իմ բախտին։

«Կոյր է Բախտը» ասա՛ չէ՞ ասած,
Մեծ եղբայրըս փնթփնթաց,
«Մի՞թէ դա է ամենից մէջ
Աշխատաւոր, բանիմաց»...

Մէկէնները էլ հաւանեցան
Մեծ եղբօրըս ասածին,
«Իրա՛ւ, իրա՛ւ, չէ՞ր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

Մայրըս ասաց. «Խելքք կայե՛ք,
Ահա՛ կըդայ Նոր Տարին,
Նա որ տեսնէ ձեզ կռուելիս,
Պարգև չի տալ ոչ մէկին։
Բայց որ տեսնէ՝ դուք սիրով է՛ք
Եւ խաղաղ չէ՛ք իրարից,
Այնուհետև ինչ որ ուզէ՛ք,
Չի խնայիլ ձեզանից»...
Այս ասելով՝ նա մեզ տուաւ
Տեսակ-տեսակ մրգեղէն,
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եւ զանազան քաղցրեղէն.

Քաղցրը կերանք ու քաղցրացանք,
Եւ խնդացինք շատ ու շատ,
Զարաղ արինք նուռ, սերկևիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ...

Հոնի կորիզն այնուհետև
Բոլորովին մոռացանք,
Եւ շատ սիրով՝ իրար գրկած,
Պառկոտեցանք, քնեցանք...

Դ. Աղայեանց.

245.

Աղօթք վասն Հայրենեաց.

Առ արժ. Սարգիս վ. Թէոդորեան.

Ա.

Տէ՛ր, կեցո՛ ըզՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Ցի՞ր, Աստուած Հըզօր, Աստուած Գրիգորի,
Աստուած զոր կարդամք ի խորոց սրտի,
Թողուցուս զի զմեր Հայրենիս թշուառ՝
Սուր, հեռ և հերձուածք առնուցուն յաւար։

Բ.

Տէ՛ր, կեցո՛ ըզՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Տէ՛ս օտարք անգութ այպն ըզմեզ առնեն,
Եւ ըզսրբութեամբք մեր թըշնամանեն.

Բայց մեք ե՞րբ 'ի քոյդ հովացաք 'ի սէր.
Ո՞չ և 'ի մահու գքեզ պաշտեմք 'ի ստուեր։

Գ.

Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Տէ՛ր, Տէ՛ր, դու զմերս օրհնեա՛ զուղղութիւն,
Որ 'ի Գրիգորի սրբեալս եմք արիւն.
Դու զնորուն պահեա՛ հաւատս անսասան,
Եւ զԱթոռն իւր սուրբ 'ի Հայս յաւիտեան։

Դ.

Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Իբր զգարնանի ցօղ 'ի սիրտ եղբարց
Ծաւալեա՛ զսէր, հե՛զ զողի մեր հարց,
Եւ 'ի ջահ լուսոյ նոցա տար զմեզ,
Իբր զհօտ յալոտաս քո 'ի Կադէս։

Ե.

Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Ո՛հ, շատ իսկ աղէտք ծանրացան 'ի մեզ,
Շատ իսկ մահ 'ի մեզ հաշուէ ողջակէզ..
Տէ՛ր կենաց, յերկիր մեր, անբա՜ւ ստպան,
Արկ զշաւնչդ և կեանս տուր Հայաստան։

Խորէն Ե. Գալֆայեան.

246.

Օրհնութիւն ազգային.

Տէ՛ր՝ կեցո՛ դու զՀայս,
Եւ արա՛ զնոսա պայծառ.
Կեցո՛ զՀայս.
Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Աղերիլ յաստիս։
Ո՛վ Տէր մեր, Տէ՛ր, փութա՛,
Զազգ մեր հանայն փրկեա՛
'Ի թշնամեաց.
Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հզօր։
'Ի քո ի՛ջեալ տեղի
Զաթոռն Հայրապետի
Մեր հաստատեա՛.
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուած-ազգեաց
Շնորհեա՛ Պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

Մ. Թաղիաթեանց.

247.

Երկիր Հայկայ.

Ցնծացէ՛ք, լերինք Արարատայ,
Ցնծա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ
Ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,
Ցնծա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ։

Մեր նախնեաց անմահ անունները
Պարծանքով յիշեն մեր սերունդները.
Ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,
Ցնծա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ։
Սրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,
Ելէ՛ք Հայաստան երգով եռանդոտ.
Ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,
Ցնծա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ։

248.

Ա. ղ ք ա տ կ ի ն.

(Գաղղիերէնից.)

Ցուրտը փչեց, ձմեռ սառուկ.
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մնաց իւր տուն,
Պատսպարվել ցրտից։
Ժամի զոնում զողզողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձ պատառ պատառ,
Զունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Չեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոբիկ
Կանգնած, ժամի զոնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով

Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Մինչ թատրոնում յայտնվում էր,
Մինչ խաղում էր հանդիսում,
Դղրդում էր թէատրոնը,
Նա գափնիք շատ էր հնձում.
Ժողովուրդը հաւաքվում էր
Մօտ թատրոնի պատշգամբին,
Զէր կշտանում նայել նորա
Քնքոյշ էքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր նորա զոնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինի նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկված ամեն բանից,
Զունի անգամ հացի գին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանումէր, մաղը սանրում
Կրիայի սանրով.
Նա հագնում էր բեհեղ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանդագին.
Նա չգիտէր ի՞նչ ասել է
Արծաթի կարօտութիւն.
Այժմ անլուայ, մաղերն ալեակ,
Զունի հագուստ թէև հին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Նորա շքեղ ննջարանում
Բնակվումէր Աստղիկը,
Նորա որդին փայփայումէր
Նորան ամբողջ գիշերը ..
Ախտաբորբոք երիտասարդք
Իւրեանց անձը երջանիկ
Կը հաշուէին, թէ լինէին
Նորա ձեռքում խաղալիկ...
Այժմ փողոցում քնում է նա
Խոնաւ պատերի տակին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չե՛ն ասում նորան, «խղճո՛ւկ,
Ե՛կ դու մեր մօտ, մեք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ

Խիստ հարուածի սաստկութիւն»:
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Կոմս Էմմանուէլ (Միք. Նալբանդեանց.)

249.

Ի դովեստ վարուց Ղարսայ Գաւառապետ Ղվարդի պօլկովնիկ և ասպետ Լօռու-Մելիքեանի.

Ցնծա՛, Արարատ, որ դովածս ուղղափառ Հայ է,
Երկար միջոցիւ քո սպասած պտուղն սա է,
Եթէ պիտոյ լինի՝ ազգին կեանքն կընծայէ,
Մաղք հինամեայ, իսկ հասակաւ դեռ երեխայ է,
Լօռու Մելիքեան բարձրապատիւ ծնողաց տղայ է:

Ինքն անքուն, միտքն անհուն՝ աշխատաւոր սարդ,
Դէմքն շքեղ, հասակն ծեղ՝ իշխանաց մէջ զարդ,
Գեղեցկատես, ծիծաղերես՝ մէկ նոր բացուած վարդ,
Մինչ չի խօսի՝ ճվ ոք կասի՝ պատկեր է, թէ մարդ,
Հայոց ազգի յոյսն դա է, Տէ՛ր, դու խնայէ՛:

Բերան պիտի, որ լաւ դովի սորա արարքն,
Բնութիւնն, մարդկութիւնն, սրբակաց վարքն,
Ատուած պահի՝ ոյք որ իցեն նորա սատարքն,
Չի փութապէս մուծցեն զնա դիւցազնից շարքն,
Որ պարծենայ Հայաստանն, թէ որդիս դա է:

Ո՛վ պաշտելի և ծանելի եօթն վերաց պատկեր,
Ո՛վ անաչառ, բազմաչարչար Լուսաւորիչ մեր,
Ո՛վ հրաշալի և սքանչելի հայկազն սուրբեր,
Դուք լերուք այս իշխանին հովանի և տէր,
Որ այժմ մեր ազգն յոյժ ճիշտ սորան կու նայէ

Սէյադ, մի՛ գովել այս իշխանին, որ միշտ մնայ լաւ,
Որին գովեցիր՝ յայտնի տեսար՝ վերջն լաւ չելաւ,
Որին ասացիր սա Յակոբն է, նա եղև Եսաւ,
Նրանց հիմն քայքայուած էր, սա է հաստատ նաւ,
Այս խօսքերս ժամանակին ձեզ կ'վկայէ *)։

Պետրոս Մաղաթեանց.

250.

Քեասիբ գիւղացիներին.

Քեասի՛բ գիւղացի, սրտամաշ եղած,
Ագահ հարուստի առաջև կանգնած,
Մինչ ե՛րբ դու նորան մնաս հեղանդ,
Ծանր պարտքի տակ ստանաս զարգանդ։

Քեասի՛բ գիւղացի, չե՛ս թշուառական,
(Միայն խորթ որդի ես սառը բնութեան)
Մինչ ե՞րբ լացակում, լալկան բերանով
Կապ ընկած մնաս—ախր չե՛ս անբան...

Քեասի՛բ գիւղացի, այդ չէ՛ բաւական,
Քիզնից է սպասում նաև դանձարան.
Դու պարտական ես—ունես թէ չունես,
Վճարել հարկ, կու, բեգեար և այլ բան...
Եւ քեզ տանջումէ անիրաւ բուրժուան,

*) Օրհնեա՛լ լինի յիշատակդ, հանգուցեա՛լ Սէյեադ. քո յիսունական թուականներին ասած խօսքերը՝ բանաստեղծութիւն չէ՛ եղած, այլ կատարեա՛լ գուշակութիւն, կատարեա՛լ մարգարէութիւն։ Քո խօսքերը, քո գուշակութիւնը, քո մարգարէութիւնն արդէն կատարված է և Լօռու-Մելիքեանը, քո յիշած «պօլկովնիկի» աստիճանից, հասած է Կոմսութեան նախանձելի, մեծ և փայլուն աստիճանին և դորանով յայտնի դարձած պետական աշխարհներին։

Դու նրան տալիս ես իւղ, ձու, և այն՝
Ինչ տանդ համար ապրուստ էր օրուան...

Քեասի՛բ գիւղացի, քո դատաւորը
Ուղիղ չի վճռում քո դատն ու վէճը,
Եւ կաշառակեր յիմար այն քոխվան
Գիտէ՞ արդեօք թէ՝ ինչ բան է խիղճը...

Հարա՜—ես կանչում, քեասի՛բ գիւղացի,
Բայց քո թոյլ ձայնը ումի՞ն է հասնում.
Քո աղեխարշ կոծ, լաց սրտախորով
Զունի արձագանք լոյս—ասպարէզում...

Քեասի՛բ գիւղացի, յոյսդ քեզ փրկող,
Օտարի ձեռքը մի՛ ուղիր օգնող.
Ունես մի ճամբայ—սիրի՛ր դու նորան
Լոյս ուսումն է այն և ուսումնարան...

Թշուառ ապարած, սիրի՛ր դու ուսում,
Նորա մէջ է քո կեանքի փրկութիւն.
Նա միջոց է և սուրբ ազատութեան,
Թող կորչի այժմէն խաւար, տգիտութիւն։

Աղեքս. Արարատեանց.

251.

Օրօրոցի երգ.

Քուն եղիր, պալաս, աչքդ խուփ արա,
Նախշուն աչերուդ քուն թող դայ վրայ.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ անուշ պալիս քունը կը տանի։

Օսկէ խաչ վզիդ քեզի պահապան,
Արօտ կապել է ծարէն տէր պապան.
Օլ օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Աշխէն) պալիս քունը կը տանի։

Մավի հիլլուններ կապել եմ ես ալ.
Նաղար չես առնուլ, քուն եղեր, մի՛ լալ.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Սուրէն) պալիս քունը կը տանի։

Աս քանի՞ մօրդ անքուն աչքովը
Անցել են օրեր օրոցքիդ քովը.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի
Իմ (Արսէն) պալիս քունը կը տանի։

Օրոցքդ օրեմ, օրով բոյ քաշես,
Մըղկըտան ձայնով սիրաս չի մնաշես.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Հեղինէիս) քունը կը տանի։

Դուն ալ քուն եղեր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր, մանուկիս քուն տուր.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Սաթինկիս) քունը կը տանի։

Ռ. Պատկանեանց.

252.

Պանդխտի երգ.

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ։
Զը կայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Զի՛ք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին։
Բնակարան՝ տխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց։

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն։

Սակայն ունիմ քովս Ցիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ՛, Նա իմն է, սիրէ զիս։

253.

Աստղեր.

Հայրիկ, ախ, ի՞նչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ինչպէս սիրուն զարդարած է
Նա անհամար աստղերով.
Թէ ուղիղ է, որ ամեն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ինչի՞ ապա բոլոր աստղեր
Միատեսակ չեն փայլում։

Ինչի՞ համար միայն տեղ տեղ
Վառվում են լոյս աստղեր,
Իսկ մեծ մասը այնպէս մանր են՝
Ասես թէ են միայն կայծեր։
Ի՞նչ լաւ կը լինէր, որ բոլորն էլ
Այնպէս պայծառ փայլէին,
Ինչպէս ահա՛, տե՛ս, այն աստղը,
Որ վառվում է մեր գլխին։

Հա՛, իմ որդի, գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով.
Նոյնն այդպէս զարդարել է
Աստուած կարող իւր ձեռով։
Ճշմարիտ է ամեն մարդ էլ
Մի աստղ ունի երկնքում։
Եւ քեզ կ'ասեմ ինչի՛ ողջն էլ
Միատեսակ չեն փայլում։

Ինչպէս այս տեղ, երկրի վրայ
Մարդիկ միմեանց չեն նման.

Խելքով, գործով, բարք ու վարքով
Են միմեանցից զանազան,—
Ահա այդպէս էլ երկնքում՝
Բոլոր մարդկանց աստղերը
Հայելու պէս ցոյց են տալիս
Իրանց տիրոջ պատկերը։

Բայց մի՛ կարծիր, որդեակ քաղցրիկ,
Որ այն վառ վառ աստղերը,
Որոնք իրանց պայծառ լուսով
Զարդարում են երկիրը,
Հարուստներին են պատկանում
Կամ աշխարհի մեծերին.
Չէ՞. ոսկին, իշխանութիւնն
Այնտեղ ոչինչ չունին գին։

Շատ իշխան կայ, որի աստղը
Հալու հաղ է պսպղում,
Աղքատ էլ կայ, որի աստղը
Գոհարի պէս է փայլում։
Ուչ մարդ այստեղ զարդարած է
Առաքինի գործերով,
Նորա աստղն էլ միշտ վառած է
Գեղեցիկ պայծառ լուսով։

Հայրի՛կ, ախ, տե՛ս այն գեղեցիկ
Մեծ աստղը թռաւ իւր տեղից,
Թռաւ ու հանգաւ և մի պայծառ
Գիծ թողեց իւր ետևից։
Աստ, հայրիկ, այն ո՞ւմ աստղն էր,
Ափսոս, ինչի՞ նա հանգաւ.
Տե՛ս երկնքի այն մի կողմը
Ինչպէս յանկարծ մթնեցաւ։

Այո՛, որդեակ, հաղար ափսոս,
Որ պակասեց երկնքից
Այն վառ աստղը, որ գեղեցիկ
Լոյս էր տալիս վերևից։
Այս լոպէին մի ազնիւ մարդ
Աստիծուն տուեց իւր հոգին.
Մի ազնիւ մարդ, որ միշտ անկեղծ
Ծառայել է իւր ազգին...

Բարխուդարեանց.

254.

ՆՈԻԷՐ

Բաղուի «Մարդասիրական Ընկերութեան» քսանևհինգամեակին).*

Միութիւն.

«Viribus unitis».

Երբ մեր նախահայր մարդն առաջին
Խորդ ու բորդ կեանքում իւր ոտքը դրաւ
Անմեղայն գործում միութեան աջին՝
Հզոր օգնութիւն երկինքը տուաւ։

Եւ ահա խոզեր, արգելք դիմադիր
Միացած ոյժի տակ խորտակուեցին,
Եւ խոնարհուելով միշտ արամադիր
Միութեան նպատա շուրջ հաւաքուեցին։

Հնչեց միութեան ձայնը զօրաւոր
Եւ վայրի երկիրը նոր կերպ ստացաւ,
Ճշգրիտ հեռանք փորձին դարաւոր
Անտառ սկզբունք գործերի դարձաւ։

---

*) Տե՛ս «Որ վառեցեր» երգի ծանօթութիւնը։

Եւ մինչ շատերին ուրոյն և ուրոյն
Կարում ջնջում էր շանթ խռովարկիչ,
Նոցա սթափեց զարկ անագորոյն...
Կոչեց՝ «Միութիւն—այդ է մեր փրկիչ»։

Ապա միութիւն յաւիտենական
Սրբութիւն միայ և գործի պանծանք,
Նորան սիրողին հզօր օգնական
Եղաւ... գործողին՝ փառք, պատիւ, պարծանք։

Անցան շատ դարեր—կանցնի ժամանակ
Եւ այդ է և եթ անյաղթ զօրութիւն.
Եւ ձայն՝ տանողին վսեմ յաղթանակ—
«Կեցցէ գործ անսուտ—կեցցէ միութիւն»։

Արշակ Տէր-Միքէլեանց.

255.

Շուշանն Շաւարշանայ.

Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։
Պայծառ պատկեր կուսանայ
Հայոց պըսակ պարծանայ
Ճակատն 'ի քօղ խորոտիկ [1]),
Ցանած 'ի հով խոպոպիք,
Տատրակ տոտամբ [2]) մանարուքայլ
Ման գայ 'ի դաշտ յօղափայլ.
Մեղրը կաթէ շրթներուն,
Փայլկըտան աչքն սիրուն։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։

1) Գեղեցիկ. 2) Տատրականման ոտիք։

Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ
Արևնըմանն հայելի,
Արքայաղըստրիկ նազելի,
Սիրասըրնունդըն Սանդուխտ,
Որում արև ելքն ու մուտ՝
Փափագելին սրտմաշուկ,
Հարսն է ելեր շնորհաշուք։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան։
Քանց զարուսեակ պսպղղուն
Ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդենիկ արևակ
Ի խնծորի տերևակ,
Քանց երասխայ նուռնուփար
Գլխիկն ի յոդ շարուշար,
Քանց զամէնն այլ գեղեցիկ
Նազի Սանդուխտըն բամբշիկ։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Սիպտակ սառերն յայնու տես
Հալին լինին կարմրերես.
Ծառք ու ծաղկունք տան պըպղուկ [1])
Խօսի ամէն պըլպըլուկ.
Նարկիզ՝ աչեր բիւր հանէ,
Ուր որ Սանդուխտ անցանէ.
Ցայնոր շընչէն հաւասար
Ծածկին ծաղկով ձոր ու սար։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան։

1) Բողբոջ։

Բարձրապլուսակ ճակատներ
Հողու հաւասար են եկեր.
Ոսկի զոհար զեղ ցանած
Զորն են լերին հասուցած
Եւ մարգարտէ բարկ աւազ,
Ուր որ անցնի հեղանազ
Հայոց օրհորդքն Սանդուխտ՝
Տոտանց հետքին [1]) զան ի յուխտ։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Նաւարշան։

Թագուորորդի կարիճներ
Ընդ դարպասներ դուրս ընկեր,
'Ի յԱլանաց մինչ Պարսիկ,
Մինչ 'ի Հռովմ, մինչ 'ի Հընդիկ
Բերանաբաց կու նային,
Երնեկ տալով փեսային,
Որ զօրիորդն այն Հայոց
Ցիւրքն տանի տուն և ծոց։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Նաւարշան։

Բայց Սանդրխտոյ արժանի
Զրկայ մին տեղ արքունի.
Ցայնոր աչացքն կամար
Ցած գայ երկիրս ու խոնարհ.
Երկինքն ասէ, իմ դահի
Սանդուխտ պիտէ՞ր թագու հի.
Ծով՝ իմ ծրփանացքս ծիրան՝
Սանդուխտ ասէ տա՞յր հրաման։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Նաւարշան։

[1]) Հետք ոտից։

Բայց մեծ մի կայ քան զերկիր,
Լայն՝ քանց ծովուն ծրփան ծիր,
Եւ քան զերկին բարձր անհուն,
Կայ մին ահեղ թագաւոր,
Որում չըկայ չափ սինօր [1]).
Այն, և միայն այն պիտի
Փեսայ կուսին Սանդրխտի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք ի դաշտ Նաւարշան։

Իւր լոյս դարպասն է պատրաստ
Կարմիր կանաչ առագաստ,
Եւ աստղազարդ կապուտակ
Տաղաւակ առտանցն է յատակ.
Ճապուկ ճորտերն են հրեղէն,
Ուր որ նային՝ կայծ թափեն.
Ինչ որ խօսին՝ երգ է այն,
Խնտում ու սէր ամենայն։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք ի դաշտ Նաւարշան

'Ի Սանիրայ սուրբ սարէն [2]),
Փութայ փայեկրն [3]) Թագէն,
Երկնախօսիկ փեսաւէր
Օրիորդին ասայ հրաւէր.
«Տէրն այն երկնուց և երկիր,
Զոր պաշտէ քո մեծ քեռի [4])
Սիրեայ ըզքեզ սրբի՛կ կոյս.
Ե՛կ հարսնացիր ի Քրիստոս»։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՛ք ի դաշտ Նաւարշան։

[1]) Սահման։ [2]) Սանիր Պաղեստինոյ, Հայրենիք Թագէի առաքելոյ։ [3]) Կարապետ, յառաջընթաց։ [4]) Աբգար Թագաւոր։

Սանդուխտ եւաւ դարպասէն.
Ապշեց Հայոց տունն ամէն։
Սանատրուկ Հայրն որ լսեց՝
Ցոսկի Թախտէն [1]) վայր վազեց.
«Սանդուխտ, սիրուն իմ դստրիկ,
Ուրանաս դու զքո Հայրիկ,
Ուրանաս դու զԱնահիտ,
Պաշտե՞ս զաստուածն Հրէից։
«Աչացը լոյս ոսկեթել,
Աչքս արտսունք դեռ չէր կաթել.
Քեզ համար՝ դո՞ւստր աննըման,
Գեաեր յաչերս 'ի վայր գան...
Սանդուխտ, ուզէ՞ ինչ կ'ուզես,
Արամազդա՞ւ, քեզ տամ ես.
Թէ Հայաստանս է պըղտիկ՝
Զէնքս ու զօրքերս են հերիք.
«Հրամէ՛, դստրիկ իմ աղուոր,
Հայրիկդ ըլլայ քեզ զենուոր.
Առնում աղերս ու երթամ
Բոլոր աշխարհս քեզ որսամ.
Զխաքա՞նն [2]) ուզես թէ զԿեսար [3])
Բռնեմ բերեմ քեզ հաւսար.
Թէ ծովուն մէջն ուզենաս,
Բիւրեղ կանգնեմ քեզ դարպաս.
«Սանդո՞ւխտ, քու Հայր քու դերի,
Լուկ ի Հրէէդ կա՛ց հեռի.
Լսէ՛ ինձ, դուստր իմաստուն,
Լոյս իմ աչացս արեւուն,
Օտար կըրօնք մի՛ պաշտեր,
Քու հօր գլխու սև մ'ուզեր.

1) Գահ։ 2) Հռոնաց Թագաւորն։ 3) Կայսր Հռովմայ։

Սանդո՞ւխտ դստրիկ իմ սիրուն,
Ողորմէ՛ հօրդ աչերուն»։
Կոյսն կէցեր լուռ յուշիկ,
Հապա հառաչեց անուշիկ.
«Հայր, քանց ըզքեզ սիրելի
Զրկայը ոքիկ մ'ինձ յերկրի.
Բայց երբ զԱստուածն իմ գիտցայ,
Սէր՝ քանց զամէն մեծ ճանչցայ։
Պաշտէ՛ զԱստուած քո քեռուն,
Հապա չերթամ ես հեռուն։
«Ամ [1]) թէ ասես դու զՅիսուս,
Որ կեանք բերաւ մեր հոգուս,
Թէ զես չուզես քրիստոնեայ.
Թէ այլ խօսիս զԱնահտայ,
Սանդուխտ այլ չէ քո դստրիկ,
Սանատրուկ չէ իմ Հայրիկ.
Յիսուս՝ իմ Հայր իմ փեսայ.
Այս իմ վերջին խօսքն ըլլայ»։
Զայս վերջին խօսքն երբ լսեց,
Սանատրուկ դէմքն ծածկեց.
Փերթ մի փըրթաւ ի սրրատէն
Եւ հեռացաւ Սանդրխտէն.
Կանչեց նրման առիւծու,
Երդուաւ լուսնի ու արեւու.
Զէտ ըզկայծակ սև ամպուն
Բերնէն փըչեց բօթ մահուն։
Դողաց սարսեց Հայաստան.
Սանդուխտ վազեց ի զընդան.
Կարծըր կոճղիկն ըրաւ գահ,
Զարդերն ամէն փայլեն մահ.

1) Բայց։

Կուսական քոզքն սեւակ
Սիպտակ ճակտին վայլէր թագ.
Բիւրեղ բազկացն ապրանքն
Պողվատ շղթայք շքեղանքն։
Սուրբ առաքեալն Հայոց լայր,
Կապից կուսին պագիկ տայր.
Երկուսն եկած միաբան
Փրկչին յերկինք փառք կու տան.
Զայն Սանդխտին շարժէր սիրտ
Հայք Թողուին զԱնահիտ.
Քընար քքրմին մընայր մունչ.
Լքսէր սաղմոս հոգեշունչ։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։
Ահա եկեր կոյսն Հայոց
Փրկչին երթայ հարսն 'ի Ծոց.
Զէտ բարկ արեւ յարշալոյս
Բեհեղազարդ սուրբքն կոյս
Կանգնէր պայծառ ի դիմաց
Հայոց հաղար բիւր զօրաց.
Գետին թընդայր ի հիմանց
Երկինք շարժէր ի նախանձ։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։
Սանատրուկոյ սեւ հրաման
Հնոցի ծրեսոյն դայր նման.
Կրծէր աչաց բարկ արտասունք,
Լային կուսանք և հարսունք.
Ի մոր գրկին տղայն լայր,
Մայրքն լալով յետ դառնայր.
Կարիճ տղայ միաբան,
Եւ լայր ամէն Հայաստան։

Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։
Ամէնք կանչեն, «Թագուհի,
Ողորմէ Հայ աշխարհի.
Քո թագւոր հօրդ արեւուն,
Քո աննըման լուսերուն.
Ապրի՛ր, Սանդուխտ, մի՛ մեռնիր,
Մի՛ բերեր մութ մեր երկիր.
Սանդուխտ, ամէնս քեզ գերի,
Ողորմէ Հայ աշխարհի»։
Սանդուխտ երկնից լսէ լոկ
Եւ լացերուն կայ անհոգ։
Լալով զինուորքն յառաջ գան,
Զէնքերն ի յուս կու գողան։
Նատ լարեցան աղեղունք,
Նատ թափեցան դիակունք.
Բայց չզրտաւ մահ տեղի
Ի գեղեցիկ Սանդրխտի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան։
Նրման ծաղկանց կարկտահար
Երբ նա դիտեց զօրս հաղար
Զիրար զարկած և ընկած
Ու զմահն իրմէ սարսափած,
Նարժեց զձակատն սիրուն.
Արտասունք ածեց աչերուն,
Եւ հառաչեց առ Ցիսուս.
«Տէ՛ր իմ, հրաման տուր հոգուս»։
Երիտասարդ մի յանկարծ
Կայծակնաթափ սուր շողաց.
Ուսկի՞ց արդեօք էր եկեր.
Դահի՞ճ, թէ տաք սիրոյ տէր.

Երկի՞նք՝ թէ հաՅրն էր զբրկած.
Ոչ ոք գիտէ զայս գիտուած։
Սուրբն շողայ ու զարկաւ...
Շուշան Սանդուխտ՝ վարդ ընկաւ։
Սուրբն շողայ մէկ մի փայլ
Սանդուխտ ծաթեց իրեք այլ.
Կարմիր կաթեր ի կրծքէն
Վարդեր բուսան ջրբ գիէն.
Աչքն կոկոն մանուշակ,
Ամ՝ ի՞նչ նայուածք անուշակ.
Ափիկից.ք շուշանք կիսափակ.
Մէջ շրթներուն ի՞նչ կրբակ։
Ի ծայր լերին Սանտարուկ [1])
Հրեղէն կառքեր տեսնէ՞ք դուք.
Հոն երկնաւոր թագաւորն այն
Հոն Սանդրխատ՝ է փեսայն.
Զօրիորդն հայ աշխարհի
Նախ քան զամէն փկայուհի
Ընտրեց իւր հարսքն կարմիր,
Հանեց թըռուց յերկնուց ծիր։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէ՞ք 'ի դաշտ Նաւարշան։
Թերթեր ճերմակ ու կարմիր
Ներկեր երկինքն են ւ երկիր.
Ելէ՞ք, կուսանք, ժողվեցէ՞ք,
Վարդն ու շուշան զուգեցէ՞ք.
Դրբէ՞ք գալար զայն մարմին
Թագէի հետ ի շերմին։
Սանդուխտ, Հայոց կոյս քրնքոյշ
Հանդչէ ի հողս այս անոյշ։

[1]) Լեռան յանուն արքային։

Կուսանք Հայոց, քեզ շուշան
Բերեն ի դաշտ Նաւարշան։
Ո՜հ, թէ քանի՞ երջանիկ
Է Հայաստան հայրենիք՝
Որ հանց բերաւ բոյս կուսան,
Ուսկից հազար կոյսք բուսան։
Երկինք կապուին երկրի հետ.
Քեզ ի՞նչ երգէ Նահապետ,
Սանդուխտ, անմահ թագուհի
Իմ Հայաստան աշխարհի։
Կուսանք Հայոց, նոր շուշան
Բերէ՞ք ի դաշտ Նաւարշան։

Հ. Ղ. Ալիշան.

256.

Մանեակ էքնաղ պարանոցիդ կապեցի,
Կապեցի, ո՛հ, կապեցի.
Այս իմ նոր երգ քեզ յիշատակ մատուցի,
Մատուցի, ո՛հ, մատուցի։
Արեգական դու նման ես գեղեցիկ,
Գեղեցիկ, ո՛հ, գեղեցիկ.
Նման յերկինս և քեզ յերկրի նման չի՛ք,
Նման չի՛ք, ո՛հ, նման չի՛ք։
Բաւական խմբից իշխանութեանց թագուհի,
Թագուհի, ո՛հ, թագուհի.
Սիրա սիրով գ.քեզ Ջանամ սիրել, տիրուհի,
Տիրուհի, ո՛հ, տիրուհի։
Իմ լեղուի բանք գովել գ.քեզ ո՛չ բաւեն,
Ո՛չ բաւեն, ո՛հ, ո՛չ բաւեն.
Վարժ.ք մուզայից, դասք վերայնոց թո՛ղ գովեն,
Թո՛ղ գովեն, ո՛հ, թո՛ղ գովեն։

Աստուածային տաճար Մարիամ արդ ուր է,
Արդ ուր է, ո՛հ, արդ ուր է.
Զանք մեր սրտի ասա զտանել 'ի զուր է,
'Ի զուր է, ո՛հ, 'ի զուր է։
Մշտականանչ սարդ վարդենի վայել է.
Վայել է, ո՛հ, վայել է.
Թէ Մարիամ անդ զտանի, ուր կայանն,
Ուր կայանն, ո՛հ, ուր կայանն։

257.

Տաղ Խաչի.

Հաւիկ մի պայծառ տեսի աննման. ի յայն խաչափայտին վերայ աննման. աննմանիդ ո՛վ նման դու նման։

Զթիւս արծաթափայլս ունէր աննման. արեգական շողոյն նման աննման։

Զձայնիկն ողորմուկ ածէր աննման. Գաբրիէլեան փողոյն նման աննման։

258.

Տաղ Յարութեան.

Թիւրակարծէր Թովմայն մտօք, (2)
Զև էս մխեալ զկողն ձեռօք. (2)
Մէք ո՛չ տեսեալ, սոսկ լսելեօք
Հաւատայաք սուրբ յարութեանդ, (2)

Որով առաք մեք զերանին, (2)
Զի մինչ լուաք զլուր բանին, (2)
Որ 'ի Տեառնէ ըստ Պօղոսին,
Հաւատայաք սուրբ յարութեանդ։ (2)

259.

Տաղ Հոգեգալստեան.

Մեռեալ հոգւոյ նորոգող,
Զկեանս տուող համայնից.
Զքեզ գաւանիմք սուրբ հոգի,
Հօր և Որդւոյ փառակից։

Զքեզ աղաչեմք միաբան,
Ո՛վ մարդասէր սուրբ հոգի.
Քո շնորհացդ երկնառատ
Արա զմեզ արժանի։

Հե՛ղ դու այսօր քո սիրով
Ի վերայ քո ծառայից,
Որք յօժարին զալ առ քեզ,
Մաքրիլ 'ի քէն սուրբ հրով։

260.

Երգ Փառաբանական.

(զկնի Տէր երկնից)։

Փառք 'ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն. և օրհնութիւն քեզ 'ի բարձունս։ Օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք, աւէր զքեզ, և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք, Տէր, զքէն վասն մեծի փառացդ քոյ։ Տէ՛ր թագաւոր Սուրբդ երկնային՝ Աստուած և Հայր Ամենակալ։ Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և Սուրբ Որդի։ Տէ՛ր Աստուած՝ գառն Աստուծոյ և Որդի Հօր՝ որ առեր զմեղս 'ի Կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ։ Զի Դու

միայն Սուրբ՝ Դու միայն բարձրեալ ես, Դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ Սուրբ, որ 'ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր՝ և զովեմք զանուն սուրբ քո յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից: Արժանի՛ արա, Տէ՛ր զօրս զայս խաղաղութեամբ՝ և առանց մեղայ պահեա զմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. զովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն: Օրհնեալ Տէր՝ ուսո՛ զինձ զարդարութիւնս քո: (Երիցս կրկնեա՛):

Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես ասացեմ, Տէ՛ր ողորմեա՛ զինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ: Ցոյց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քո՝ և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ: Տէ՛ր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Տէր իմ զքեզ ապաւէն զինձ արարի. ուսո՛ զինձ առնել զկամս քո. զի Դո՛ւ ես Աստուած իմ: Ի քէն է, Տէր՝ աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ. Տէր:

«Ժամագիրք».

261.

Սրբոյ զատկի (Ա.ձ.)

Այսօր յարեաւ 'ի մեռելոց Փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն 'ի յերկրէ եկեղեցի. օրհնեա՛ 'ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

Այսօր անձնաւ լոյսն 'ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեա՛ Երուսաղէ՛մ քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա՛ 'ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

Այսօր խաւարն անդիտութեան հալածեցաւ երբեակ

լուսովն. և քեզ ծագեաց լոյս դիտութեան յարուցեալն 'ի մեռելոց Քրիստոս. Օրհնեա՛ 'ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

«Շարական».

262.

(Բկ.) Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք, և զսուրբ զթաղումն քո մեծայուցանեմք. և զսուրբ զյարութիւնդ քո փառաւորեմք: Եկա՛յք, հաւատացեալք. երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասնզի եկն 'ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի. Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ յարեար 'ի մեռելոց՝ ողորմեա՛ մեզ: (Այսպէս երիցս կրկնելով):

Փառք սուրբ Խաչիդ, ալէլուիա. Խաչեցելոյդ, ալէլուիա, սուրբ յարութեանդ, ալէլուիա: Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և եռուր ուրախութիւն սրտից մերոց: 'Ի պաղոյ ցօրենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա: (Այսպէս երիցս կրկնելով):

«Մաշտոց».

«ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ» ԱՂԵՐՍ.

263.

Ի Ծնունդն Քրիստոսի.

Անժամանակ Հօրն ծընունդ
Եւ սուրբ Հոգւոյն միշտ համադոյ
Բան անմարմին. այսօր յայրին
'Ի սուրբ կուսէն առնուս մարմին
'Ի հրեշտակայ Տէր քարոզեալ.
Բան հրեշտակայ 'ի դասս հովուաց՝
Հովիւքն 'ի յայրըդ փութային.
Եւ աստղն մոգուցն աւետաւոր՝
Երկրպագուք 'ի Քեզ եկին
Ոսկի, կընդրուկ, զըմուռ բերեալ:

264.

'Ի Մեծի պահոց Կիւրակէսն.

Խաւար մեղայ մարդկան ազգի
Անցեալ քան զչափըն սահմանի՝
Խոնարհեցար յերկնից առ մեզ
Լինել փրկիչ խոնարհ և հեզ
Ի խաւարէն մեղայ փրկեալ.
Ծանրը եդան առաջի Քո
Խաչ, չարչարանք, թուք և ապտակ.
Զայս ամենայն սիրով տարար.
Զի փրկեսցես զմեզ 'ի մեղայ
'Ի Խաչին՝ Հօր պատարագեալ:

265.

'Ի Ցեառնընդառաջն.

Կամքըն Հօր՝ քառանօրեայ
Մանուկ անրիծ և անարատ,
Սիրով եկիր 'ի սուրբ Տաճարն
Գրկեալ Ծնողիդ զիրկ սրբասուն
Զօրինացըն ձև կատարեալ.
Հանդէպ եղեալ Քեզ Ծերունին
Սուրբ Սիմէօնն Աստուածընկալ՝
Գրկէր, օրհնէր. 'ի կապանացն
Արձակել զենքն 'ի Քէն հայցէր.
Ըզքեզ Հոգւովն Տէր ճանաչեալ:

266.

'Ի Ծաղկազարդն.

Ճանաչեցար Էմմանուէլ
Քարոզեցար Մեսեա արդար.

Այսօր ուրախ յ Երուսաղէմ
Փութաս Յիսուս Տէր բարերար՝
Զմարգարէից տառս լցուցեալ.
Մանկունք և Ծերք, արք և կանայք
Արմաւենեաց ոստս 'ի ձեռին
Քեզ ընդ առաջ ելեալ ուրախ՝
Օրհներգութիւն միշտ երգէին
Ովսաննայ 'ի բարձունս օրհնեալ:

267.

'Ի Զատիկն՝ Յարութիւնն Քրիստոսի.

Շնորհօք Հօր Քո և սուրբ Հոգւոյն
ԶԱստուածութիւնդ այսօր ցուցեալ
Ըստ կանխատաց բանիդ օրհնեալ
«Թէ յետ երից աւուրց յառնեմ»
Ահա 'ի Քեզ այժմ կատարեալ.
Ո՛չ կնիք զօրեաց քահանայից,
Ո՛չ պահպանացն հսկողութիւն.
Դու հրաշափառ, Աստուածաբար
Գերեզմանէն այսօր յարեար
Անմահ կենացն մեզ զրաւ եղեալ:

268.

'Ի Յարութեան կիւրակէսն.

Սառն ցրտութիւն մարդկան բարուց
Հրով Սիրոյդ ջերմացուցեր,
Անհաւատ սիրտքն 'ի կեանս անմահ
Հաւատացին աւուրս շնորհիւ՝
Այսօր տեսեալ զՔեզ յարուցեալ.
Վարձահատոյց Յիսուս Փրկիչ
Եւ զմեզ յարո՛ 'ի կեանս անմահ.

'Ի մեզ կենացն յաւիտենից
Հաւատն ու յոյսն կանգուն պահեմ
Զքեզ տեսանել 'ի փառս յայտնեալ։

269.

'Ի Կաթուղիկէ Եկեղեցին Սրբոյ Էջմիածնի.

'Ի քեզ այսօր, ո՜վ սուրբ Տաճար,
Մայր Տաճարաց ազգիս Հայոց,
Ամենասուրբ Երրորդութեան
Փառքն ծագեաց լուսաշողշող.
Քաղաքամէջն զըզարդ տալեալ.
Սիրովդ տենչան որդիք Հայոց
Լուսաւորչին սուրբ ձեռակերտ.
'Ի սուրբ գրկէդ միշտ ելանեն
Օրէնք վարողք զմեզ անսասան՝
Լրութիւն ազգիս ամրողջ պահեալ։

270.

'Ի Վարդավառն՝ Պայծառակերպութիւնն Քրիստոսի.

Փրկի՛չ Յիսուս՝ որ 'ի Թաբոր
Դու յայլակերպս պայծառացար,
Մովսէս, Եղիա յամսին երևեալ,
Երրորդութեան խորհուրդ յայտնեալ,
Աստուածութեանդ փառս անդ ցուցեալ.
Այսօր և մեք հաւատացեալքս
Ընդ Պետրոսի առ քեզ ձայնեմք՝
Արասցուք քեզ սուրբ տաղավար
Ըզսիրաս, հոգիս. տէ՛ր բարերար,
Է՛ջ 'ի նոսին շնորհաբդ փայլեալ։

271.

'Ի Վերափոխումն Սուրբ Աստուածածնի.

Խիստեալ պըտակ քեզ՝ Միածնիդ
Յաւուրս փոխման քո 'ի յերկին,
Տայ քեզ ո՞վ սուրբ Աստուածածին
Զհոգիդ էքնաղ յինքն գրաւեալ,
Մարմնով յերկինս վերափոխեալ.
Ծանո՛ն նըմա զհոգս աշխարհի
Սուրբ Մայրապետ մարդկան ազգի.
Հայցեա՛ բարիս, խաղաղութիւն.
Եւ մեր մեղաց ըզթողութիւն.
Կատակ չարեացն 'ի մէնջ բարձեալ։

272.

'Ի Սուրբ Վարդանանց զօրավարն.

Թագաւորին երկնաւորի
Հանդիսացայք քաջ զօրականք
Վկայք Տեառն Սուրբ Վարդանանք.
Ընդդէմ զէնին զբաղաշատական
Դրբոշ Խաչին յաղթող պարզեալ.
Ժառանգ երկնից սուրբ Տերութեան
Համարեցայք մեծ իրաւամբ.
ՑԱրտաշ եատք ոսոմ յաղթական
Զազգ և զաշխարհ և ըզլեզու
Զեկեղեցի Հայոց փրկեալ։

Մեկնութիւն սուրբ Պատարագի.

273.

Ի Մեծահանդէս աւուր չորրորդ տարեդարձի սրբոյ Օծման) Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց.*

Ո ւ ղ ե ր ձ.

Յորդոր ի ձայն երգոց յաւաչ
Ել կէ արփիդ Հայաստանեայց,
Որ 'ի բարձանց ողջունս բեր
Գաս աւետել մեզ նոր հրաւէր:

Լուսաւորի Տունն Աստուծոյ
Ի կենսաձիր ճառնանչս քո,
Լուսաւորի Գահոյք փառաց
Հօրն հաւատոց և Հայրենեաց:

Յորդոր ի ձայն մեծաբարբառ
Տուն Թորգոմայ հարի քնար,
Զանուն Վեհի Հայրապետին
Զպանծալի դրծս Նորին:

Զքրանաչան երկս ճգանց
Ի փառս ազգի և Հայրենեաց,
Զսէրն մեծ և զհաւատս
Զգուլթն առ հօտ իւր խանդակաթ:

Հոչակեցէք ի սիրտ բոլոր
Զտարփալին սիրայորդոր,
ԶՏԷՐ ՄԱԿԱՐ զարժանագոյնն
Պարթևական Սրբոյ Գահուն:

Փունջս հիւսեցէք պսակ զարդու
Զչնորհափայլ Վեհ ճակատու,

*) Ազգիս Վեհ. Հայրապետի Օծման մեծաշուք և փառաւոր դանդէսը կատարուել է 1885 Թ. Նոյեմբ. 10-ին:

Գ. Ք. Գրիգորեանց.

Հարէք զովէք կեցցէ յաւէտ
Տէր Տէր ՄԱԿԱՐ մեծ Հայրապետ:

Մ. Պալեան.

274.

Նորակոչ զինուորի երգը.

Ես եմ քաջ զինուոր,
Զուներմ մաքուր շոր,
Հրացանը ձեռքիս
Շրջեմ ամեն օր:
Քայլ մ'յառաջ, քայլ մ'ալ յետ,
Զոյգ քայլենք իրար հետ,
Փշրեցէք թշնամիք
Ազատել հայրենիք:
Դէ՛հ, եղբարք, շտապով
Քայլ փոխենք մենք շտապով,
Շուտ վանել թշնամիք,
Ազատել հայրենիք:
Պարզ արև երկնքում
Մեզ վերայ է խնդում,
Ինչու՞ մեր ազգութիւն
Ջ'սիրէ միութիւն:

275.

Ժողովրդական երգ.

Բոյրդ բարձր սարվի չինար,
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դու ստեղծուել ես ինձի համար,
Անդի՛ն ծաղիկ իմ նոր բուսած:
Գոյնդ նման է մարմարի,
Հագած զուքսերդ յարմարի,

Ինձ թողել ես չարչարուելով,
Անգի՛ն ծաղիկ իմ նոր բուսած։
Երբ քեզ տեսայ ծաղկանց մէջին՝
Աղաչեցի իմ Փրկչին,
Որ չը կարէ յոյս իմ վերջին,
Անգի՛ն ծաղիկ իմ նոր բուսած։

276.

Մին Աստուած է.

Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ. քանի՞ են, երկուքն ի՞նչ է.
—Երկու տախտակ Մովսէսի, մին Աստուած է։
Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ. քանի՞ են, երեքն ի՞նչ է.
—Երեք նուէր մոգուց, երկու տախտակ Մովսէսի, մին Աստուած է։
Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ. քանի՞ են, չորսն ի՞նչ է.
—Չորս աւետարանիչ, երեք նուէր մոգուց, երկու տախտակ Մովսէսի, մին Աստուած է։
Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ. քանի՞ են, հինգն ի՞նչ է.
—Հինգ են վէրք Քրիստոսի, չորս աւետարանիչ, երեք նուէր մոգուց, երկու տախտակ Մովսէսի, մին Աստուած է։
Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ. քանի՞ են, երկոտասան ի՞նչ է.
—Երկոտասան առաքեալք, մեռասան հազար հրեշտակք, տասն են սուրբ պատուիրանք, ինն են դասք հրեշտակաց, ութ են խորհուրդ վերին, եօթն են խօսք Տիրամօր, վեց են աւուրք արքոյ, հինգ են վէրք Քրիստոսի, չորս աւետարանիչ, երեք նուէր մոգուց, երկու տախտակ Մովսէսի, մին Աստուած է։

277.

Ժողովրդական երգ.

Լուսնեակ գիշեր, բոլորովին քուն չունիմ,
Ինձ տեսնողը կարծում է թէ տուն չունիմ։

Ինչպարանս լուսնեակի հանդէպն է,
Կեանք, խնդութիւն պարզ գիշերուայ լուսնեակն է։
Մի՛ լար, մի՛ լար, մեռնեմ կամար ունքերուդ,
Արտասուքը զարար կու տայ աչերուդ։
Թէ մտածենք, խորհուրդ անենք միասին՝
Կամուսնանք, չենք սպասիլ մեծ պասին.
Բայց թշնամին իւր ուզածը կատարեց,
Ինձ քեզանից, քեզ ինձանից բաժանեց։
Մի՛ լար, մի՛ լար, մեռնեմ կամար ունքերուդ,
Արտասուքը զարար կուտայ աչերուդ։

278.

Պատրիարք Ներսէս Վարժապետեանի մահը.

Հայաստանի արեգակը
Արևմուտքէն խաւարեց,
Տաճկահայոց յոյսն Ներսէս
Իւր սուրբ հոգին աւանդեց։
Տաճկաստանցին երկինք նայեց,
Տեսաւ ասող մի խաւարած,
Գլխին տալով շատ արտասուեց,
Մեծի մահը զուշակեց։
Ո՛անցաւ մէկ ժամ, Պօլիս զուժեց
Տխուր լուրը Հայ ազգին,
Նախածանօթ տաճկաստանցին
Աղերսումէր լալագին։
Խաս գիւղի պայծառ աստղը
Էլ չի փայլում երկնքում,
Որովհետև մեծն Ներսէս
Ընկղմուած է խոր քնում։

279.

Թող կորնչին տաճիկները
Հայաստանի սուրբ հողէն,
Իսլամական անարդ լուծը
Ջնջուի Հայաստանէն։

Բաւական է ոլքան նոքա
Հայի արիւն ծըծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով
Պետութիւն պահպանեցին։

Հայի փողը, Հայի հացը
Մինչև ե՞րբ տաճիկն ուտէ,
Իւր գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ։

Վրիժուց կայծակ թող բորբոքուի
Հայ տուծների սրտում՝
Թաղել իսլամի գլուխը
Դիւցազների երկրում։

Սրով սրի դէմ մարտնչել
Արեան դէմ՝ արիւն վօթել
Իւր մի հաւը գողացողին՝
Ամբողջ տունը թալանել։

Աչքի տեղ՝ աչքերը հանել,
Ատամի տեղ՝ ատամը.
Իւր մի հարուածի փոխարէն—
Նոցա մաս մաս կոտորել։

280.

Գիշերն անցաւ, լոյս ծագեց արդ,
Աշխատութեան ժամ է, ողջոյ.
Օն երկաթաց շուինդ և պայտ
Պատկին օրուանս այս աշխատանք։

Օն այս երկաթ ծեծենք մենք,
Որ զուր տեղը ծեծ չուտենք,
Զարնենք կարգաւ տիկ տակ տրակ,
Ծեծենք, ծեծենք տիկ տակ տրակ։

Բայց բռնաւորն ալ գնաց,
Պատեհ առիթ մեզ մնաց,
Գրկենք զերար և պարենք
Երկաթ վերջը կը ծեծենք։

Տրայ ըի ըի ըի ըի բամ։

Օն գրկենք մենք, ողջոյ,
Պարենք առնենք յաղթանակ,
Օն գրկենք մենք զերար,
Պարենք անփոյթ, անգաղար։

Այս գերութեանց դառն կեանք
Անփոփոխ չեն և կապանք,
Գոհ սրտով և զուարթ
Օրհնենք զԱստուած մեր արդար։

281.

Մատաղութիւնք Աղթամարայ ծովակի եղերքին.

Զա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չկամիս դժբաղդիս.
Շարժեցէ՛ք զեփիւռ ալիքը վէտ վէտ,
Խառնեցէ՛ք արտասուքս այս ջրերիս հետ։

Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այդպէս կ՚մնայ Հայաստան,
Փշալից անապատ երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի
Կլինի ծառայ օտար իշխանի,

Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին
Անարժան է հայն և հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել դէպ Իւրեանց սիրուն հայրենիք։

Դժուար այդ. միայն, Տեսուչդ վերին,
Կենդանացրու հայութեան հոգին,
Ծագի՛ր նոցա դու քո լոյս գիտութեան,
Որով իբր հակք նոքա բանական,
Կ'ճանաչեն մարդուս կեանքի խորհուրդը,
Կրլինի գործովք Տիրոջ փառաբան։

Յ. Մելիք-Յակոբեան.

282.

Սոխակին.

Ուզո՞ւմ ես դու, սիրո՛ւն սոխակ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Շնչել վարդի բոյրն անուշակ—
Թռի՛ր դէպի հայ աշխարհ։

Ուզո՞ւմ ես դու հնչել անվախ
Երգըդ զողարիկ, զգայուն,
Երգել սիրոյ ժամեր խաղաղ—
Թռի՛ր դէպի հայաստան։

Այնտեղ պայծառ, այնտեղ անոյշ
Քեզ կը ժպտայ ճոխ գարուն.
Այնտեղ վարդի ծոցում քնքոյշ
Դու կը գտնես սէր անհուն։

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արև, վառ աստղեր.

Այնտեղ ծիծաղ, ժպիտ, բերկրանք,
Այնտեղ կեանքն է անվերջ սէր։

Թռի՛ր, սոխակ, դու հարազատ
Երգիչ սիրոյ զգացման.
Թո՛ղ բիրտ երկրում ագռաւն ագռատ
Հնչէ սիրով իւր ջաղան...

Ա. Ծատուրեան.

Պետրոսեան
Սերեբրակեանց
Սարաբեան

«ՍՈԽԱԿԻ» ՑԱՆԿԸ·

	ԵՐԵՍ·
Արքային Ռուսաց։—Գ. Ֆ. Գրիգորեան	7
Աշխարհէ աշխարհ։—Ս. Սարկաւագ	8
Աւարայրի գաշտը։—Ջիւանի	11
Անցան օրեր։—Է. Տէր-Գրիգորեան	12
Աղջկե՛ր, պա՛ր բռնեցէք։—Ղ. Աղայեանց	13
Աղօթարանը բացուեցաւ։—Գամառ-Քաթիպա	15
Անհոգ ես, չես գիտեր։—Ջիւանի	16
Ազատն Աստուած այն օրից։—Մ. Նալբանտեան	«
Ահա ծագեց կարմիր արև։—Բաֆֆի	18
Արի՛, իմ սոխակ։—Գամառ-Քաթիպա	19
Արի՛ ինձ անգա՛ջ կալ։—Սայեաթ-Նովա	22
Առ քեզ, ահա՛։—Յ. վ. Փինաչեան	23
Ազնի՛ւ ընկեր, մեռանումեմ։—Ս. Շահազիզեան	24
Ահա բաժակ ուրախութեան	25
Ահա սուրհանդակի սայլակը	26
Ահա՛ հրեշտակ ոսկեփետուր։—Գ. Ապտուլլահ	27
Ա՞յ մարդ, այսօր շատ քնեցար։—Ռ. Պատկանեան	28
Այն ի՞նչ աղգ է։—Ֆ. Պատկանեան	29
Անի քաղաք։—Աղ. վ. Արարատեան	30
Առ ընկալ 'ի գիրկդ։—Տ. Փափազեան	32
Ասումես դիմացի՛ր։—Աղբար-Ադամ	«
Ահա՛ եկաւ մեր գարուն։—Ա. Գրիգորեան	33
Արկածք Հայոց ժամանակին	34
Արի՛ք Հայկազունք։—Յ. Սրվանձեան	36
Ախո՜ս քեզ։—Ս. վարդապետ	37
Ակնապիշ անձայն։—Ռ. Պատկանեան	40

Աղնի՛ւ ընկեր, ինչո՞ւ այդպէս։—Ա. Գրիգորեան . . 41
Արև, արև։—Ս. Սափարեան 42
Այսօր ուրախ։—Ա. Գրիգորեան 43
Ակուռիին մեծ կարասին։—Ե. վ. Զագրճեան . . . «
Այն ո՞վ է կանգնած.—Ռ. Պատկանեան 44
Ահա՛ այն էքնաղ։—Արշակ 49
Արդեօ՞ք ե՞րբ լինի։—Կ. Յովհանջանեան 51
Այն աշխարհն պատուական է։—Պ. Մադաթեան . . 53
Աստուած բարի տայ։—Մ. Փ. 53
Առաւօտ կանուխ։—Գամառ-Քաթիպա 54
Արի՛ք, որ երթամք 56
Ա՛ղէի, Մայի։—Աղ. Արարատեան 57
Ահա՛ մեր տան առաջին։—Կ. Տէր-Դաւթեան . . . 59
Այսօր տօն է ծննդեան։—Մ. Քերթող 60
Արի՛ Աստուած հարցն մերոց։—Ս. Կաթողիկոս . . . «
Մնժամանակ հօրըն 317
Այսօր յարեաւ։—Շարական 316
Բա՜մ, փորոտան։—Հ. Ղ. Ալիշան 61
Բարի, գեղեցիկ։—Ջիւանի 62
Բաժակներ առնունք։—Ռ. Պատկանեան 63
Բաւական է մեղ։—Մ. Փ. . . . . «
Բա՛-բա, բլաստրակ։—Աղ. Արարատեան 64
Բաբէ, քանի հրաշափառ։—Վ. վ. Մանկունի . . . 65
Боже, Царя храни!—Жуковскій 67
Բարեկամ։—Գր. Նիկողոսեան 163
Բոլորդ բարձր սալվի չինար 323
Գեղամայ ծովակ։—Նէեմիա 68
Գարուն Հայաստան։—Ս. Փափազեան 73
Գարուն է եկել։—Ռ. Պատկանեան 74
Գիւղական աղջիկ եմ 75
Գողթա՛ն մանկտի, ահա՛, ձեզ 76
Գոռոզ թշնամւոյն. 77
Գիշեր ցերեկ կըհառաչեմ . . . . . «
Գեղեցիկ Արմենուհի։—Մ. Փ. 78
Գո՛հ ենք քեզանից։—Ս. Շահազիզեան 79
Գիշերն անցաւ 326
Դու զո՞վ խնդրես։—Մ. Պէշիկթաշլեան 80

Դու տեսնե՞լ ես երկնքումը։—Ռ. Պատկանեան . . . 81
Դուք տեսնե՞լ էք վանդակում։—Տ. Կ. Արզումանեան . 82
Դեռ նոր եկած։—Ս. Սափարեան 84
Ելցո՛ւք հապճեպ։—Հ. Ղուկասեան 86
Եղբա՛ր, ուժից ընկած։—Գ. Բարխուդարեան . . . 88
Երեկոյ էր։—Ի. Բագրատունի 89
Երբ սկսվի օր։—Նոյնը 90
Երբ որ բացուին . . . . . «
Եղբա՛ր, մի շուրջ։—Ռ. Պատկանեան 91
Երգի՛ր, Սոխա՛կ։—Ա. Գրիգորեան 92
Ես լսեցի մի անոյշ ձայն։—Ս. Շահազիզեան . . . 93
Երկու գրենադեր։—Գ. Բարխուդարեան . . . . «
Ես եմ որբիկ 95
Երկինք զուարթ ակնարկէր 96
Երբ պանդոկումն եմ—Գամառ-Քաթիպա 97
Ելէ՛ք, ելէ՛ք, օն դուք աստի 98
Երկու աչքով կոյր։—Գ. Բարխուդարեան 99
Երբ որ հողից։—Ռ. Պատկանեան 101
Երբ մանուկ էի։—Ս. Սափարեան 102
Եկա՛ք, ընկերք։—Ա. Գրիգորեան 104
Երբ ուզում ենք։—Յ. Սոխակեան 105
Եթէ ծաղիկներն։—Մ. Ալիխանեան 106
Ես շատ կսիրեմ։—Նոյնը 107
Երկնակամարի կապուտակ։—Յ. Տէր-Գրիգորեան . . 108
Երբ մեր նախահայր։—Ա. Տէր-Միքէլեան 303
Ե՛կ Տէր Յիսուս 109
Ես եմ քաջ զինուոր 323
Եղբա՛յր, ասա՛, ասա՛ ինձ 324
Զի՞նչ գքեզ ստիպեաց։—Մ. Շաղուբաթեան . . . 110
Զքեզ որդիք Արամեան։—Հ. Փափազեան 112
Զինուոր էի։—Գամառ-Քաթիպա 114
Զարմանք բան է։—Ռ. Պատկանեան . . . . . «
Զարթի՛ր, մա՛յր Հայաստան։—Գ. վ. Այվազեան . . 116
Զձայն մանկանց 117
Զինուորիս երգերը։—Գ. Դոդոխեան . . . . . «
Զէյթունն անկախ։—Մ. Փ. 118
Զարթի՛ր, մանուկ։—Գամառ-Քաթիպա . . . . . «

Զարթիր, որդեակ։—Խ. Ն. 120
Զարթիր, սիրտ իմ վշտահար 282
Էՙր հեռանաս։—Յ. Կարինեան 121
Թագաւորին երկնաւորի։—Մեկնութիւն ս. Պատարագի . 321
Թէ որ ամպերէն։—Ս. Սարկաւագ 122
Թէ իմ ալևոր։—Ռ. Պատկանեան 125
Թուչե՛նք դէպի լոյս։—Ա. Գրիգորեան 126
Թէ իմն հայրենեաց։—Ս. Ֆէլէկեան . . . . . «
Թէ ծխաքարշը ձեռիս։—Բ. Պատկանեան 129
Թուքը հասաւ։—Ս. Սափարեան 130
Թո՛ղ փչէ քամին։—Գամառ-Քաթիպա 131
Թշուառ Հայաստան։—Պ. Մադաթեան 132
Թո՛ղ կորնչին տաճիկները 326
Թիւրակարծէր Թովմայն 314
Ժամանակաց անցից։—Գ. Զ. 135
Ի քեզ այսօր 320
Իմ վեհ հայրենեաց։—Յ. վ. Փինաչեան 137
Ի խումբ ի պար։—Ս. Փափազեան 139
Ի բիւր ձայնից։—Պէշիքթաշլեան . . . . . «
Ի զուր են, ի զուր։—Խ. եպ. Գալֆայեան 140
Իմ արևը, այ մարդ։—Աղ. Արարատեան 141
Իմ խայրենեաց խոգի Վարդան 142
Իմ սիրելի զաւակունքս 143
Ինձ համար չէ։—Բ. Պատկանեան 144
Իմ հայրենիքս զիս կ'կանչէ։—Ա. Հայկ 145
Ի ենջմանէդ արքայական 146
Իմ անվարքութիւնս։—Մ. Մելիքեան 147
Ի՞նչ անենք։—Գամառ-Քաթիպա 148
Ինչպէս ընդհանուր։—Խրիմեան Հայրիկ 46
Ի՞նչով պէտք է 150
Իմ սիրոս վշտահար ա։—Կարին . . . . . «
Ի բարձունս երկնից։—Ս. վարժ. Պատկանեան . . . 149
Լցրէք, եղբարք, ձեր բաժակները 151
Լսեցէք, ո՛վ իմ հայեր։—Յ. Քուչուբէգեան . . . 153
Լու և տխուր։—Ն. Զօհրապեան 154
Լռեց։—Գամառ-Քաթիպա 155
Լսիր, մանուկ Հայաստան։—Մ. Փ. 156

Լուսնեակ գիշեր 324
Խնդա՛ այսօր, Հայաստան 156
Խելքս ու միտքս։—Մ. Բուտաղեան 157
Խորհուրդ մեծ և սքանչելի։—Շարական 158
Խաւար մեղաց 318
Խաչի Քո Քրիստոս։—Մաշտոց 317
Ծովի գէմ նստած։—Նէլեմիա 159
Ծագեա՛ հեզիկ 161
Ծուխը ամպի պէս։—Գամառ-Քաթիպա . . . . . «
Ծառիս տակը մանիշակ 165
Ծիծեռնակ, ծիծեռնակ 168
Ծառայել հայրենիքին։—Մայրենի լեզու 242
Կամքն հօր 318
Կորուստ անդարձ 169
Կեցցէ՛ Շապուհ 170
Կեցցե՛ս, քաջ Սամէլ . . . . . «
Կապոյտ երկնքում։—Գ. Բարխուդարեան 171
Կրամբամբուլին։—Բ. Պատկանեան 172
Կիլիկիայից եմ ես։—Աղ. Ավրիկեան 173
Կը հաւատամ։—Ս. Սափարեան 175
Կռունկ, ուստի՞ կու գաս 177
Կուսանք հայոց։—Հ. Ղ. Ալիշան 304
Հայաստանի հողը։—Խ. Արովեան 38
Հա՛, գացի տեսայ։—Մ. Մամուրեան 134
Հայ ազգը։—Մ. Նալբանդեան 179
Հայոց աշխարհիկ։—Հ. Ղ. Ալիշան 181
Հանել եմ աշխարհ։—Ս. Սարկաւագ 184
Հուր բարկութեան։—Ռ. Սէֆէֆեան 187
Համեստափա՛յլ կոյս։—Մ. Հեզեան . . . . . «
Հերիք, որդեակք։—Մնակեան 190
Հայ մեռնինք։—Խ. եպ. Գալֆայեան . . . . . «
Հայկա՛ն որդիք 193
Հայոց աշխարհ։—Ս. Գիւլզատեան 194
Հայ-ց սիրուններ։—Նոյնը 195
Հայրենիք սրբազան։—Յ. Քուչուբէգեան 196
Հայոց աղջիկներ։—Գ. Միրիմանեան 197
Հայաստանեայց սև տխրագին։—Ս. Ֆէլէկեան . . . 198

Հապա, քաջազունք 199
Հրեշտակ զուարթուն։—Գ. Վ. Այվազեան . . . 200
Հայկազունք, պար բռնենք։—Ս. Փափազեան . . . «
Հայրենասէր Արամեանք 201
Հատիկ, դու։—Ա. Գրիգորեան 202
Հայրենեաց սիրով։—Ս. Փափազեան 203
Հայոց երգերը, սէրն և գինին 205
Հիմի Էլ լռենք։—Ռ. Պատկանեան . . . . . «
Հիմի Էլ խօսենք։—Մ. Նալբանդեան 207
Հայկակա՛ն սեռի արի զաւակներ։—Յ. Բ. . . . 209
Հայ ապրինք։—Խ. եպ. Գալֆայեան 210
Հայաստան երկիր։—Յ. Մ. Վանանդեցի . . . 212
Հնչեսցեն լարք։—Վ. վ. Մանկունի 213
Հայո՛ց մանուկներ։—Վարդենի 214
Հեռացել եմ։—Ռ. Պատկանեան 216
Հայրենիք մեր շքեղ 217
Հանգի՛ստ, իմ անոյշ։—Ս. Շահազիզեան . . . 218
Հայե՛ր, ա՜խ, հայեր։—Կարին 219
Հայրիկ։—Բարխուդարեան 301
Հայաստանի արեգակը 325
Հաւիկ մի պայծառ 314
Զմեռն անցաւ 220
Զայնը հնչեց էրզրրումէն . . . . . «
Զա՛յն տուր, ով ծովակ։—Յ. Մելիք-Յակոբեան . . 327
Ղամբարափայլ սրբոյ տօնիս։—Ղ. վ. Ճահկեցի . . 221
Ճանաչեցար Էմմանուէլ 318
Մտաւ արևս երջանկութեան։—Ս. Գնունի . . . 221
Մեր կեանքի նման 223
Մայր Արաքսի։—Ռ. Պատկանեան 19
Մեր խեղճ ազգը։—Գամառ-Քաթիպա 224
Մտաւ արփին։—Բաֆֆի 225
Մեր փոքրիկ հօտին։—Մ. Ե. Ս. 226
Մէկը տեհար շլեապայով։—Յ. Մ. Յակոբեան . . 227
Մինչդեռ յուսով։—Մ. Պէշիկթաշլեան . . . 229
Մնացես բարեաւ։—Նոյնը 230
Մեզնից շատ առաջ։—Ռ. Պատկանեան . . . . «
Մեր Հայրենիքում։—Մ. Նալբանդեան 232

Մայրիկ, ինձ հրաման տուր։—Շաւարշ 235
Մեզի մոռցաւ։—Գամառ-Քաթիպա . . . . . «
Մնաս բարով, Բուրաստան։—Գ. Մուրատեան . . 236
Մեր քաջ հայոց զօրութիւնք 239
Մեր սիրուն հայրենեաց 240
Մայրենի՛ լեզու։—Ս. Նազարեան 241
Մեր նախնիքը ազգի համար 243
Մեծափառ արքայն մեր . . . . . «
Մարդս եկաւ։—Ռ. Պատկանեան 244
Մահկանացուդ դու։—Մ. Ե. Ս. 245
Մեզ նոր արև ծագէ 246
Մի գեղեցիկ պարզ գիշեր։—Ս. Սափարեան . . 247
Մանեակ չքնաղ 313
Մեռեալ հոգւոց 315
Յամսավերջն Ապրիլի։—Յ. վ. Ալամդարեան . . 247
Յաւիտենից անմահ Աստուած։—Յ. վ. Փինաչեան . 248
Յերկու ձեռին։—Յ. վ. Ալամդարեան 250
Յորդոր ի ձայն։—Մ. Պալեան 322
Ննջեա՛, Վարդան 251
Նժոյգս կ'թամբեմ 253
Նորարդոյս խայրիկ . . . . . «
Նորահրաշ պսակաւոր։—Շարական 254
Շիրիմ, բացի՛ր դու։—Ս. Սափարեան 255
Շնորհօք հօր 319
Ողջո՛յն տուէք իմ հայրենեաց 281
Ո՛վ դու, բարեկամ։—Հ. Ղ. Ալիշան 257
Ո՛վ երջանիկ օր 258
Ո՜ւր ես, հայ հանճար։—Հ. Ղ. Ալիշան . . . . «
Ո՜հ, ի՛նչ քաղցր բան 261
Ով որ ծանօթ է պատմութեան 262
Ողջո՛յն քեզ, ընկեր։—Ի. Բագրատունի . . . 263
Ո՜հ, ի՛նչ անուշ։—Մ. Պէշիկթաշլեան 264
Ո՛վ հայկազունք 265
Ո՛վ Տէր մեր Աստուած 267
Ուղիղ գնեստունից։—Գ. Դոգոխեան . . . . «
Ողջո՛յն ընդ քեզ։—Ա. Այվազեան 268
Ոլոր մոլոր։—Ս. Գիւլզատեան 269

Ո՛վ դու, հայ աշխարհ 270
Որ հաճեցար։—Պալեան 271
Ոսկեծըղի, գեղեցկատիպ։—Գամառ-Քաթիպա . . . 272
Ո՛վ Տէր Աստուած։—Վ. Վ. Մանկունի . . . 273
Ո՜հ, զի էքնաղ։—Նոյնը 274
Ո՛վ Տէր, պահիր Կայսրին։—Ա. Գրիգորեան . . . 275
Ուրախ լինենք, եղբարք 276
Ո՞ր մահկանացուն 277
Ո՛չ ձեզ, ո՛չ չէք։—Խ. եպ. Գալֆայեան . . . «
Ո՞րն է աշխարհ Հայաստան։—Մ. Փ. 278
Որ վառեցեր։—Հ. Ղուկասեան 279
Որդեա՛ք քաջ Հայկայ 280
Ուզո՞ւմ ես դու։—Աղ. Մատուրեան 328
Պայծառատես բաղդն իմ։—Ս. Շահագիզեան . . . 282
Սար ու ձոր ընկած։—Խ. Արովեան 284
Սամաւարը պատուական է 285
Սառն ցրտութիւն 319
Վերջին վարդ։—Ֆ. Պատկանեան 286
Վարդան մեր քաջ։—Ս. Շահագիզեան . . . . «
Վառեց երկինք իւր լապտեր 288
Տխուր, տխուր ձայն։—Ս. Սարկաւագ . . . . «
Տէ՛ր, պահեա՛ զԿայսր 289
Տարեմուտի երեկոյին։—Ղ. Աղայեան . . . . «
Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան։—Խ. եպ. Գալֆայեան . . . 291
Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս։—Մ. Թաղիադեանց . . . 293
Ցնծացէ՛ք, լե՛ռինք Արարատայ . . . . . «
Ցուրտը փչեց։—Կոմս Էմմանուէլ 294
Ցնծա՛, Արարատ։—Պ. Մաղաթեան 297
Իւսեալ պըսակ 321
Փառք ի բարձունս։—Ժամագիրք. 315
Փրկիչ Յիսուս 320
Քեանսիր գիւղացի։—Աղ. Արարատեան 298
Քո՛ւն եղեր, պալաս։—Ռ. Պատկանեան 299
Օտար երկիր, օտար պանդուխտ 300

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՈՒ-ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ
324

ՀՀ Ազգային գրադարան
NL0686159